Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2979

Zu 1.

491.99-5
П-13

1868

2010

2002

ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

[illegible]

491.99-5
Պ-13

ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

*աշխատասիրեց*

ՍՏԵՓԱՆՈՍ ՅՈՎՀ. ՊԱԼԱՍԱՆԵԱՆ

---

*Հատոր առաջին*

## ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

---

ԹԻՖԼԻԶ

ՀԱՄԲ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՏՊԱՐԱՆՈՒՄԸ։

1868.

11998

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. Тифлисъ. 1-го Августа 1868-го года.

1602
40

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Յառաջաբան . . . . . . . . . . . . . . Ա — Դ


## ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

### ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

### Ա. Հնչիւն, վանկ և բառ:


§§ Երես

1. Ի՞նչ է հնչիւնը. . . 3
2. Ի՞նչ է վանկը . . . —
3. Ինչից են կազմվում վանկ. 4
4. Ձայնաւորների արտաբերութիւնը . . . . 5
5. Երկբարբառք . . . . —
6. Ձայնաւորների ու երկբարբառների փոփոխ. . —
7. Բաղաձայն. արտաբեր. . 6
8. Բաղաձայն. փոփոխումը 7
9. Բաղաձայն. զեղչումը և աւելադրութիւնը. . . —
10. Շեշտ . . . . . . . —


### Բ. Բառերի կազմութիւնը և նշանակութիւնը:


11. Բառերի արտաքին և ներքին կողմը. . . . 8
12. Արմատ. . . . . . . —
13. Նախատիպ և՛ածանցական բառեր . . . . 9
14. Պարզ և բարդ բառեր . . —
15. Բառերի բուն և փոխաբերական նշանակութ. . 10
16. Նոյնանշան բառեր . . . 11


### Գ. Ուղղագրութեան ընդհանուր կանոնները:


§§ Երես

17. Գրերը և նոցա զանազանութիւնը հնչիւններից. —
18. Նոյնահնչիւն տառերի գործածութիւնը . . . 12
19. Բաղաձայնների կրկն. . 13
20. Գլուխ և մանր տառեր . 14
21. Տողադարձի կանոնները 15
22. Համառօտագրութիւն . —
23. Կէտադրութիւն . . . 16
24. Առոգանութեան նշանք —


## ՄԱՍՈՒՆՔ — ԲԱՆԻ

### Ա. Գոյական անուն:


25. Ի՞նչ է առարկայ . . 17
26. Առարկաների տեսակները:—Գոյական անուն —
27. Յատուկ և հասարակ գոյականներ. . . . . 18
28. Սեռ. . . . . . . 19
29. Թիւ . . . . . . . 20
30. Հոլով. . . . . . . 21
31. Հոլովումն . . . . . 23
32. Գոյական անուան պարագաները . . . . . —


### Բ. Ածական անուն:


33. Ի՞նչ է ածական անունը. 24

§§. Երես.

34. Որակական և յարաբերական ածականներ . . 25
35. Որակական ածականների աստիճանները . . 26
36. Ածական անուան պարագաները . . . . . 27

## Գ. Բայ:

37. Ի՞նչ է բայը . . . . —
38. Բայերի սեռը . . . . 28
39. Բայի եղանակները . 31
40. Բայի ժամանակները . 32
41. Բայի դէմքերը . . . 33
42. Բայերի թիւը . . . . 34
43. Խոնարհումն և լծորդ. . —
44. Բայերի պարագաները . —

## Դ. Մակբայ:

45. Ի՞նչ է մակբայը. . . 35
46. Մակբայների տեսակները . —

## Ե. Թուական անուն:

47. Ի՞նչ է թուակ. անունը. 37
48. Բացարձակ և դասական թուականներ ։ — Հայկական թուանշանք . . —

## Զ. Դերանուն:

49. Ի՞նչ է դերանունը . . 38
50. Դերանունների տեսակ. 39
51. Որոշեալ կամ դերանունական յօդեր . . 41
52. Դերանունների պարագ. 42

## Է. Դերբայ:

53. Ի՞նչ է դերբայը և քանի՞ է բաժանվում . . —

## Ը. Նախդիր:

54. Ի՞նչ է նախդիրը . . 43

§§ Երես.

55. Նախդիրների սեպհական և փոխաբերական նշանակութիւնները . . 44
56. Հոլովակերտ և հոլովառու նախդիրներ . . . 45

## Թ. Շաղկապ:

57. Ի՞նչ է շաղկապը . . —
58. Շաղկապների տեսակ. . 46

## Ժ. Ձայնարկութիւն:

59. Ի՞նչ է ձայնարկութիւնը 47
60. Մասունք-բանի ։-Քերակ. 48

## ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ

## Ա. Գոյական անունների կազմութիւնը:

61. Գոյականների արմատ. 50
62. Ածանցական մասնիկ. . 51
63. Գոյականների ածանցական վերջաւորութ. . —
64. Բարդ գոյականներ . . 54
65. Գոյականների հոլով. . 55
66. Հոլովների կազմութ. . 56
67. Առաջին հոլովումն . . 60
68. Հոլովումն Գ ի ւ ղ ան. 61
69. Երկրորդ հոլովումն. . . 62
70. Երրորդ հոլովումն. . . 64
71. Չորրորդ հոլովումն. . . 66
72. Հինգերորդ հոլովումն. . 67
73. Վեցերորդ հոլովումն . . 69
74. Հոլովումն այր և կին 71 անունների. . . . 71
75. Եօթներորդ հոլովումն. . 72
76. Հոլովումն հայր, քոյր և օր անունների . . 73
77. Հոլովումն յատուկ ան. 75
78. Գիտելիք հոլովմ. վրայ . 76

## Բ. Ածական անունների կազմութիւնը:

§§ Երես.
79. Ածակ. ան. արմատները 79
80. Որակական ածականների աստիճանները . . —
81. Յարաբերական ած. ածանցական վերջաւորութ. . 80
82. Բացասակ. մասնիկներ. 82
83. Բարդ ածականներ . . 84
84. Ածական անունների հոլովումը . . . . . 85

## Գ. Թուական անունների կազմութիւնը:

85. Բացարձակ և դասական թուականներ . . . . . . 87
86. Թուական անունների հոլովումը իրանց մէջ և գոյականների հետ . . . 88

## Դ. Դերանունների կազմութիւնը:

87. Գոյական դերանուններ 93
88. Գոյակ. դեր. հոլովումը —
89. Ածական դերանուններ. 96
90. Ած. դեր. հոլովումը մենակ և գոյականների հետ . . —
91. Անորոշ ու որոշեալ դերանունների հոլովումը. — 101

## Ե. Բայերի կազմութիւնը:

92. Բայերի արմատները . . 106
93. Բայերի վերջաւորութիւնները :— Պարզ և բարդ բայեր . . . . —
94. Բայի ժամանակների կազմութիւնը. . . . 108
§§ Երես.
95. Էական բայեր. . . . 110
96. Առաջին լծորդութիւն 112
97. Երկրորդ լծորդութիւն . 116
98. Երրորդ լծորդութիւն. . 119
99. չիմ, նչիմ չէզոքների խոնարհումը . . . 123
100. Խոնարհումն այն բայերի, որոնց կատարեալի արմատը անկանոն է . . 124
101. Չորրորդ լծորդութիւն . 128
102. Միադէմ բայեր. . . . 131
103. Դիտելիք բայերի և խոնարհումների վրայ . . . 132

## Զ. Դերբայների կազմ.

104. Դերբայների տեսակները 134
105. Անորոշ դերբայի գործածութիւնը. . . . . —
106. Անցեալ դերբայի գործածութիւնը . . . . . 136
107. Ապառնի դերբ. գործած. 139
108. Բայածականներ . . . 140

## Է. Նախդիրների կազմութիւնը:

109. Նախդիրների զանազանութիւնը մակբայներից 143
110. Նախդիրների բաժանումը ըստ նշանակութեան և ըստ կազմութեան . . 144
111. Նախդիրների գործածութիւնը . . . . . 145

## Ը. Մակբայների կազմութիւնը:

112. Մակբայների բաժանումը ըստ նշանակութեան և ըստ կազմութեան . . 160

§§ Երես.

113. Մակբայների կազմութ. 161
114. Մակբայների ածանցական վերջաւորութիւն. . 164
115. Բարդ մակբայներ. . . 166
116. Մակբայների գործած. 167

**Թ. Շաղկապների կազմութիւնը։**

117. Շաղկապների բաժանումը ըստ նշանակութեան և ըստ կազմութեան . 168
118. Շաղկապների գործած. 169

**Ժ. Ձայնարկութիւնների կազմութիւնը։**

119. Ձայնարկութիւնների բաժանումը. . . . . 170

---

ԼՈՒԾՈՒՄՆ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

**Ա. Լուծման օրինակ** 173

**Բ. Հատուածք ընթերցանութեան։**

1. Գայլք և Ոչխարք . . 176
2. Կաղնի և Արքայակաղնի —
3. Գորտունք . . . . 177
4. Առիւծ, Արջ և Գայլ. . —
5. Մկունք և Կատու. . . —
6. Աղուէս և Խեցգետին. . 178
7. Պղերգ և Արի . . . —
8. Մայր և Որդի . . . 179

§§ Երես.

9. Յաղագս ապստամբութեան Հայկայ . . . —
10. Յաղագս պատերազմին և մահուանն Բէլայ. . 180
11. Գնացք Շապհոյ ընդ Արշակայ արքայի և ընդ Վասակայ սպարապետին Հայոց . . . . 182
12. Նկարագիր բարուց Յազկերտի արքային Պարսից. 185
13. Դարձ ուրացող նախարարաց մօզօքն հանդերձ ի Հայս, յորում երևի անօրինակ միաբանութիւն ազգիս մերոյ. . . 187
14. Մահ ուրացելոյն Վասակայ . . . . . . . 190
15. Տիկնայք Հայոց հինգերորդ դարու . . . 192
16. Թարգմանութիւն սուրբ գրոց . . . . . . . 194
17. Բանք առաջարկութեան Տեառն Վահանայ Մամիկոնէից առ Վաղարշ թագաւոր Պարսից . . 196
18. Աղուէս և Խաղող . . 197
19. Շուն և Ստուեր իւր. . 198
20. Քաղաքացի Մուկն և Գաւառացի . . . . . —
21. Գառն և Գժնիկ. . . 199
22. Մայր և Մանկիկ . . 200
23. Երգ հայրենի . . . . 201
24. Հատուած յՈղբոյն Եդեսիոյ. . . . . . . 202

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Քանի հինգ երեսուն տարի կայ որ հայը, իր դարևոր թմրութիւնից շարժուելով, կարծես սկսում է ցոյց տալ, որ ինքն էլ ընդունակ է լուսաւորուելու և քաղաքակիրթ ազգերի խմբի մէջ իր փոքրիկ, բայց պատուաւոր տեղը բռնելու: Առանձին գեղեցիկ ապացոյց կարող են լինել այն բազմակողմանի փորձերը, որ արել է նա լուսաւորութեան ասպարէզի մէջ. օրագիրներն ու լրագիրները հետզհետէ բազմացան ու ընդհանրացան, ընթերցանութեան թանգարաններ հաստատուեցան, դպրոցներ բացուեցան, վերջապէս գիտութեան այլ և այլ ճիւղերի վրայ դասագրքեր երևան եկան, թէև այս վերջինները սակաւաթիւ ու շատ կողմից պակասաւոր են: Փառք Աստուծոյ, անցան, գնացին այն ժամանակները, երբ ուսումը միայն վարդապետների, տիրացուների, վարժապետների, մէկ խօսքով կ—ղ—ե—րէ մասն ու բաժինն էր համարվում. անցան, ասում եմ, այն երջանիկ ժամանակները, երբ փոքր ինչ գրել կարդալ իմացողի վրայ մատով էին ցոյց տալի. երբ Չամչեան քերականութեան ու Ագոնց ճարտասանութեան առաջին երեսից մինչև վերջին երեսը անգիր անողը փքվում, պարծենում էր, թէ գիտութեան —չէ— ու —չէ— իր մէջ է պարունակում: Այսօր շատ հայ մարդ զգում և հասկանում է, որ հասարակութեան պիտանի անդամ լինելու համար, հարկ է հիմնաւոր կրթութիւն ստանալ. խրաքանչիւր գերդաստանի հայր իմանում է, որ ճշմարիտ ուսումը ու դաստիարակութիւնը այնպիսի թանկագին դրամագլուխներ են, որ միայն կարող են իր որդոց ապագան ապահովել: Ի հարկէ, որքան այս ձգտումը աճում, ընդարձակութիւն է ստանում մեր հասարակութիւնների կողմից, այնքան և ազգային դաստիարակութեան գործին ծառայող մշակները պարտական են թեթևացնել ուսմնառութեան միջոցները, նոր նոր ու ժամանակի յարմար դասագրքեր պատրաստելով: Բայց դժբաղդաբար այս կողմից շատ քիչ յառաջադիմութիւն ենք ցոյց տուել, և մայրենի լեզուի ուսումը, որ ամէնից աւելի հեշտ պէտք է լինէր հայ մանուկների համար, ամաչում ենք ասել, մինչև հիմայ դեռ ամենադժուար առարկաներից մինն է: Ահա այս ցաւալի հանգամանքն է, որ յորդորեց մեզ ներկայ դասագիրքը հրատարակել, այնքան քերականութիւնների վրայ աւելացնելով մի նորը, որի մէջ բռնած ընթացքներս արդարացնելու համար, բաւական ենք համարում կարճառօտ յիշել, թէ առաջուայ ժամանակները ինչ ծուռ հասկացողութիւն էր տիրապետում լեզուի դասախօսութեան վրայ ընդհանրապէս ամէն տեղ, և թէ ինչպէս այդ հասկացողութիւնը կամաց կամաց փոխուելով, բարեյաջող հետևանքների է հասել արևմտեան ազգերի մէջ:

Քերականութիւնը, ինչպէս յայտնի է, իր ծագումը առնում է Յունաստանից, որ և կարգի կանոնի բերուեցաւ Արիստարքոսի ձեռքով: Յայտնի է նոյնպէս, որ ոչ Հռոմայեցիք և ոչ միջնադարեան գիտնականները այս գիտութիւնը ամենևին առաջ չտարին. այլ ինչպէս որ հետոյները Կոնստանտինոսի գրքի թարգմանութիւնովը գոհ եղան, այսպէս և քերականները բաւականացան կէտ առ կէտ հետևելով արիստարքեան քերականութեանը: Բայց բաւական հետևողութիւնը շատ բռնում և մանաւորապէս լեզուի ուսման խնդրի մէջ ամենավնասակար է. այն քերականական բաժանմունքները, որ Յունաց մէջ խորին նշանակութիւն ունէին, նոցա հետևողների գրքերի մէջ շուտով դատարկ ձևեր դարձան: Աւելացրու

սորա վրայ և միջին դարերի սքոլաստիկական չոր ու ցամաք ուղղութիւնը, որ կենդանի միտքը թողած, միայն ձևերի հետամուտ էր լինում, և այն ժամանակ բոլորովին կը հասկանանք թէ ինչպէս կազմուեցաւ այն քերականութիւնը, որ արևմտեան ազգերի մէջ մինչև այս դարու սկզբները տիրապետում, իսկ մեզանում, ցաւելով ենք ասում, մինչև այժմ շարունակվում է: Ցիրաւի, մարդուս խելքը չէ հասնում, թէ մինչև որ աստիճան անշարժութիւնը տիրապետում է մեր մանկավարժական գրականութեան մէջ: Այսպէս, օրինակի համար, սորանից երկու հազար տարի առաջ Մար Աբաս Կատինան մեր Նախահօր Հայկին ու Նորա որդոցը նկարագրել է իբրև յաղթանդամ հսկաներ. երկու հազար տարի յետոյ լոյս տեսած դասագրքերում Հայկը ու Նորա սերունդը հանդիսանում են մեր առաջ նոյնպէս յաղթանդամ ու իբր դիւցազնական արարածներ: Ի՞նչ զարմանք, սորանից յետոյ, եթէ Չամչեան Հ. Միքայէլի քերականութիւնը տակաւին ոմանց համար սուրբ գիրք է, որի վրայ մէկ տառ աւելացնել կամ միջից մի բան պակասեցնելը մեղք համարուի: Ճշմարիտ է, վերջին ժամանակներում հրատարակուած քերականութիւնները ըստ երևոյթին մի քանի մանր մունր փոփոխութիւններ կրել են, բայց այս փոփոխութիւնները աննշան, հետևաբար և ուսանողների համար անպտուղ են մնացել: Արդ ինչ է այս բոլոր քերականութիւնների ընդհանուր բնաւորութիւնն ու ուղղութիւնը.—[illegible] չոր ու ցամաք ձևը, որով լեզուի համար օրէնքներ են դրում, փոխանակ լեզուի մէջ պարունակուած օրէնքները քննելու ու պարզելու. ուսանողը պէտք է առանց մտածելու հաւատ ընծայէ ուսուցչի ասածներին, ինչպէս որ նա իր ժամանակին հաւատ ընծայել ու առանց հասկանալու էր սովորել իր վարժապետից մի և նոյն բաները: Առաջ ու առաջ ուսանողը սովորում է, թէ քերականութիւնը է մի արուեստ, որ սովորեցնում է ուղիղ խօսել ու գրել, և թէ բառերը կազմվում են տառերից: Ձեզ եմ հարցնում, ինչ գործադրութիւն կարող է անել նա այս գիտութիւնից.—ի հարկէ ոչինչ: Յետոյ աշակերտը սովորում է թէ ինը, տասը մասունք—բանի կայ. բայց այս տեղեկութիւնն էլ նորա համար անօգուտ է մնում: Յետոյ ինչ. յետոյ նա գլուխը ճաքեցնում է անգիր սերտելով հոլովումների և լծորդութիւնների անվերջ ցուցակները, բայց այս էլ նորա համար անօգուտ է, որովհետև ինչոր այսօր առանց հասկանալու սովորում է. էգուց անտարակոյս պէտք է մոռանայ: Այս կերպով անց է կենում նա քերականութեան առաջին մասը և յետոյ համաձայնութիւնը, հետզհետէ սովորելով ու սովորածը մոռանալով: Ուսման ընթացքը աւարտելուց յետոյ, աշակերտը, այն էլ ամենաընդունակը, հազիւ հազ կարողանում է ընտելանալ լեզուի հոգուն, և այս ոչ այնքան քերականութեան օգնութիւնով, որքան ընտիր հեղինակների գրուածները կարդալով:

Ահա այս դրութեան մէջ է գտնվում գրոց լեզուի ուսումը մեր դպրոցներում: Այս դրութիւնը նորանով աւելի ցաւալի է, որ գրոց լեզուն հայ մանկան համար կենդանի բարբառ չէ, և ի հարկէ աւելի դժուարութիւն է կրում ուսանելու նորան, քան թէ ֆրանսիացին կամ գերմանացին իր մայրենի լեզուն: Իսկ ինչ որ վերաբերում է աշխարհաբար լեզուին, նա դեռ հալածվում է ու կատարեալ քաղաքականութիւն չէ ստացել. այս պատճառով արժան էլ չեն համարում ուսումնասիրելու նորան. խեղճին ամէնքը ամէն կողմը քաշքշում են, ու իրանց ազատ կամքին նայելով չափում, ձևում ու կտրում են, այնպէս որ կենդանութեան նշոյլ անգամ չէ մնացել մէջը:

Բայց եթէ աշխարհաբար լեզուն առ այժմ բաւական նիւթ չէ տալի մեզ ժամանակի պահանջմունքներին յարմար դասագրքեր պատրաստելու կենդանի

լեզուի համար, դրաթարը այս կողմից այնքան հարուստ է, որ մինչև հիմայ կարող էինք ընտիր ձեռնարկներ ունենալ, եթէ հետևէինք արևմտեան ուսումնականներին և մանաւանդ Գերմանիայում հրատարակուած գրքերին, ուր մայրենի լեզուի ուսումը այս դարու սկզբներից մեծ յառաջադիմութիւն է արել. Գրիմի, Բէկերի, Բոխոլի, Պեստալոցիի և Դիստերվեգի անունները անմահ կը մնան մանկավարժական գրականութեան յիշատակարանների մէջ: Մինչև այս ուսումնականների երեւալը, լեզուի ուսման մէջ գլխաւոր բանը համարվում էր հոլովումների և խոնարհումների ցուցակները իրանց անթիւ խոտորումներով անգիր սերտելը. Նոցա օրովը և Նոցանից յետոյ հետզհետէ սկսեցին ամէն ջանք անել ուսանողների մտաւոր կարողութիւնները զարգացնելու և ազատ կերպով մտածելու ճանապարհները ցոյց տալ: Ուշադրութեան արժանի է այս կողմից Դիստերվեգի դասագիրքը: Այս երևելի մանկավարժը հետևեալ չորս պայմանները հարկաւոր է համարում լեզուի դասատուութեան համար:

Նախ, բոլոր այն տեղեկութիւնները, որ կամենում ես հաղորդել ուսանողներին լեզուի վրայ, այնպէս հաղորդէ, ինչպէս որ ինքը բնութիւնը ցոյց է տալիս, այսինքն փորձնական կերպով: Օրինակի համար, դիցուք թէ կամենում ես աշակերտիդ գոյական անուան վրայ հասկացողութիւն տալ. միտքդ բեր, որ կեանքի մէջ ոչ ոք չէ խօսում միայն գոյական անուններով. այդ տեսակ բառերը միշտ միացվում են ուրիշ բառերի հետ ամբողջ Նախադասութեան մէջ: Այս պատճառով, տուր քո աշակերտին մի քանի Նախադասութիւն, որոնց մէջ գէթ մէկ մէկ գոյական լինի. այս է նշանակում գործնականապէս լեզու ուսուցանել: Երկրորդ, Եթէ կամենում ես աշակերտդ այն կէտին հասցնել, որ մի կամ միւս քերականական ձևը հասկանայ, սորա համար ամէնից լաւ միջոցը համեմատելն է: Զոր օրինակ, դիր քո աշակերտի առաջ մի քանի Նախադասութիւններ, որոնց մէջ այլ և այլ գոյական անուններ կան, թող համեմատէ նա այն գոյական անունները միմեանց հետ, և կը նշմարէ Նոցա մէջ մի քանի ընդհանուր յատկութիւններ, որոնցից իր մտքումը մի հասկացողութիւն կը կազմէ գոյական անունների վրայ: Երրորդ, եթէ աշակերտիդ այն կէտին հասցրիր, որ մէկ քերականական ձև կամ դասակարգութիւն կատարելապէս հասկանում է, պատուիրէ նորան, որ ինքը փորձնականապէս ցոյց տայ: Օրինակի համար, աշակերտը լուծման միջնորդութեամբ հասկացաւ թէ ինչ է գոյական անունը. պահանջէ նորանից, որ մի քանի գոյականներ կազմէ բայերից, ած. անուններից և այլն. պատուիրէ, որ մի քանի Նախադասութիւններ լրացնէ գոյ. անուններով, և այլն: Վերջապէս աշակերտը գործնականութեան մէջ մտցնել ուղղագրութիւնների հետ, ինքնուրոյնութեան հետ: Եթէ համեմատենք քերականութիւնը դասատուութեան ուրիշ առարկաների հետ, ինչպէս են կենդանաբանութիւնը, բնագիտութիւնը, աշխարհագրութիւնը, պատմութիւնը, կը տեսնենք որ քերականութեան շրջանը նեղ ու վերացական է: Ուրեմն, եթէ լեզուի դասատուութեան մէջ բաւականանանք միայն քերականութիւնով, այդ դասատուութիւնը իր միակողմանի ու չոր ու ցամաք ձևովը ոչ միայն արգելք կը լինի ուսանողների կանոնաւոր ու բազմակողմանի զարգացմանը, այլ և կը բթացնէ Նոցա մտաւոր կարողութիւնները: Այս պատճառով հարկաւոր է լեզուի դասատուութիւնը փոքր ինչ կենդանացնել բազմակողմանի ու հետաքրքիր օրինակներով:

Ահա այս սկզբունքներին հետևեցանք և մենք, որքան հնար էր, Ներկայ աշխատութեանս մէջ. որքան հնար էր, ասում ենք, որովհետև գրոց լեզուն մատաղ ուսանողի համար դժուարահասկանալի լինելով, մի քանի անյարմարութիւններ էր առաջ բերում կանոնաւոր ու բոլորովին Նոր ձևով աւանդելու: Չնայելով այս դժուարութիւններին, մեր բոլոր ջանքն ու ճիգը թափեցինք, օտարազգի քե-

բակնութիւններին հետեւելով այս աշխատութիւնը գործնական, հետեւաբար և օգտակար անելու: Հասանք արդեօք մեր նպատակին, այդ ժամանակը ցոյց կը տայ: Տասը տարուան անձնական փորձը ցոյց տուեց մեզ, որ մեր հին քերականութիւնները ժամանակի պիտոյքներին յարմար չեն. այս մասին մեզանից աւելի փորձառուներն էլ յոյս ունինք, կը միաբանին մեզ հետ. մեր առաջարկած դասագիրքն էլ մէկ նոր փորձ է, որ, ինչպէս ամէն մահկանացուի գործ, մշակուելու ու կատարելագործուելու կարօտ է: Այս պատճառով աւելորդ է ասել թէ մենք միշտ պատրաստ ենք ամէն տեսակ օգտակար խորհուրդ ընդունել հայերէնագէտ և մանկավարժութեան պահանջմունքներին տեղեակ անձինքների կողմից, որ քիչ շահ չի բերիլ մեզ մեր աշխատութեան երկրորդ տպագրութեան ժամանակ:

Հարկ է արդեօք այստեղ երկարօրէն խօսել մեր դասագրքի գործածութեան վրայ: Մենք կարծում ենք թէ բաւական է մէկ անգամ ծայրէ ի ծայր աչքի անցկացնել սորան ուշադրութեամբ, որ տեսնէ թէ ինչ պարտաւորութիւններ կան դրուած նորա վերայ: Ի հարկէ այս դասագրքով անկարելի է ուսուցչին պատուիրել իր աշակերտներին այստեղից այնտեղ անգիր սովորել. նա պէտք է անդադար խօսէ, ասէ ու լսէ: Օրինակներից յետոյ դրուած մանր տառերով վերլուծողական մեկնութիւնները առաւելապէս ուսուցչի համար են. նա պարտական է տախտակի վրայ, կամ ինչպէս աւելի յարմար է համարում, մեկնել նոցա իւրաքանչիւր յօդուածի գլխին դրուած օրինակները, որոնցից դուրս են բերուած լեզուի կանոնները: Նոյնը պէտք է հասկանալ և գործնական կրթութիւնների համար: Միայն այստեղ, ինչպէս առ հասարակ բոլոր դասագրքի մէջ, ուսուցիչը ազատ է մի քանի բան աւելացնել կամ պակասեցնել, նայելով իր աշակերտների հասակին և ընդունակութեանը: Նա կարող է, օրինակի համար, ստորին դասատներում ածանցական վերջաւորութիւնների վրայ միայն հարեւանցի հասկացողութիւն տալ, յիշելով ամէնից գլխաւորները, և մանրամասն տեղեկութիւնները թողնել վերին դասարանների համար, և այլն: Ուսուցիչը իր առարկայի տէրն է. դասական գիրքը աշակերտի ձեռքում միայն մի հարկաւոր գործիք է, որ օգնում է ուսուցչին իր դասերը պտղաբեր անելու:

Մէկ նկատողութիւն էլ և մեր խօսքին վերջ կը տանք: Մեր դասագրքի ստուարութիւնը գուցէ ոմանց զարհուրեցնէ, աչքի առաջ ունենալով մանաւանդ որ սա միայն քերականութեան առաջին մասն է պարունակում իր մէջ: Այդպիսի կարծիք տուողներին կը պատասխանենք նախ որ մենք ոչինչ տեղեկութիւն դանց չարինք հաղորդելու լեզուի կազմութիւնը հասկանալի անելու համար: Ստուգաբանութիւնը լեզուի ուսման հիմն է, որ մեր կարծիքով պէտք է հիմնաւոր լինի, որ յետոյ լեզուի շէնքը խախուտ չլինի: Ինչ որ վերաբերում է մեր դասագրքի երկրորդ հատորին, հարկաւոր ենք համարում յիշել, որ արդէն մամուլի տակ է. ընդարձակութեան կողմից էլ սորա կէսի չափ կը լինի:

Առաջարկելով այս դասագիրքը հայկազնութեան ուսուցիչներին, պարտք ենք համարում յայտնել, որ պատիւ ունեցանք մեր աշխատութեան ձեռագիրը ներկայացնել մեր Վեհափառ Կաթողիկոսին, որ բարեհաճեցաւ քննել տալ նորան: Դասագիրքը մանրամասնաբար քննուեցաւ և դպրոցական գիրք դառնալու արժան դատուեցաւ:

ՍՏԵՓԱՆՈՍ ՊԱԼԱՍԱՆԵԱՆ.

Թիֆլիզ,
10 օգոստոսի,
1868:

# ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

# ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

## Ա. Հնչիւն վանկ եւ բառ

### § 1. Ի՞նչ է հնչիւնը։

Մեր միտքը ուրիշներին հաղորդելու ժամանակ, գործ ենք դնում բառեր. բայց որպէս զի ուրիշները մեր ասածը լսեն, հարկ է որ բառերը ձայնով արտաբերենք կամ հնչենք։

Ուրեմն բառերը հնչիւններ են. բայց մարդկային լեզուի հնչիւնները բոլորովին զանազանվում են կենդանիների աղաղակից, թռչունների երգից և առ հասարակ բնութեան մէջ լսուած ամէն տեսակ հնչիւններից, որովհետև կարող են բաժանուիլ ամենափոքրիկ մասների։ Այսպէս, օրինակի համար, Տարդ բառի մէջ իսկապէս մէկ հնչիւն է լսվում. բայց այս հնչիւնը կարող ենք բաժանել ամենապարզ հնչիւնների. Տ, ա, ր, դ։

### § 2. Ի՞նչ է վանկը։

Ընկեր բառը արտաբերվում է երկու անգամով և բաժանվում է երկու մաս. 1) ըն 2) կեր։

Բառի այն մասը որ մէկ անգամով է արտաբերվում, կոչվում է վանկ. ուրեմն և իւրաքանչիւր բառ այնքան վանկ է բաժանվում, որքան անգամ նորան արտաբերելու ժամանակ կանգ ենք առնում։ — Ընկեր բառը երկու վանկից է կազմվում. 1) ըն, 2) կեր։

Վանկերի թիւին նայելով՝ բառերը լինում են միավանկ, երկվանկ, եռավանկ, բազմավանկ, ինչպես, հայր, եղ-բայր, բա-րե-կամ, աս-տուա-ծա-սէր:

## § 3. Ինչի՞ց են կազմվում վանկերը:

Աշակերտ բառի մէջ առաջին վանկը ա մէկ հնչիւնից է բաղկացած, երկրորդը շա երկու հնչիւնից, իսկ երրորդը կերտ չորս հնչիւնից, ա, ե հնչիւնները առանձին առած կարող են արտաբերուիլ. իսկ շ, կ, ր, տ հնչիւնները մենակ չեն կարող արտաբերուիլ:

Իւրաքանչիւր վանկ բաղկացած է մէկ կամ աւելի հնչիւններից: Այն հնչիւնները՝ որոնք իրանք իրանցից կարող են արտաբերուիլ, ասվում են ձայնաւոր, նոքա՝ որոնք իրանք իրանցից ձայն չունին ու ձայնաւորների օգնութիւնով են արտաբերվում, կոչվում են բաղաձայն: — Աշակերտ բառի մէջ ա, ե ձայնաւոր են. իսկ շ, կ, ր, տ բաղաձայն:

Վանկերը երեք կերպով են կազմվում.

1. Բաղաձայնները կարող են ձայնաւորներից առաջ դրուիլ, ինչպէս. բա-րի, գու-ցէ:
2. Բաղաձայնները կարող են ձայնաւորներից յետոյ դասուիլ, ինչպէս. արտ, երգ:
3. Բաղաձայնները կարող են երկու կողմից ձայնաւորների հետ միանալ. սէր, փառք:

## § 4. Ձայնաւորների արտաբերութիւնը:

Թէպէտ ձայնաւոր հնչիւնները որոշ արտաբերութիւն ունին, բայց կան մի քանի նմանաձայն հնչիւններ, որոնք կարող են երբեմն շփոթուիլ:

Այսպէս ե ձայնաւորը պէտք չէ արտաբերել իբրև յէ կամ է, այլ փակ ու ամփոփ բերանով, իբրև կարճ է, մանաւանդ բառերի մէջ. մեծ, բերել: Բառերի սկզբումն էլ նոյն կերպով է արտաբերվում, բայց փոքր ինչ ամփոփ շրթունքով, իբրև կարճ յէ. ես, երբ:

ը ձայնաւորը բառերի սկզբում, մէջում և վերջում շատ տեղ յայտնի չէ գրվում, բայց արտաբերվում է, ինչպէս. սկիզբն (ըսկիզբըն), ճճիւ (ճըճիւ), բժշկել (բըժըշկել): Երբեմն հարկ է ը գրել, որ բառի միտքը որոշ հասկացուի, ինչպէս.

ղեւոնդ, ղեւոնդեան, որ եթէ առանց ւ ի գրուին ղւոնդ, ղւոնդեան, ուրիշ նշանակութիւն կունենան:

օ ձայնաւորը բառերի մէջ պէտք չէ արտաբերել իբրև ւօ կամ օ, այլ փակ ու ամփոփ բերանով, իբրև կարճ օ, ոսկր. Քուրը, իսկ բառերի սկզբում իբրև կարճ ոօ. ոչ, որդի:

## § 5. Երկբարբառ:

Գիտակ, հոգար, կեանք բառերի մէջ իա, ոա, եա ձայնաւորները այնպէս միացած են, որ մէկ ձայն են հանում:

Եթէ երկու ձայնաւոր մէկզմէկու հետ միաւորուելով մէկ ձայն են հանում, կոչւում են երկբարբառ: — իա, ոա, եա երկբարբառներ են:

## § 6. Ձայնաւորների ու երկբարբառների փոփոխումը:

Ձէն բառը փոխելով ձինաւոր բառի, նորա է ձայնաւորն էլ փոխւում է ի:

Համբոյր բառը փոխելով համբուրել բառի, նորա ոյ երկբարբառը փոխւում է ու երկբարբառի:

Բառերը փոխուելու ժամանակ՝ նոցա վերջին վանկի ձայնաւորներից ու երկբարբառներից ոմանք ուրիշ ձայնաւորների ու երկբարբառների են փոխւում: — Ձինաւոր բառի մէջ է փոխուել է ի. համբուրել բառի մէջ ոյ փոխուել է ու:

Ձայնաւորները ու երկբարբառները հետևեալ կանոններով են փոխւում.

1. է փոխւում է ի ձայնաւորի, ինչպէս. սէր—սիրել, սէգ—սիգաւոր:

2. ի, ու փոխւում են ը, թէև չէ գրւում ու շատ տեղ որոշ չէ արտաբերւում, ինչպէս. գիր—գրաւոր, ջուր—ջրել—ջրհոր: — Մարմին—մարմնաւոր, գարուն—գարնանային:

Իսկ բառի սկզբում ի, ու երբեմն փոխւում են, երբեմն անփոփոխ են մնում. իղձ—ըղձալի, ունդ—ընդեղէն, իժ—իժի, ուխտ—ուխտաւոր:

3. եա փոխւում է ե, երբեմն էլ է. կեանք—կենդանի, մատեան—մատենադարան, հրեայ—հրէի:

4. իւ փոխւում է ու, երբեմն էլ է. հովիւ—հովուի—հովուել, ձիւ—ձուել. եղջիւր—եղջերու:

5. ոյ փոխվում է ու. լոյս — լուսատու, բոյս — բուսական: Իսկ ա, է, ո, օ ձայնաւորները չեն փոխվում:

## § 7. Բաղաձայնների արտաբերութիւնը:

Բաղաձայնները արտաբերութեան կողմից երեք ճիւղ են բաժանվում.

1. Կլափայքն՝ որ լեզուով ու բերանի վերևի կլափով կամ առաստաղով են արտաբերվում.
 1) յետին. գ, կ, ք, խ, ղ, յ, հ.
 2) միջին. ր, տ, լ, ն.
 3) առաջին. դ, թ, ռ.
2. Ատամնայքն՝ որ լեզուով ու շրթունքով են արտաբերվում.
 1) յետին. ժ, ճ, ջ.
 2) միջին. շ, չ.
 3) առաջին. զ, ս, ց, ծ, ձ.
3. Շրթնայքն՝ որ շրթունքով են արտաբերվում. բ, պ, փ, վ, ֆ, մ:

Քիչ լեզու կայ, որ Հայերէնի պէս հարուստ լինի բաղաձայն հնչիւնների բարակութեան կողմից, այնպէս որ իւրաքանչիւր բաղաձայնի համար երեք տեսակ հնչիւն կայ. Նուրբ կամ Բարակ, Միջակ և Թաւ կամ Թանձր:

| Նուրբ | Միջակ | Թանձր |
|---|---|---|
| փ | պ | բ |
| ք | կ | գ |
| թ | տ | դ |
| ձ | ծ | ց |
| ջ | ճ | չ |
| ժ | շ | ս, զ |
| յ | հ | խ, ղ |
| ֆ | ւ* | վ |
| | ր | ռ |

Միայն լ, մ, ն իրանց համապատասխանող հնչիւններ չունին:

* Այս տառը երբեմն ձայնաւոր է և երբեմն բաղաձայն:

## § 8. Բաղաձայնների փոփոխումը։

Նոյնահնչիւն բաղաձայնները հետեւեալ կերպով են փոխւում.

1. պ, կ, տ, ծ, ճ միջակ հնչիւնները փ, ք, թ, ց, չ հնչիւնների փոխւում են երբեմն, մանաւանդ ր և ն բաղաձայններից յետոյ, ինչպէս. ամպ—ամփ, ցանկ—ցանք (պատ), բանտ—բանթ, ինծ—ինց (գազան), կէնճ—կէնչ (մայրի խող)։

2. պ, կ, տ միջակ հնչիւնները ս և շ բաղաձայններից առաջ փոխւում են փ, ք, թ նուրբ հնչիւնների, ինչպէս. ապշիմ—ափշիմ, Դիմակշեան—Դիմաքշեան, կատսայ—կաթսայ։

Միւս նմանաձայն հնչիւններից խառն գործ են դրւում հետեւեալները.

զ — ս, ջ, ձ ի տեղ. զբաղիմ—սբաղիմ, փլազանիմ—փլաջանիմ, մարզիկ—մարձիկ (պատերազմող)։

թ — տ, ջ, ծ ի տեղ. թասբ—տասբ, թարէմ—տարէմ—ծարէմ (թափել), կաթսան—կացսան, թեթեւ—ծեթեւ, թերթել—թերծել։

ժ — շ ի տեղ. Նժդեհ—Նշդեհ (օտարական) աժդահայ—աշդահայ, Աժդահակ—Աշդահակ։

խ — հ, ղ ի տեղ. հողբէ—խողբէ (որոգայթ), անդամաղէ—անդամախէ, բաղդ—բախդ։

ծ — ճ, ա, տ ի տեղ. ծանօթ—ճանաչ, ծածան—ատատան—տատան։

շ — ա, ղ ի տեղ. աշտէճան—ատտէճան, գալշիմ—գալչիմ (փախենալ)։

ջ — չ ի տեղ. եղէջէ—եղէչէ, ձէջէ—ձէչէ։

## § 9. Բաղաձայնների զեղջումը և աւելադրութիւնը։

Արտաբերութեան հեշտութեան համար երբեմն բաղաձայններից ոմանք բաց են թողւում։ Այսպէս,

ր բաղաձայնը ժ, շ, հ ից առաջ բաց է թողւում, ինչպէս. արժէք—աժէք, յաւերժ—յաւեժ, փուրշէ—փուշէ, խորհ—խոհ, արհական—ահական։

հ և մանաւանդ յ բառի սկզբում, երբեմն էլ մէջը, բաց են թողւում. յատակ—ատակ, յեղանակ—եղանակ, այր—ար, ծայր—ծար։ Հայկայ—այկայ, հաքէ—աքէ, ծեհան—ծեան, թուհար—թուար։

ղ երբեմն խ ից առաջ զանց է լինում. աղխ—ախ, բաղխ բախ, աղխ—ախ։

Սրա հակառակ քիչ անգամ պատահում է, որ մի բաղաձայն աւելացուի բառերի մէջ. այս երեւում է միայն ն բաղաձայնի մէջ. կրակ—կրանկ, բարբաջել—բարբանջել, ապաշխարհ—անպաշխարհ։

## § 10. Շեշտ։

Ծննեակ բառի մէջ երկու վանկ կայ. 1) ծն, 2) նեակ։ Երկրորդ վանկը աւելի բարձր ձայնով է հնչւում քան թէ առաջինը։

Այն վանկը որ ձայներս բարձրացնելով ենք հնչում, ասւում է շեշտւած վանկ: — Ընկե՛ր բառի մէջ կե՛ր շեշտւած վանկ է:

Ինչպէս որ իւրաքանչիւր վանկի մէջ պէտք է անպատճառ մէկ ձայնաւոր լինի, այնպէս էլ իւրաքանչիւր բառի վրայ պէտք է մէկ շեշտ լինի: Հայերէնում շեշտը սովորաբար բառի վերջն է ընկնում. արդա՛ր, պատարա՛գ, խօսակցութի՛ւն: Քիչ բառեր կան, որոնց շեշտը վերջին վանկի վրայ չլինի, ինչպէս. գո՛նէ, դա՛րձեալ, բա՛յց, ա՛յսպէս, ա՛նուանէ:

---

# Բ. Բառերի կազմութիւնը եւ նշանակութիւնը:

## § 11. Բառերի արտաքին և ներքին կողմը:

Լեզուի իւրաքանչիւր բառը, ինչպէս արդէն տեսանք, առանձին հնչիւններից է բաղկանում, բայց մի և նոյն ժամանակ և մէկ հասկացողութիւն, մէկ միտք է պարունակում իրա մէջ: Այս երկու յատկութիւններից բղխում են բառերի երկու կողմերը — արտաքին և ներքին:

Արտաքին կողմից նկատելով իւրաքանչիւր բառ մեր արտաքին զգայարանքներին ենթակայ է լինում — ականջին, երբ արտաբերում ենք մէկ բառ, — աչքին՝ երբ գրում ենք նորան, ինչպէս. Թագուհի, ժողովուրդ:

Իսկ ներքին կողմից նկատելով ամէն բառ մէկ հասկացողութիւն է պարունակում, որով կարողանում ենք զանազանել նորան ուրիշ բառերից: Թագուհի ասելով հասկանում ենք թագաւորի կին, ժողովուրդ ասելով հասկանում ենք մարդոց բազմութիւն:

## § 12. Արմատ:

Տես—իլ, տես—ա—րան, տես—ան—ել, տես—ուչ բառերի մէջ տես վանկը մնում է անփոփոխ:

Բառի այն մասը, որ անփոփոխ է մնում, և որի մէջ պարունակւում է նորա բուն նշանակութիւնը, կոչւում է արմատ: — Տես է արմատ տեսել, տեսարան, տեսանել, տեսուչ բառերի:

Գիտ—եմ, գիտ—ուն, գիտ—ութիւն բառերի արմատն է գէտ, որի է տառը փոխուել է ի:

Ըմպ-ել, ըմպ-ելի, ըմպ-ան-ակ բառերի արմատն է ումպ, որի ու երկբարբառը փոխուել է ը:

Շատ անգամ ներդաշնակութեան համար արմատի ձայնաւորը կամ երկբարբառը փոխւում են ուրիշ ձայնաւորի: Այս լինում է հնչիւնների փոփոխման կանոնով (§ 6):

## § 13. Նախատիպ և ածանցական բառեր:

Մարմին, մարմն-ա-ւոր, անմարմն-ա-կան, մարմն-ա-ւոր-ա-կան:

Մարմին պարզ արմատական բառ է: Մարմն—ա—ւոր կազմուած է մարմին արմատական բառից վերջումը ւոր մասնիկը ընդունելով: Անմարմն—ա—կան բաղկացած է մի և նոյն մարմին արմատականից սկզբումը ան և վերջումը կան մասնիկները առնելով: Մարմն—ա—ւոր—ա—կան կազմուած է դարձեալ մարմին բառից ւոր և կան մասնիկներով:

Արմատական պարզ բառերը ասւում են նախատիպ, այսինքն այնպիսի բառեր, որոնք իրանց սկզբնական տիպը կամ կերպարանքը պահել են: — Մարմին նախատիպ բառ է:

Իսկ եթէ նախատիպ բառը սկզբից կամ վերջից և կամ երկու կողմից այլ և այլ մասնիկներ է ընդունում, ասւում է ածանցական: — Մարմն—ա—ւոր մարմն—ա—կան ածանցական բառեր են:

Պատահում է որ նախատիպ բառի մօտ հետզհետէ երկու ածանցական մասնիկ է լինում: Այս տեսակ բառերը կոչւում են կրկնածանց: Մարմն—ա—ւոր—ա—կան կրկնածանց է:

## § 14. Պարզ և բարդ բառեր:

Բարկասիրտ գործէ առանց խորհելոյ:

Բարկասիրտ բառը կազմուած է երկու նշանական բառից ու երկու հասկացողութիւն է պարունակում իր մէջ. բարկ և սիրտ:

Գործէ բառը ոչ մի բառի հետ կազմուած չէ:

Այն բառերը՝ որոնք ուրիշ բառերի հետ կազմուած չեն, կոչվում են պարզ: — Գործք պարզ բառ է:

Նորա՝ որոնք երկու կամ աւելի նշանական բառերից են կազմվում, կոչվում են բարդ: — Բարեխառն բարդ բառ է:

## § 15. Բառերի բուն և փոխաբերական նշանակութիւնը:

Սկզբնական ժամանակներում իւրաքանչիւր առարկայ ինչ տպաւորութիւն որ արել է մարդուս վրայ իր մէկ յատկութիւնով կամ գործողութիւնով, նորա յարմար մի անուն էլ տացաւ: Եւ որովհետև այլ և այլ առարկաներ կարող են մի և նոյն տպաւորութիւնը գործել, այս պատճառով լեզուի մէջ էլ շատ բառեր կան, որոնք ոչ միայն մէկ, այլ շատ առարկաների համար գործ են դրվում:

Հնում մարդը ամէնից առաջ նիւթական ու տեսանելի աշխարհի հետ յարաբերութիւն ունենալով՝ նրանից էլ ընդունեց իր առաջին տպաւորութիւնները, որոնք անշուշտ պէտք է նիւթական հասկացողութիւններ բացատրէին: Նաքերը՝ երբ նա սկսաւ մտաւոր բաների վրայ մտածել, նիւթական հասկացողութիւն բացատրող անունները փոխեց ու մտաւոր կամ վերացական առարկաների համար գործ դրեց: Այսպէս նա բնութեան մէջ գտնուած ամէնազօրաւոր գազանին անուանեց առիւծ և նրա աղաղակը մռնչիւն. յետոյ նկատելով մարդուս ուժը և ծովի ալիքների սաստկութիւնը, առիւծի ուժին ու ձայնին նմանացրեց ու նոյն անունները տուաւ նրանց— „առիւծ մարդ“, „մռնչիւն ալեաց ծովու“: Ծառի տուած բերքը անուանեց պտուղ, ու յետոյ փոխելով հանճարի համար էլ ասաց. „պտուղ ծառոյ, պտուղ հանճարոյ“: Գինու, ձայնի համար սկզբում ասեց թէ սուր կամ քաղցր են. յետոյ փոխելով խելքի, մտքի համար էլ գործ դրեց, որ վերացական հասկացողութիւններ են.— սուր խելք, քաղցր միտք:

Եւ թէ մտօքդ ես քաղցր և գուղ,
Ջանիր զիմաստս չէր և չուղ:

Ներքին նշանակութեան կողմից բառերը գործ են դրվում իրանց բուն նշանակութեամբ և փոխաբերական մտքով: — Պառաւ ծառայ, բութ դանակ զուրցուածքների մէջ պառաւ, բութ բառերը իրանց բուն նշանակութիւնով են գործ ածուած. պառաւ հանճար, բութ միտք զուրցուածքների մէջ մի և նոյն պառաւ և բութ բառերը փոխաբերական մտքով են ասուած:

## § 16. Նոյնանշան բառեր:

Ինչպէս որ այլ և այլ առարկաները մի և նոյն տպաւորութիւնն են անում, այնպէս էլ մէկ առարկայ զանազան կողմից երևալով մարդուս, կարող է զանազան տպաւորութիւններ գործել. այս պատճառով լեզուի մէջ կան բառեր, որոնք թէպէտ մի և նոյն առարկայի համար են ասվում, բայց զանազան կողմերն են բացատրում: Այս տեսակ բառերը մի և նոյն ժամանակ թէ նման են միմեանց և թէ զանազանվում են մէկը միւսից. Մարտ և պատերազմ, տրտմութիւն և տխրութիւն, ցաւ և վիշտ, սփոփել և մխիթարել:

Այս տեսակ բառերը կոչվում են նոյնանշան, այսինքն նոյն նշանակութիւնը ունեցող բառեր:

# Գ. Ուղղագրութեան ընդհանուր կանոնները

## § 17. Գրերը և նոցա զանազանութիւնը հնչիւններից:

Իւրաքանչիւր հնչիւն առանձին առած՝ կոչվում է ձայն, որ եթէ թղթի վրայ ձևակերպենք գիր է ասվում: Գրերը առանձին պայմանական նշաններ են, որոնց տեսնելով ենք որոշում միմեանցից, իսկ հնչիւնները լսելով:

Հայերէն լեզուն երեսունըութը գիր ունի, որոնցից ութը ձայնաւոր, իսկ երեսունը բաղաձայն: Վերջին երկու բաղաձայնները օ և ֆ յետին ժամանակները առնուած են օտարներից: Հներըօ-ի տեղ գրումէին աւ — աւր (օր), իսկ ֆ-ի տեղ փ — փիլիսոփայ:

Գրերը լաւ պէտք է զանազանել հնչիւններից, մանաւանդ ուղղագրութեան համար, որովհետև հնչիւնները ու գրերը միշտ իրարու նման չեն: Արտաբերութիւնը շատ անգամ մէկ հնչիւն ուրիշի է փոխում, իսկ ուղղագրութիւնը սովորաբար անփոփոխ է պահում բառերի արմատական հնչիւնները: Այսպէս գրում ենք մորթ, եղջայր, բայց կարդում ենք այժմ մուրթ, եղչայր:

## § 18. Նոյնահնչիւն տառերի գործածութիւնը:

Հայերէն լեզուի ուղղագրութիւնը պարզ ու դիւրին է, որովհետև որքան հնչիւն է լսվում այնքան տառ էլ գրվում է: Բայց կան մի քանի նմանաձայն տառեր, որոնք կարող են երբեմն դժուարութիւն պատճառել: Այս բոլոր դժուարութիւնները կարող են հետևեալ հիմնական կանոններին համառօտուիլ:

1. յ հ.— բառերի սկզբում յ տառը միայն ձայնաւորների առաջ գործ է դրվում, իսկ հ թէ ձայնաւորների ու թէ բաղաձայնների առաջ: Առ հասարակ իմանալու համար թէ երբ մէկ բառ յ ով է սկսվում և երբ հ ով, պէտք է արտաբերել նորան առանց այդ տառի. եթէ բառի սկզբնական կամ մօտիկ նշանակութիւնը պահվում է, յ ով գրելու է, իսկ եթէ չէ՝ հ ով, ինչպէս. յառաջ (առաջ), յեղանակ (եղանակ), յանձնել (անձնել): Բայց պէտք է գրել հրաման, հեշտ, հետ, որովհետև եթէ հ վերցնենք, ամենևին նշանակութիւն չեն ունենալ, կամ գէթ միտքը բոլորովին կը փոխուի, ինչպէս հայր և այր: Այս կանոնը առանց բացառութեան չէ:

Բառերի վերջում յ տառը միայն ա և ո ձայնաւորներից յետոյ է գրվում և անձայն է, ինչպէս. արքայ, ծառայ, դշխոյ, աղբոյ*: Բառերի մէջ էլ նոյն ձայնաւորներից յետոյ է գրվում և հնչվում է կարճ ի, ինչպէս. այգ, առայգ

* Դերանունները և բայերը եզակի առորեական հրամայականում այս կանոնից խոտորում են. նա, տուր, առ', կեր': Եթէ դերանունների վրայ յօդ աւելացուի, յ առնում են. դոր տայս առնել, ընկայն արարէք և եա:

2. ւ և վ.—բառերի միջում և վերջում ա, ե, է ձայնաւորներից յետոյ միշտ ւ է գրւում, իսկ ուից յետոյ վ, ինչպէս. աւար, համբաւ, թեթեւ, ջոջնիւ, բեւր թոթով, ծողով, ովլոր: ✗

Բառերի սկիզբը ւ երբէք չէ գործ դրւում, այլ միշտ վ: ⁄⁄

3. ր և ռ.—Առ հասարակ ընիկ ն տառից առաջ գրեթէ միշտ ռ է գործ դրւում. գառն, ամառն, ծիծառն, առնուլ, կառնակ, փառնոս: Մինչև անգամ օտարազգի անունների մէջ ռ տառը, որ սովորաբար ր է փոխւում մեզանում, ն-ից առաջ ռ է պահւում, Պառնասոս, Հոլոֆեռնէս, Կառնէշիոս, Զմիւռնիա: Այս պատճառով եթէ ր վերջացած արմատական բառերը փոխուելու կամ ածանցուելու ժամանակ ն տառը առնեն, ր փոխւում է ռ, ինչպէս. այր—առն—յառնէ, տէր—տեառն—'ի տեառնէ, ջեր—ջեռնուլ, դարձ—դառնալ: — Բայց եթէ ր և ն ձայնաւորով բաժանուած լինին բառի մէջ և փոխուելու կամ ածանցուելու ժամանակ մօտիկանան, ր չէ փոխւում. վերին—վերնոյ—վերնոյնան, գարուն—գարնան—գարնանային: Միայն ռն վերջացած բառերը փոխուելու ժամանակ եթէ ձայնաւորով բաժանուին, երբեմն ռ փոխւում է ր և երբեմն անփոփոխ է մնում. դուռն—դրան, մատուռն—մատրան, լեառն—լերին, բեռն—բեռին, ձեռն—ձեռին:

Բառերի սկզբում ր և ռ սովորաբար մենակ չեն բանում, բացի մի քանի բառերում, րաբունի, ռաբբի. այլ գրեթէ միշտ իրանցից առաջ հ տառն են առնում. հրեշտակ, հրապարակ, հրովարտակ, Հռիփսիմէ:

4. բ, պ, փ շրթնային բաղաձայններից առաջ՝ ն գիրը մ է փոխւում, ինչպէս. ամբիծ, ամբառ, նեղութիւն—նեղութեամբ ամփոփ, ամպ:

## § 19. Բաղաձայնների կրկնութիւնը:

Հայերէն լեզւում առ հասարակ պարզ բառերի մէջ բաղաձայնները չեն կրկնւում: Մինչև անգամ օտար անուննե-

րում կրկնուած բաղաձայնները հայերէնում մէկ տառով ենք գրում. Թադէոս, Թեսաղիա, Փիլիպոս, Անա, փոխանակ Թադդէոս, Թեսսաղիա, Փիլիպպոս, Աննա:

Միայն բարդ և ածանցական բառերում, երբեմն էլ ար-մատականների փոխուելու ժամանակ՝ բաղաձայններր կրկնվում են, ինչպէս. խրատտու, աննուէր, բարրուրք (բարուրք), երրորդ, չոր-րորդ, կծծի (կծիծ), գչչել փթթել (փթիթ), բզզել (բզիզ):

Ն և ր տառերը քիչ անգամ պարզ բառերի վերջը կրկ-նվում են. ինն, երր, տարր, անդորր:

## § 20. Գլուխ և մանր տառեր:

Բոլոր գրերն են 1) գլուխ կամ մեծ տառեր և 2) մանր կամ փոքր տառեր. Ա, ա, Բ, բ և այլն:

Գլխատառերը գործ են ածվում.

1) Իւրաքանչիւր նոր խօսքի սկզբում, ինչպէս.

„Որքան պայծառ է երկինք աստեղօք և երկիր բուսովք, այն-պէս և ջան աշխարհագիր պատմողի՝ յայլոց նիւթոց պարա-զարդի“:

2) Ոտանաւորների մէջ իւրաքանչիւր տողի սկզբում, ինչպէս.

'Ի քէն Տէր հայցեմ
'Ի մարդասիրէդ
Ինձ բժշկութիւն.
Լեր կեանք մեռելոյս,
Լոյս խաւարելոյս,
Լուծանող ցաւոյս:

3) Մարդոց, երկրների, գետերի, սարերի, և այլն ուրիշ անունների մէջ. Մեծն Արշակ, Տիգրան Երկրորդ, Հայաստան, Երևան, Արարատ, Եփրատ և այլն:

4) Սրբազան անուններում, ինչպէս նաև պատուաւոր ա-նուններում և տիտղոսներում. Աստուած, Արարիչ, Ամենակա-րող, Թագաւոր, Կայսր, Վեհափառ Տէր, Վսեմափայլ Կոմս և այլն:

5) Գրքերի վերնագրում. Պատմութիւն Վարդանանց — Եղիշեայ. Գիրք Պիտոյից — Խորենացւոյ. Յիսուս Որդի — Շնորհալւոյ. Ատենաբանական ճառ — Լամբրոնացւոյ :

## § 21. Տողադարձի կանոնները:

Բառերը մէկ տողից միւսը փոխադրելու ժամանակ՝ պէտք է ուշադրութիւն դարձնել վանկերի կանոնաւոր բաժանմանը, հետևեալ կերպով:

1 Միավանկ բառերը չեն կարող մէկ տողից միւսը փոխադրուիլ. մարդ, ծառ, գառն :

2. Եթէ մէկ ձայնաւոր բառի սկզբում առանձին վանկ է կազմում, գրւում է տողի վերջը. ա-րև, ե-րամ, օ-րէնք :

3. Երկու ձայնաւորներից մէկը առաջին տողի վերջում և միւսը յաջորդի սկզբումն է գրւում. մի-այն, դի-ակ, է-ակ :

4. Երկբարբառները ամենևին չեն կարող բաժանուիլ. նաւեր, Բեթաւոր, Եւրոպա-ցիներ :

5. Մի բաղաձայն բառի մէջ միշտ փոխադրւում է միւս կողմը. Բա-րի, ծա-ղիկ, ա-հա-գին, ա-ռա-ջա-ւոր :

6. Երկու բաղաձայններից մէկը մէկ կողմը միւսը միւս կողմն է գրւում. եր-կիր, ըն-կեր, տար-րալ, ըն-կեր-նալ :

7. Իսկ եթէ բառի մէջը շատ բաղաձայններ լինին, միայն մէկը յաջորդ վանկի հետ անցնում է միւս կողմը. մանկ-ութ, Բարք-ման, ինք-նա-կալ, անձն-ական :

8. Այն բառերում ուր ը տառը բաղաձայնների մէջ լսւում է, փոխադրելու ժամանակ գրւում է տողի վերջը. ըր՛ջ-ամ, կը-ծաւոր, նը-ման, ըը-կալ, գը-տնալ, Բը-նի, ըղ-ձել:

Բառերը մէկ տողից միւսը փոխադրելու ժամանակ կապւում են մի միա, ցուցիչ գծով, որ տողի վերջումը գրւում է: Այս միացուցիչ գիծը կոչւում է ենթամնայ :

## § 22. Համառօտագրութիւն:

Գրքերում շատ անգամ պատահում են համառօտուած բառեր, ինչպէս. ամ (ամենայն), Ած (Աստուած), Յս Քս (Յիսուս Քրիստոս) :

Համառօտագրութեան նշաններն են.

1. (–), որ անուանւում է պատիւ և համառօտուած բառի վրայ է գրւում, բայց այժմ քիչ է գործածւում:

2) Մի պարզ կէտ (.), որ համառօտուած բառի մօտ է գրւում, ըստ եւրոպական սովորութեան. Յովհ. Մատթ. (Յով-

հան Մանդակունի), Ստեփ. Սիւն. (Ստեփաննոս Սիւնեցի). իսկ թուահամարների առաջ մէկ կէտ են դնում, եթէ նշանակում են առաջին, երկրորդ, ինչպէս. Արտաշէս Ա. Տիգրան Բ.

Առ հասարակ նկատելու է, որ կէտով համառօտուած բառը բաղաձայնով վերջանայ և ոչ ձայնաւորով, ինչպէս. Զաք. Կաթ. (Զաքարիա Կաթուղիկոս), և ոչ Զաքա. Կաթու., որից բան չէ հասկացվում:

## § 23. Կէտադրութիւն:

Խօսքի այլ և այլ մասերը միմեանցից բաժանելու համար, որ միտքը հասկացուի, գործ են դրվում զանազան նշաններ, որոնք անուանվում են կէտ և նրանց գործածութիւնը կէտադրութիւն:

Հայերէն կէտադրութեան գլխաւոր նշանները չորս են, որոնք գործ են դրվում մտքի ճշդութեան և կարդացողին հանգիստ տալու համար, սրանք են.

| | |
|---|---|
| 1. Բութ (՝) | 3. Միջակէտ (·) |
| 2. Ստորակէտ (,) | 4. Վերջակէտ (:) |

Կայ ուրիշ չորս երկրորդական նշան էլ, որոնք մտքի ճիշդ բացայայտութեան համար երբեմն գործ են դրվում.

| | |
|---|---|
| 1. Մակակէտ ('ի). | 3. Չակերտ („ “) |
| 2. Ապաթարց (չ'). | 4. Փակագիծ (( )): |

Վերջին երեքը եւրոպական կէտադրութիւնից առնուած են:

## § 24. Առոգանութեան նշաններ:

Բառերը ուղիղ արտաբերելու համար գործ են դրվում մի քանի առանձին նշաններ, որոնք կոչվում են Առոգանութեան նշանք և դրվում են միշտ ձայնաւորների վրայ: Գլխաւորները են.

| | |
|---|---|
| 1. Շեշտ (ե՛կ). | 3. Ոլորակ կամ |
| 2. Երկար (բա՜րէ). | Պարոյկ (ե՞րբ): |

Կէտադրութեան և առոգանութեան նշանների մասնաւոր գործածութեան վրայ յետոյ:

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

# ՄԱՍՈՒՆՔ-ԲԱՆԻ

## Ա. Գոյական անուն

### § 25. Ի՞նչ է առարկայ:

Առարկայ բառը կազմուած է առ կամ առաջի և արկանել (քցել) բառերից, կամ առաջ դրուած բան, ինչ որ մեր աչքի առաջ կամ մտքում գտնվում է: Քարը, ձուկը, ծառը աչքով տեսնում ենք, Աստուծոյ, հրեշտակներին աչքով չենք տեսնում, բայց մտքով ըմբռնում ենք:

Այն բաները՝ որոնց մենք աչքով տեսնում կամ մտքով ըմբռնում ենք, կոչվում են առարկայ:— Քար, ծառ, ձուկ, Աստուած, հրեշտակ առարկաներ են:

### § 26. Առարկաների տեսակները:— Գոյական անուն:

Առարկաները բաժանվում են երկուսի.

1. Նիւթական կամ զգալի, որոնց ճանաչում ենք մեր հինգ զգայարանքներով. աչքով, ականջով, հոտառութիւնով, ճաշակով և շօշափելով, ինչպէս. արեգակ, զանգակ, վարդ, մեղր, քար:

2. Մտաւոր կամ վերացական, որոնց մտքով ենք ըմբռնում, ինչպէս. ժամանակ, տարի, ձմեռն, ամառն, համբերութիւն, բարութիւն*:

* Մտաւոր առարկաների մէջ կան մի քանի հոգևոր առարկաներ, որոնց թէպէտ միայն մտքով ենք ըմբռնում, բայց գոյութիւն ունին և զանազանվում են միւս

Նիւթական առարկաները լինում են.

1) Անշունչ՝ որոնք չեն կարող իրանց ազատ կամքով մէկ տեղից միւսը շարժիլ, ինչպէս. քար, ծառ, տուն, երկաթ:

2) Շնչաւոր՝ որոնք իրանց ազատ կամքով շարժւում են. Թռչուն, ձուկ, գայլ, մարդ:

Բոլոր այս նիւթական ու մտաւոր, անշունչ ու շնչաւոր առարկաները առանձին անուններ ունին, որոնք միասին առած՝ կոչւում են գոյական անուն, որովհետև բնութեան մէջ կամ մեր մտքում կան, գոյութիւն ունին:

## § 27. Յատուկ և Հասարակ գոյականներ:

Հայաստան աշխարհ. Արարատ լեռն. Անի քաղաք. Եփրատ գետ. Արտաշէս արքայ:

Այս խօսքերի մէջ Հայաստան, Արարատ, Անի, Եփրատ, Արտաշէս այնպիսի անուններ են, որոնցից իւրաքանչիւրը միայն մէկ առարկայի յատուկ ու սեփական է. այդ անունը կրող ուրիշ առարկաներ չկան: Բայց դոքա ուրիշ անուններ էլ ունին. Հայաստանը աշխարհ է, Արարատը՝ լեռն, Անին՝ քաղաք, Եփրատը՝ գետ, Արտաշէսը՝ արքայ. միայն աշխարհ, լեռն, քաղաք, գետ, արքայ այնպիսի անուններ են, որ ուրիշ շատ աշխարհների, լեռների, քաղաքների, գետերի, արքայների էլ — հասարակ պատկանում են:

Գոյական անունները երկու տեսակ են.

1. Յատուկ՝ որ միայն մէկ առարկայի է պատկանում:— Հայաստան, Արարատ, Անի, Եփրատ, Արտաշէս* յատուկ գոյական անուններ են:

2. Հասարակ՝ որ շատ առարկաների է պատկանում:— Աշխարհ,

---

մտաւոր առարկաներից, ինչպէս. Աստուած, հրեշտակ, հոգի: Իսկ գեղեցկութիւնը առանձին գոյութիւն չունի, այլ ուրիշ առարկայի մէջ է երևում, օրինակ վարդի կամ պատկերի մէջ, ուրեմն վեր է առնուած վարդի կամ պատկերի յատկութիւնից: Տխրութիւնը բացատրւում է մարդու դէմքի վրայ, ուրեմն վեր է առնուած նրա դէմքի դրութիւնից: Այս պատճառով մտաւոր առարկաները վերացական էլ են ասւում:

* Թէպէտ նոյն անունը կրող մարդոց անուններ շատ կան, բայց նոցանից ոչ մէկը միւսին նման չէ: Այս տեսակ յատուկ անունները միմեանցից լաւ որոշելու համար շատ անգամ մի ուրիշ բառ են աւելացնում նոցա մօտ. Արտաշէս Ա. Արտաշէս Բ. Մովսէս Խորենացի, Մովսէս Քերթող:

ընտանիք, ժողով, գունդ, ամբոխ հասարակ գոյական անուններ են:

Եթէ շատ միատեսակ հասարակ առարկաներ մէկտեղ հաւաքուելով՝ մի ամբողջ են կազմում, ասվումեն հաւաքական, ինչպէս. անտառ (ծառերի հաւաքում), հօտ (ոչխարների հաւաքում), գունդ (զինուորների հաւաքում):

## ԿՐԹՈՒԹԻՒՆ.

1. Յիշել ա) բոլոր ծանօթ աշխարհների կամ երկրների անունները, բ) լեռների անունները, գ) գետերի անունները, դ) քաղաքների անունները, ե) մարդոց անունները:

2. Հետեւեալ յատուկ անունների մօտ դնել նոցա յարմար հասարակ անուններ.

Կովկաս—Դանուբ—Երևան—Սմբատ—Տիգրան—Պարսկաստան:

3. Հետեւեալ հասարակ անունների մօտ դնել նոցա յարմար յատուկ անուններ.

Ծով—լիճ—գետ—կղզի—գիւղ—քաղաք—նահանգ—գաւառ—լեառն—թագաւոր—կայսր—իշխան—նախարար—զօրավար—մագիստրոս—կաթողիկոս—եպիսկոպոս—վարդապետ:

4. Հասկացնել թէ ինչ է ժողովուրդ—ազգ—ցեղ—սերունդ—ամբոխ—խումբ—երամ—բանակ—երամակ:

## § 28. Սեռ:

Շնչաւոր առարկաները երկու սեռի են լինում. արական և իգական, ինչպէս. հայր, եղբայր, մայր, քոյր: Այս տեսակ սեռը ասվում է բնական:

Ուրիշ լեզուներում, բաց 'ի այս բնական սեռից, կայ և քերականական սեռ, որ հիմնվում է բառերի վերջաւորութեան վրայ և չորս է բաժանվում. արական, իգական, հասարակ ու չէզոք:

Հայերէնում միայն մի քանի մարդոց յատուկ անուններ կան, որոնց արական և իգական որոշվում է առանձին վերջաւորութիւններով. էս և ոս արականի համար, ա և է իգականի համար, ինչպէս. Հերակլէս, Յուլիանոս, Հերակլիա, Յուլիանէ: Բայց այս օտար լեզուներից առնուած է:

Մեր լեզուին յատուկ է երբեմն կանանց անուններ կազմել արական անունների մօտ հետեւեալ իգական գոյականները դնելով. դուխտ՝ որ պարսկերէնից առնուած է և նշանակում է դուստր, ուհի՝ որ արաբերէնից առնուած է (ուրհի) և նշանակում է աղջիկ և անոյշ բառը, ինչպէս. Սան—դուխտ, Խոսրովի—դուխտ, Սմբատ—անոյշ, Սմբատ—ուհի, Վարդ—անոյշ, Վարդ—ուհի, Տիգրան—ուհի:

Երբեմն հասարակ անունների մօտ էլ ուհի դնելով իգական անուն է կազմվում. Թագաւոր—Թագուհի, տէր—տիրուհի:

ԿՐԹՈՒԹԻՒՆ.

Հետեւեալ արական գոյականների համար գտնել իրանց յարմար իգականները. Այր—փեսայ—աներ—հօրեղբայր—մօրեղբայր—կայսր—իշխան դուքս—կոմս—Յուլիոս—Յովհաննէս:

## § 29. Թիւ:

Ծառ բարի պտուղ բարի առնէ:
Ծառք բարիք պտուղս բարիս առնեն:

Առաջին օրինակի մէջ ծառ, պտուղ գոյականները առանձին առած մէկ մէկ առարկայ են ցոյց տալի: Երկրորդ օրինակին մէջ ծառք, պտուղս շատ առարկաներ են ցոյց տալի:

Գոյական անունները ունին երկու թիւ.

1. Եզակի՝ որ մէկ է ցոյց տալի և գործ է դրվում այն ժամանակ, երբ խօսքը միայն մէկ առարկայի վրայ է:—Ծառ, պտուղ եզակի են:

2. Յոգնակի՝ որ մէկից աւելի կամ շատ է ցոյց տալի և գործ է դրվում այն ժամանակ, երբ խօսքը շատ առարկաների վրայ է:—Ծառք, պտուղս յոգնակի են:

Կան բառեր՝ որ միայն եզակի են գործածվում, ինչպէս. Լոյս, սէր, խաւար, հարաւ, հիւսիս: — Այս տեսակ գոյականները կոչվում են անյոգնական:

Կան բառեր էլ՝ որոնք միայն յոգնակի են գործ ածվում. աղօթք, ջուրք, ընծայք, հարսանիք, Արևելք, Արևմուտք։ — Այս տեսակ գոյականները ասվում են Անեզական։

## § 30. Հոլով։

Պարտէզն մեր գեղեցկադիր է։ — Ծառք պարտիզին պտղատուք են։ — Ցամենայն աւուր երթամ ես 'ի պարտէզ։ — Հայր իմ զարդարեաց զպարտէզ մեր։ — Եղբարք և քորք իմ ելեալ գան 'ի պարտիզէ։ — Վաճառեաց տէրն զտուն իւր հանդերձ պարտիզաւ։

Այս այլ և այլ օրինակների մէջ պարտէզ բառը սկզբից կամ վերջից կամ երկու կողմից փոփոխութիւններ կրելով՝ նորա նշանակութիւնն էլ անդադար փոխվում է։ Պարտէզն մեր գեղեցկադիր է։ — Այս օրինակից երևում է թէ ինչ է մեր խօսակցութեան առարկան — պարտէզն։ — Ծառք պարտիզին պտղատուք են։ — Այստեղ երևում է թէ ծառերը ո՛ւմն են պատկանում — պարտիզին։ — Ցամենայն աւուր գնամ ես 'ի պարտէզ։ — Այս խօսքը ցոյց է տալի թէ ուր եմ գնում կամ շարժվում ես — դէպի է պարտէզ։ — Հայր իմ զարդարեաց զպարտէզ մեր։ — Այս տեղ երևում է թէ ինչ բան իմ հօր գործողութեան ենթակայ է — պարտէզն։ — Եղբարք և քորք իմ ելեալ գան 'ի պարտիզէ։ — Այս խօսքով յայտնվում է թէ եղբայրները ու քոյրերը որ տեղից են հեռանում — 'ի պարտիզէ (պարտեզից)։ — Վաճառեաց տէրն զտուն իւր հանդերձ պարտիզաւ։ — Այս խօսքից երևում է թէ տէրը ինչով, ինչ բանի հետ միասին ծախեց իր տունը — պարտիզաւ։

Գոյական անուան կրած այլ և այլ փոփոխութիւնները ասվում են հոլով։ — Պարտիզէ, 'ի պարտէզ, զպարտէզ, պարտիզաւ — հոլովներ են։

Հայերէն լեզուն վեց հոլով ունի. Ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական։

### 1. Ուղղական հոլով

Ուղղականը անուան անփոփոխ ձևն է, որ ուղղակի յայտնում է թէ ով կամ ինչ բան է մեր խօսակցութեան առարկան, և պատասխանում է այս հարցմունքներին. ո՞վ, ի՞նչ։ Ո՞վ էր առաջին նահապետ Հայոց։ — Հայկ։ Զի՞նչ անուն է քաղաքիս։ — Տարօն։ — Հայկ, Տարօն ուղղական հոլովներ են։

Եթէ ուղղականը կանչելու մտքով է գործ դրվում, ասվում է կոչական։ Կոչականը զանազանվում է ուղղականից միայն մի շեշտ առնելով կամ իրանից առաջ «ո՜վ», «ո» բառերը ընդունելով. ինչպես ո՜վ այր, ո մարդիկ։ Մի քանի ոս վերջացած յատուկ բառեր յունական լեզուի սովորութիւնով կոչականում է են փոխվում. „Պետրէ, Պօղէ, Ղազարէ՝ արի, եկ արտաքս։ Զաքէ՝ փութա, էջ այսր“։

## 2. Սեռական հոլով.

Սեռական հոլովը ցոյց է տալիս թէ մի բան ումն է պատկանում, կամ ինչ բանից առաջ է գալիս, սերվում է, և պատասխանում է այս հարցմանը. ո՞ւմ։ Որո՞յ են մատեանքդ։— Աշակերտի։— Աշակերտի սեռական հոլով է։

## 3. Տրական հոլով.

Տրական հոլովը երկու է. վերջահոլով, որ վերջը փոխվում է և նախդրիւ, որ սկիզբը նախդիր է առնում։

Վերջահոլով տրականը ցոյց է տալիս թէ մի բան ումն է տալիս և պատասխանում է այս հարցմանը. ո՞ւմ։ Ում տաս զմատեանդ։— Եղբօր իմում։— Եղբօր իմում վերջահոլով տրական է։

Նախդրիւ տրականը ցոյց է տալիս մի տեղից միւս տեղ դէմելը, շարժուելը և պատասխանում է այս հարցմունքին. յո՞։ Յո՞ երթաս։— Յեկեղեցի, 'ի տուն։— Յեկեղեցի, 'ի տուն նախդրիւ տրական են։

## 4. Հայցական հոլով.

Հայցական հոլովը ցոյց է տալիս թէ մի առարկայ ուրիշ առարկայի գործողութեան ենթակայ է գտնվում և պատասխանում է այս հարցմունքներին. զո՞, զի՞նչ։ Զո՞ խաչեցին

Հրէայք : — Զեխոսս : — Զի՞նչ խնդրես : — Զհանդերձս իմ : — Զեխոսս, զհանդերձս հայցական հոլովներ են :

## 5. Բացառական հոլով.

Բացառական հոլովը ցոյց է տալի թէ՝ մէկ տեղից հեռանում ենք կամ մէկից մի բան ենք դուրս բերում ('ի բաց առնուլ), և պատասխանում է այս հարցմունքներին յումմէ՞, ուստի՞ : Յումմէ՞ ընկալան մարդիկ զձիրս շնորհաց : — Յաստուծոյ : — Ուստի՞ գաս : — Ի տանէ, 'ի դաշտէ : — Յաստուծոյ, 'ի տանէ, 'ի դաշտէ բացառական հոլովներ են :

## 6. Գործիական հոլով.

Գործիական հոլովը ցոյց է տալի թէ մէկ բան ո՞ւմ ձեռքով կամ ինչով, ի՞նչ գործիքով է կատարվում և պատասխանում է այս հարցմունքներին. որո՞վ, ի՞ւ : Որո՞վ իշխանութեամբ արարեր զայդ : — Իշխանութեամբ հօր իմոյ : — Ի՞ւ բրեն զերկիր : — Բահիւ : — Իշխանութեամբ, բահիւ գործիական հոլովներ են :

## § 31. Հոլովումն :

Բոլոր գոյական անունները մէկ կերպով չեն փոխվում, ինչպես. Սուրբ լինում է սրբոյ, սրբով, 'ի սրբոյ, կամ սուրբք, սրբոց, սրբովք, 'ի սրբոց. դաշտ, լինում է դաշտի, դաշտաւ, 'ի դաշտէ, կամ դաշտք, դաշտաց, դաշտօք, 'ի դաշտաց և այլն : Բառերի այս տեսակ տեսակ հոլովելը եզակի և յոգնակի թւերում՝ կոչվում է Հոլովումն : — Սուրբ և դաշտ ուրիշ ուրիշ հոլովման բառեր են :

## § 32. Անուան պարագաները :

Գոյականներն են նիւթական և վերացական, շնչաւոր և

անշունչ առարկաների անուններ: Գոյական անունները լինում են յատուկ, հասարակ և հաւաքական և ունին թիւ, հոլով և հոլովումն:

### ԿՐԹՈՒԹԻՒՆ:

Աշակերտները ուսուցչի ընտրութեամբ կարդում և թարգմանում են ընթերցանութեան հատուածներից մէկ երկուսը, և ցոյց են տալի բոլոր գոյական անունները, յիշելով նոցա պարագաները: Հոլովների նշանակութիւնը պարզ կերեւայ թարգմանութիւնից:

---

## Բ. Ածական անուն

### § 33. Ի՞նչ է ածական անունը:

**Քաղաքացի** մուկն **ածելի**
**Ընդելուզեալ** **հեշտ** բանիւ
Զ**գեղջուկն** ի տուն հրաւիրեաց
'ի ճաշկերոյթ փշրանաց:
'ի կապերտի **պղնձեան**
Ճաշք **համադամ** սփռեալ կան.
Ո՜հ քաղցրութեան՝ յոր անդէն
**Սերտ** բարեկամք վայելեն:

Այս ոտանաւորի մէջ բոլոր նշանած բառերը գոյականների մօտ դրուելով նոցա որպիսութիւնն են ցոյց տալի ու միմեանցից որոշում են. **քաղաքացի** և **ածելի** բառերը **մուկն** գոյականի մօտ դրուելով՝ ցոյց են տալի նորա **որտեղի** լինելը և զանազանում են **գեղջուկ** մուկից. **ընդելուզեալ**, **հեշտ** դրուելով **բանիւ** գոյականի մօտ որոշում են նորան **անընդհէն**, **դժուար** բանից, և այլն:

Այն բառերը՝ որոնք ցոյց են տալի գոյական անունների որպիսութիւնը կամ յատկութիւնը, կոչվում են **ածական անուն**. **ածական**՝ որովհետև խօսքի մէջ **բերվում** ու գոյականների մօտ են դրվում նոցա միմեանցից որոշելու համար. **անուն**՝ որովհետև յատկութիւնները թէև առարկաների մէջ են պարունակվում ու նրանցից անբաժան են, ինչպէս **բարի մարդ** (բարութիւնը մարդու բնութեան մէջն է), **կանաչ տերև** (կանաչ

գոյնը տերեւից անբաժան է), բայց լեզուի մէջ առանձին անուններ կան նորա բացատրելու համար։— Քաղցրաձայն, Գեղջուկ, աշխուժ, հեշտ, դժուար, ճարպիկ, չաղաչ ածական անուններ են։

ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Ի՞նչ յատկութիւններ կարող են ունենալ հետեւեալ առարկաները.

Գիրք—գրիչ—թանաք—թուղթ—սեղան—աթոռ—ձրագ—լապտեր—դանակ—գդալ—փողոց—հող—մարդ—քար—ծառ—խնձոր—ամառն—ձմեռն—չերեկ—գիշեր—աշակերտ—վաճառական—հողագործ—նկարիչ—երաժիշտ։

2. Ի՞նչ առարկաների կարող են պատկանել հետեւեալ յատկութիւնները.

Սպիտակ—սեւ—թուխ—կարմիր—կապոյտ—կանաչ—լուսաւոր—խաւարային—մեծ—երկայն—լայն—զօրաւոր—պինդ—կարծր—թանձր—ձանձրալի—հետաքրքիր—փափուկ—ջանասէր—աշխատասէր—համեստ։

## § 34. Որակական և յարաբերական ածականներ։

Իմաստուն մանուկ, ոսկի մանեակ, պարսկական կապերտ. աշնանային պտուղ։

Այստեղ իւրաքանչիւր զուգուածքի մէջ մէկ մէկ գոյական և ածական կայ. Իմաստուն ածականը ցոյց է տալի մանկան այն յատկութիւնը, որ նորա բնութիւնից առնուած է. ոսկի ած. ոչ միայն յատկութիւն է ցոյց տալի, այլ և այն նիւթը, ինչից շինուած է մանեակը. պարսկական—այն տեղը ուր գործուել է և թէ ում է պատկանում կապերտը. աշնանային—այն ժամանակը երբ հասունանում է պտուղը։

Ածականները իրանց ցոյց տուած յատկութիւններին նայելով երկուսի են բաժանվում.

1. Որակական՝ որ առարկայի այն որակութիւնն է ցոյց տալի, որ նորա բնութիւնից առնուած է։— Իմաստուն որակական ածական է։

2. Յարաբերական՝ որ ցոյց է տալի մէկ առարկայի ունեցած յարաբերութիւնը ուրիշ առարկաների հետ, նորա ում շինելը, նիւթը ինչից շինուած է, նոյնպէս և ժամանակի ու տեղւոյ հանգամանքները։ Ոսկի, պարսկական, աշնանային յարաբերական ածականներ են։

Որակական և յարաբերական ածականների մէջ եղած մէկ մեծ զանազանութիւնն էլ այն է, որ առաջինների ցոյց տուած որպիսութիւնը կարող է աւելի կամ պակաս երևել ա-

առարկայի մէջ, ինչպէս. այս մարդը իմաստուն է, երկրորդը՝ իմաստագոյն, երրորդը՝ ամէնիմաստ :

Իսկ յարաբերական ածականների ցոյց տուած յատկութիւնը չէ կարող ոչ աւելանալ, ոչ պակասիլ. չէ կարելի ասել առաւել աշնանային, առաւել պղնձեայ :

### ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Գտնել հետեւեալ որակական ածականների հակառակ նշանակութիւն ունեցողները.

Մեծ — բարձր — երկայն — լայն — կլոր — գեղեցիկ — բարի — քաջ — նոր — իմաստուն — տկար — թեթև — մաքուր — սև — քաղցր — թանձր :

2. Ցոյց տալ յարաբերական ածականների նշանակութիւնը հետեւեալ զուցուածքների մէջ.

Ոսկի ժամացոյց — երկաթի բահ — արծաթեայ սպաս — փայտեայ — տուն ապակեայ շիշ — ադամանդեայ մատանի — մսեղէն կերակուր — մաշկեղէն գօտի — հրեղէն նիւթ — հողեղէն արարած — ձմեռային սառնամանիք — գարնանային ծաղիկ — աշնանային եղանակ — ամառային տօթ — առաւօտեան ժամերգութիւն — երեկոյեան հանգիստ — հայկական բարբառ — յունական ճարտարապետութիւն — ասորի գրականութիւն — պարսկական գորգ :

## § 35. Որակական ածականների աստիճանները:

Մէկ առարկայի որպիսութիւնը երեք կերպով կարող է համեմատուիլ ուրիշ առարկայի որպիսութեան հետ: Այս երեք կերպ համեմատութիւնից առաջ են գալի որակական ածականների համեմատութեան աստիճանները:

Համեմատութեան աստիճաններն են. **դրական**, **բաղդատական** և **գերադրական** :

1. **Դրական** ածականը առարկայի որպիսութիւնը պարզապէս յայտնում է, առանց համեմատելու նրան ուրիշ առարկաների հետ, ինչպէս. **ծեր մշակ**, **հզօր գազան**, **ծանր բեռն** : — **Ծեր**, **հզօր**, **ծանր** դրական ածականներ են :

2. **Բաղդատական** ածականը երկու առարկայ միմեանց հետ բաղդատում է, ցոյց տալով մէկի որպիսութեան առաւելու-

թիւնը կամ պակասութիւնը միւսից, ինչպէս. Առիւծն հզօրագոյն է քան գայլ: Հատն մանանխոյ փոքրագոյն է քան զայլ սերմանիս:— Հզօրագոյն, փոքրագոյն բաղդատական ածականներ են:

3. Գերադրական ածականը ցոյց է տալիս թէ մէկ առարկայ, իր որպիսութեան կողմից, միւսից գերազանց կամ բոլորովին ստոր է, ինչպէս. Աստուած ամենաբարի է: Ամենափոքրն 'ի նոցանէ է կոչեցեալ:— Ամենաբարի, ամենափոքր գերադրական ածականներ են:

## § 36. Ածական անուան պարագաները:

Ածական անուններն են որական և յարաբերական. որականները ունին համեմատութեան աստիճաններ: Ածականները ունին նոյնպէս թիւ, հոլով և հոլովումն:

### ԿՐԹՈՒԹԻՒՆ

Աշակերտները կարդում են մէկ հատուած դասատան ժամանակ, և ցոյց են տալի ածական անունների պարագաները:

---

# Գ. Բայ

## § 37. Ի՞նչ է բայը:

Մինչ փարատէր այգ զուարթ գիշերոյ մութ տրտում,
Իջի 'ի դրախտ ծաղկազարդ նշմել յակինթ և քրքում:
Շուրջ ծառաստան պտղաւէտ, նուռն, որթենի և խնձոր,
Ոստովքն յերկիր հակամէտ, պտղովք 'ի միրգ ցօղաւոր:
Հնչէին նոճիք քաղցր 'ի յերգ, արշանէ ժիր մեղուաց պար.
Ցանէին մշակք յուրեանց երկ, գնան մրջիւնք տողաբար:

Այս ոտանաւորի առաջին տողի մէջ խօսքը այգի, այսինքն առաւօտեան լուսոյ վրայ է, որ փարատում, ցրւում էր գիշերուայ մթութիւնը. [illegible] այգի գործ-

ծողութիւնն է, որով նա ներգործում է փառքին վրայ։ Երկրորդ տողի մէջ ողջին գրողը ինք իր վրայ է խօսում, առանց անունը յիշելու և ասում է. «իջի ի դրախտ ծաղկազարդ».—ԻՋԱՆԵԼԸ նորա կատարած գործողութիւնն է, բայց այնպիսի գործողութիւն, որ ուրիշ առարկայի վրայ չէ անցկենում։ Ինչու համար է իջնում նա դրախտ կամ պարտէզ.—«Երթեւ յակինթ և քրքում», յակինթ և քրքում ծաղիկները քաղելու.—ՔԱՂԵԼԸ նորա արած գործողութիւնն է, որով ներգործում է յԱԿԻՆԹԻ և ՔՐՔՈՒՄԻ վրայ։ Ցեառց խօսք է լինում պտղատու ծառերի վրայ՝ թէ ՊՏՂԷՆ, այսինքն զարդարւում են, —այդ ցոյց է տալի ծառերի պտուղքին դրութիւնը, որ ցօղով թրջուած մրգերից են ստանում։ Նոճիների համար ասւած է թէ ՃՌՆՉԷՆ, մեղուների խմբի համար —ՊՐԾԱՆԷ (հեռանում է), մշակների համար—ՅԱՌՆԷՆ (վեր են կենում), մրջիւնների համար—ՓՈՒՌՆ (եռ են գալի),—այս բոլորը այնպիսի գործողութիւններ են, որ ուրիշ առարկաների վրայ չեն անցնում, այլ ներգործողների վրայ են մնում։

Ուրեմն երբ ես ասում եմ. «մշակն յառնէ», յառնէ ցոյց է տալի մշակի արած գործողութիւնը, որ ուրիշ առարկայի վրայ չէ անց կենում.—«մշակն գործէ գեղ կիր»,—գործէ ցոյց է տալի նորա այնպիսի գործողութիւնը, որով ներգործում է հողի վրայ. «մշակն չարչարի յերեսաց տեառն իւրոյ»,—չարչարի ցոյց է տալի նոյնպէս գործողութիւն, որ մշակը կրում է իր տիրոջ ձեռքից։

Այն բառերը՝ որոնք ցոյց են տալի առարկաների արած կամ կրած գործողութիւնը, կոչւում են ԲԱՅ։—Փառաւորել, իջի, քաղել, պտղին, ճռնչէն, յառնէն բայեր են.

Հայերէն բայ արմատ է բառ, բառ բառերի և նշանակում է խօսք, կամ ասութիւն, որովհետև ցոյց է տալի թէ ինչ են անում առարկաները և ինչ կարող ենք ասել նոցա վրայ։

ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Ո՞ր շնչաւոր առարկաներին յատուկ են հետևեալ գործողութիւնները.

Մտածել—խօսել—երգել—ուտել—թռչել—լողալ—սողալ—շրջել—մռնչել—բառաչել—մլաւել—հաչել—ոռնալ—խրխնջել—բզզալ։

2. Ի՞նչ գործողութիւն կարող են կատարել կամ կրել հետևեալ առարկաները.

Հողմ—փոթորիկ—արեգակ—լուսին—ծով—ծառ—ծաղիկ—ճրագ—աշակերտ—ուսուցիչ—զինւոր—զօրավար—ծառայ—սպասաւոր—ձի—մշակ—վաճառական—բժիշկ—դերձակ—նկարիչ։

## 38. Բայերի սեռը։

Բայերը՝ իրանց այլ և այլ նշանակութեանը նայելով՝ չորս

տեսակի կամ սեռի են բաժանվում. ներգործական, կրաւորական, հասարակ և չեզոք:

## 1. Ներգործական բայ.

Ներգործական բայը ցոյց է տալի մի առարկայի արած գործողութիւնը, որ ուրիշ առարկայի վրայ է անցկենում, ինչպէս. Աստուած արար զաշխարհ.—Աստուծոյ ներգործութիւնը, որ է ստեղծագործութիւն, անց է կենում աշխարհի վրայ: Կայէն սպան զԱբէլ.—Կայէնի գործողութիւնը անց է կենում Աբէլի վրայ: Յովհաննէս մկրտեաց զՅիսուս.—Յովհաննէսի գործողութիւնը անցնում է Յիսուսի վրայ:—Արար, սպան, մկրտեաց ներգործական բայեր են:

Ներգործել կարելի է թէ արտաքին և թէ ներքին կերպով, ինչպէս. Հերոստրատոս այրեաց զտաճարն Եփեսոսի: Գովեսցէ զքեզ ընկերն, և մի՛ քո բերան: Հայր սիրէ զորդի:— Հերոստրատը ձեռքով է ներգործում, ընկերը՝ բերանով և հայրը՝ սրտով:

Թէև իսկապէս ներգործել կարող են միայն շնչաւոր առարկաները, բայց շատ անգամ անշունչ առարկաներին էլ կեանք ու գործողութիւն են տալի փոխաբերական ձևով (§6), ինչպէս. Սէգ փոթորիկ [illegible]: Խաւարն [illegible]: Արեգական ծանեաւ զժամ մտից իւրոց:

Վերևի բոլոր օրինակների մէջ միշտ երկու առարկայ կայ. մէկը գլխաւորը՝ որ գործողութիւնն է կատարում ու գրվում է ուղղական հոլովով, միւսը երկրորդական, որ գործողութիւնը իր վրայ է կրում և գրվում է հայցական հոլովով որ ինչպէս յայտնի է, պատասխանում է զո՞վ կամ զի՞նչ հարցմունքներին. „Աստուած արար (զի՞նչ) զաշխարհ“: „Կայէն սպան (զո՞վ) զԱբէլ“:— „Զո՞ մկրտեաց Յովհաննէս: զՅիսուս“:

## 2. Կրաւորական բայ.

Կրաւորական բայը ցոյց է տալի մի առարկայի կրած գոր-

ծոցութիւնը ուրիշ առարկայից, ինչպէս. Կոյր զրկէի 'ի ճառա-գայթից արեգական: 'Ի մարդկանէ գովին, և ի տեսողաց պարսաւին. 'Ի հողածնելոցս երանին, և յորդւոցն լուսոյ ատաղին:— Զրկէի, գովին, պար-սաւին, երանին, ատաղին կրաւորական բայեր են։

Կրաւորական խօսքի մէջ էլ, ներգործականի պէս, երկու առարկայ կայ. բայց այստեղ գլխաւոր առարկան չէ ներգոր-ծում, այլ իր վրայ է կրում երկրորդական առարկայի գոր-ծութիւնը, որ պատասխանելով յումմէ՞ և ուստի՞ հարցմունք-ներին՝ բացառական հոլովով է դրվում. «Կոյր զրկէի (ուստի՞) ի ճառագայթից»: «Տաճարն այրեցաւ (յումմէ՞) 'ի Հերոս-տրատէ»: «Յումմէ՞ գովիմ. — Ի մարդկանէ. յումմէ՞ պարսա-ւիմ.— յԱստուծոյ»:

Կրաւորական խօսքի կազմութիւնը ներգործականին հա-կառակ է, բայց նշանակութիւնը մէկ է.

| Մի և նոյն է ասել | և |
|---|---|
| Հայր սիրէ զորդի. | Որդի սիրի 'ի հօրէ: |
| Աստուած արար զաշխարհ. | Աշխարհ արարաւ յԱստուծոյ: |
| Յովհաննէս մկրտեաց զՅիսուս. | Յիսուս մկրտեցաւ 'ի Յովհաննէ: |
| Կայէն սպան զԱբէլ. | Աբէլ սպանաւ 'ի Կայենէ: |

Սորանից երևումէ, որ կրաւորական բայը կազմվում է ներգործականից։

## 3. Հասարակ բայ.

Այն բայերը՝ որոնք մէկ վերջաւորութիւնով թէ ներ-գործականի և թէ կրաւորականի մտքով կարող են գործած-ուիլ, կոչվումեն հասարակ, ինչպէս.

Աբրահամ ծնաւ զԻսահակ: Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի:

Մի՛ ոք դատեսցէ զընկեր իւր, զի մի և ինքն դատեսցի:

Առաջին օրինակներին մէջ ծնաւ և դատեսցի բայերը ներ-գործականի մտքով են գործ դրուած,— ծնեց, չ'դատէ: Երկ-րորդների մէջ նոյն բայերը կրաւորականի միտք ունին.— ծնուեց, չ'դատուի:— Ծնաւ, դատեսցի հասարակ բայեր են։

## 4. Չէզոք բայ.

Այն բայերը՝ որ ցոյց են տալի մէկ առարկայի արած գործողութիւնը, որ ուրիշ առարկայի վրայ չէ անցկենում, ասվում են չէզոք, ինչպէս. յառնեն մշակք. գնացան մրջիւնք. հնչեն նուագք: —Յառնեն, գնացան, հնչեն չէզոք բայեր են.

ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ցոյց տալ հետևեալ բայերի սեռը խոսից նշանակութիւնից և յետոյ խօսքեր կազմել նոցանից, որ աշխարհաբարում գործ են ածվում:—Աղաչեմ—աղաչիմ (աղաչանք անում եմ) բժշկեմ—բժշկիմ—տանեմ—տանիմ—սերմանեմ—սերմանիմ—տանեմ—(մէկ բան)—տանիմ—(համբերում եմ)—տեսանեմ—նայեմ—բերեմ—ընթեռնում (կարդալ և կարդացուել)—կարդամ (կանչել)—բանամ—արգելում—ամաչեմ—գողամ—երթամ—մտանեմ—իջանեմ—ելանեմ—երկնչիմ—խոստովանիմ (խոստովանել և խոստովանուել)—ուսանիմ (սովորել և սովորեցուել)—սկսանիմ (սկսել և սկսուել):

## § 39. Բայի եղանակները:

Որ և իցէ առարկայի վրայ խօսելիս՝ մենք կարող ենք նորա գործողութեան լոկ անունը տալ, կամ մի բան պատմել նորա վրայ, կամ հրամայել, ցանկալ որ գործողութիւնը կատարուի և կամ վերջապէս [illegible] տակ քցել նորա գործողութիւնը: Սորանից առաջ են գալի բայի չորս եղանակները կամ միտք յայտնելու ձևերը. անորոշ, սահմանական, հրամայական և ստորադասական:

1. Անորոշ եղանակը բայի սկզբնական ձևն է, ինչպէս ուղղական հոլովը անունների մէջ: Այս եղանակում առարկայի գործողութեան լոկ անունը յիշվում է, առանց որոշելու թէ ո՞վ կամ երբ է ներգործում. այս պատճառով էլ կոչվում է անորոշ:

Բարի է յուսալ 'ի Տէր, քան յուսալ 'ի մարդիկ:

2. Սահմանական եղանակը որոշ պատմում է թէ ինչպէս է կա-

տարվում, կատարուել է կամ պիտի կատարուի առարկայի գործողութիւնը.

Մշակք յառնեն. հնչէին նոճիք. եղէ 'ի դրախտ ծաղկազարդ. հնչեցէք յակինթ և քրքում:

Այս եղանակը ունի երեք ժամանակ, երեք դէմք և երկու թիւ:

3. Հրամայական եղանակը յայտնում է խօսողի հրամանը կամ խնդիրքը կամ ցանկութիւնը, որ գործողութիւնը կատարուի կամ չկատարուի, և այս պատճառով երկուսի է բաժանվում. առաքական՝ որ գործողութեան կատարուելուն հաւանութիւն է ցոյց տալի, և բացասական՝ որ նորա կատարմանը արգելք է լինում. Գնա մի գնար:

Արի, առ զմահիճս քո և երթ 'ի տան քո: Աղէ պատմեա մեզ զանցս պատերազմին Վարդանանց: Հարցէք, խնդրեցէք, աղաչէք, թող որ լաւն է ընտրեալ կալցուք: Մի արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզաց:

Այս եղանակը ունի երկու ժամանակ և մէկ դէմք՝ երկրորդը, որովհետև չէ կարելի որ մարդ ինքն իրան հրամայէ, այլ միայն նորան, ում հետ խօսում է:

4. Ստորադասական եղանակը խօսքը պայմանի տակ է քցում, յայտնելով թէ գործողութիւնը կարող է պատահել ու չպատահել, կամ կարող էր կատարուել, բայց չէ կատարուել:

Եթէ լուիցես հառաչեմ, եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ: Դատաւոր է 'ի մեզ միջոց. թէ զբարին գովիցէ և զչար խոտիցէ, դատաւոր արդար է. այսինքն եթէ լաւը գովելու լինի և վատը պարսաւելու լինի և այլն:

Ստորադասականը ըստ ինքեան ոչ մէկ ժամանակ չունի, և յարմարվում է բոլոր ժամանակների հետ:

## § 40. Բայի ժամանակները:

Ամենայն գործողութիւն կատարվում կամ կրվում է սովորաբար մի որ և իցէ ժամանակում. այդ ժամանակները ե-

րեր են. ներկայ, անցեալ և ապառնի:

1. Ներկայ ժամանակը ցոյց է տալի թէ գործողութիւնը այժմ է կատարվում, ինչպէս.

Հնչեն նոճիք քաղցր 'ի յերգ, արձակէ ժիր մեղուաց պար: Նուռն, որթենի և խնձոր պճնին 'ի միրգ ցօղաւոր:

Նոճիները այժմ են հնչում, մեղուների խումբը այժմ է արձակվում, ծառերը այժմ են զարդարվում:

2. Անցեալը ցոյց է տալի թէ գործողութիւնը անցելում է կատարուել, և եթէ բոլորովին չէ կատարուած, անկատար է ասվում, իսկ եթէ կատարուած վերջացած է՝ կատարեալ.

Յորժամ էջի 'ի դրախտ, հնչէին նոճիք, արձակէր ժիր մեղուաց պար. այսինքն՝ երբոր ես պարտէզ իջայ վերջացաւ (կատարեալ), նոճիները դեռ հնչում էին (անկ.), մեղուների խումբը դեռ շարունակում էր արձակուիլ (անկ.):

3. Ապառնի ժամանակը ցոյց է տալի թէ գործողութիւնը դեռ չէ կատարուել, այլ նոր պէտք է կատարուի.

Իբրև փարատեսցէ այդ գիշերոյ մութ տրտում, էջից 'ի դրախտ ծաղկազարդ կթել յակինթ և բրքում.
այսինքն՝ երբ առաւօտեան լոյսը կը ցրուէ (ապռ.) գիշերուայ մթութիւնը, կիջնեմ (ապռ.) պարտէզ և այլն:

## § 41. Բայի դէմքերը:

Ամ հասարակ ամենայն խօսակցութեան համար երեք բան է հարկաւոր. նախ՝ պէտք է որ մէկը խօսի. երկրորդ, հարկ է որ մէկ ուրիշ էլ լինի նորան լսող. վերջապէս մի երրորդ առարկայ էլ է հարկաւոր, որի վրայ կարելի լինի մէկ բան ասել: Սորանից առաջ են գալի բայի երեք դէմքերը, որոնք առանձին վերջաւորութիւններով որոշվում են միմեանցից:

Առաջին դէմքով գրվում է ինքը խօսող անձը և իր արած գործողութիւնը.

Իջի (ես) 'ի դրախտ ծաղկազարդ: Երթիցուք (մեք) կթել յակինթ և քրքում:

Երկրորդ դէմքով դրվում է նա, որի հետ առաջինը խօսում է.

Ո՛ղջ լէր (դու)։ Դուք էք լոյս աշխարհի։

Երրորդ դէմքով դրվում են այն բոլոր առարկաները ու նոցա գործողութիւնները՝ որոնց վրայ խօսք է լինում.

Աշակերտն կարդայ, Նոճիք հնչեն, արջառք մեղուաց պար։

## § 42. Բայերի թիւը։

Բայերը անունների նման՝ երկու թիւ ունին. եզակի և յոգնակի։

Եզակին ցոյց է տալի մէկի արած կամ կրած գործողութիւնը. Եղբայրն 'ի դպրոցի. ջուր հոսէ. այգի փորեաց մշակ։

Յոգնակին ցոյց է տալի երկու կամ աւելի առարկաների գործողութիւնը. մարդիկ մրջիւնք. աղջիկն ծառայ։

## § 43. Խոնարհումն և լծորդութիւն։

Բայերը փոփոխվում են. 1) եղանակներով, 2) ժամանակներով, 3) դէմքերով և 4) թուով։ Այս փոփոխութիւնը կոչվում է խոնարհումն։

Բոլոր բայերը մէկ տեսակ չեն փոխվում, ինչպէս գործել բայը ներկայ ժամանակում լինում է. գործեմ, գործես, գործէ կամ գործեմք, գործէք գործեն. Խաղալ բայը միևնոյն ժամանակում լինում է Խաղամ, Խաղաս, Խաղայ կամ Խաղամք, Խաղայք, Խաղան։ Բայերի այս տեսակ տեսակ փոփոխութիւնը անուանվում է լծորդութիւն։ — Գործել և Խաղալ ուրիշ ուրիշ լծորդութեան բայեր են։

## § 44. Բայերի պարագաները։

Բայերը ունին չորս սեռ. ներգործական, կրաւորական,

հաստատ և չէզոք. չորս եղանակ — անորոշ, սահմանական, հրամայական և ստորադասական. երեք ժամանակ — ներկայ, անցեալ և ապառնի. երեք դէմք և երկու թիւ:

ԿՐԹՈՒԹԻՒՆ

Կարդալ մէկ-երկու հատուած և ցոյց տալ բայերի պարագաները:

---

# Դ. Մակբայ

## § 45. Ի՞նչ է Մակբայը:

Արք երկու ճանապարհորդէին 'ի քաղաք ուրեք երթալ հետի, և ումն յառաջագոյն արագագոյն երթայր, սակայն ետևէն հեղգայր և այդ և անդ անկանէր 'ի ճանապարհին. և մերձ 'ի քաղաքն բնութիւնն հեղգացեալ, և յուսալքաց մնանի: Իսկ միւս ծոյլ յառաջագոյն էր, և առաւել քան զառաւել փութայր, և մերձ ի քաղաքն ամենևին արագէր. և մտանէր և 'ի հանգիստ վայելէր:

Այս առակի մէջ շատ բայերից առաջ ու յետոյ զանազան բառեր են դրած, որոնք գործողութեան այլ և այլ հանգամանքներն են ցոյց տալի: Այսպէս, ուրեք և հետի բառերը ցոյց են տալի երթալու տեղը, յառաջագոյն ցոյց է տալի երթալու ժամանակը, իսկ արագագոյն երթալու արագութիւնը. ետևէ ցոյց է տալի հետևողութիւն (զանազանել) իսկ առաւել քան զառաւել, փութալու աստիճանը, այդ, անդ՝ անկանելու տեղը և այլն:

Այն բառերը՝ որոնք ցոյց են տալի ստորոգելիների գործողութեան հանգամանքները, կոչվում են Մակբայ, այսինքն Բայի վրայ դրուած բառեր: — Ուրեք, հետի, այդ, անդ, արագագոյն մակբայ են:

## § 46. Մակբայների տեսակները:

Մակբայները, ինչպէս արդէն տեսանք, իրանց նշանակու-

թեան կողմից զանազան տեսակների են բաժանվում, իւրաքանչիւր տեսակը իր նշանակութեան յարմար անուն ընդունելով.

1. Տեղական՝ որ ցոյց են տալի գործողութեան տեղը, ինչպէս. ուր, անդ, այդր, անդանօր, 'ի ներքս, արտաքս, հեռի, 'ի բաց, այլուր:

2. Ժամանակական՝ որ ցոյց են տալի գործողութեան ժամանակը. այժմ, այսօր, վաղիւ, ընդերեկս, վերջապէս, վաղ, անագան:

3. Որակական՝ որ ցոյց են տալի գործողութեան որպիսութիւնը. յայտնի, գաղտ, դիւրաւ, խստիւ, ջերմ, չարաչար, ճոխապէս, չարապէս:

4. Քանակական՝ որ ցոյց են տալի գործողութեան չափն ու թիւը. շատ, սակաւ, այնչափ, փոքր մի, միանգամ, երկիցս, չորիցս:

Սոյն շարքում կարելի է դնել դաս կամ կարգ ցոյց տուող մակբայները. առաջին, երկրորդ, երրորդ և այլն:

5. Հարցական՝ որ գործողութեան հանգամանքները են հարցնում. ընդէ՞ր, զիա՞րդ, ո՞րպէս, ե՞րբ, քանի՞, քանի՞ցս անգամ:

6. Հաստատական՝ որ գործողութեան հաստատութիւնը կամ համաձայնութիւնն են ցոյց տալի. այո՛, արդարև, յիրաւի, անշուշտ:

7. Բացասական՝ որ ընդհակառակն գործողութեան կատարումը բացասում կամ արգելում են. ոչ, ո՛չ բնաւ, ո՛չ երբէք, ամենևին ոչ:

8. Երկբայական՝ որ գործողութեան կատարուելու մասին երկբայութիւն են ցոյց տալի. գուցէ, թերևս, իցէ թէ:

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Ուսուցիչը դասի ժամանակ կարդալ է տալ աշակերտներին զանազան գրաբար հատուածներ, և պահանջում է որ իւրաքանչիւր մակբայի տեսակը ու նշանակութիւնը ցոյց տան:

2. Հետևեալ մակբայներով աշխարհաբար խօսքեր կազմել.

Վաղ—ուշ—երեկ—այսօր—լաւ—չարաչար—այսպէս—այնպէս Երբ—քանի՞ անգամ—որչափ—այնչափ—յայտնի—ձրի—գուցէ—թերևս:

# Ե. Թուական անուն

## § 47. Ի՞նչ է թուական անունը։

Ամն բաղկանայ յերկոտասան ամսոց, ամիսն 'ի չորից եօթնե-կաց և եօթնեակն յեօթն աւուրց։

Այս օրինակի մէջ յերկոտասան ցոյց է տալի ամիսների թիւը, ի չորից՝ շաբաթների թիւը, իսկ յեօթն՝ օրերի թիւը։

Այն բառերը՝ որոնք ցոյց են տալի առարկաների թիւը, կոչվում են թուական անուն։ — Յերկոտասան, 'ի չորից, յեօթն թուական անուններ են։

## § 48. Բացարձակ և դասական թուականներ։— Հայկական թուանշանք։

Առարկաները կարելի է համարել երկու նպատակով, այսինքն կամ նոցա թիւը յայտնելու և կամ նոցա կարգը, դասը ցոյց տալու համար։ Այս պատճառով թուական անունները երկուսի են բաժանվում.

1. Բացարձակ՝ որ առարկաների պարզ թիւն են ցոյց տալի. երկու, երեք, տասն, քսան, հարիւր։

2. Դասական՝ որ ցոյց են տալի թէ առարկաները ինչ կարգով են հետեւում միմեանց. առաջին, երկրորդ, երեսներորդ, հարիւրերորդ, հազարերորդ։

Եօթնեակն բաղկանայ յեօթն աւուրց. առաջին օրն է երկուշաբթի, եօթներորդն՝ կիւրակէ։

Յեօթն բացարձակ թուական անուն է, յեօթներորդն՝ դասական։

Թուական անունները սովորաբար ածականապէս են վարվում։

Միջանում հին ժամանակ բացարձակ և թուական ա-

նունները համառօտութեան համար շատ անգամ՝ լեզուի գլուխ և մանր տառերին էին գրվում, որոնք անուանվում էին հայերէն Նօտրգրով. Տեղերն Բ. (երկրորդ) Նախադասութեան ան ԽԱ. (քառասուն և մի)։

Հայկական թուանշանները հետևեալ կերպով էին գործածվում.

Ա-ից մինչև տասներորդ գիրը Ժ՝ մէկ — մէկ էին համարում, Ժ-ից մինչև Ճ՝ տաս — տասը, Ճ-ից մինչև Ռ՝ հարիւր հարիւր, Ռ-ից մինչև Ք՝ հազար — հազար, այսպէս.

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ | Ե | Զ | Է | Ը | Թ | Ժ | ԺԱ | ԺԲ և այլն |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| Ի | Լ | Խ | Ծ | Կ | Հ | Ձ | Ղ | ՃԱ | ՃԷ և այլն | | |
| 20 | 30 | 40 | 50 | 60 | 70 | 80 | 90 | 100 | 107 | | |
| Մ | Յ | Ն | Շ | Ո | Չ | Պ | Ջ | ՋԳ | ՋԼ | | |
| 200 | 300 | 400 | 500 | 600 | 700 | 800 | 900 | 903 | 930 | | |
| Ռ | Ս | Վ | Տ | Ր | Ց | Ւ | Փ | Ք | | | |
| 1000 | 2000 | 3000 | 4000 | 5000 | 6000 | 7000 | 8000 | 9000 | | | |

### ԿՐԹՈՒԹԻՒՆ

Հետևեալ թուերը գրել հայկական թուանշաններով.

Տարւան ութերորդ—Նոյեմբ հինգերորդ—Դարի հնգետասաներորդ-Ամսի երեսուն և հինգերորդ—Դար չորսն և երրորդ—Գիրք եօթանասուն և ութերորդ—Յիսուն և երկու—հազար տասն և հինգ—երկու հազար քառն—մեկ հազար քառասուն—ինն հազար յիսուն և ինն—հարիւր երկու—ութ հազար հինգ հարիւր։

---

## Զ. Դերանուն

### § 49. Ի՞նչ է դերանունը։

Մի՛ոյնը համանդամայն հրեշտակի ասաց նա կատուն՝ և շանն. „Ձե՞նչ Քեզ (այ ինչն կատուն) միայնելիք՝ որ այդքան ցեղ (գեղունու) հարժեն, չե՞նչ Քո (կատուն) ուտելիք։“

Ու նա (կատուն) ասէ. „Ոչ գիտէք եթէ յայն սակս զիս (զկատուս) գործածեն մարդիկ, զի զամբարս նոցա (մարդկան) մեք (կատուքս) պահեսցուք. արդ եթէ դուք (մկունքդ) նոցա (մարդկան) ոչ մեղիցէք, և ոչ ինչ ձեզ (մկանցդ) վնասեսցի“ : Ու ձեռն 'ի գլուխ եդեալ երդմամբ հաստատեաց զայս (խոստումն).

Այս հատուածի մէջ փակագծերով առնուած անունները ցոյց են տալիս, թէ ինչ առարկաների վրայ է խօսքը, որոնց տեղը այլ բառեր գրուած են, մի և նոյն անունները անդադար չկրկնելու համար, որ շատ ձանձրանալի կը լինէր. Խօսակցի տեղ գրուած են քեզ, քո, նա, զիս, մեք բառերը, որոնք այլ և այլ նշանակութիւն ունին. Դիմացի տեղ գրուած են զձեզ, դուք, ձեզ բառերը: Մարդկան բառը մէկ անգամ յիշելով՝ միւս անգամ գրուած են նոցա, այնմ բառերը. Վերջապէս կամ զբան բառի տեղ՝ որ մտքով է իմացվում, գրուած է զայս:

Այն բառերը՝ որոնք գոյական ու ածական անունների տեղ են գրվում, կոչվում են դերանուն, այսինքն անուան տեղ գրուած բառ.— Քեզ, քո, դուք, ձեզ, նոցա, այնմ, զի՞նչ, դերանուններ են:

Այն դերանունները՝ որ գոյական անունների տեղ են գրվում, ասվում են գոյական դերանուններ. նոքա՝ որ ածական անունների տեղ են բանում, կոչվում են ածական դերանուններ:

## § 50. Դերանունների տեսակները:

Դերանունները իրանց նշանակութեան նայելով՝ զանազան տեսակների են բաժանվում. Հարցական, էական, ցուցական, ստացական, յարաբերական, որոշեալ և անորոշ:

1. Հարցական դերանունները գործ են դրվում իբրև հարցմունք գոյական և ածական անունների տեղ, ուստի և լինում են

1) Գոյական. ո՞վ, ո՛ : — Ո՞վ է դա: Ո՞յր է պատկերս այս:

2) Ածական. ո՞ր : — Ո՞ր որդի է՝ զոր ոչ խրատիցէ հայր: Յորմէ՞ աշխարհէ իցես:

3) Գոյական և ածական միանգամայն. զի՞, զի՞նչ : — Զի՞ եղե քեզ (գոյ.). քեզ զի՞ վայել (ած.). զի՞նչ քեզ ձեռնտուեմ. (գոյ.). զի՞նչ շահ, զի՞նչ օգուտ (ած.).

2. Էական կամ անձնական դերանունները անձների տեղ են դրվում և գործ են ածվում խօսակցութեան մէջ։

Ես, մեք գործ են դրվում խօսող անձի անուան տեղ, և կոչվում են էական դերանունք առաջին դէմքի։ — Ես (Յիսուս) եմ որթն ճշմարիտ։ Մեք (Հրէայքս) գիտեմք զի ընդ Մովսէսի խօսեցաւ Աստուած։

Դու, դուք գործ են դրվում այն անձի անուան տեղ, որի հետ առաջինը խօսում է, և կոչվում են էական դերանունք երկրորդ դէմքի։ — Դուք էք աղ երկրի։ Նոքա, նոքեանք կամ նորեանք գործ են դրվում այն անձի անուան տեղ, որի վրայ խօսք է լինում, և կոչվում են էական դերանունք երրորդ դէմքի։ — Նոքեանք նոքեանց են պատճառք աշխատութեան։

Ինքն գործ է ածվում ամէն դէմքերի հետ էլ, ինչպէս գրաբար, նոյնպէս և աշխարհաբար. Ես ինքն, դու ինքն, նա ինքն, մեք ինքնին, դուք ինքնին, նոքա ինքեանք։

Էական դերանունների առաջին ու երկրորդ դէմքերը այսպէս էլ են բանում եզակի և յոգնակի. Ես ինձէն, դու քեզէն, մեք մեզէն, դուք ձեզէն։

Էական դերանունները միայն գոյական անունների տեղ գրուելով բոլորն էլ գոյական են։

3. Ցուցական դերանունները գործ են դրվում խօսքի մէջ առարկաները ու նոցա որպիսութիւնները ցոյց տալու համար, ուստի և լինում են

1) Գոյական. սա, դա, նա։ — Ո՞վ էր սա (Յիսուս), զի և հողմք և ծով հնազանդէին սմա (Յիսուսի)։

2) Ածական. այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, այսպիսի, այդպիսի, այսքան, այդքան։ — Սա, դա, նա և այս, այդ, այն ցուցական դերանունների միտքը մէկ է, բայց առաջինները գոյական են և միշտ մենակ են բանում, իսկ երկրորդները ածական՝ և սովորաբար գոյականների հետ են. չէ կարելի ասել սա մարդ, դա մարդ, բայց պէտք է ասել այս մարդ, այդ մարդ։

Մեր ցուցական դերանունների ածական լինելը պարզ երևում է. զոր օրինակ, երբ որ ասում ենք. „Արդարև հզօր

էր այն (Տորք նահապետ) և այսպիսեաց զուգուց արժանի՞, այսպիսեաց դերանունը ոչ միայն Հրաչեայ գոյականին է ցոյց տալիս, այլ և նորա որպիսութիւնն է յայտնում, որով զանազան-վում է ուրիշ զոյգներից, ուրեմն այսպիսեաց ածական է:

4. Ստացական դերանունները գործ են դրվում ածական անուններին տեղ, և յայտնում են թէ մէկ առարկայ ումն է պատկանում. իմ, քո, մեր, ձեր, իւր: — Ցանկալ իմն ոչ եմ եղեալ:

5. Յարաբերական դերանունը մէկ է—որ. այս դերանունը խօսքի մէջ գործ դրուելով՝ մէկ գոյական անուն կամ դեր-անուն է մէջ բերում. Ես՝ որ խօսիմ. գտա՝ որ լուեա, նա էն Աստ-ուած որ տեսանէ:

Ինչպէս ո՞ր հարցականը առանց պարզելի յարաբերական գոյական դերանուն է դառնում, այնպէս և ո՞րպիսի հարցա-կանը երբեմն յարաբերականի մտքով է բանում, բայց ածա-կան է մնում, ինչպէս. տես այր՝ որպիսի ոչ երբէք երեւեցաւ:

6. Անորոշ դերանունները վարվում են գոյական և ածական անունների տեղ կամ նոցա հետ բոլորովին անորոշ, երբեմն էլ բացասական մտքով. ոմն, ոք, ոչոք, իմն, ինչ, միւս, այլ:

Սոքա գոյական են, եթէ միայն են վարվում, և ածական եթէ գոյականի հետ են. ոմն այսպէս խօսէր և ոմն այնպէս (գոյ.). այր ոմն, կանայք ոմանք (ած.):

7. Որոշեալ դերանունները վարվում են գոյական և ածա-կան անունների տեղ կամ նոցա հետ աւելի որոշ մտքով. ամէն, ամենայն, բոլորեքեան, իւրաքանչիւր, անձնիւր: — Ամենայն հեղեղք 'ի ծով գնան և ծով ոչ լնու (ած.): Գնաց իւրաքանչիւր 'ի տեղի իւր (գոյ.):

## § 51. Որոշեալ կամ դերանունական յօդեր:

Պարզ դերանունների արմատական տառերը ս, դ, ն շատ անգամ ամէն տեսակ բառերի վրայ դրուելով որոշում են նո-

ցա ու էական, ցուցական և ստացական դերանունների ոյժը ունին, ուստի և կոչվում են որոշեալ կամ դերանուանական յօդեր, ինչպէս

Տէրս՝ նշանակում է ես տէրս, իմ տէրը, այս տէրը կամ սա՝ տէր:
Տէրդ՝ նշանակում է դու տէրդ, քո տէրը, այդ տէրը կամ դա՝ տէր:
Տէրն՝ նշանակում է ինքն տէրն, իւր տէրը, այն տէրը կամ նա՝ տէր:

## § 52. Դերանունների պարագաները:

Դերանուններն են դոյական և ածական, հարցական, էական, ցուցական ստացական, յարաբերական, անորոշ, որոշեալ: Դերանունները ունին երեք որոշեալ յօդեր, երեք դէմք, երկու թիւ, հոլով և հոլովումն:

### ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Գրել մէկ խօսակցութիւն աշխարհաբար լեզուով երկու կամ աւելի անձինքների մէջ էական և ստացական դերանուններով:
2. Գրել մէկ ծանօթ անցք հարցական և ցուցական դերանուններով:
3. Գրել մէկ նամակ հեռաւոր բարեկամի վերայ այլ և այլ դերանուններ գործ դնելով:

(Այս բոլոր կրթութիւնների մէջ պէտք է գործ ածել միայն այն դերանունները, որոնք աշխարհաբար բանում են):

---

# Է· Դերբայ

## § 53. Ի՞նչ է դերբայը և քանի՞ է բաժանվում:

Նախատեցաւ եղեգան ծաղիկ և նմանք նորա, պաշտօնեայ լինել (այսինքն թէ էն) արեգական. և նորա չգէալ (այսինքն և նա չգէալ) զձեռն յարևն՝ երդուեալ արեգական՝ թէ ոչ եմ:

Այս փոքրիկ առակի մէջ լէնէլ և ջփէլ բառերը փակագծի մէջ առնուած են և ջփէող գլխաւոր բայերի տեղ են գործ դրուած :

Այն բառերը՝ որոնք գլխաւոր բայերի տեղն են դրվում, կոչվում են դերբայ, այսինքն բայի տեղ դրուող բառեր:—Լինել, ջփել դերբայներ են :

Դերբայները երեք են. անորոշ, անցեալ և ապառնի :

1. Անորոշ դերբայը բայի անորոշ եղանակն է, որ ոչ ժամանակ ունի, ոչ դէմք և ոչ թիւ, ու ամէն եղանակի ու ժամանակի տեղ է գործ ածվում:

Ակնարկէլին որսակցացն՝ գալ օգնել նոցա, այսինքն՝ գի եկեցին և օգնեցին :

2. Անցեալ դերբայը անցեալ ժամանակն է ցոյց տալիս, բայց դէմք ու թիւ չունի :

Տեսի անզգամաց արմատս ջփեալ, այսինքն՝ տեսի զի անզգամք արմատս ջփեցին, ջփեալ էին կամ ջփեալ են :

3. Ապառնի դերբայը ապառնի ժամանակի միտք ունի և միշտ էն էական բայովն է գործ ածվում.

Մեռանելոց է և յերիր աւուր յառնելոց (է), այսինքն՝ մեռնելու է կամ կը մեռնի և երեք օրից յարութիւն կ'առնէ :

---

# Ը. Նախդիր

## § 54. Ի՞նչ է նախդիրը :

Բարեկամք մեր հանդերձ ընտանեօք իւրեանց բազմեալ էին սեղանով ընդ հովանեաւ ծառոյ :

Այս խօսքի մէջ այլ և այլ գոյականներ կան. բարեկամք. ընտանեօք, սեղան, հովանի և ծառ: Եթէ այս բոլոր բառերը իրանց սկզբնական ձևովը թողնէինք, ոչինչ բան չէինք հասկանայ: Ինչի՞ համար. — որովհետև չէինք իմանալ թէ ինչ յարաբերութիւն ունին միմեանց հետ ընտանեօք, սեղան և այլն ուրիշ առարկաները: Այստեղ

գլխաւոր առարկաներն են Բարեկամք հանդերձ ընտանեօք. Հանդերձ բառը գրուելով ընտանեօք բառից առաջ, որի վերջաւորութիւնը փոխուել է (ընտանիք), ցոյց է տալիս թէ բարեկամք և ընտանիք ինչ յարաբերութիւն ունին միմեանց հետ — գնացին են: Զսեղանով—զ գրուելով սեղանով բառից առաջ, որ իր սեռական ձևը փոխել է (սեղան), ցոյց է տալիս թէ բարեկամները ընտանեաց հետ միասին ինչ յարաբերութիւն ունին սեղանի հետ—նոքա շուրջն են նստած: Ընդ հովանեաւ— ընդ գրուելով հովանեաւ բառից առաջ, որ նոյնպէս իր սեռական ձևը փոխել է (հովանի), ցոյց է տալիս թէ բարեկամքը ընտանեաց հետ ինչ յարաբերութիւն ունին ծառերի հովանիի (շուքի) հետ—նոքա տակն են նստած:

Այն բառերը՝ որոնք առարկաների միմեանց հետ ունեցած յարաբերութիւնն են ցոյց տալիս, կոչւում են նախդիր կամ նախադրութիւն, այսինքն անունների վրայ դրուած բառեր:— Հանդերձ, զ, ընդ նախդիրներ են:

Որովհետև հոլովներն էլ նախդիրների նման առարկաների մէջ եղած յարաբերութիւններն են ցոյց տալիս, այս պատճառով հոլովների ու նախդիրների պաշտօնը մի և նոյն է. այս պատճառով էլ նախդիրը միշտ հոլով է պահանջում և միայն այն ժամանակ նշանակութիւն ունի, երբ գոյական անուան առաջ է դրվում: Նախդիրները առանց հոլովների և հոլովները առանց նախդիրների չեն կարող ցոյց տալ առարկաների մէջ եղած բոլոր յարաբերութիւնները: Հոլովները ցոյց են տալիս առհասարակ առարկաների ընդհանուր յարաբերութիւնները, իսկ նախդիրները նոցա մասնաւոր բարդութիւնները: Այսպէս, վերևի օրինակին մէջ, հոլովները ցոյց կը տային մեզ թէ Բարեկամք խօսքի գլխաւոր առարկաներն են, իսկ միւսները երկրորդական. իսկ նախդիրները ցոյց տուին թէ իւրաքանչիւր առարկայ ուր տեղ է գտնվում. Հետ, շուրջը, տակը և այլն:

## § 35. Նախդիրների սեպհական և փոխաբերական նշանակութիւնը:

Նախդիրները գործ են ածվում խօսքի մէջ իրանց բուն կամ սեպհական և փոխաբերական նշանակութիւնով, որ օրինակ. Ոչ լուցանեն ճրագ և դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ աշտանակի: Այստեղ գրուան (աման) և աշտանակը նիւթական առարկաներ են, որոնց տակը կամ վրան կարելի է բան դնել: Բայց երբոր ասում եմ. Աղեքսանդր նուաճեաց զՓոքրն Ասիա ընդ իւրով իշխանութեամբ, կամ այր ճշմարտախօսը մեռանի ի վերայ ճշմարտութեան անձին իւրոյ, — իշխանութիւն և ճշմարտութիւն վերացական առարկաներ են. իշխանութեան տակ իսկապէս չէ կարելի նուաճել, ոչ էլ ճշմարտութեան վրայ մեռնիլ:

## § 56. Հոլովակերտ և հոլովառու նախդիրներ։

Նախդիրները իրանց նշանակութեանը նայելով երկուսի են բաժանվում.

1. Հոլովակերտ՝ այսինքն հոլով կազմող, որովհետև գոյական անունների վրայ դրուելով այլ և այլ հոլովներ են կազմում, և սոքա են. զ, ի, ց, յ, առ, ընդ, ըստ։

Զմարդ (հայց. հոլ.), ցմարդ (տր. հոլ.) ՚ի մարդոյ (բաց. հոլ.)։

2. Հոլովառու՝ այսինքն հոլով առնող նախդիրներ, որոնք խօսքի մէջ դրուելով՝ պատրաստ հոլովներ են առնում։ Սոքա թուով շատ են և դրվում են ոմանք գոյականից առաջ կամ նախադաս, ոմանք յետոյ կամ յետադաս, ոմանք թէ նախադաս և թէ յետադաս։

՚Ի վերայ ճշմարտութեան, ՚ի ճշմարտութեան վերայ (սեռ. հոլ.) հետ ՚ի տանէ (բաց.) շուրջ զարքայիւ (զ. նախդր. գործ.)։

---

# Թ. Շաղկապ

## § 57. Ի՞նչ է շաղկապը։

Բոլոր մարմնոյ՝ հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ՝ միտք են կառավար։

Այս օրինակի մէջ երկու ամբողջ խօսք կայ. 1) Բոլոր մարմնոյ հոգի է կենդանութիւն, 2) մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար։ Իսկ բառը այս երկու խօսքը միմեանց հետ կապում է։ Նոյնպէս և բառը մարմնոյ, հոգւոյ բառերն է կապում։

Այն բառերը՝ որոնք խօսք խօսքի ու բառ բառի հետ են կապում, կոչվում են շաղկապ։ — Իսկ, և շաղկապներ են։

## § 58. Շաղկապների տեսակները:

Շաղկապները իրանց ընդհանուր նշանակութեանը նայելով երկուսի են բաժանվում. **Բաղհիւսական** և **Ներհակական**:

1. **Բաղհիւսական** շաղկապները այնպիսի խօսքեր ու բառեր են կապում, որոնք մտքի կողմից միմեանց հետ համաձայն են. **և**, **այլև**, **նաև**, **միանգամայն**:

Երկիր 'ի տեառնէ **և** խոտորեա յամենայն չարութենէ:— Չէ բաւական 'ի չարեաց հեռանալ, **այլև** պարտէ զբարիս գործել:— Ընկալ զոր մատուցի քեզ յերկնէ, **միանգամայն և** յերկրէ:

2. **Ներհակական** շաղկապները այնպիսի խօսքեր ու բառեր են կապում, որոնք մտքի կողմից համաձայն չեն, այլ ներհակ են միմեանց. **բայց**, **իսկ**, **սակայն**, **այլ**:

Վիշտքն անցանեն, **բայց** աւետիք երանութեանցն կան մնան:— Ել նա ընդառաջ նոցա, **բայց սակայն** ոչ կարաց ունել զդէմ նոցա:— Այր բարկացող նիւթէ զկռիւ, **իսկ** երկայնամիտն զհանդերձեալն ցածուցանէ:

Բաղհիւսական շաղկապները իրանց մասնաւոր նշանակութեանը համեմատ լինում են.

1) **Պատճառական**՝ որոնք պատճառը հետեւանքի հետ են կապում. **զի**, **քանզի**, **վասն զի**, **որպէս զի**, **վասն այսորիկ**, **յայս սակս**:— Ոչ առնուք (հետեւանք), **վասն զի** չարաչար խնդրէք (պատճառ): Արդ հոտեալ իցէ (հետեւանք), **քանզի** չորեքօրեայ է (պատճառ):

2) **Թէական**՝ որոնք թէական պատճառը թէական հետեւանքի հետ են կապում. **եթէ**, **թէ—ապաքէն**, **իսկ եթէ—ապա ապաքէն**, **ապա եթէ—ապաքէն**:

**Թէ** ոչ աշխատի մշակն (թէակ. պտճռ.), (**ապա**) ոչ հնձէ զպտուղն 'ի դէպ ժամանակի (թէակ. հետ.):— **Ապա եթէ** հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս (թէակ. պտճռ.) **ապաքէն** հասեալ է 'ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ (թէակ. հետ.):

—Եթէ ներեսցես, (ապա) աղաչեմ. եթէ առ իս դառնայցես, (ապա) գոչեմ. ապա եթէ անտես առնիցես, (ուրեմն) կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, (ապա) լամ:

3) Համեմատական՝ որոնք երկու խօսք իրարու հետ համեմատելով են կապում. մինչ, մինչ զի, մինչև, մինչև անգամ:

Այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ: — Այնքան կուրացեալ յանդգնութենէ, մինչ զի ոչ միայն զկարծիս ազգին, այլ և զազգն ողջոյն բամբասէր:

4) Մեկնական՝ որոնք ցոյց են տալի թէ հետևեալ խօսքը կամ բառը մեկնութիւն է նախընթացին. այսինքն, այսինքն է, այն է, ասեմ:

Ցամաքեցաւ խոտն, այս է մեռաւ: Ոչ կարէք, ասէ, Աստուծոյ ծառայել և մամոնայի, իբրու թէ որ Աստուծոյ ծառայն է, մամոնայի ոչ հնազանդի:

ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Կարդալ մէկ-երկու հատուած շաղկապների տեսակները որոշ ցոյց տալով:

2. Հետևեալ շաղկապներով աշխարհաբար խօսքեր կազմել.
միայն, բայց միայն, մինչև անգամ, վասն զի, որովհետև, այսինքն, բայց, իսկ, կամ—կամ, թէ, եթէ—ուրեմն, թէպէտ—բայց:

---

# Ժ. Ձայնարկութիւն

## § 59. Ի՞նչ է ձայնարկութիւնը:

Այն ձայները ու բառերը՝ որոնք մեր հոգու կրքերն են բացատրում, զարմանքը, վախը, բարկութիւնը, ուրախութիւնը, ցանկութիւնը և այլն կոչվում են ձայնարկութիւն, ինչպէս. ո՜վ, բա՜բէ, ո՜հ, վա՜շ վա՜շ, եղո՜ւկ, վա՜յ, աւա՜ղ և այլն:

Զայնարկութիւնները ակամայ ու բուռն զգացմունքներ լինելով՝ ոչինչ միտք չեն բացատրում և այս պատճառով խօսքի կազմութեան մէջ էլ նշանաւոր տեղ չունին :

## § 60. Մասունք բանի : — Քերականութիւն :

Այն տեսակ տեսակ բառերը, որոնցից կազմվում է ամբողջ խօսքը, ասվում են հայերէն Մասունք — բանի, այսինքն խօսքի կամ խօսակցութեան մասեր :

Բանի—մասունքը տասն են.

1) Գոյական անուններ — առարկաների անունները յայտնող բառեր :

2) Ածական անուններ — առարկաների որպիսութիւնը յայտնող բառեր :

3) Բայեր — առարկաների արած կամ կրած գործողութիւնները յայտնող բառեր :

4) Մակբայներ — գործողութեան հանգամանքները յայտնող բառեր :

5) Թուական անուններ — առարկաների թիւը յայտնող բառեր :

6) Դերանուններ — գոյական ու ածական անունների տեղ գրուող բառեր :

8) Նախդիրներ — առարկաների յարաբերութիւնները ցոյց տուող բառեր :

9) Շաղկապներ — խօսքեր կապող բառեր :

10) Զայնարկութիւններ — զգացմունքներ յայտնող բառեր :

Սոցանից վեցը փոփոխական են, չորսը անփոփոխ.

| Փոփոխական | Անփոփոխ |
|---|---|
| 1) Գոյական անուն | 1) Նախդիր |
| 2) Ածական անուն | 2) Մակբայ |
| 3) Թուական անուն | 3) Շաղկապ |
| 4) Դերանուն | 4) Զայնարկութիւն: |

5) Բայ

6) Դերբայ

Քերականութեան առաջին մասը ցոյց է տալի մեզ տասանց-բա-նի կազմութիւնը, առանձին առանձին առած, իսկ երկրորդ մասը սովորեցնում է՝ թէ ինչպէս պէտք է այս խօսքի առանձին մասերից ամբողջ խօսք կամ նախադասութիւն կազմել:

---

## ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

# ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

# ՄԱՍԱՆՑ-ԲԱՆԻ

## Ա. Գոյական անունների կազմութիւնը

### § 61. Գոյականների արմատները:

Գոյականները, ընդհանրապէս առնելով, նիւթական ու մտաւոր առարկաների անուններ են:

Նիւթական գոյականները ըստ մեծի մասին արմատական բառեր են. փայտ, ծառ, տանձ, կամ արմատականներից են կազմվում. փայտ-ատ ծառ-ուտ, տանձ-ենի:

Իսկ մտաւորականները, որ ըստ մեծի մասին վերացական առարկաների անուններ են, կազմվում են.

1) Որակական ածականներից, երբ գոյականը որ և իցէ վերացական յատկութեան անուն է. քաջ — ութիւն, ճոխ — ութիւն, խոնարհ — ութ, աւագ — ոյթ:

2) Բայերի արմատներից, երբ գոյականը որ և իցէ վերացական գործողութեան անուն է. ուս — ումն, ծն — ունդ, աղաչ — անք, գր — ութիւն, գոչ — իւն:

3) Դերանուններից. ինքն — ութիւն, նոյն — ութիւն:

## § 62. Ածանցական մասնիկներ:

Ածանցական մասնիկները երկուսի են բաժանվում. նախադաս, այսինքն բառերի սկիզբը դրուող և յետադաս — բառերի վերջը դրուող:

Նախադաս մասնիկները բառերի սկիզբը դրուելով հակառակ նշանակութիւն են տալի նոցա, ինչպէս. գիտուն, ագէտ կամ անգէտ, գոհ, դժգոհ. այս պատճառով կոչվում են ժխտական մասնիկներ:

Իսկ յետադաս մասնիկների մէջ պէտք է զանազանել նշանակալիցները անշան մասնիկներից:

Նշանակալից մասնիկները յայտնի բառեր կամ արմատներ են. ինչպէս ատ՝ հատանեմ բայի հատ արմատն է, ուրեմն փայտ — ատ նշանակում է փայտ կտրող գործիք: ուն՝ ունել բայի ուն արմատն է, ուստի թռչուն նշանակում է թռչելու կարողութիւն ունեցող անասուն: ւէտ կամ աւէտ՝ յաւէտ բառն է, որ նշանակում է շատ, աւելի ուստի գին-աւէտ երկիր նշանակում է շատ գինի բերող երկիր: Այս տեսակ ածանցներով կազմուած բառերը կարող են և բարդ համարուել:

Անշան մասնիկները այժմ իրանց նշանակութիւնը կորցրել են մեզ համար, և միայն բառերի վերջը դրուելով նշանակութիւն են ստանում, ինչպէս որ շուտով կը տեսնենք:

## § 63. Գոյականների ածանցական վերջաւորութիւնները:

Ածանցական գոյականները առ հասարակ կազմվում են բայերից կամ արմատական գոյականներից իրանց վերջը այլ և այլ մասնիկներ առնելով, այսպէս.

1. Գործ, արուեստ և պաշտօն ցոյց տուող գոյականները կազմվում են գոյական անուններից և բայերից որդ, պան ա-

ծանցական մասնիկներով. այգ—որդ, որս—որդ, պարտէզ—պան, դռն—ա—պան :

2. Գործիք ցոյց տուող գոյականները կազմվում են բայերից հետևեալ մասնիկներով. ոց, ան, ակ, նակ, ի. սղ—ոց, խարտ—ոց, խփ—ան, ամ—ան, ըմպ—ա—նակ, աղօր—ի :

3. Տեղ ցոյց տուող գոյականները, ուր մի և որևիցէ բան կատարվում կամ գտնվում է, կազմվում են գոյական ու ածական անուններից և բայերից հետևեալ մասնիկներով. ոց, նոց, րան, ստան. դպր—ոց, խոհ—ա—նոց, աղքատ—ա—նոց, ննջ—ա—րան, ձոր—ա—ստան, Ասորե—ստան :

4. Վերացական յատկութիւն ու գործողութիւն ցոյց տուող գոյականները կազմվում են առ հասարակ որակական ածականներից, եթէ յատկութիւն են ցոյց տալի ոյթ և ութիւն* մասնիկներով. առագ—ոյգ, զօր—ութիւն. իսկ եթէ գործողութիւն են յայտնում, բայերից են կազմվում, հետևեալ մասնիկներով. ած, ուած, անք, եստ, ուստ, իւն, ութիւն, իք, ոյթ, ումն, ունդ, ուրդ. արար—ած, հար—ուած, աղաչ—անք, գով—եստ, փախ—ուստ, գոչ—իւն կամ գոչ—ումն, Թող—ութիւն կարծ—իք, երև—ոյթ, ծն—ունդ, խառն—ուրդ :

5. Փոքրկութիւն ու փաղաքշանք ցոյց տուող անունները կազմվում են գոյական և ածական անուններից հետևեալ մասնիկներով. ակ, իկ, ուկ, ոյկ. նաւ—ակ, որդե—ակ, ձորձ—իկ, մանչ—իկ, ճնճղ—ուկ, գրք—ոյկ :

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

(Առ հասարակ ածանցական և բարդ բառերը կազմելու համար՝ հարկ է հետևեալ դիտողութիւններին ուշադրութիւն դարձնել, որոնք թէպէտ մասնաւորապէս բարդ բառերի կազմութեան վերայ են, բայց նոյն օրէնքները անփոփոխ երևում են և ածանցական բառերի կազմութեան մէջ :

1. Բարդութեան ընդհանուր և սովորական կանոնն է երկու բառ ա-ով կապել (որ այս պատճառով կոչվում է յօդակապ տառ), երբոր առաջինը բաղաձայնով

---

* ութիւն մասնիկը կրկնածանց է ոյթ և իւն մասնիկներով և համապատասխանում է լատ. tio և գաղղ. tion վերացական մասնիկներին :

*է վերջանում և երկրորդը բաղաձայնով է սկսվում։ Առաջին բառի ձայնաւորը կամ երկբարբառը սովորաբար փոխվում է (ըստ § 6.), իսկ երկրորդ բառը մնում է անփոփոխ, ինչպէս* [illegible] *(հող, գործ),* [illegible] *(բան, գէտ),* [illegible] *(կարճ, միտք),* [illegible] *(տէր, սէր),* [illegible] *(ատեան, դպիր),* [illegible] *(չեառն, բնակ),* [illegible] *(ինչ, սէր),* [illegible] *(դուռն, պան),* [illegible] *(լոյս, շաւիղ)*։

*Այսպէս երբեմն նոյն բառը ինքն իրա հետ է բարդվում, և առաջին անունը շատ տեղ չէ փոխվում.* [illegible]։

*2. Պատահում է որ երկու բառ միմեանց հետ բարդվում են առանց ձայնաւորով կապուելու կամ փոխուելու, ինչպէս.* [illegible]։

*Այս կանոնով բարդվում է երբեմն մի և նոյն բառը ինքն իրա հետ.* [illegible]։ — *Այս տեսակ բարդութիւնների մէջ երբեմն մի տառ զանց է լինում կամ ուրիշ տառի է փոխվում ներդաշնակութեան համար, ինչպէս.* [illegible] *(փոխ—փոխ),* [illegible] *(դար—դար),* [illegible] *(կաղ—կաղ),* [illegible] *(հեծհեծեմ),* [illegible] *(բառ—բառ),* [illegible] *(լուռ—լուռ),* [illegible] *(սպառ—սպառ)*։

*Իսկ բարդութեան մասնաւոր կանոնները սոքա են.*

1) *Եթէ առաջին բառը ձայնաւորով է վերջանում, իսկ երկրորդը բաղաձայնով սկսվում, սովորաբար* [illegible] *-ով են կապվում.* [illegible]։

2) *Եթէ առաջին բառը բազմավանկ է և վերջանում է ի, երբեմն այն ի փոխվում է ե կամ ւ և երբեմն* [illegible]*, կամ ի բոլորովին զանց է լինում և նորա տեղ դրվում է* [illegible]*, ինչպէս.* [illegible] *(բարի, կամ),* [illegible] *(գերի, դարձ),* [illegible] *կամ* [illegible] *(որդի, գիր),* [illegible] *կամ* [illegible] *(թերի, հաւատ),* [illegible] *(հեռի, բնակ),* [illegible] *(աքանչելի, հրաշ)*։

3) *Եթէ առաջին բառը ձայնաւորով է վերջանում և երկրորդը ձայնաւորով սկսվում, պատահում է որ երկուսն էլ իրանց ձայնաւորները պահում են, և կամ երկրորդի ձայնաւորը զանց է լինում, ինչպէս.* [illegible]։

4) *Եթէ առաջին բառը բաղաձայնով է վերջանում և երկրորդը ձայնաւորով սկսվում, առանց ձայնաւորի կապվում են.* [illegible]։

—

*1. Հետևեալ բառերից գործ և արուեստ ու պաշտօն ցոյց տուող գոյականներ կազմել.*

*ա)* [illegible] *մասնիկով. — ճանապարհ — նախ — փոխան — միջին — առաջին — յետին — ցանց — այգի — անդեայ — անց — նաւ — ուղի — բաժանել — մնալ*։

*բ)* [illegible] *մասնիկով. — այգի — սենեակ — ուղտ — բաղանիք — եկեղեցի — խանութ — բանտ — պաշտօն — պանդոկ — պահել*։

*2. Հետևեալ բայերից գործիք ցոյց տուող գոյականներ կազմել.*

ա) ոց մասնիկով. — ջնջել—կտրել—փորել—խայթել—հալել—քշել—հօտել—քերել—կթել—փակել:

բ) ան մասնիկով. — ջնջել—խթել—տափել—փակել—պատմել—չուել:

գ) ակ և նակ մասնիկներով. — դիտել—տապել—ըմպել—կոչել:

դ) է մասնիկով. — գործել—ունել—բանալ:

3. Հետևեալ բառերից տեղ ցոյց տուող գոյականներ կազմել.

ա) ոց և նոց մասնիկներով. — ձմեռն — ծաղիկ—որբ—հիւր— ամառն—վարդապետ—հայրապետ—ուխտ—աղօթք—ժողովուրդ:

բ) րան մասնիկով. — ճեմել—օթել—ննջել—վարժել—աւետել—բնակել—գործել—վառել—ուսումն—աղօթք:

գ) ստան մասնիկով. — ծառ — այգի — անդ — կոյս — հայ—պարսիկ—հնդիկ—խուժիկ:

4. Հետևեալ բառերից կազմել վերացական գոյական անուններ.

ա) ած և ուած մասնիկներով. — կոտորել — ստեղծել—դիպել—խնդրել—պատառել:

բ) անք մասնիկով. — աղաչել—մաղթել—զարմանալ—պարծել—թշնամանել—պահանջել—զրպարտել:

գ) եստ, ուստ մասնիկներով. — գոլել—պահել,—այրել—թաքչել—փախչել—գալ:

դ) իւն և ումն մասնիկներով. — գոչել — հնչել — ճիչել — մռնչել — կանչել — լալ—շշնջել—քրթմնջել—շաչել—շառաչել—շողալ—դղջալ—դիմել—երևել—եռալ:

ե) ոյթ և ութիւն մասնիկներով. — սովորել—ձանձրանալ—ծերանալ—երևել—զայրանալ—ազատել—օծել—զօրանալ—առաքինի—բարի—չար:

զ) իք մասնիկով. — չար—լալ—աւետել—կարծել—ընթրել—սքանչանալ—զարմանալ—սպառնալ:

է) ունդ, ուրդ մասնիկներով. — ծնանել—սնանել—սիրել.—խառնել—խորհել—արձակել—յագենալ—ժողովել:

5. Հետևեալ բառերից նուաստական և փաղաքշական անուններ կազմել.

ա) տուն —ձոր— սին— դրօշ — արև— լոյս—բուն—ճանճ—հաւ—հայր—մայր—եղբայր—թոռն—հայկ—Շուշան. — գիրք—հաւ—որթ—մէջ—սկունդ:

## § 64. Բարդ գոյականներ:

Գոյական անունները բարդվում են

1) Երբ երկու գոյական անուն միասին գալով՝ մէկ բառ են կազմում, և այն ժամանակ առաջին գոյականը սեռական հոլովի մէջ ունի. ինչպէս ջուր և գլուխ արմատական բառերը

բարդուելով՝ կազմում են պարագլուխ բառը, որ նշանակում է գլուխ պարու:

2) Երբ գոյական անունը արմատի հետ միանալով՝ մէկ բառ են կազմում, և այն ժամանակ գոյականը բայի գործողութեան ենթակայ լինելով հայցական հոլովի միտք ունի, իսկ բայի արմատը բայածականի միտք. ինչպէս երգիչ և գործել բառերը բարդուելով՝ երգչագործ բառն են կազմում, որ նշանակում է գործող երգիչ: Այս տեսակ բառերը ածականի միտք էլ ունին, շատն էլ միայն ածականապէս են վարվում, զորօրինակ. երգչագործ գոյական է, իսկ եթէ ասենք՝ այր երգչագործ, այս տեղ երգչագործ ածական է:

Բարդեալ գոյականների մէջ, ինչպէս վերև տեսանք, երկրորդ բառը գլխաւոր տեղն է բռնում. բայց պատահում է երբեմն որ երկու գոյականն էլ հաւասարապէս գլխաւոր են մնում, ինչպէս. ազգատոհմ (ազգ և տոհմ) այրուձի (այր ու ձի):

### ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Հետևեալ գոյական անուններից բարդ գոյականներ կազմել.

գահ, գլուխ—զօր, գլուխ — զօր, պետ—գահ, պետ — տարի, գլուխ—ազգ, պետ—երկին, կամար—փիղ, ոսկր—ջուր, շուն—ձուկն, կիթ — մուկն, գեղ — ժամ, գիրք—մեծեան, գիրք—գիրք, տուն—ինձ, առիւծ—հարց, փորձ:

2. Հետևեալ գոյականներից ու բայերից բարդ գոյականներ կազմել.

մատեան, գրել—գիրք, վաճառել—ձուկն, որսալ—օրհնել—դնել—բան, բերել—թուղթ, բերել—հող, գործել—ջուր, կրել—նաւ, վարել—հաց, գործել—զօրք, վարել—աթոռ, ունել (կալ)—վարս, ունել—կոյս, ունել—ջուր, օրհնել:

## § 65. Գոյականների հոլովումը:

Հայերէն լեզուի բառերը ընդհանրապէս առնելով եօթը տեսակ կարող են փոխուիլ, ուրեմն և մենք ունինք եօթը հոլովում:

Հոլովմանց մէջ եղած զանազանութիւնը երևում է մաս-

նաւորապէս սեռականի ու գործիականի վերջաւորութիւններից ։

## § 66. Հոլովների կազմութիւնը։

Հայերէն լեզուի հոլովները կազմվում են երկու արմատական հոլովներից, որ են ուղղական և սեռական։

1. Ըստ ուղղականից կազմվում են․

1) Հայցականը՝ սկզբում զ նախդիրը ...ցունելով. ուղ. մարդ, հյց. զմարդ ։

2) Նախդրիւ տրականը՝ սկզբում աւելացնելով այս նախդիրներից մինը. 'ի, յ, ց, առ ։ Եթէ գոյականը անշունչ առարկայի անուն է ու բաղաձայնով է սկսվում ՝ի է գրվում, եթէ ձայնաւորով՝ յ. իսկ եթէ շնչաւոր առարկայի անուն է սովորաբար առ կամ ց նախդիրները, ինչպէս. ուղ. տուն, հյց. 'ի տուն, անուն—յանուն, մարդ—ցմարդ, նա—առ նա ։

2. Ըստ սեռականից կազմվում են

1) Վերջահոլով տրականը՝ որ բոլորովին սեռականին նման է ամենայն հոլովումներում. սեռ. մարդոյ, վերջ. տր. մարդոյ, տան—տան, քաղաքի—քաղաքի, կայսեր—կայսեր ։

2) Բացառականը՝ սկզբում 'ի կամ յ նախդիրը առնելով և վերջում ի փոխելով է, եթէ առաջին ու երկրորդ հոլովման բառ է. արքայի—յարքայէ, քաղաքի—'ի քաղաքէ ։ Եթէ երրորդ և չորրորդ հոլովման բառ է, վերջը անփոփոխ է մնում. Աստուծոյ—'ի Աստուծոյ, աղաւնոյ—յաղաւնոյ ։ Իսկ միւս երեք հոլովումներում սեռականի վերջաւորութեան վրայ աւելացվում է է. մարդոյ—'ի մարդոյէ կամ 'ի մարդէ, անձին—յանձնէ, կայսեր—'ի կայսերէ

3) Գործիականը՝ որ սովորաբար վերջում մէկ բաղաձայն է առնում. կայսեր—կայսերբ, հեծան—հեծանբ, մարդոյ—մարդով ։ Բաց 'ի հինգերորդ հոլովման բառերից, որոնց գործիականը բոլորովին սեռականին նման է. գանձու—գանձու, աշխու—աշխու ։

իսկ երկրորդ և չորրորդ հոլովման բառերինը անկանոն է. Թագաւորի — Թագաւորաւ, յեթենայ — յեթենեաւ:

3. Յոգնակի ուղղականներ՝ որ սովորաբար եզականի վրայ ք աւելացնելով է առաջ գալի, կազմվում են

1) Հայցականը՝ սկզբում զ նախդիր առնելով և վերջում ք փոխելով ս. ատանք — զատանս, արքայք — զարքայս:

2) Նախդրիւ տրականը՝ սկզբում 'ի, ը, ց, առ նախդիրները առնելով, և վերջում ք փոխելով ս. քաղաքք — 'ի քաղաքս, արքայք — առ արքայս, արք — ցարս:

4. Յոգնակի սեռականներ՝ որ սովորաբար եզակի սեռականից է կազմվում վերջը ց առնելով, բաց 'ի երկրորդ և չորրորդ հոլովմներում, կազմվում են

1) Վերջահոլով տրականը՝ անփոփոխ մնալով. Գլխոց — Գլխոց, նեղութեանց — նեղութեանց, արքայից — արքայից:

2) Բացառականը՝ սկզբում 'ի, յ նախդիրները առնելով. նեղութեանց — 'ի նեղութեանց, արքայից — յարքայից:

5. Յոգնակի գործիականը կազմվում է անխտիր ամենայն հոլովմներում եզականի վրայ ք աւելացնելով. նեղութեամբ — նեղութեամբք, շղթայիւ — շղթայիւք, Թագաւորաւ — Թագաւորօք (Թագաւորաւք):

Տրական, գործիական և բացառական հոլովների վրայ հետևեալ գիտելու արժանի բաները կան:

Այն հոլովմներում՝ որոնց մէջ բացառականը վերջահոլով տրականի նման է (այսպէս են 3, 4 և 5 հոլովման բառերը), նախդրիւ տրականը 'ի մէջ բառի միտքն էլ ունի. 'ի տուն նշանակում է դէպ 'ի տունը և տան մէջ, յեկեղեցի — դէպ 'ի եկեղեցին և եկեղեցւոյ մէջ, 'ի ծով — դէպ 'ի ծովը և ծովի մէջ: իսկ միւս հոլովմներում վերջահոլով տրականը մի և նոյն մտքով է բանում. նոյն է ասել 'ի քաղաքի և 'ի մէջ քաղաքի, 'ի տան և 'ի մէջ տան, 'ի նեղութեան և 'ի մէջ նեղութեան, միայն առաջին ձևը աւելի գործածական է, մանաւանդ երբ խօսքը անորոշ բանի վրայ է:

Յոգնականում նախդրիւ տրականը անխտիր ամենայն հոլովմներում 'ի մէջ բառի մտքով էլ է վարվում. 'ի քաղաքս նշանակում է դէպի քաղաքները և քաղաքների մէջ։

Գործիականի վրայ զ նախդիր դնելով՝ շուրջ բառի միտք ունի, և պատասխանում է այս հարցմանը,—զի՞ւ։ Զի՞ւ բազմեալ էին աշակերտք։ — Զսեղանով (սեղանի շուրջը կամ չորս կողմը)։

Բացառականի վրայ էլ 'ի, ց նախդիրների տեղ նոյն զ նախդիրը դնելով վերայ, մասին, համար բառերի միտք ունի, և պատասխանում է այս հարցմանը. զումէ՞։ Զումէ՞ չարախօսէին հրեայք։ — ԶՅիսուսէ (Յիսուսի վրայ կամ մասին)։

Հին քերականները այս երեք ձևերը առանձին հոլովներ էին համարում, չնայելով որ ոչ միայն կազմութեան՝ այլ և նշանակութեան կողմից առանձին հոլովներ կոչուելու իրաւունք չունին սոքա, ինչպէս նախդիրների կարգում կը տեսնենք.

# ԵՕԹԸ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 7 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Նշան | ի, իւ | ի, աւ | ոյ, ով | ւոյ, եաւ | ու, ու | ան, ամբ | եան, եմբ | եր, երբ | եղ, եղբ |
| | | | | | | Ա. օր. | Բ. օր. | Ա. օր. | Բ. օր. |
| Հոլով | Եզ. Յգ. | Եզ. Յգ. | Եզ. Յգ. | Եզ. Յգ. | Եզ. Յգ. | Եզ. Յգ. | Եզ. Յգ. | Եզ. Յգ. | Եզ. Յգ. |
| Ուղ. | — ք | — ք | — ք | ի, իք | — ք | ըն. անք ունք | ին, ինք | ըր, երք | ըղ, եղք |
| Սեռ. | ի,ից | ի, աց | ոյ, ոց | ւոյ, եաց ւոց | ու, ուց | ան, անց | ան, եանց | եր, երց | եղ, եղց |
| Գործ. | իւ, իւք | աւ, օք | ով, ովք | եաւ, եօք ւով, ւովք | ու, ուք | ամբ, ամբք | եամբ, եմբք | երբ, երբք | եղբ, եղբք |
| Բաց. | է, ից | է, աց | ոյ, ոց | ւոյ, եաց ւոց | ուէ, ուց է, ու, | անէ, անց | ենէ, եանց | երէ, երց | եղէ, եղց |

## § 67. Առաջին հոլովումն:

ի, իւ

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | Արքայ | Թագաւոր | Արքայ-ք | Թագաւորներ |
| Սեռ. | Արքայ-ի | Թագաւորի | Արքայ-ից | Թագաւորների |
| Տր. | Արքայ-ի, | Թագաւորին, | Արքայ-ից | Թագաւորներին |
| | յԱրքայ | դէպ ի Թագաւորը* | յԱրքայ-ս | դէպ ի Թագաւորները |
| Հայց. | զԱրքայ | Թագաւորը** | զԱրքայ-ս | Թագաւորները |
| Գործ. | Արքայ-իւ | Թագաւորով*** | Արքայ-իւք | Թագաւորներով |
| Բաց. | յԱրքայ-է | Թագաւորից | յԱրքայ-ից | Թագաւորներից: |

Այսպէս հոլովւում են

1) այ և ոյ վերջաւորուած գոյականները, ինչպէս. Հոճայ, Դշխոյ. նոյնպէս եթէ այ և ոյ ձայնաւորներից յետոյ մի որ և իցէ բաղաձայն լինի. ձայն, արոյր:

2) է, էա, աա, այ, եան վերջաւորութիւն ունեցողները. Բաղէ, Ծէա, Պօղոս, Ընձայթ, Տաղեան:

3) ա, ե, ի և օ ձայնաւորներով միավանկ բառերի մեծ մասը, ինչպէս. Խոնդ, Ծեծ, Սէրա, Տրօշ. բայց ի առով անեզականներից (աչք, փառք, բարք), որոնք ըստ մասին Բ. և ըստ մասին Ե. հոլովման պէս են հոլովւում:

### Օրինակք

| | | |
|---|---|---|
| Ընծայ, ի, իւ | Մարգարէ, ի, իւ | Բանդ, ի, իւ |
| Քահանայ, ի, իւ | Հալուէ, ի, իւ | Անգք անգից |
| Թրեղայ, ի, իւ | Հանդէս. դիսի | Հրաշք, հրաշից |
| Հրեայ, հրէիւ | Ծէս, ծիսի | Նետ, ի, իւ |

---

* Նախդիր-տրականը աշխարհաբարում շատ անգամ առանց դէպ ի բառերի է թարգմանվում, ինչպէս. ես գնում եմ տուն:

** Հայցականը աշխարհաբարում շատ անգամ ուղղականի ձև է ստանում, ինչպէս, ասում ենք, ես տեսայ այն մարդուն և այն մարդը. այս բանին ուշադրութիւն դարձնելու է մանաւանդ կրթութիւնների մէջ չսխալվելու համար, որ հյց. աշխարհաբարում շատ անգամ ուղղականի ձևով գրուած է:

*** Գործիականը աշխարհաբարում երբեմն հետ բառով է թարգմանվում, մանաւանդ եթէ գոյ. շնչաւոր առարկայ է. օրինակ,—Թագաւորով կամ Թագաւորի հետ:

| | | |
|---|---|---|
| Շղթայ, ի, իւ | Հերովդէս, Հերովդի | Ցեղ, ի, իւ |
| Կաթսայ, ի, իւ | Պետրոս, ի, իւ | Ծեծ, ի, իւ |
| Փայտ, ի, իւ | Քրիստոս, ի, իւ | Ելք, ելից, ելիւք |
| Կայծ, ի, իւ | Տիտոս, ի, իւ | Արեւելք, արեւելից |
| Ծայր, ի, իւ | Մեհեան, մեհենի | Բիծ, բծի, բծիւ |
| Ճառագայթ, ի, իւ | Ատեան, ատենի | Գիծ, գծի, գծիւ |
| Որոգայթ, ի, իւ | Գեհեան, գեհենի | Սիրտ, սրտի, սրտիւ |
| Դշխոյ, ի, իւ | Վայրկեան, վայրկենի | Գիւտ, ի, իւ |
| Ջուլհայ, ի, իւ | Հաց, ի, իւ | Ինչք, ընչից, ընչիւք |
| Համբոյր, ի, իւ | Խրաց, ի, իւ | Տօն, ի, իւ |
| Հրապոյր, ի, իւ | Գան, ի, իւ | Կրօն, ի, իւ |
| Ծածկոյթ, ի, իւ | Բան, ի, իւ | Հօտ, ի, իւ |
| Հանգոյց, ի, իւ | Ջան, ի, իւ | Խօսք, խօսից |
| Խնձոյք, ից, իւք | Մարտ, ի, իւ | Աղօթք, աղօթից |
| Սերովբէ, ի, իւ | Վարդ, ի, իւ | |

## Բացատրութիւնք

(Թուանշանները ցոյց են տալի թէ իւրաքանչիւր բառ որ հոլովման վրայ է հոլովում։)

| | | | |
|---|---|---|---|
| Ծառ, 3. | Ճաշ, 5 | Բոյս, 3. | Երգ, 3. |
| Մարդ, 3. | Տապ, 3. | Լոյս, 3. | Թեփ, 3. |
| Ջարդ, 5. | Պապ, 2. | Ցոյս, 3. | Ծեփ, 3. |
| Դաշտ, 2. | Ազգ, 2 | Վարագոյր, 2. | Վիհ, 2. |
| Կարգ, 2. | Ամ, 2. | Երգ, 3. | Օդ, 3. |
| Յարկ, 2. | Գրեան, 3. | Տեղ, 3. | Տօթ, 3. |
| Պարկ, 2. | Ցորեան, 3. | Թել, 3. | Ցօղ, 3. |
| Ջափ, 5. | Ընդեայ, 3. | Գետ, 3. | Ջօր, 5. |

## § 68. Հոլովումն գիւղ անուան։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Գիւղ | Գիւղ-ք, գիւղ-օրէք |
| Ս. | Գեղ-ջ | Գիւղ-ից, գիւղ-օրէից |
| Տ. | Գեղ-ջ, ի գիւղ | Գիւղ-ից, ի գիւղ-ս |
| Հ. | զԳիւղ | զԳիւղ-ս |
| Գ. | Գիւղ-իւ | Գիւղ-իւք, գիւղ-օք |
| Բ. | ի Գեղ-ջէ | ի Գիւղ-ից։ |

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

Հետեւեալ գրաբար խօսքերի մէջ նշանակած գոյականները պէտք եղած հոլովներովը դնել, նայելով մօդելին՝ որ աշխարհաբարից երեւում է:

| | |
|---|---|
| Հերովդէս թագաւորը թագաւորում էր Հրեաների վրայ: | Հերովդէս արքայ թագաւորէր ի վերայ Հրեայք: |
| Հերովդէս Յովհաննէսին բանտ քցեց: | Հերովդէս արկ բանտ Յովհաննէս: |
| Թագաւորից հրաման եկաւ Յովհաննէսի գլուխը կտրել բանտում: | Եւ հրաման արքայ գլխատել Յովհաննէս բանտ: |
| Թիկնապահները կանգնած էին թագաւորի շուրջ կողմը: | Թիկնապահք շուրջ կային արքայ: |
| Յիսուս քարոզում էր Հրեաներին Աստուծոյ խօսքը: | Յիսուս քարոզէր Հրեայ բան Աստուծոյ: |
| Հրեաները վատ էին խօսում Յիսուսի վրայ: | Հրեայ չարախօսէին Յիսուս: |
| Մարգարէների խօսքերը կատարուեցան: | Կատարեցան բան մարգարէ: |
| Կոյրերը զրկվում են արևի ճառագայթներից: | Կոյր զրկին ճառագայթ արեգական: |
| Ձեր ազատութիւնը գանձերով կը լինի և ոչ թէ խօսքերով: | Գանձ եղիցի փրկութիւն ձեր և ոչ բան: |

ԾԱՆ. Իւրաքանչիւր կրթութիւն ուղղելու ժամանակ ուսուցիչը հասկացնում է աշակերտներին թէ ինչ պատճառով գրաբարում այս կամ այն հոլովն է հարկաւոր գործ դնել:

## § 69. Երկրորդ հոլովումն:

ի, ա

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Բանակ | բանակ (օրդու) | Բանակ-ք | բանակներ |
| Ս. | Բանակ-ի | բանակի | Բանակ-աց | բանակների |
| Տ. | Բանակ-ի, | բանակին, | Բանակ-աց, | բանակներին, |
| | ի Բանակ | դէպ ի բանակը | ի Բանակ-ս | դէպ ի բանակները |
| Հ. | զԲանակ | բանակը | զԲանակ-ս | բանակները |
| Գ. | Բանակ-աւ | բանակով | Բանակ-օք | բանակներով |
| Բ. | ի Բանակ-է | բանակից | ի Բանակ-աց | բանակներից |

Այս հոլովման վրայ հոլովում են

1) Այն բազմավանկ բառերը, որոնց վերջի վանկին մէջ ա ձայնաւորը կայ ու վերջաւորվում են ակ, ատ, ան, կան, ամ և այլն, ինչպէս. եղանակ, ողատ, գաւազան, պատգամ. նոյնպէս և մի

քանի ա-ով եզական ու անեզական միավանկներ. ազգ, ջանք, ճառք :

2) Այն բազմավանկ բառերը, որոնց վերջի վանկին մէջ ե, է ձայնաւորները կան ու վերջաւորվում են եղ, եր, էն, ղէն. ոչխարեղ, աղուէր, օրէնք. Նոյնպէս և մի քանի է ով միավանկներ. աէգ, մէգ :

3) Այն բազմավանկ բառերը, որոնց վերջի վանկի մէջ ի ձայնաւորը կայ և վերջաւորվում են ին, իւ, իր, իշ. ածիչ, գրիչ, արհաւիրք, կողմնից :

4) Այն բազմավանկ բառերը, որոնց վերջի վանկում ու երկբարբառը կամ օ ձայնաւորը կայ հետևեալ վերջերով. ու, ուղ, ոյղ, ուր, ուրդ, ոյ. մեղու, ընձուղ, պառաւուր, մեղաւոր, հօւ-աւորդ, պալրոյ :

## Օրինակք

| | | |
|---|---|---|
| Ժամանակ, ի, աւ | Փառք, փառաց, փառօք | Դպիր, դպրի |
| Զանգակ, ի, աւ | Աչք, աչաց, աչօք | Ձեռագիր, ձեռագրի |
| Վանդակ, ի, աւ | Կամք, կամաց, կամօք | Լեզու, ի, աւ |
| Մանեակ, մանեկի | Կարգ, ի, աւ | Եղջերու, ի, աւ |
| Սենեակ, սենեկի | Խաւար, ի, աւ | Վերարկու, ի, աւ |
| Քաղաք, ի, աւ | Նախարար, ի, աւ | Բազուկ, բազկի |
| Սլաք, ի, աւ | Ջրհեղեղ, ի, աւ | Աղմուկ, աղմկի |
| Դարան, ի, աւ | Սուսեր, ի, աւ | Մակոյկ, մակուկի |
| Իշխան, ի, աւ | Լապտեր, ի, աւ | Խարոյկ, խարուկի |
| Գերան, ի, աւ | Ընկեր, ի, աւ | Զինուոր, ի, աւ |
| Ուռկան, ի, աւ | Փոխարէն, րինի | Թագաւոր, ի, աւ |
| Դահեկան, ի, աւ | Ապաւէն, ւինի | Կրօնաւոր, ի, աւ |
| Խորան, ի, աւ | Մրրիկ, մրրկի | Օրիորդ, ի, աւ |
| Ապարանք, րանաց, րանօք | Ռոճիկ, ռոճկի | Որսորդ, ի, աւ |
| Տանջանք, ջանաց, ջանօք | Մկրտիչ, Մկրտչի | Փողոց, ի, աւ |
| Աղաչանք, չանաց, չանօք | Ուսուցիչ, ուսուցչի | Խայթոց ի, աւ |
| Կեանք, կենաց, կենօք | Դահիճ, դահճի | Գալրանոց, ի, աւ |

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

Բաբելոնը Արևելքի նշանաւոր քաղաքներից մինն էր :

Բաբելոն էր մի ի համբաւաւորենց քաղաք Արևելք :

Շամիրամ այս քաղաքը հաստ պարիսպով ամրացրեց:

Շամիրամ ամրացոյց քաղաք այս հաստահիմն պարիսպ:

| | |
|---|---|
| Քաղաքի պարիսպների վրայ կարելի էր անց կենալ լծուած կառքերով։ | Մարթ էր անցանել ի վերայ պարսպաց քաղաքի կառօք լծելովք։ |
| Քաղաքների շուրջ բոլորը շատ արտեր կան։ | Անդաստանք բազումք են քաղաքի։ |
| Պտուղները խօսում են ծառերի վրայ, ու թռչունները ճիւղերի վրայ։ | Պտուղ խօսին ի ծառս. թռչունք՝ ի ճիւղս։ |
| Իշխանները կենում են պալատներում, խեղճերը-խրճիթներում։ | Իշխան բնակին ապարան, աղքատ- խրճիթ։ |
| Իշխանների փառքը հպարտութիւններն է։ | Փառք իշխան են ակր հպարտ։ |
| Թագաւորի պալատից դուրս հանեցին նորան։ | Հանին զնա արտաքս ապարանէ արքայ։ |
| Աւելի լաւ է աչքով կոյր (լինել) քան մտքով։ | Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ |
| Ո՛վ թագաւորներ, լսեցէ՛ք իմ աղաղակին։ | Ո՛ թագաւորք, լուարուք աղաղակի իմ։ |

## § 70. Երրորդ Հոլովումն։

ոյ, ով

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | գործ | գործ | գործ ք | գործեր |
| Ս. | գործ-ոյ | գործի | գործ-ոց | գործերի |
| Տ. | գործ-ոյ, | գործին, | գործ-ոց, | գործերին, |
| | ի գործ | դէպ ի գործը | ի գործ-ս | դէպ ի գործերը |
| Հ. | զգործ | գործը | զգործ- ս | գործերը |
| Գ. | գործ-ով | գործով | գործ-ովք | գործերով |
| Բ. | ի գործ-ոյ | գործից | ի գործ-ոց | գործերից |

Այսպէս հոլովումեն

1) ած, ուած, ին, ուն վերջացած գոյականները. կապուած, ստեղծուած, մարմին, պէտուն։

2) է, ո ձայնաւորով և ու երկբարբառով միավանկները. ձէթ, խոտ, ջուր։

3) եա երկբարբառով միավանկ ու բազմավանկ բառերը. ձեան, ամեա։

## Օրինակք

| | | |
|---|---|---|
| Աստուած, Աստուծոյ | Կապուած, ոյ, ով | Ամուսին, ամուսնոյ |
| Աստուած, աստուածոյ | Դիպուած, ոյ, ով | Լուսին, լուսնոյ, լուսնով |

| | | |
|---|---|---|
| Աղախին, աղախնոյ | Գուբ, գբոյ, գբով | Հունձք, հնձոց, հնձովք |
| Կարին, Կարնոյ | Սուգ, սգոյ, սգով | Անուրջք, անրջոց, անրջովք |
| Անասուն, անասնոյ | Գլուխ, գլխոյ, գլխով | Դժոխք, դժոխոց, դժոխովք |
| Թռչուն, թռչնոյ | Լուծ, լծոյ, լծով | Թիւ, թուոյ, թուով |
| Սողուն, սողնոյ, սողնով | Պտուղ, պտղոյ, պտղով | Հաշիւ, հաշուոյ, հաշուով |
| Գին, գնոյ, գնով | Թուփ, թփոյ, թփով | Պատիւ, պատուոյ, |
| Հող, ոյ, ով | Բոյս, բուսոյ, բուսով | Կռիւ, կռուոյ, կռուով |
| Ցող, ոյ, ով | Ցոյս, յուսոյ, յուսով | Թի, ոյ, ով |
| Ջոր, ոյ, ով | Լոյս, լուսոյ, լուսով | Տիք, ոց, ովք |
| Ողբ, ոյ, ով | Հուր, հրոյ, հրով | Սանատրուկ, տրկոյ |
| Ծոց, ոյ, ով | Սուր, սրոյ, սրով | Սեպուհ, Սեպհոյ |
| Ձու, ոյ, ով | Ցուպ, ցպոյ, ցպով | Վռամշապուհ, շապհոյ. |

## Բացառութիւնք

Տուն, 6. Գարուն, 6. Տող, 1. Խումբ 1.
Շուն, 6. Աշուն, 6. Կոնք, 1. Բրուտ, 1.
Անուն, 6. Ջոհ, 1. Ուխտ, 1. Արծիւ, 2.
Ձեղուն, 6. Տոհմ, 2, Ռումբ, 2. Հովիւ, 2.
Հիւղ, 1.

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

Քրիստոնեաները երկրպագում են մէկ Աստուծոյ, հեթանոսները շատ աստուածների:
Քրիստոնեայք երկրպագեն միոյն Աստուծոյ, հեթանոսք բազում աստուածոց:

Կաքաւների բոյները քանդեցին:
Կործանեցին բոյնս կաքաւաց:

Հայերի գրերը գտնուեցան Վռամշապուհի օրերը:
Նշանագիրք Հայոց գտան յաւուրս Վռամշապհոյ:

Հունձի ժամանակը որոմը ցորենի մէջ գտան:
Ի ժամանակս հնձոց գտին զորոմն ի մէջ ցորենոյն:

Բուի (բայղուշ) վրայ պատմում են թէ ցերեկը լոյս չէ տեսնում:
Բուոյ պատմեն թէ ոչ տեսանէ լոյս ի տուէ:

Թռչունների թագաւորը արծիւն է, գազաններինը առիւծը:
Արծիւն է թագաւոր թռչնոց, առիւծն գազանաց:

Արբեցող մարդը անասունից ոչ ինչ զանազանութիւն չունի:
Այր արբեցող ոչինչ ընդհատ է անասնոյ:

Մեր պարտէզը լիքն է տեսակ տեսակ ծառերով և ծաղիկներով:
Պարտէզ մեր լի է ազգի ազգի ծառօք և ծաղկօք:

Թռչունները նորա գլխի շուրջ բոլոր են թռչկոտում:
Թռչունք սաւառնեն շուրջ նորա:

Աստուածների Աստուածը կազատէ մեզ թշնամիների ձեռքից ու սրից:
Աստուած աստուածոց փրկեսցէ զմեզ ձեռաց և սրոյ թշնամեաց:

## § 71. Չորրորդ հոլովումն:

| ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ | | ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ | |
|---|---|---|---|
| ւոյ, եաւ | | ւոյ, ւով | |

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Աղաւնի-ի | աղաւնին | Հոգ-ի | հոգին |
| Ս. | Աղաւն-ւոյ | աղաւնու | Հոգ-ւոյ | հոգու |
| Տ. | Աղաւն-ւոյ | աղաւնուն | Հոգ-ւոյ | հոգուն |
| | յԱղաւն-ի | դէպ ի աղաւնին | ի Հոգի | դէպ ի հոգին |
| Հ. | զԱղաւն-ի | աղաւնին | զՀոգի | հոգին |
| Գ. | Աղաւն-եաւ | աղաւնիով | Հոգ-ւով | հոգիով |
| Բ. | յԱղաւն-ւոյ | աղաւնուց | ի Հոգւոյ | հոգուց |

Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Աղաւն-իք | աղաւնիներ | Հոգ-իք | հոգիներ |
| Ս. | Աղաւն-եաց | աղաւնիների | Հոգ-ւոց | հոգիների |
| Տ. | Աղաւն-եաց | աղաւնիներին | Հոգ-ւոց | հոգիներին |
| | յԱղաւն-իս | դէպ ի աղաւնիները | ի Հոգ-իս | դէպ ի հոգիները |
| Հ. | զԱղաւն-իս | աղաւնիները | զՀոգ-իս | հոգիները |
| Գ. | Աղաւն-եօք | աղաւնիներով | Հոգ-ւովք | հոգիներով |
| Բ. | յԱղաւ-նեաց | աղաւնիներից | ի Հոգ-ւոց | հոգիներից |

Այս հոլովման առաջին օրինակի վրայ հոլովւում են բոլոր ի վերջացած բազմավանկ բառերը, ի փոխելով ւ և ե յաջորդ ո և ա ձայնաւորներից առաջ. աղաւնի, աղաւնի—ւոյ, աղաւնի—եաւ:

Ոմանց եզակի գործիականը և նորանից բոլոր յոգնակին երրորդ հոլովման պէս է լինում, ինչպէս որ երևում է վերևը գրուած երկրորդ օրինակից:

Բոլոր ցի վերջացած (ըստ մեծի մասին ածական) անունները այս հոլովման երկրորդ օրինակի վրայ են հոլովւում:

### Օրինակք

| | | |
|---|---|---|
| Գինի, ւոյ, եաւ կամ ւով | Տեղի, ւոյ, եաւ | Քաղաքացի, ւոյ, ւով |
| Գործի, ւոյ, եաւ կամ ւով | Կարասի, ւոյ, եաւ կամ ւով | Անի, ւոյ, ւով |

| | | |
|---|---|---|
| Ձիթենի, ւոյ, եաւ | Զորքոսանի, ւոյ, եաւ | Արշակունիք, եաց, եօք |
| Այգի, ւոյ, եաւ կամ ւով | Որդի ւոյ, ւով | Աւետիք, եաց, եօք |
| Եկեղեցի, ւոյ, եաւ | Ոսկի, ւոյ, ւով կամ եաւ, եաց | Ընթրիք, եաց, եօք |
| Արծուի, ուոյ, ուեաւ | Փողի, ւոյ, ւոց, եաց | Կարծիք, եաց, եօք |
| Ծիրանի, ւոյ, եաւ | Ջորի, ւոյ, ւով կամ եաւ | Երախտիք, եաց, եօք |
| Տարի, ւոյ, եաւ | Աւազանի, ւոյ, ւով կամ եաւ | |

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ես գալիս եմ եկեղեցուց:

Իմ եղբայրը գնում է (դէպ ի) եկեղեցի:

Քահանաները ու ժողովուրդները թափօրով ման եկան եկեղեցու շուրջը:

Մեր պապերը մեծ հոգս ունէին եկեղեցիների շինութեան համար:

Նոքա մեր երկիրը լցրին եկեղեցիներով:

Անիի եկեղեցիների թիւը չկար:

Ժողովուրդներից մի քանիսը մէկ եկեղեցուց միւս եկեղեցին էին գնում:

Մայրը իր որդիներովը միասին աղօթք էր անում եկեղեցում:

Իրիկնահացի ժամանակ գինին պակասում էր:

Ծաղկազարդի օրը Հրեաները Քրիստոսի առաջ գնացին ձիթենիների և արմաւենիների ճիւղերով:

Վաղարշակ հայոց առաջին թագաւորն էր Արշակունիների ցեղից, և Աշոտ Բագրատունիներից:

Ես գամ եկեղեցւոյ:

Եղբայր իմ երթայ եկեղեցի:

Քահանայք և ժողովուրդ ելին ի թափօր շուրջ եկեղեցւոյ:

Նախնիք մեր փոյթ մեծ ունէին վասն շինութեան եկեղեցւոյ:

Նոքա լցին զաշխարհ մեր եկեղեցեօք:

Ոչ գոյր թիւ և համար եկեղեցեաց Անւոյ:

Ոմանք ժողովրդեան շրջէին եկեղեցէ եկեղեցէ:

Մայրն որդւովք հանդերձ յաղօթս կայր եկեղեցւոջ:

Ի ժամու ընթրեաց պակասէր գինին:

Յաւուր ծաղկազարդի Հրեայք ելին ընդ առաջ Յիսուսի ոստովք ձիթենւոյ և արմաւենւոյ:

Վաղարշակ էր առաջին թագաւոր հայոց յազգէ Արշակունեաց և Աշոտ Բագրատունեաց:

## § 72. Հինգերորդ հոլովումն:

ու, ու

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Համբաւ | համբաւ (խաբար) | Համբաւ-ք | համբաւներ |
| Ս. | Համբաւ-ու | համբաւի | Համբաւ-ուց | համբաւների |
| Տ. | Համբաւ-ու | համբաւին | Համբաւ-ուց | համբաւներին |
| | ի Համբաւ | դէպ ի համբաւը | ի Համբաւ-ս | դէպ ի համբաւները |
| Հ. | զՀամբաւ | համբաւը | զՀամբաւ-ս | համբաւները |
| Գ. | Համբաւ-ու | համբաւով | Համբաւ-ուք | համբաւներով |
| Բ. | ի Համբաւ-է | համբաւից | ի Համբաւ-ուց | համբաւներից |

Այս հոլովման վրայ հոլովւում են մի քանի ահ, աւ, ով, աս, անձ, ար վերջացած ըստ մեծի մասին միավանկ դոյականներ. նոյնպէս և մի քանի ուրիշ վերջաւորութիւն ունեցող բառեր:

## Օրինակք:

| | | |
|---|---|---|
| Դահ, ու, ուց | Սպաս, ու, ուց | Ձոր, ու, ոց, օք |
| Մահ, ու, ուց | Վնաս, ու, ուց | Ձէն, ձենու, ուց |
| Գահ, ու, ուց | Գրաստ, ու, ուց | Զարդ, ու, ուց |
| Պահ, ու, ուց | Խրատ, ու, ուց | Զգեստ, ու, ուց |
| Խաղ, ու, ուց | Գանձ, ու, ուց | Առաւօտ, ու |
| Ագռաւ, ու, ուց | Նախանձ, ու, ուց | Ուղտ, ու, ուց |
| Կաքաւ, ու, ուց | Սանձ, ու, ուց | Առիւծ, ու, ուց |
| Ձաւ, ու, ուց | Վարձ, ու, ուց | Ցուլ, ցլու, ի ցլէ |
| Նաւ, ու կամ ի, աւ | Պար, ու, ուց | Աղուէս, եսու |
| Կով, ու, ուց | Նկար, ու, ուց | Ինձ, ընձու |
| Ծով, ու ուց | Բարք, ուց, ուք | Վրէժ, վրիժու |
| Սով, ու | Վարք, ուց, ուք | Աբրահամ, ու |
| Հով, ու | Պարտք, ուց, ուք | Թովմաս, ու |
| Բովք, ուց, ուք | — | Ովկիանոս, նու |
| Դաս, ու, ուց | Այգ, ու, յայգուէ | |

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Կաքաւներէ խմբերը թռչում են մէկ ծառից միւսը: | Հոյլք կաքաւու թռչին ի ծառոց ի ծառ: |
| Թափառական պտտում է ծովէց ծով: | Թափառական շրջի ծով ծով |
| Ագռաւները բոյներ ունին: | Ագռաւու (սեռ.) որջք գոն: |
| Պանիրը վեր ընկաւ ագռաւէ բերնից և կերակուր եղաւ աղուեսէն: | Անկաւ պանիրն ի վայր ի բերանոյ ագռաւու և կուր եղև աղուեսու: |
| Օտարի գիտութիւնով է պարծենում, սիրամարգի փետուրներով զարդարուած ագռաւէ նման: | Օտարին գիտութեամբ պանծայ, համագոյն ագռաւու զարդարելոյ ի փետուրս սիրամարգի: |
| Անկիրթ բռնաբէնովը աւելի էր ամենքին: | Անհամբոյր բռնաւ աւելի էր ամենեցուն: |
| Նորա ձեռէց անոյշ հոտ էր բուրում: | Բուրէր անուշահոտութիւն ձեռաց նորա: |
| Առաւօտէց մինչև իրիկուն խօսում է, | Այգ սկսեալ խօսի, սակայն անլսող են |

բայց նորա Երուանդէն ակամբ չեն | Երուանդ նորա:
գնում :

Ո՛րդի, լսիր քո հօր Երուանդին : | Ո՛րդեակ, լո՛ր Երուանդ հօր քո :

## § 73. Վեցերորդ հոլովումն :

| ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ | | ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ | |
|---|---|---|---|
| ան, ամբ | | եան, եամբ | |

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. Ակ-ն | աչք | Բազմ-ութիւն | բազմ-ութիւն |
| Ս. Ակ-ան | աչքի | Բազմ-ութեան | բազմ-ութեան |
| Տ. Ակ-ան | աչքին | Բազմ-ութեան | բազմ-ութեանը |
| յԱկ-ն | դէպ ի աչքը | ի Բազմ-ութիւն | դէպ ի բազմ-ութիւնը |
| Հ. զԱկ-ն | աչքը | զԲազմ-ութիւն | բազմ-ութիւնը |
| Գ. Ակ-ամբ | աչքով | Բազմ-ութեամբ | բազմ-ութիւնով |
| Բ. յԱկ-անէ | աչքից | ի Բազմ-ութենէ | բազմ-ութիւնից |

Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. Ակ-ունք | աչքեր | Բազմ-ութիւնք | բազմ-ութիւններ |
| Ս. Ակ-անց | աչքերի | Բազմ-ութեանց | բազմ-ութիւնների |
| Տ. Ակ-անց | աչքերին | Բազմ-ութեանց | բազմ-ութիւններին |
| յԱկ-ունս | դէպ ի աչքերը | ի Բազմ-ութիւնս | դէպ ի բազմ-ութիւնները |
| Հ. զԱկ-ունս | աչքերը | զԲազմ-ութիւնս | բազմ-ութիւնները |
| Գ. Ակ-ամբք | աչքերով | Բազմ-ութեամբք | բազմ-ութիւններով |
| Բ. յԱկ-անց | աչքերից | ի Բազմ-ութեանց | բազմ-ութիւններից |

Այս հոլովման առաջին օրինակի վրայ հոլովում են

1) ըն վերջացած գոյականների մեծ մասը վերջին ն-ի ու նախընթաց բաղաձայնի մէջ աւելացնելով ա ձայնաւորը. աղեղն, աղեղ—ա—ն, ուռն, ուռ—ա—ն :

2) Մի քանի ուն, էն, ~~[illegible]~~ վերջացած բառեր. Գարուն, աղջէն, ~~[illegible]~~ :

Երկրորդ օրինակի պէս հոլովում են առ հասարակ բոլոր իւն (ութիւն) վերջացած բառերը, իւ՛ փոխելով ե. արիւն ար—եան :

## Օրինակք։

| | | |
|---|---|---|
| Հիմն, ան, ամբ | Խոստումն, խոստման | Թաքուստ, թաքստեան |
| Հիւսն, ան, ամբ | Օծումն, օծման | Գալուստ, գալստեան |
| Աղեղն, ան, ամբ | Գողթն, ան | Կորուստ, կորստեան |
| Որմն, ան, ամբ | Արեգակն, ան, ամբ | — |
| Գեղարդն, ան, ամբ | Գարունն, գարնան | Արիւն, արեան |
| Ամառն, ամառան | Աշունն, աշնան | Անկիւն, անկեան |
| Ձմեռն, ձմեռան | Անունն, անուան | Սիւն, սեան, ի սեանէ |
| Որդն, ան, ամբ | Ձեղուն, ձեղուան | Ձիւն, ձեան, ի ձեանէ |
| Շուրթն, շրթան | Տուն, տան | Վաղիւ, վաղուեան |
| Ունկն, ունկան | Ծնունդ, ծննդեան | Տիւ, տուընջեան, ի տուէ |
| Ձուկն ձկան | Սնունդ, սննդեան | Մանկութիւն, եան, եամբ |
| Սկիզբն, սկզբան | Աղջիկ, աղջկան | Ծերութիւն, եան, եամբ |
| Ասեղն, ասղան | Ծաղիկ, ծաղկան | Մեծութիւն, եան, եամբ |
| Եղեգն, ան, ամբ | Մանուկ, մանկան | Կրթութիւն, եան, եամբ |
| Ուսումն, ուսման | Փախուստ, փախստեան | |

Այս հոլովման առաջին օրինակից փոքր ինչ խոտորում են մի քանի ըն վերջացած բառեր, որոնց եզակի սեռականը լինում է ին ու նորանից յոգնակի ուղղականը ու նախդրիւ հոլովները լինում են ինք, ինս, այսպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Անձն | Անձ-ինք |
| Ս. | Անձ-ին | Անձ-անց |
| Տ. | Անձ-ին, յանձ-ն | Անձ-անց, յանձ-ինս |
| Հ. | զԱնձ-ն | զԱնձ-ինս |
| Գ. | Անձ-ամբ | Անձ-ամբք |
| Բ. | յԱնձ-նէ | յԱնձ-անց |

Այսպէս հոլովում են

| | | |
|---|---|---|
| Աղն; ին, ինք | Ափն, ին, ինք | Մատն, ին, ունք |
| Դաշն, ին, ինք | Կաթն, ին, ինք | Թոռն, ին, ունք կամ անք |
| Խաշն, ին, ինք | Բեռն, ին, ինք | Լեառն, լերին, ինք |
| Գառն, ին, ինք | Հարսն, ին, ունք | Ձեռն, ձեռին, ձեռք, աց |
| Եզն, ին, ինք | Ծամն, ին, ունք | Ոտն, ոտին, ոտք, ից |

## § 74. Հոլովումն այր և կին անուններին:

| | Եզական | Յոգնական | Եզական | Յոգնական |
|---|---|---|---|---|
| Ո. | Այր (մարդ) | Արք | Կին | Կանայք |
| Ս. | Առն | Արանց | Կնոջ | Կանանց |
| Տ. | Առն, յայր | Արանց, յարս | Կնոջ, ի կին | Կանանց ի կանայս |
| Հ. | զԱյր | զԱրս | զԿին | զԿանայս |
| Գ. | Արամբ | Արամբք | Կնաւ, կանամբ | Կանամբք |
| Բ. | յԱռնէ | յԱրանց | ի կնոջէ | ի կանանց |

Այսպէս հոլովւումեն այր և կին բառերի հետ բարդուած գոյականները:

| | | | |
|---|---|---|---|
| Քեռայր | Տէր | Տանուտէր | Տիկին |
| Սկեսրայր | Պարտատէր | Ոսկեկին | Տանտիկին |

### ԿՐԹՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Լուսինը իր լոյսն առնում է արեգակից: | Լուսին առնու զլոյս իւր յարեգակն: |
| Ծիրանի գօտին ամպի ձևով երևում է երկնքում: | Ծիածանն ի ձև ամպոյ երևի երկնի: |
| Խրճիթները եղէգով (զամիշով) ծածկուած են: | Հիւղք ծածկեալ են եղեգն: |
| Կասկածոտ մարդը եղէգի պէս շարժւում է: | Այր կասկածոտ հանգոյն եղեգան տատանի: |
| Մարդիկ ու կանայք, երեխաներ ու աղջիկներ տան շուրջ բոլորը պատել էին: | Այր և կին, երեխայք և աղջիկք շուրջ տան պատեալ էին: |
| Հայոց երկրի իշխանները Ներսէս Մեծի ժամանակ բոպիկ ոտքով էին գնում աղօթքի տները: | Տէրք Հայոց աշխարհին ի ժամու Ներսէսի Մեծի բոկոտն երթային տուն աղօթից: |
| Վախկոտ զօրքերը փախչելով են ազատում իրանց անձերը պատերազմից: | Արք վատասիրտք փախուստ ազատեն անձն ի պատերազմէ: |
| Արարատը, հայոց լեռներից ամենից բարձրը, ամբողջ տարին ձիւնով պատած է: | Արարատ, բարձրագոյնն լերանց Հայոց, զամն ողջոյն պատեալ է ձեան: |
| Լեռների գագաթները ամպերի մէջ են ծածկվում: | Գագաթն լերանց յամպս ծրարին: |
| Որո՞նք են առական անուանները և որո՞նք իգական անուանները: | Ո՞յք են արականք և ո՞յք իգականք: |

| | |
|---|---|
| Այն պարտատերերին անունով տեղով *եմ ճանաչում*: | Պարտատերք այն անուն (*բաց.*) *ճանաչեմ* : |
| *Այն* երեխայքը, *որ* դռան *մէկ* կողմն *էին կանգնած*, տանտիրոջ *որդիքն են*: | *Մ*անուկք, *որ* անդէն *ուրեք* դուռն *կային*, *որդիք* տանուտեր *են*: |
| *Հովիվները արածեցնում են իրանց* ոչխարների հոտը (*սուրուն*): | *Հովիւք արածեն* խաշն *իւրեանց* : |
| Գ*այլերը յափշտակում են* գառներին : | Գ*այլք յափշտակեն* գառն : |
| *Հեռուից լսվում է* կովերի *ու* եզների *բառաչինը*: | *Լսելի լինի ի հեռաստ բառաչին* կով *և* եզն : |

## § 75. Եօթներորդ հոլովումն

| ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ | | ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ | |
|---|---|---|---|
| եր, երք | | եղ, եղք | |
| **Եզակի** | | | |
| Ո. *կայս-ր* | կայսր | *Աստ-ղ* | աստղ |
| Ս. *կայս-եր* | կայսրի | *Աստ-եղ* | աստղի |
| Տ. *կայս-եր* | կայսրին | *Աստ-եղ* | աստղին |
| *ի կայս-ր* | դէպ ի կայսրը | *յԱստ-ղ* | դէպ ի աստղը |
| Հ. *զկայս-ր* | կայսրը | *զԱստ-ղ* | աստղը |
| Գ. *կայս-երբ* | կայսրով | *Աստ-եղբ* | աստղով |
| Բ. *ի կայս-երէ* | կայսրից | *յԱստ-եղէ* | աստղից |
| **Յոգնակի** | | | |
| Ո. *կայս-երք* | կայսրներ | *Աստ-եղք* | աստղեր |
| Ս. *կայս-երց* | կայսրների | *Աստ-եղց* | աստղերի |
| Տ. *կայս-երց* | կայսրներին | *Աստ-եղց* | աստղերին |
| *ի կայս-երս* | դէպ ի կայսրները | *յԱստ-եղս* | դէպ ի աստղերը |
| Հ. *զկայս-երս* | կայսրները | *զԱստ-եղս* | աստղերը |
| Գ. *կայս-երբք* | կայսրներով | *Աստ-եղբք* | աստղերով |
| Բ. *ի կայս-երց* | կայսրներից | *յԱստ-եղց* | աստղերից |

**Ա***յս հոլովման վրայ հոլովումեն*

1) ըր *և* ըղ *վերջացած բառերը, որոնց յոգնակի ուղղականը և նորանից նախդրիւ հոլովները եզակի սեռականից են կազմվում.* դստեր, դստերք, զդստերս, ի դստերս : *Իսկ վերջահոլով-*

ները երկրորդ հոլովման պէս էլ են լինում. ձայներաց, ձայներօք, տառերաց, տառերօք:

2) Մի քանի էլ վերջացած բառեր:

## Օրինակք

Ազդր, ազդեր, երք
Տագր, եր, երք
Վագր, եր, երք
Տարր, եր, երք
Եզր, եզեր, եզերք
Ոսկր, ոսկեր
Ուստր, ուստեր

Դուստր, դստեր
Սանտր, սանտեր
Ճամր, ճամեր, երք
Լիտր, լտեր, երք
Կուպր, կպեր, երք
Անգղ, անգեղ
Արկղ, արկեղ

Կոթղ, կոթեղ
Կոճղ, կոճեղ
Եւղ, եւեղ
Ալիւր, ալեր
Եղջիւր, եղջեր
Աղբիւր, աղբեր
Տիեզերք, տիեզերաց

## Բացառութիւնք

Մի քանի ու վերջացած բառեր, որոնք ըստ մեծի մասին ածական են, հոլովում են հինգերորդ հոլովման վրայ, վերջահոլովներում ւ բաց թողնելով. ահա նոցա ցուցակը:

Աւր, աւու, յաւուէ
Մեղր, մեղու, մեղու
Ծաղր, ծաղու, ի ծաղուէ

Ծանր, ծանու, ծանունք
Բարձր, բարձու, բարձունք
Թանձր, թանձու, թանձունք

Մանր, մանու, մանունք
Քաղցր, քաղցու, քաղցունք
Անդորր, անդորրու

Այսպէս հոլովում են դարձեալ յոգն, որ միայն յոգնակի է բանում և երէց: Յոգունք, յոգունց, երիցու, երիցամբ, երիցունք, երիցանց:

## § 76. Հոլովումն հայր, քոյր և օր անունների:

### Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Հայր | Քոյր | Օր (աւր) |
| Ս. | Հօր | Քեռ | Աւուր |
| Տ. | Հօր, առ հայր | Քեռ, առ քոյր | Աւուր, յօր |
| Հ. | զՀայր | զՔոյր | զՕր |
| Գ. | Հարբ | Քերբ | Աւուրբ |
| Բ. | ի Հօրէ | ի Քեռէ | յՕրէ |

### Ցուցմունք

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Հարք | Քորք | Աւուրք |
| Ս. | Հարց, հարանց | Քերց | Աւուրց |
| Տ. | Հարց, հարանց, առ հարս | Քերց, առ քորս | Աւուրց, յաւուրս |
| Հ. | զՀարս | զՔորս | զԱւուրս |
| Գ. | Հարբք | Քերբք | Աւուրբք |
| Բ. | ի Հարց, ի հարանց | ի Քերց | յԱւուրց |

Այսպէս հոլովում են մայր, եղբայր և հայր, քոյր, օր բառերի հետ բարդուածները.

| | | |
|---|---|---|
| Մայր, մօր, մարց | Նիքամայր, մօր | Հօրաքոյր, քեռ |
| Եղբայր, եղբօր | ~~Եղբայր, եղբօր~~ | Մօրաքոյր, քեռ |
| Նախահայր, հօր | Հօրեղբայր, եղբօր | Կէսօր, կէսաւուր |
| Նիքահայր, հօր | Մօրեղբայր, եղբօր | Երկայնօր, երկայնաւուր |

### ԿՐԹՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Մեր Հայկ պապի որդիքն ու աղջիկները խիստ շատ էին : | Ուստերք և դստերք Նախահայր մերոյ Հայկայ բազում յոյժ էին : |
| Օգոստոս կայսրի օրերում Աստուծոյ Որդին ծնաւ Բեթղեհէմում : | Օր Օգոստեայ կայսր Որդին Աստուծոյ ծնաւ ի Բեթղեհէմ : |
| Խուլերին լսել է տալիս, մունջերին խօսել: | Խլից լսել տայ, համր խօսել: |
| Պատերազմի մէջ ընկողների ոսկորները անգղներին կերակուր դարձան | Ոսկր անկելոց ի պատերազմի կեր եղեն անգղ: |
| Բնագէտները պատմում են վագրների վրայ թէ շատ անգութ են : | Բնագէտք պատմեն վագր թէ յոյժ անգութք են : |
| Գնաց աղբիւրից ջուր բերելու : | Զոքաւ բերել ջուր աղբիւր : |
| Տեղ տեղ գինին խմում են կենդանիների եղջիւրներով: | Ի տեղիս տեղիս զգինի եղջիւր անասնոց ըմպեն: |
| Բարձր լեռներ. կարծր քարեր. փոքր անդամներ. ծանր ականջներ. մանր հատիկներ. քաղցր պտուղներ : | Լեառն բարձր. քար կարծր. անդամ փոքր. ական ծանր. հատիկն մանր. պտուղ քաղցր (գոյ. և ած. յոգ. ուղ.) |
| Նորա եղբայրները ու քոյրերը լճի շուրջ բոլորը խաղում էին : | Եղբայր և քոյր նորա խաղային եզր լճին: |
| Իմ հօրաքրոջ որդին մօր հետ մեզ մօտ եկաւ : | Որդի հօրաքոյր իմոյ եկն առ մեզ մայր հանդերձ : |
| Իմ ծնուած օրը հօրիցս ընծայ ստացայ: | Օր ծննդեան իմոյ ընկալայ պարգև հայր իմմէ: |
| Երեխայքը իրանց հօրեղբօր շուրջը պատել էին : | Մանկունք շուրջ պատեալ էին հօրեղբայր իւրեանց: |

| | |
|---|---|
| Նորա մօրաքոյրերը եղել են օրով առաջ գիւղ կէս գնացել : | Մօրաքոյր Նորա եղեւ յառաջ չոգան ի գիւղ : |
| Այրիս եղել օրեր : | Կեցցե՛ս եղեւնոր (յոգ. հյց.) |

## § 77. Յատուկ անունների հոլովումն :

| ԱՌԱՋԻՆ ՕՐԻՆԱԿ | | ԵՐԿՐՈՐԴ ՕՐԻՆԱԿ |
|---|---|---|
| այ. աւ | | էայ, էաւ |

Եզակի (անփոփոխական)

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Մեսրոպ | Մեսրոպ | Գայիան-է |
| Ս. | Մեսրոպ-այ | Մեսրոպի | Գայան-եայ |
| Տ, | Մեսրոպ-այ | Մեսրոպին | Գայիան-եայ |
| | ի Մեսրոպ | ներ է Մեսրոպու | ի Գայիան-է |
| Հ. | զՄեսրոպ | Մեսրոպու | զԳայիան-է |
| Գ. | Մեսրոպ-աւ | Մեսրոպով | Գայիան-եաւ |
| Բ. | ի Մեսրոպ-այ | Մեսրոպից | ի Գայիան-եայ |

Եօթը հոլովումների ընթացքում պատահել են շատ յատուկ անուններ, որոնք մէկ կամ միւս հոլովման պէս հոլովեցինք : Բայց յատուկ անունները բստ մեծի մասին վերևը դրած երկու օրինակների պէս են հոլովւում, որ միայն հեշտութեան համար ենք դնում, բայց առանձին հոլովում չեն կազմում :

Առաջին օրինակի վրայ հոլովում են ամէն տեսակ վերջաւորութիւն ունեցող յատուկ անուններ. իսկ երկրորդ օրինակի վրայ սովորաբար է, էա, ոա, է վերջաւորութիւն ունեցողները, որոնք մի և նոյն ժամանակ՝ առաջին հոլովման վերջաւորութիւններ լինելով՝ շատը այնպէս էլ են հոլովւում, զորօրինակ. Աֆրոդիտէ, Աֆրոդիտեայ կամ Աֆրոդիտէի, Եղիշէ, Եղիշեայ կամ Եղիշէի, և այլն :

Օրինակք

| | | |
|---|---|---|
| Հայկ, այ, աւ | Տիգրան, այ, աւ | Սահակ, այ, աւ |
| Արամ, այ, աւ | Տրդատ, այ, աւ | Վարդան, այ, աւ |

Վասակ, այ, աւ
Այրարատ, այ, աւ
Համ, այ, աւ
Մծբին, Մծբնայ
Յուդա, Յուդայ
Եղիա, Եղիայ
—
Հռիփսիմէ, եայ, եաւ

Նունէ, եայ, եաւ
Վաչէ, էի կամ եայ
Պետափիրէս, եայ, եաւ
Տիգրանուհի, եայ, եաւ
Զարուհի, եայ, եաւ
Եփեսոս, սոսի կամ եայ
Օգոստոս, տոսի կամ եայ
Կադմոս, եայ, եաւ

Յուլիոս, եայ, եաւ
Ալանք, աց, օք
Մարք, աց, օք
Գուգարք, աց, օք
Վիրք, Վրաց
Միջագետք, գետաց

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

Աստուածաշունչը հայերէն թարգմանուեցաւ սուրբ Սահակի և Մեսրոպի ձեռքով։

Աստուածաշունչ գիրք թարգմանեցան ի հայ ի ձեռն սրբոյն Սահակայ և Մեսրոպայ։

Ագաթանգեղոսի պատմութիւնը խօսում է Տրդատի և Լուսաւորչի գործերի վրայ։

Պատմութիւն Ագաթանգեղայ խօսի զործ Տրդատայ և Լուսաւորչի։

Վարդանանց պատմութիւնը Եղիշէ վարդապետի գրածն է։

Պատմութիւն Վարդանանց Եղիշէ վարդապետի է գործ։

Սուրբ Յակոբ Մծբինի հայրապետը մեր Լուսաւորչի հօրեղբօր որդին էր։

Սուրբ Յակոբ Մծբին հայրապետ էր որդի հօրաքւոյր մերոյս Լուսաւորչի։

Աւետարանը քարոզուեցաւ Վրաստանում Նունէ կոյսի ձեռքով։

Աւետարանն քարոզեցաւ Վրաց ի ձեռն Նունէ կուսի։

Տրդատ թագաւորը յաղթուեցաւ Հռիփսիմեան կոյսից։

Տրդատ արքայ պարտեցաւ Հռիփսիմեան կուսէ։

Արտաշէս Բ պատերազմեցաւ Ալանների դէմ։

Արտաշէս Բ պատերազմեցաւ ընդդէմ Ալանաց։

Հայկի վրայ շատ առասպելներ են պատմում։

Հայկայ առասպելս բազումս յօդեն։

Արամի անունով օտար ազգերը մեզ Արմէն են անուանում։

Յանուն Արամայ այլազգք Արմէն զմեզ անուանեն։

Տիգրանի ժամանակ Մարաց երկրում թագաւորում էր Աժդահակ։

Առ Տիգրանաւ (գործ.) Մարաց թագաւորէր Աժդահակ։

Աժդահակի թոռը Կիւրոս ծնաւ նորա Մանդանէ աղջկանից։

Թոռն Աժդահակայ Կիւրոս ծնաւ ի դստերէ նորա Մանդանէ (սեռ.)։

Արարատի շուրջ բոլորը պատում են Մասիսի և Արագածի լեռները։

Շուրջ Արարատ պատեն լերինք Մասիս և Արագածն։

## § 78. Գիտելիք հոլովումների վրայ։

1. Ձայնաւորով ն, ր վերջացած բառերի գործիականը երբեմն եօթն. հոլովման պէս Բ-ով է լինում, ն Բ-ի նախադաս ր-ի փոխուելով, ինչպէս.

Բնաւին, բնաւիմբ: Ամենևին, ամենևիմբ: Հուր հուրք: Ջուր, ջուրք: Սուսեր, սուսերք, սուսերքք: Հանուր, հանուրք, հանուրքք:

2. Ձայնաւորով և միևնոյն ն, ջ ու անձայն յ ով վերջացած բառերի յոգնակի սեռական, տրական ու բացառական հոլովները երբեմն միայն ց առնելով են լինում եօթն. հոլովման պէս.

Գրեան, գրեանք, գրեանց, ի գրեանց:
Արքուն, արքունք, արքունց:
Վեցթևեան, վեցթևեանք, վեցթևեանց:
Պատկեր, պատկերք, պատկերց: Ջուր, ջուրք, ջուրց: Հանուր, հանուրք, հանուրց: Պարագայ, պարագայք, պարագայց: Անդեայ, անդեայք, անդեայց: Ապագայ, ապագայք, ապագայց:

3. Երրորդ հոլովման բառերի սեռականը ու նորանից կազմուած հոլովները երբեմն –ամ է լինում երբեմն էլ –ի, մանաւանդ ին վերջացածներինը.

Մարմին, ի մարմնում: Հին, հնում: Վերին վերնում: Առաջին, առաջնում: Սուրբ, սրբում: Գլուխ, ի գլխում, Թուի, ի թիւում: Անցեալ անցելում: Մարդ, մարդում, ի մարդոյ: Տունկ, ի տնկոյ:

4. Այսպէս –ոյ է վերջանում երբեմն չորրորդ հոլ. բառերի եզ. տրականը և նորանից ոմանց բացառականն էլ –ոյէ.

Գինի գինւոյ: Այգի, այգւոյ: Եկեղեցի, յեկեղեցւոյ: Դալարի, դալարւոյ: Տեղի, տեղւոյ, ի տեղւոյէ: Տարի, տարւոյ, ի տարւոյէ:

5. Բացառական հոլովը կազմվում է երբեմն ամենայն հոլովներում –ուստ (ուստի) վերջաւորութիւնով, եզակի և յոգնակի:

Աստուած, յԱստուծոյ կամ յԱստուածուստ: Արքունիք, յարքունեաց կամ յարքունուստ: Վերին, ի վերուստ: Արտաքին, յարտաքուստ:

6. Յոգնակի հայցականը երբեմն ուղղականի ք պահում է, մանաւանդ երբ –յօդով է. զարարածքս (զարարածս), զէքս (զէսս), զբանքս (զբանս):

7. Յոգնակի ուղղականը սովորաբար կազմվում է եզականի վրայ պարզ ք աւելացնելով, բաց ի վեց. և եօթ. հոլովումներից, որոնց յոգնակի ուղղականը ու նորանից նախդրիւ հոլովները ուրիշ յոգնականաձայն վերջերով էլ լինում են ամենայն հոլովումներում.

–այք, Ե–այք. Աղախին, աղախնայք կամ աղախնեայք: Այգեստան, այգեստանեայք:
–նք. Նու, նուանք: Յանց, յանցանք:
–իք, Պարտ, պարտիք, Արմատ, արմատիք, խոպոպ, խոպոպիք:
–ոյք. Գահ, գահոյք: Բոյլք բոլոյք: Հաս, հասոյք:
–ունք. Աղուէս, աղուեսունք: Հողմ, հողմունք: Ճրագ, ճրագունք: Եպիսկոպոս, եպիսկոպոսունք, պատերազմ, պատերազմունք:

8. Երբեմն այլ և այլ եզակի վերջաւորութիւններով գոյականներ յոգնակապէս են վարվում ու հաւաքական բառերի միտք ունին:

–ն. Ձի, ձիան, էշ, իշան: Խուժ, խուժան:
–նի. Աւագ, աւագանի: Նամակ, նամականի: Կին, կանանի:
Ե–ր, Եր. Վանք, վանեար կամ վաներ: Բան, բանեար կամ բաներ: Աչք, աչեր:
–ական. Զօր, զօրական: Բազմական:
–րայ, –երայ. Արտ, արտորայ կամ արտօրեայ: Կալ, կալորայ: Վանք, վանորայ կամ վանորեայ:

ստան. Այգի, այգեստան: Անդ, անդաստան: Ցանկք, տանեստան:

տի. ոտի. Մանուկ, մանկտի: Ոսկր, ոսկրոտի: Փոր, փորոտի:

Այս վերջաւորութիւնով բառերը երբեմն նորից + են առնում և հոլովում են. Արտորայք կամ արտորեայք, արտորայոց կամ արտորէից: Գրեանք, զգրեանս, գրենօք: Անդաստանք, զանդաստանս:

9. Շատ անգամ մի և նոյն անունը կրկնուելով յոգնականի ոյժ է ունենում. Ազգ ազգ (ազգեր): Այր այր (ամէն մէկ մարդ), առն առն (ամէն մէկ մարդու), աւուր աւուր (ամէն օրուայ): Քաղաքի քաղաքի (ամէն քաղաքի):

10. Մարդու յատուկ անունները յոգնակի չունին. բայց երբոր պէտք լինի ասել նոյն անունը ունեցողները կամ նմանները, +-ով և ե-ն+ վերջաւորութիւնով յոգնակի են դառնում և հոլովում են.

Քրիստոսք, Յուդայք, Յուդայից, Տիգրանք, Անտիոքոսք, Անտիոքօք, Անտիոքեանք. Գրիգորեանք, Ներսիսեանք:

11. Մէկ հոլովման գոյականները շատ անգամ ուրիշ հոլովման պէս էլ են հոլովում, մանաւանդ Ա, Բ, Գ և Ե հոլովման բառերը.

Թուղթ, թղթոյ կամ թղթի, ի թղթէ:

Թև, թևոյ կամ թևի, ի թևէ:

Չափ, չափոյ կամ չափու, չափի, չափաւ կամ չափիւ:

Սանձ, սանձի, սանձու կամ սանձաւ և սանձոց:

Զգեստ, զգեստու կամ զգեստով և զգեստիւ:

Զէն, զինու կամ զինով և զինաւ:

Նաւ, նաւի, նաւաւ կամ նաւով և նաւու:

Բլուր, բլրոյ, կամ բլրի և բլեր, բլերք:

Ամիս, ամսոյ կամ ամսեան:

Ծաղիկ, ծաղկան, ծաղկամբ, կամ ծաղկաւ և ծաղկով:

Անկիւն, անկեան կամ անկիւնի:

Ժողովուրդ. ժողովրդեան, կամ ժողովրդոյ և ժողովրդի:

Խորհուրդ, խորհրդոյ կամ խորհրդեան և խորհրդիւ:

12. Կան այնպիսի գոյականներ, որոնց եզակին մէկ տեսակ, յոգնակին ուրիշ տեսակ է վարւում.

Երկին, երկնի, երկնաւ. երկինք, երկնից, երկնիւք:

Քար, քարի, քարիւ. քարինք, քարանց, քարամբք:

Շնորհ, շնորհի, շնորհիւ. շնորհք, շնորհաց, շնորհօք:

Պառաւ, պառաւոյ. պառաւունք, պառաւանց:

Գիշեր, գիշերոյ. գիշերք, գիշերաց:

Զօր, զօրու. զօրք, զօրաց

Աղախին, աղախնոյ. աղախնայք, աղախնայց:

13. Կան այնպիսի գոյականներ էլ, որոնք տարբեր կերպով հոլովելով, ուրիշ նշանակութիւն են ունենում.

Այր, այրի, այրիւ (քարայր):

Մայր, մայրի, մայրիւ (չամ ծառ):

Կոյս, կուսի, կուսիւ (կոյս աղջիկ):

Որթ, որթոյ, որթով (խաղողի տունկ):

Գայլ, գայլի, գայլիւ (գործիք):

Փող, փողի, փողիւ (բօղազ):

Օդ, օդի, օդիւ (ոտքի աման):

Այր, առն, արամբ (մարդ):

Մայր, մօր, մարբ (մայր):

Կոյս, ի կուսէ, կուսաց (կողմ):

Որթ, որթու, որթու (հորթ):

Գայլ, գայլոյ կամ գայլու (գայլ):

Փող, փողոյ, փողով (փող, զուռնա):

Օդ, օդոյ, օդով (եղանակ):

14. Եթէ մի բառ բացասական մասնիկ ընդունած կամ ուրիշ բառի հետ բարդուած լինի, անեզականը եզակի էլ է հոլովում, ու սովորաբար հոլովումը փոխում է.

| | |
|---|---|
| Միտք, մտաց: | Անմիտ, անմտի, անմտից կամ անմտաց: |
| Աստուած, Աստուծոյ: | Անաստուած, անաստուածի: |
| Խրատ, խրատու: | Անխրատ, անխրատի, անխրատից: |
| Փառք, փառաց: | Վեհափառ, վեհափառի, վեհափառից: |
| Յոյս, յուսոյ: | Անյոյս, անյուսի, անյոյսք, անյուսից, անյուսաց: |
| Սէր, սիրոյ: | Բարեսէր, բարեսիրի, բարեսէրք, բարեսիրաց: |
| Գործ, գործոյ: | Այգեգործ, այգեգործի, այգեգործաց: |
| Զէն, զինու: | Սպառազէն, սպառազինի, սպառազինաց: |
| Սիրտ, սրտի, սրտից: | Խստասիրտ, խստասրտի, խստասրտաց: |
| Կիրք, կրից, կրիւք: | Զինակիր, զինակրի, զինակրաց, զինակրօք |

---

# Բ· Ածական անունների կազմութիւնը

## § 73· Ածական անունների արմատները:

Ածականները ընդհանրապէս առնելով՝ երկուսի են բաժանվում. որակական և յարաբերական:

Որակական ածականները կամ պարզ արմատներ են. Օրն. փոքր, կապոյտ, կամ նոյն արմատականներից առաջ եկած. Օրն. [illegible]—ա—գոյն, փոքր—իկ, կապուտ—ակ:

Իսկ յարաբերականները կազմվում են

1. Գոյական անուններից, երբ ածական անունը յարաբերվում է մի որ և իցէ անձի կամ առարկայի. Մարդ—այ—ին, հայր—ենի, եղբայր—ա—կան, երկաթ—ի, փայտ—եայ:

2. Մակբայներից, երբ ածականը յարաբերվում է տեղւոյ և ժամանակի. հեռ—ա—ւոր, Քաղ—ա—կան, երէկ—եան, Մշտ—ա—կան:

## § 80· Որակական ածականների աստիճանները:

Որակական ածականների երեք համեմատութեան աստիճաններն են. դրական, բաղդատական և գերադրական:

Դրականը ածականի սկզբնական ու անփոփոխ ձեւն՝ մեծ, փոքր, բարձր։

Բաղդատական ածականը կազմվում է սովորաբար դրականի վրայ գոյն մասնիկը աւելացնելով, երբեմն էլ առաւել, ևս բառերը դրականից առաջ դնելով. մեծ—ա—գոյն, փոքր—ա—գոյն, առաւել բարձր (բարձրագոյն), ևս հնարաւոր (հնարաւորագոյն)։

Գերադրական ածականը կազմվում է սովորաբար ամէն բառը դնելով դրականից նախադաս. ամէն—ա—մեծ, ամէն—ա—փոքր, երբեմն էլ հետեւեալ բառերով. չափ, յոյժ, առաւել, երիցս, ինչպէս. չափ բարձր (ամենաբարձր), յոյժ բարի (ամենաբարի), առաւել հզօր, երիցս երանեալ։

## § 81. Յարաբերական ածականների ածանցական վերջաւորութիւնները։

1. Այն ածականները՝ որոնք ազգ ու հայրենիք են ցոյց տալի, կազմվում են յատուկ ու հասարակ գոյականներից, հետեւեալ կերպով.

1) Եթէ ազգանուն են, կազմվում են հօր անունից այս մասնիկներով. եայ, եան, եանց. Աղէքսանդր Փիլիպպ—եայ, Արայ—եան Արայ, Հայկ Թորգոմ—եանց։

2) Եթէ ցեղի ու ազգի անուն են, կազմվում են նոյն եայ, եան, եանց և ցի, ունի, ին մասնիկներով. Հայկազն—եայ, Մամիկոն—եան Վահան, Ռուբին—եանց Լեւոն, Բագրատ—ունի Սմբատ, Քաղդէ—ա—ցի*, պարս—իկ, հնդ—իկ։

3) Եթէ հայրենիք կամ բնակութեան տեղ են ցոյց տալի, երկրի ու տեղի անուններից են կազմվում ցի, կան մասնիկներով. Վան—ե—ցի, Գաւառա—ցի, քաղաք—ա—ցի, լեռն—ցի, ձոր—ա—կան, շէն—ա—կան։

---

* ցի ածանց էլ է ցոյց տալի, ինչպէս. [illegible]—ցի, [illegible]—ցի։

2. Այն ածականները՝ որոնք ցոյց են տալիս թէ մէկ բան ումն է պատկանում, կամ ինչ տեղի ու ժամանակի է յարաբերվում, կազմվում են յատուկ ու հասարակ գոյականներից և մակբայներից կան, եան, ին, ւոր մասնիկներով. Հայկ—ա—կան, պարսկ—ա—կան, մշտ—ա—կան, արևմտ—եան, երէկ—եան, դժոխ—ա—յին, [illegible]—ա—յին, երկն—ա—ւոր, մշտնջեն—ա—ւոր:

3. Այն ածականները՝ որոնք ցոյց են տալիս մէկ բանի ինչ նիւթից կազմուած լինելը, հասարակ գոյականներից են կազմվում եայ, ի, եղէն մասնիկներով. երկաթ—եայ և երկաթ—ի, ոսկ—ի և ոսկ—եայ կամ ոսկ—եղէն, հող—եղէն, մարմն—եղէն:

4. Այն ածականները՝ որոնք ունենալ են ցոյց տալիս, ոչ երբէ ստացուածք, այլ երբէ յատկութիւն, զանազան տեսակների են բաժանվում.

1) Եթէ սովորական յատկութիւններ են ցոյց տալիս, թէ բնական և թէ ստացական, հասարակ գոյականներից են կազմվում յետադաս մասնիկներով. կան, ուն, իմ, ած, ցի. [illegible]—ա—կան, իմաստ—ուն, [illegible] իմ, [illegible]—ած, [illegible]—ա—ցի:

2) Եթէ յատկութեան ենթակայ լինել են ցոյց տալիս, կազմվում են այս մասնիկներով. կոտ, ոտ, ոտի. ելի. ալի. ող ու, ինչպէս. մոռ—ա—կոտ, [illegible]—ա—[illegible], [illegible]—ոտի կամ [illegible]—ելի, [illegible]—ալի, [illegible]—ող, [illegible]—ող կամ [illegible]—ու:

3) Եթէ ցոյց են տալիս ձգտում գլխաւորապէս դէպ ի մի մոլի յատկութիւն կամ ցանկութիւն, կազմվում են [illegible], [illegible] [illegible], [illegible]* մասնիկներով. [illegible]—[illegible], [illegible]—ա—[illegible], [illegible]—[illegible], [illegible]—ա—[illegible]:

4) Եթէ ցոյց են տալիս մի որ և իցէ առարկայից կամ յատկութիւնից զուրկ լինելը, կազմվում են [illegible], [illegible], [illegible] մասնիկներով. [illegible]—[illegible] (այսինքն կեանք հատած՝ թող). [illegible]—[illegible], [illegible]—ա—[illegible], [illegible]—ա—[illegible] կամ [illegible]—ա—[illegible]:

* [illegible] կամ [illegible] արմատական բառ է, որ նշանակում է [illegible], [illegible], [illegible]:

5) Եթէ ցոյց են տալիս յատկութեան սաստկութիւնը կամ առատութիւնը, կազմվում են հետևեալ մասնիկներով. գին, եղ, ուտ, ոտ և օտ. ոսկ—ե—գին, ուժ—եղ, պտղ—ա—ւէտ, ծաղկ—ոտ կամ ծաղկ—ուտ:

ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Հետևեալ բառերից կազմել սեպհականութիւն ցոյց տուող ածականներ.

ական մասնիկով.—հայր—որդի—մայր—եղբայր—բարեկամ—հեթանոս—մեհեան—եկեղեցի—աշխարհ—երանի—ուսումն—ձայն—նաւ—օր—յոյն—հնդիկ:— եան մասնիկով.—արևելք—այսօր—վաղը—այժմ—արդ—Թորգոմ—Աբրահամ—Հոմեր:— ին մասնիկով.—ձմեռն—ամառն—աշուն—գարուն—հիւսիս—հարաւ—ծով—ջուր—դաշտ—երկին—երկիր:— աւոր մասնիկով.—տէգ—նիզակ—վահան—պսակ—թագ—երկին—երկիր—հոգի—մարմին:

2. Հետևեալ բառերից կազմել նիւթ ցոյց տուող ածականներ.

եայ և է մասնիկներով.—բուրդ—մազ—բեհեզ—փուշ—կաճ—եղէգն—փայտ—պղինձ—ոսկի:— եղէն մասնիկով.—հոգի—մարմին—լոյս—հուր—ջուր—բոց—Աստուած—մարդիկ—ոսկի—երկաթ—արծաթ—նիւթ—խոտ—կտաւ:

3. Հետևեալ բառերից կազմել յատկութիւն ցոյց տուող ածականներ.

ուն մասնիկով.—ատել—խօսել—գիտել—աճել—գնալ—սահել—իմաստ—սէր:— ացու մասնիկով.—քահանայ—վարդապետ—տէր—պիտանի—մահ:— ոտ և կոտ մասնիկներով.—նենգ—հիւանդ—ժանգ—նախանձ—քոս—բոր—ծակ—խմոր—արիւն—աւազ—տիղմ—քար—թաւ—միս—փուշ—ամաչել—երկնչել—յաչաղել—մոռանալ:— գին մասնիկով.—վիշտ—ահ—թախիծ—ողբ—մեղմ—ցաւ—մոլի—ուժ—գիրին—մութ:— եղ մասնիկով.—ահ—յօնք—մազ—մօրուք—ուժ—անձն—մարմին—գոյն:— էտ կամ աւէտ մասնիկով.—պտուղ—միրգ—խունկ—գինի—այգի—իղձ—ինչք—շահ—թիկն—երջանիկ—խաղաղ—կենցաղ—կանաչ—խոտ—ծաղիկ:

(Ծանօթ.—Հայերէն լեզուն շատ հարուստ է ածանցական մասնիկներով. այստեղ միայն աւելի սովորականները յիշեցինք: Այսպէս, օրինակի համար, կան այնպիսի մասնիկներ, որ բառի վրայ դրուելով, մէկ նոր միտք չեն տալիս նորան. կոյս կուսան—ան, է, ե—ակ, նիշ, ն—ան, գով, գով—եստ, կաթ, կաթ—ին, ողջ, ողջ—ոյն, անուէր, անդէր—ան և այլն, որոնց մեր քերականները նոյնական են անուանում:)

## § 82. Բացասական մասնիկներ:

Բառերի սկզբում դրուող բացասական մասնիկները, որոնք սովորաբար առանց յօդակապի են միանում բառերի հետ, սոքա են. ան, ա, չ, ապ, դժ կամ տժ, որ հակառակ նշանա-

կութիւն են տալի բառերին կամ չունենալ են նշանակում, ու բացասական ածականից շատ անգամ գոյական են կազմում:

1. Ան նշանակում է առանց և դրվում է գոյականների, ածականների ու բայերի արմատների վրայ. ան—մաքուր, ան—միտ, ան—մաքրութիւն, ան—գէտ, ան—գիտութիւն, ան—ուս: — Բ և պ բաղաձայններից առաջ՝ ն երբեմն փոխվում է մ. ան—բիծ կամ ամ—բիծ, ան—պարիշտ կամ ամ—պարիշտ:

2. Տ՝ ան-ի նշանակութիւնով է գործ ածվում, միայն միշտ բաղաձայնով սկսվող բառերի վրայ է դրվում. տ—գէտ, տ—գիտութիւն, տ—հաճութիւն, տ—կար, տ—հաս:

3. Չ բաղաձայնով ու ձայնաւորով սկսվող բառերի վրայ է դրվում, ու բոլորովին հակառակ նշանակութիւն է տալի և նոցա գոյութիւնը հերքում է. գոյականը մնում է գոյական, ածականը՝ ածական. չաստուած, չէական, չիք:

4. Ապ բաղաձայնով սկսվող բառերի վրայ է դրվում ու ան-ի միտք ունի. ապ—երախտ, ապ—օրէն, ապ—ուշ:

5. Դժ կամ տժ բաղաձայնով սկսուող գոյականների ու ածականների վրայ է դրվում. դժ—գոյն, դժ—բաղդ, դժ—գոհ:

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

Հետևեալ բառերից բացասական մասնիկներով ածականներ կազմել.

Ան մասնիկով.—Հոգի—սիրտ—հոգ—փոյթ—անուն—տուն—հայր—մայր—կին—որդի—զաւակ—օրէնք—արժան—ալի—մահ—բան—բարբառ—զօր—կար—գութ—գին—ամօթ—վախ—երկիւղ—դառնալ—թառամել—շարժել—պաճուճել: — Տ մասնիկով.—մարդ—կար—զօր—գեղ—ձև: — Չ մասնիկով.—երէց—եպիսկոպոս—ժողովուրդ—խրատատու—պէտք: — Ապ մասնիկով.—արդիւնք—օրէնք—գովել:

(Ծանօթ.—բայց ի այս բացասական մասնիկներից, որոնց մեր քերականները բաղադրական են անուանում, կան էլի ուրիշ նախադաս մասնիկներ, որոնց յունարէնին հետևելով հնարել են մեր նախնիքը, բայց շատ քիչ են գործ ածուել, մանաւանդ ընտիր գրքերում, այսպէս են համ—ա—կրութիւն, հակ—ա—կրութիւն, տր—ա—սան, ներ—գործել, պար—ունակել և այլն. սոքա աշխարհաբարում գործածութեան մէջ են:)

## § 83. Բարդ ածականներ:

Ածական անունները բարդվում են

1. Երբ երկու ածական անուն միանալով՝ մէկ բառ են կազմում, որ սակաւ է պատահում, ինչպէս **մեծ** և **պայծառ** ածականները բարդուելով կազմում են **մեծապայծառ** ածականը:

2. Երբ ածականը գոյականի հետ կամ երկու գոյական իրարու հետ միանալով՝ մէկ ածական են կազմում, որ նշանակում է **ունեցող**, ինչպէս **բարի** և **սիրտ** բառերը բարդուելով կազմում են **բարեսիրտ** ածականը, որ նշանակում՝ է **բարի սիրտ ունեցող**. **առիւծ** և **սիրտ**՝ **առիւծ—ա—սիրտ**, այսինքն **առիւծի սիրտ ունեցող**:

3. Երբ ածական անունը կամ մակբայը բայի արմատի հետ է միանում, և այն ժամանակ բայի արմատը բայածականի միտք է ունենում, իսկ ածականը կամ մակբայը՝ մակբայի միտք, ինչպէս **դիւր—ա—սահ** (դիւրաւ սահող), **միշտ—ա—դալար** (միշտ դալարող):

4. Երբ բայի արմատը դերանուան հետ միանալով՝ մէկ ածական են կազմում. **ինքն—ա—գոյ**. **ինքն - ա—ստեղծ**:

### ԿՐԹՈՒԹԻՒՆ

1. Հետևեալ ածականներից ու գոյականներից բարդ ածականներ կազմել.

արի, սիրտ—չար, սիրտ—բարձր, աստիճան—բարի, համբաւ— մեծ, փառք—վսեմ, միտք—ճոխ, բան—երկայն, միտք—սպիտակ, գոյն—կարմիր, նիշ — կանաչ, գեղ—քաղցր, բարբառ—դառն, շունչ—բազում, աղէտ—թերի, հաւատ—օձ, լեզու—մուրդ, կերպ, առիւծ, գլուխ—գլուխ, ցաւ:

2. Հետևեալ ածականներից և մակբայներից ու բայի արմատներից բարդ ածականներ կազմել.

դժուար, ընդունել (ընկալ)—դիւրին, ընդունել — դժուար, տեսանել — արագ, սահել—հեզ. սահել—սուր, պահել—յորդ, բխել (բուխ) — միշտ, բխել — առատ, բաշխել—չքնաղ, գտանել—բարի, խորհել (խոհ)—իրաւ, խորհել—բազում, հնարել—քաղցր, յարմարել—յար, փթթել (փթիթ)—միշտ, փթթել—միշտ, ծփալ (ծուփ)—յար, ծփալ - լայն, նստել (նիստ)—երկայն, նստել—հանդարտ, քայլել—շուտ, քայլել

շուտ — փութալ — երկայն, ձգել (ձիգ) — ուղիղ, ձգել—կարմիր, փայլել—թանձր, հասել—պինդ, կազմել:

## § 84. Ածական անունների հոլովումը:

Ածական անունները, եթէ մենակ լինին, հոլովում են գոյական անունների պէս՝ նայելով իրանց վերջաւորութեան:

Իսկ եթէ գոյականների հետ լինին, որ և ելի յաճախ է պատահում, հետևեալ կանոնները պէտք է իմանալ:

1) Եթէ ածականը գոյականից նախադաս է, սովորաբար նախդիրն է հոլովում միայն, ինչպէս.

| | Եզակի | | Յոգնակի |
|---|---|---|---|
| Ո. | իմաստուն այր, | իմաստուն մարդ. | իմաստուն արք. |
| Ս. | իմաստուն առն, | իմաստուն մարդու. | իմաստուն արանց. |
| Տ. | իմաստուն առն, | իմաստուն մարդուն. | իմաստուն արանց, |
| | առ իմաստուն այր. | դէպի իմաստուն մարդը. | առ իմաստուն արս. |
| Հ. | զիմաստուն այր, | իմաստուն մարդը. | զիմաստուն արս. |
| Գ. | իմաստուն արամբ, | իմաստուն մարդով. | իմաստուն արամբք. |
| Բ. | յիմաստուն առնէ, | իմաստուն մարդից. | յիմաստուն արանց. |

2) Իսկ եթէ ածականը գոյականից յետադաս լինի, երկուսն էլ հոլովուեն, այսպէս.

| | Եզակի | Յոգնակի | |
|---|---|---|---|
| Ո. | Այր իմաստուն. | Արք իմաստունք, | իմաստուն մարդիկ. |
| Ս. | Առն իմաստնոյ. | Արանց իմաստնոց, | իմաստուն մարդոց. |
| Տ. | Առն իմաստնոյ. | Արանց իմաստնոց, | իմաստուն մարդոց, |
| | առ այր իմաստուն. | առ արս իմաստունս. | դէպի իմաստուն մարդիկը. |
| Հ. | զԱյր իմաստուն. | զԱրս իմաստունս, | իմաստուն մարդիկը. |
| Գ. | Արամբ իմաստնով. | Արամբք իմաստնովք. | իմաստուն մարդոցով. |
| Բ. | յԱռնէ իմաստնոյ | յԱրանց իմաստնոց, | իմաստուն մարդկանցից: |

Ինչպէս վերևի օրինակներից երևում է, աշխարհաբար լեզ-

վում ածականը միշտ գոյականից նախադաս է դրվում ու երբեք չէ փոխվում:

Կան մի քանի գոյական և ածական անուններ, որոնք չեն հոլովվում ու բայերի հետ են գործ ածվում. այսպէս են հետևեալները.

Գոհ լինել, բաւական լինել:

Այց առնել, այցելութեան գնալ:

Ի զինս կալ, զինուել:

Ի կիր արկանել, գործ դնել:

Լուռ լինել, լռել, հանդարտել:

Ի դերև ելանել, դատարկ դուրս գալ:

Անփոյթ լինել, հոգս չանել:

Քաման լինել, համել:

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

Առաքինի մարդիկը իրանց վարձը կը ստանան արքայութեան Աստուծոյ:

Արք առաքինիք ընկալցին զվարձս իւրեանց արքայութեան Աստուծոյ:

Բարի մարդիկը իրանց բարի գործերից են ճանաչվում:

Արք բարի բարի գործս իւրեանց ճանաչին:

Շատ մեծ մարդիկ պարապեցան տեսակ տեսակ գիտութիւններով:

Բազում այր մեծք դեգերեցան ազգի ազգի ուսմամբ (Նախագր. տր.):

Հեռու կացիր անզգամ մարդից, և ականջ մի դնիր նորա յիմարական խօսքերին:

Ի բաց կաց յայր անզգամէ, և մի անսար յիմարութեան բանի նորա:

Իմաստութիւնը աւելի պատուական է քան ի է պատուական ակները:

Իմաստութիւն պատուական է քան զակն պատուական (Առակ.):

Դու աւելի իմաստուն ես, քան թէ ես:

Դու իմաստուն ես քան զիս:

Մանանեխի սերմը ամէն սերմերից (աւելի) փոքր է:

Հատն մանանխոյ փոքր է քան զամենայն սերմանիս:

Մեղրից աւելի քաղցր ի՞նչ կայ:

Զի՞նչ քաղցր քան զմեղր:

Առիւծից աւելի ուժեղ ի՞նչ կայ:

Զի՞նչ հզօր քան զառիւծ:

Ասիան աւելի ընդարձակ է, քան թէ Եւրոպան:

Ասիա ընդարձակ է քան զԵւրոպա:

Մի նմանիք անմիտ մարդկանց:

Մի լինիք նմանող մարդոյ անմտի:

Վատ խօսքերը ապականում են քաղցր բարքը:

Բանք չար ապականեն բարս քաղցրս:

# Գ. Թուական անուանների կազմութիւնը

## § 85. Բացարձակ և դասական թուականներ։

| | 1) Բացարձակ | 2) Դասական | |
|---|---|---|---|
| 1. | Մի. միոյ կամ (միոջ), միում, միով, ի միոյ կամ ի միոջէ, զմի. | Առաջին, ջնոյ, ջնում, ջնով, յառաջնոյ կամ յառաջնմէ, կամ Առաջներորդ | |
| 2. | Երկու, երկուց, երկուք, զերկուս. | Երկրորդ | |
| 3. | Երեք, երից, երիւք, զերիս. | Երրորդ | |
| 4. | Չորք (չորեք), չորից, չորիւք, զչորս. | Չորրորդ | |
| 5. | Հինգ, հնգի, գիւ, ից, իւք կամ գաց, օք. | Հինգերորդ | |
| 6. | Վեց, վեցի, վեցիւ, վեցք, վեցից, իւք. | Վեցերորդ | |
| 7. | Եօթն, եօթան կամ եօթին եօթամբ. եօթանք կամ եօթունք և եօթնի, եօթնիւ. | Եօթներորդ | |
| 8 | Ութ, ութի, ութիւ, ութք, ութից, ութիւք | Ութերորդ | գի, գաւ. |
| 9. | Ինն, ըննի, ըննիւ, ինունք, ինունց կամ ինանց, ինամբք, կամ ըննից ըննիւք. | Իններորդ | գաց, գօք. |
| 10. | Տասն, տասին, ամբ, ունք, անց կամ նից. | Տասներորդ | |
| 11. | Մետասան (ի, իւ. ից, իւք.) | Մետասաներորդ | |
| 12. | Երկոտասան (ի, իւ. ից, իւք.) | Երկոտասաներորդ | |
| 13. | Երեքտասան (ի, իւ. ից, իւք.) | Երեքտասաներորդ | |
| 14. | Չորեքտասան (ի, իւ. ից, իւք.) | Չորեքտասաներորդ | |
| 15. | Հնգետասան (ի, իւ. ից, իւք.) | Հնգետասաներորդ | |
| 16. | Վեշտասան (ի, իւ. ից, իւք.) | Վեշտասաներորդ | |
| 17. | Եօթն և տասն (տասին, տասամբ, անց կամ տասնից, տասնիւք) | Եօթն և տասներորդ | |
| 18. | Ութ և տասն (տասին, տասամբ, անց կամ տասնից, տասնիւք) | Ութ և տասներորդ | |
| 19. | Ինն և տասն (տասին, տասամբ, անց կամ տասնից, տասնիւք) | Ինն և տասներորդ | |
| 20. | Քսան, քսանի, քսանիւ, քսանից, իւք. | Քսաներորդ | |
| 21. | Քսան և մի և այլն, քսան և միոյ, քսան և միով. | Քսաներորդ առաջներորդ կամ քսան և առաջներորդ և այլն | |
| 30. | Երեսուն (երեսնի, երեսնիւ և այլ.) | Երեսներորդ | ի, աւ. աց, օք. |
| 40. | Քառասուն | Քառասներորդ | ի, աւ. աց, օք. |
| 50. | Յիսուն | Յիսներորդ | ի, աւ. աց, օք. |
| 60. | Վաթսուն | Վաթսներորդ | ի, աւ. աց, օք. |
| 70. | Եօթանասուն | Եօթանասներորդ | ի, աւ. աց, օք. |
| 80. | Ութսուն | Ութսներորդ | ի, աւ. աց, օք. |
| 90. | Իննսուն | Իննսներորդ | ի, աւ. աց, օք. |
| 100. | Հարիւր, ոյ, ով կամ ի, իւ. | Հարիւրերորդ | |
| 101. | Հարիւր և մի և այլն | Հարիւրերորդ առաջներորդ կամ հարիւր և առաջներորդ. | |
| 200. | Երկերիւր կամ երկու հարիւր | Երկու հարիւրերորդ | ի, աւ. աց, օք. |
| 300. | Երեքարիւր կամ երեք հարիւր | Երեք հարիւրերորդ | ի, աւ. աց, օք. |
| 400. | Չորեք հարիւր և այլն | Չորեք հարիւրերորդ և այլն | ի, աւ. աց, օք. |
| 1000. | Հազար ի, աւ, կամ ի, իւ. | Հազարերորդ | ի, աւ. աց, օք. |
| 1001. | Հազար և մի և այլն. | Հազարերորդ առաջներորդ կամ հազար առաջներորդ և այլն | |
| 2000. | Երկու հազար. | Երկու հազարերորդ | |
| 10000. | Բիւր, բիւրու, բիւրուց, բիւրուք կամ բիւրոյ, բիւրով, կամ բիւրի, ու և իւ։ | Տասն հազարերորդ | |

Ըստ կազմութեան թուական անունները լինում են պարզ և բարդ:

Պարզ են բացարձակ թուականները **մի**, **երկու**, **երեք**, **չորս**, **հինգ**, **վեց**, **եօթն**, **ութ**, **ինն**, **տասն**, **քսան**, **հարիւր**, **հազար**, **բիւր**. մնացածները բարդ են, որովհետև **մետասան** նշանակում է մի և տասն, **երկոտասան**՝ երկու և տասն և այլն: Իսկ **երեսուն**, **քառասուն** և այլն թէպէտ բարդ բառեր են, այսինքն **երեք տասն**, **քառ** կամ **չորս տասն**, բայց որովհետև երկու բառը որոշ չեն երևում, կարող են ածանցեալ համարուիլ:

Դասական թուականները **առաջներորդ**-ից մինչև **իններորդ**՝ կրկնածանց են:

## § 86. Թուական անունների հոլովումը իրանց մէջ և գոյականների հետ:

### Ա. Թուականները մենակ:

Պարզ կամ ածանցեալ բացարձակ ու դասական թուականները, ինչպէս վերևը տեսանք, հոլովում են գոյականների հոլովմանց մէկի կամ միւսի վրայ, ոմանք երկու և երեք հոլովման վրայ էլ միանգամայն: Իսկ **և** յօդակապով կամ առանց յօդակապի բարդուածները, ինչպէս. **քսան և երեք**, **քառասներորդ վեցերորդ** հոլովելու ժամանակ՝ կարելի է միայն վերջին թուականը հոլովել, կամ երկուսն էլ միանգամայն: Երկուսից էլ մէկ մէկ օրինակ.

| | | |
|---|---|---|
| Ո. | քսան և երեք | քառասներորդ և վեցերորդ |
| Ս. | քսան և երից | քառասներորդ և վեցերորդի |
| Տ. | քսան և երից | քառասներորդ և վեցերորդի |
| | ի քսան և երիս | ի քառասներորդ և վեցերորդ |
| Հ. | զքսան և երիս | զքառասներորդ և վեցերորդ |
| Գ. | քսան և երիւք | քառասներորդ և վեցերորդաւ |
| Բ. | ի քսան և երից | ի քառասներորդ և վեցերորդէ. |

Կամ

| | | |
|---|---|---|
| Ո. | Քսան և երեք | Քառասներորդ և վեցերորդ |
| Ս. | Քսանից և երից | Քառասներորդի և վեցերորդի |
| Տ. | Քսանից և երից | Քառասներորդի և վեցերորդի |
| | ի Քսան և յերիս | ի Քառասներորդ և վեցերորդ |
| Հ. | զՔսան և զերիս | զՔառասներորդ և զվեցերորդ |
| Գ. | Քսանիւք և երիւք | Քառասներորդաւ և վեցերորդաւ |
| Բ. | ի Քսանից և յերից | ի Քառասներորդէ և ի վեցերորդէ։ |

Այսպէս պէտք է հասկանալ միւս բոլոր բարդ թուականների համար։

## Բ. Թուական անունները գոյականների հետ։

Բացարձակ թուական անունները ածական են, ուստի և գոյականների հետ հոլովելիս՝ հասարակ ածականների կանոնով են վարվում, բաց ի մի քանի խոտորմունքներից։

Այսպէս, Մի թուականը եզակի նշանակութիւն ունենալուն համար՝ եզակի գոյականի մօտ դրվում ու նորա հետ միասին հոլովվում են, այսպէս.

| | | |
|---|---|---|
| Ո. | Այր մի, | Մի մարդ. |
| Ս. | Առն միոյ կամ միոջ, | Մի մարդու. |
| Տ. | Առն միում, առ այր մի, | Մի մարդուն, դէպ ի մի մարդը. |
| Հ. | զԱյր մի, | Մի մարդը. |
| Գ. | Արամբ միով, | Մի մարդով. |
| Բ. | յԱռնէ միոջէ, | Մի մարդից. |

Մի անորոշ յօդ է, ինչպէս և աշխարհաբարում. Այր մի նշանակում է Մի մարդ կամ Մի որևիցէ մարդ։

Երկու, երեք, չորս անեզական են. այս պատճառով յոգնակի գոյականի մօտ դրվում ու նորա հետ միասին հոլովվում են, այսպէս.

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Երկու տեարք. | Երեք վկայք. | Չորք մասունք. |
| Ս. | Երկուց տերանց. | Երից վկայից. | Չորից մասանց. |

| | | |
|---|---|---|
| Տ. Երկուց տերանց, | Երից վկայից, | Չորից մասանց, |
| առ երկուս տեարս. | առ երիս վկայս. | ի չորս մասունս. |
| Հ. զԵրկուս տեարս. | զԵրիս վկայս. | զՉորս մասունս. |
| Գ. Երկուք տերամբք. | Երիւք վկայիւք. | Չորիւք մասամբք. |
| Բ. յԵրկուց տերանց. | յԵրից վկայից. | ի Չորից մասանց։ |

Իսկ հնգից մինչև հազար հասարակ ածականների պէս են վարվում, եթէ գոյականից նախադաս են, սովորաբար նախդրիւ են հոլովում, եզակի և յոգնակի, իսկ եթէ յետադաս, յոգնակի գոյական են պահանջում ու նորա հետ միասին հոլովում, բաց ի ուղղականից ու նախդրիւ հոլովներից։

| Եզակի | Յոգնակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. Եօթն ամ, | Եօթն ամք. | Աւուրք տասն (և ոչ տասունք). |
| Ս. Եօթն ամի, | Եօթն ամաց. | Աւուրց տասանց. |
| Տ. Եօթն ամի, | Եօթն ամաց, | Աւուրց տասանց, |
| յեօթն ամ. | յեօթն ամս. | յաւուրս տասն. |
| Հ. զԵօթն ամ, | զԵօթն ամս. | զԱւուրս տասն. |
| Գ. Եօթն ամաւ, | Եօթն ամօք. | Աւուրբք տասամբք. |
| Բ. յԵօթն ամէ, | յԵօթն ամաց. | յԱւուրց տասանց։ |

Այսպէս և դասական թուականները գոյականից նախադաս միայն նախդրիւ են հոլովում, իսկ յետադաս՝ թէ նախդրիւ և թէ վերջահոլով, հասարակ ածականների պէս, ինչպէս.

| | |
|---|---|
| Ո. Չորրորդ ժամ. | Ժամ չորրորդ. |
| Ս. Չորրորդ ժամու. | Ժամու չորրորդի. |
| Տ. Չորրորդ կամ չորրորդում ժամու, | Ժամու չորրորդի, |
| ի չորրորդ ժամ. | ի ժամ չորրորդ. |
| Հ. զՉորրորդ ժամ. | զԺամ չորրորդ. |
| Բ. ի Չորրորդ ժամէ. | ի Ժամէ չորրորդէ։ |

Աշխարհաբարում թուական անունները, եթէ գոյականի հետ են, նախադաս են դրվում ու երբէք չեն հոլովում։

Բաշխական թուականները երկու, երեք, չորք և այլն այս ձևովն էլ գործ են ածվում. երկոքեան, երեքեան, չորեքեան, կամ

*երկուքին, երեքին չորեքին, որ նշանակումեն երկուսը միասին, երեքը միասին և այլն:*

*Սոքա անեզական են և եթէ գոյականաբար են վարվում, մենակ են հոլովում, իսկ եթէ ածականի մտքով են բանում, յոգնակի գոյական են առնում ու միասին հոլովումեն:*

| | |
|---|---|
| Ո. *Երկոքեան, երկոքին* | *Չորեքեան կամ չորեքին որդիք.* |
| Ս. *Երկոցունց, երկոցուն* | *Չորեցունց որդւոց.* |
| Տ. *Երկոցունց, երկոցուն* | *Չորեցունց որդւոց,* |
| *յերկոսեան, յերկոսին* | *առ չորեսին որդիս.* |
| Հ. *զԵրկոսեան, զերկոսին* | *զՉորեսեան կամ զչորեսին որդիս.* |
| Գ. *Երկոքումբք* | *Չորեքումբք որդովք.* |
| Բ. *յԵրկոցունց* | *ի Չորեցունց որդւոց:* |

*Այսպէս հոլովումեն*

| | |
|---|---|
| *Երեքեան, երեքին.* | երեքն էլ: |
| *Հնգեքեան, հնգեքին.* | հինգն էլ: |
| *Վեցեքեան, վեցեքին.* | վեցն էլ: |
| *Եօթանեքեան, եօթանեքին.* | եօթն էլ: |
| *Երկոտասանեքեան, երկոտասանեքին և այլն:* | տասներկուսն էլ: |

## Կ Ր Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

### Ա.

*Հետևեալ խօսքերում թուանշանով գրուած թուերը տառերով գրել, նայելով թէ ինչ հոլով ու թիւ է հարկաւոր:*

| | |
|---|---|
| *Վարդանանց պատերազմում* երկու կողմից *ընկան* չորս հազար հինգ հարիւր ութսուն *մարդ:* | *Ի պատերազմին Վարդանանց անկան* երկոցուն կողմն 4580 *այր:* |
| *Պարսից կողմից ընկան մէկ օրում* երեք հազար հինգ հարիւր քառասունըչորս *հոգի, իսկ Հայոց կողմից* հազար երեսունըվեց *հոգի:* | *Ի կողմանէ Պարսից անկան ի միում աւուր* 3544 *այր, իսկ ի Հայոց կողմանէ* 1036 *այր:* |
| *Մամիկոնեանների ցեղից ընկաւ քաջ Վարդանը* հարիւր երեսուն երեք մարդով: | *Ցեղէն Մամիկոնէից անկաւ քաջն Վարդան* 136 այր: |
| Խորխոռունիներէ ցեղէն Խորէն տասնը ինը մարդով: | Ազգ Խորխոռունի Խորէն 19 այր: |
| Պալունիներէ ցեղէն Արտակ յիսունը եօթը մարդով: | Ազգ Պալունի Արտակ 57 այր:

| | |
|---|---|
| գնթ––նէներէ ցէղէց Տաճառ տ––նը էննը մ–րտ–վ։ | Ակէ գնթ––նէ Տաճառ 19 օր։ |
| գէմ–ա–ե–նններէ ցէղէց Հռմայեցւոց ա––ն երկ–– մ–րտ–վ։ | Ակէ գէմ–ա–ե–ն Հռմայեցւոց 22 օր։ |
| Բ–ջբեր––նէներէ ցէղէց Ներսեհ եօթը մ–րտ–վ։ | Ակէ Բ–ջբեր––նէ Ներսեհ 7 օր։ |
| գն––նէներէ ցէղէց Պաւհան երէ+ մ–րտ–վ։ | Ակէ գն––նէ Պաւհան 3 օր։ |
| Ըն–յէններէ ցէղէց Արմէն եօթը մ–րտ–վ։ | Ակէ Ըն–յէն Արմէն 7 օր։ |
| Արտաւազդի ցէղէց Գալեղին երկ–– եղ–բ–յրներ–վ և տ––նը ––թը մ–րտ–վ։ | Ակէ Արտաւազդայ Գալեղին 2 հ–ր–ւ–տ և 18 օր։ |
| Երկ–– ու երէ+ վկ–ներ–վ հաստատվում է ամէն խօսք։ | 2 և վկ–յ հաստատեսցի ամենայն բան։ |
| Շաբաթուան մէջ եօթը օր կայ։ | Յեօթնեկի են օր 7։ |
| Զ–ր– ւ–բ–թէց կազմվում է ամիսը։ | 4 եօթն–կ բաղկանայ ամիսն։ |

## Բ

| | |
|---|---|
| Իմ մեծ եղբայրը երե––ն տարեկան է։ | Անդրանիկ եղբայր իմ է ա՛ւուր 30։ |
| Նորա փոքր քոյրը տ––նը վէց տ–րէկ–ն էր։ | Կրտսեր քոյր նորա էր ամ 16։ |
| Իմ հայրը ––թ––ն տ–րէկ–նէ մօտ է։ | Ո–թ––ն–մ–ն (յգ. վճռական. գործ.) ութեւմն է հայր իմ։ |
| Մովսէս մեռնելու ժամանակ [illegible]–ր ա––ն տ–րէկ–ն էր։ | Մովսէս էր ամ 120 ի վախճանել խորում։ |
| Երէ+ օր երէ+ գիշեր ոչ հաց էր կերել, և ոչ ջուր խմել։ | Զէր նորա կերեալ հաց և ոչ արբեալ ջուր 3 տէ– և 3 գէշեր։ |
| Եօթը օր եօթը գէշէր հարսանիք արին։ | Արար հարսանիս 7 օր և 7 գէշեր (եղ.հյց.)։ |
| Մեր գրերը կազմուեցան փրկ[illegible] ւ–ր– հ–րէ–ր վէց թուականին, սուրբ Սահակի կաթողիկոսութեան տ––նըեօթներ–րդ տարին։ | Նշանագիրք մեր յօրինեցան յամի Տեառն 406, ի 17 ամի կաթողիկոսութեան սրբոյն Սահակայ։ |
| Սահակ Մեծը մեռաւ, ւ–ր– հ–րէ–ր ա–ր–– ––նէ–րր–րդ թուին, Նաւասարդի երե––ն– երր–րդ օրը։ | Մեծն Սահակ վախճանեցաւ յամի 440, 30 օր Նաւասարդի։ |
| Հայոց տոմարը նորոգուեցաւ փրկչի հինգ հ–րէ–ր յէ––ներէ+եր–րդ թուին, Մովսէս կաթողիկոսի ձեռքով։ | Տոմարն Հայոց նորոգեցաւ յամի Տեառն 553 ի ձեռն Մովսէսի կաթողիկոսի։ |
| Կար ժամանակ որ Հայաստանը ւ–ր– կ–ղ–մից թշնամիներով պատած էր։ | Էր երբեմն զի Հայաստան աշխարհ ւ–րե+էն կողմն պաշարեալ էր ի թշնամեաց։ |
| Արտ–ւէ– ––ջէնէ գործքերը խիստ շատ են։ | Արտ–ւէ– ––ջէն գործք բազում յոյժ են։ |
| Ի՞նչ անցք պատահեցաւ Հայաստանում հ–ւ–ր ––թ––ներ–րդ թուին։ | Զի՞նչ անցք անցին ի Հայս յամի 1080։ |
| Լևոն Զ Հայոց վերջին թագաւորը մեռաւ փարիզում հ–ւ–ր երէ+ հ–րէ–ր էնն––ն ե–րե+եր–րդ թուին, նոյեմբեր ամսի տ––նը էններ–րդ օրը։ | Լևոն Զ վերջին թագաւոր Հայոց վախճանեցաւ ի Փարիզ յամի Տեառն 1393, 19 աւուր ամսեանն նոյեմբերի։ |

# Դ. Դերանունների կազմութիւնը

## § 87. Գոյական դերանուններ։

Գոյական դերանունները գործ են դրւում հարցական, պատմական և պատասխանական խօսքերի մէջ, և այս պատճառով լինում են.

1. Հարցական. ո՞վ ի՞նչ ։

2. Պատասխանական.

1) Էական. ես, մեք առաջին դէմքի — դու, դուք երկրորդ դէմքի — ինքն, իւր, ինքեանք, իւրեանք երրորդ դէմքի. իսկ միմեանց, իրերաց փոխադարձական՝ ամենայն դէմքի ։

2) Ցուցական. սա, սոքա, դա, դոքա, նա, նոքա. բոլորն էլ երրորդ դէմքի են և ցոյց են տալի թէ ի՞նչ կարգով մէկ անձ միւսին է հետևում, ուստի և կոչւում են դասական ցուցականներ ։

## § 88. Գոյական դերանունների հոլովումը ։

### 1. Հարցական.

| | Եզակի | | Յոգնակի. | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ո՞վ, ո՞ | ո՞վ | Ո՞յք | որո՞նք |
| Ս. | Ո՞յր | ո՞յր | Ո՞յց | որո՞նց |
| Տ. | Ո՞ւմ, յո՞վ, յո՞ | ո՞ւմ | Ո՞յց, առ ո՞ս | որո՞նց |
| Հ. | զՈ՞վ, զո՞ | զո՞վ | զՈ՞ս | որո՞նք |
| Գ. | — | — | — | — |
| Բ. | յՈւմմէ՞ | ումի՞ց | յՈ՞յց | որո՞նցից |

Եզակի (անորոշական)

| | | |
|---|---|---|
| Ո. | Զի՞, զի՞նչ, ի՞նչ | ի՞նչ |
| Ս. | Ի՞ր, ե՞ր | ինչի՞ |
| Տ. | Ի՞մ, հի՞մ, էրո՞ւմ, իրո՞ւմ, յի՞նչ | ինչի՞ն |
| Հ. | Զի՞, զի՞նչ, ի՞նչ | ի՞նչ |
| Գ. | Ի՞ւ | ինչո՞վ |
| Բ. | առ իմէ՞ | ինչի՞ց : |

## Ձ. Լական.

### Առաջին դէմք.

Եզակի — Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ես | ես | Մեք | մենք |
| Ս. | Իմ | իմ | Մեր | մեր |
| Տ. | Ինձ, առ իս | ինձ, դէպ ի ինձ | Մեզ, առ մեզ | մեզ, դէպ ի մեզ |
| Հ. | զԻս | ինձ | զՄեզ | մեզ |
| Գ. | Ինեւ | ինձմով, ինձանով | Մեօք | մեզմով, մեզանով |
| Բ. | յԻնէն | ինձնից, ինձանից | ի Մէնջ | մեզնից, մեզանից։ |

### Երկրորդ դէմք.

Եզակի — Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Դու | դու | Դուք | դուք |
| Ս. | Քո | քո | Ձեր | ձեր |
| Տ. | Քեզ, առ քեզ | քեզ, դէպ ի քեզ | Ձեզ, առ ձեզ | ձեզ, դէպ ի ձեզ |
| Հ. | զՔեզ | քեզ | զՁեզ | ձեզ |
| Գ. | Քեւ | քեզմով, քեզանով | Ձեօք | ձեզմով, ձեզանով |
| Բ. | ի Քէն | քեզնից, քեզանից | ի Ձէնջ | ձեզնից, ձեզանից։ |

### Երրորդ դէմք.

Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ինքն | ինքը | — | |
| Ս. | Ինքեան | իրան | Իւր, իւրեան | իր, իրան։ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տ. | ինքեան, առ ինքն | [illegible] | իւր, իւրեան, առ իւր | [illegible] |
| Հ. | զինքն | [illegible] | — | — |
| Գ. | ինքեամբ | [illegible] | իւրև, իւրեաւ, իւրեամբ | [illegible] |
| Բ. | յինքենէ | [illegible] | յիւրմէ | [illegible] |

[illegible]

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | ինքեանք | [illegible] | իւրեանք | [illegible] |
| Ս. | ինքեանց | [illegible] | իւրեանց | [illegible] |
| Տ. | ինքեանց, առ ինքեանս | [illegible] | իւրեանց, առ իւրեանս | [illegible] |
| Հ. | զինքեանս | [illegible] | զիւրեանս | [illegible] |
| Գ. | ինքեամբք | [illegible] | իւրեամբք | [illegible] |
| Բ. | յինքեանց | [illegible] | յիւրեանց | [illegible] |

*ամէն դէմքի փոխադարձական.*

[illegible] ([illegible])

| | | |
|---|---|---|
| Ս. | Միմեանց, իրերաց | [illegible] |
| Տ. | Միմեանց, իրերաց, առ միմեանս, առ իրեարս | [illegible] |
| Հ. | զՄիմեանս, զիրեարս | [illegible] |
| Գ. | Միմեամբք, իրերօք | [illegible] |
| Բ. | ի Միմեանց, յիրերաց | [illegible] |

## 3. Ցուցական.

| | [illegible] | | [illegible] | |
|---|---|---|---|---|
| Ո. | Նա | [illegible] | Նոքա | [illegible] |
| Ս. | Նորա | [illegible] | Նոցա | [illegible] |
| Տ. | Նմա, առ Նա | [illegible] | Նոցա, առ Նոսա | [illegible] |
| Հ. | զՆա | [illegible] | զՆոսա | [illegible] |
| Գ. | Նովաւ | [illegible] | Նոքօք | [illegible] |
| Բ. | ի Նմանէ | [illegible] | ի Նոցանէ | [illegible] |

*Այսպէս հոլովում են*

*Սա, սորա, սմա, սովաւ, ի սմանէ. սոքա, սոցա, սոքօք, ի սոցանէ։*
*Դա, դորա, դմա, դովաւ, ի դմանէ, դոքա, դոցա, դոքօք, ի դոցանէ։*

## § 89. Ածական դերանուններ:

Ածական դերանունները գործ են ածվում հարցական պատմական ու պատասխանական խօսքերի մէջ: Հարցական խօսքերի մէջ գործ են դրվում հարցականները, պատասխանականների մէջ նրանց համապատասխանող ցուցական և ստացական դերանունները, այսպէս

1. Հարցական. ո՞ր, ո՞րպէս, ո՞րքան.

2. Պատասխանական.

1) Ցուցական, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն (դասականք): Այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի (որակականք): Այսքան, այսքանի, այդքան, այդքանի, այնքան, այնքանի (քանակականք):

2) Ստացական. իմ, քո, մեր, ձեր, իւր, սորա, սոցա, դորա, դոցա:

## § 90. Ածական դերանունների հոլովումը մենակ և գոյականների հետ:

### Ա. Դերանունները մենակ.

### 1. Հարցական. 2. Ցուցական (դասական)

Եզակի

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Ո՞ր | Այն | Նոյն |
| Ս. | Որո՞յ | Այնր, այնորիկ | Նորին, նորուն |
| Տ. | Որո՞ւմ | Այնմ, այնմիկ | Նմին |
| | առ ո՞ր | առ այն | ի նոյն |
| Հ. | զՈ՞ր | զԱյն | զՆոյն |
| Գ. | Որո՞վ | Այնու, այնուիկ | Նովին, նովիմբ |
| Բ. | յՈրո՞յ, յորմէ | յԱյնմանէ | — |

### Յոգնակի

| | | | |
|---|---|---|---|
| Ու. | Ո՞րք | Ա՛յնք, այնոքիկ | Նոյնք, նոքին |
| Ս. | Որո՞ց | Ա՛յնց, այնոցիկ | Նոցին, նոցուն, նոցունց |
| Տ. | Որո՞ց, | Ա՛յնց, այնոցիկ, | Նոցին, նոցուն, նոցունց, |
| | առ ո՞րս | առ այնս, առ այնոսիկ | ի նոյնս, ի նոսին |
| Հ. | զՈ՞րս | զԱ՛յնս, զայնոսիկ | զՆոյնս, զնոսին |
| Գ. | Որո՞վք | Ա՛յնոքիւք, այնոքիմբք | Նովիմբք, նոքիմբք, նոքումբք |
| Բ. | յՈրո՞ց | յԱ՛յնց, յայնցանէ, յայնոցիկ ի Նոցունց։ | |

Այս դասական ցուցականի պէս հոլովում են

Այս, այսր կամ այսորիկ, այսմ կամ այսմիկ, այսու կամ այսուիկ, յայսմանէ։
Այսք կամ այսոքիկ, այսց կամ այսոցիկ, այսոքիւք կամ այսոքիմբք, յայսցանէ։
Այդ, այդր կամ այդորիկ, այդմ կամ այդմիկ, այդու կամ այդուիկ, յայդմանէ։
Այդք կամ այդոքիկ, այդց կամ այդոցիկ, այդոքիւք կամ այդոքիմբք, յայդցանէ։

Միայն յոգնակի հայց. չէ առնում զայսս, զայդս։

Նոյն դասական ցուցականի պէս հոլովում են

Սոյն, սորին, սմին, սովին կամ սովիմբ. սոյնք կամ սոքին, սոցին կամ սոցուն կամ սոցունց, սովիմբք կամ սոքիմբք կամ սոքումբք, ի սոցունց։

Դոյն, դորին, դմին, դովին կամ դովիմբ. դոյնք կամ դոքին, դոցին կամ դոցուն կամ դոցունց, դովիմբք կամ դոքիմբք կամ դոքումբք, ի դոցունց։

Եզակի բացառականի տեղ գործ է ածվում ի սմանէ, ի դմանէ, ի նմանէ.

### որակական

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ու. | Ո՞րպիսի | Ո՞րպիսիք | Այսպիսի | Այսպիսիք |
| Ս. | Ո՞րպիսւոյ | Ո՞րպիսեաց | Այսպիսւոյ | Այսպիսեաց |
| Տ. | Ո՞րպիսում, | Ո՞րպիսեաց | Այսպիսում, | Այսպիսեաց |
| | յո՞րպիսի | յո՞րպիսիս | յայսպիսի | յայսպիսիս |
| Հ. | զՈ՞րպիսի | զՈ՞րպիսիս | զԱյսպիսի | զԱյսպիսիս |
| Գ. | Ո՞րպիսեաւ | Ո՞րպիսեօք | Այսպիսեաւ | Այսպիսեօք |
| Բ. | յՈ՞րպիսւոյ | յՈ՞րպիսեաց | յԱյսպիսւոյ | յԱյսպիսեաց |

Այսպէս հոլովում են միւս որական ցուցականները՝ չորրորդ հոլովման Ա. օրինակին վրայ.

Այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի.

### Քանականն

#### Եզակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Քանի՞ | Այսքանի | Այսքան | Այսչափ |
| Ս. | Քանւո՞յ, քանո՞յ | Այսքանոյ | Այսքանի | Այսչափի |
| Տ. | Քանւո՞յ, ի քանի՞ | Այսքանում, յայսքան | Այսքանի, յայսքան | Այսչափի, յայսչափ |
| Հ. | զՔանի՞ | զԱյսքան | զԱյսքան | զԱյսչափ |
| Գ. | Քանւո՞վ | Այսքանեաւ | Այսքանիւ | Այսչափիւ |
| Բ. | ի Քանւո՞յ, ի քանո՞յ | յԱյսքանոյ | յԱյսքանէ | յԱյսչափէ |

#### Յոգնակի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ո. | Քանի՞ք | Այսքանիք | Այսքանք | Այսչափք |
| Ս. | Քանեա՞ց | Այսքանեաց | Այսքանից | Այչափից |
| Տ. | Քանեա՞ց, ի քանի՞ս | Այսքանեաց, յայսքանիս | Այսքանից, յայսքանս | Այսչափից, յայսչափս |
| Հ. | զՔանի՞ս | զԱյսքանիս | զԱյսքանս | զԱյսչափս |
| Գ. | Քանեօ՞ք | Այսքանեօք | Այսքանիւք | Այսչափիւք |
| Բ. | ի Քանեա՞ց | յԱյսքանեաց | յԱյսքանից | յԱյսչափից |

Այսպէս հոլովում են միւս քանակական ցուցականները.

**Ո՞րքանի, այդքանի, այնքանի** չորրորդ հոլովման վրայ :

**Այդքան, այնքան, այդչափ, այնչափ** առաջին հոլովման վրայ:

ԴԻՏԵԼԻՔ.— 1. Ո՞ր հարցականը առանց պարոյկի **յարաբերական** գոյական դերանուն է (§ 50), և մի և նոյն կերպով է հոլովում:

2. Միւս հարցականներն էլ առանց պարոյկի գործ են ածվում հաստատական մտքով:

## 3. Ստացական.

Ստացական դերանունները կազմվում են էական և ցուցական դերանունների եզակի ու յոգնակի սեռականներից:

Սոցանից միայն քո առանձին հոլովում ունի:

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Քո | Քոյք |
| Ս. | Քոյ, քում | Քոց |
| Տ. | Քոյ, քում, ի քո | Քոց, ի քոյս |
| Հ. | զՔո | զՔոյս |
| Գ. | Քով | Քովք |
| Բ. | ի Քոյ, ի քումմէ | ի Քոց. |

Մնացածները հոլովվում են երրորդ հոլովման վրայ.

Իմ, իմոյ, իմում, իմով, յիմոյ կամ յիմմէ, իմք, իմոց, իմովք, յիմոց  իմը:
Քոյ, քոյոյ, քոյում, քոյով, ի քոյոյ կամ ի քումմէ. քոյք, քոյոց, քոյովք, ի քոյոց.  քոնը:
Մեր, մերոյ, մերում, մերով, ի մերոյ կամ ի մերմէ. մերք, մերոց, ի մերոց.  մերը:
Ձեր, ձերոյ, ձերում, ձերով, ի ձերոյ կամ ի ձերմէ. ձերք, ձերոց, ձերովք, ի ձերոց.  ձերը:
Իւր, իւրոյ, իւրում, իւրով, յիւրոյ կամ յիւրմէ. իւրք, իւրոց, իւրովք, յիւրոց.  իրանը:
Սորա, սորայոյ, սորայում, սորայով, ի սորայոյ. սորայք, սորայոց, սորայովք.  սորանը:
Սոցա, սոցայոյ, սոցայում, սոցայով, ի սոցայոյ. սոցայք, սոցայոց, սոցայովք.  սոցանը:
Դորա, դորայոյ, դորայում, դորայով, ի դորայոյ. դորայք, դորայոց, դորայովք.  դորանը:
Դոցա, դոցայոյ, դոցայում, դոցայով, ի դոցայոյ. դոցայք, դոցայոց, դոցայովք.  դոցանը:
Նորա, նորայոյ, նորայում, նորայով, ի նորայոյ. նորայք, նորայոց, նորայովք.  նորանը:
Նոցա, նոցայոյ, նոցայում, նոցայով, ի նոցայոյ. նոցայք, նոցայոց, նոցայովք.  նոցանը:

Սոցանից կազմվում են դարձեալ կա մասնիկով մի քանի ստացական դերանուններ, որոնք նոյնպէս երրորդ հոլովման վրայ են հոլովում.

Իմային, իմայնոյ, իմայնով, իմայինք, իմայնոց, իմայնովք*.  իմերը:
Մերային, մերայնոյ, մերայնով, մերայինք, մերայնոց, մերայնովք.  մերերը:
Ձերային, ձերայնոյ, ձերայնով, ձերայինք, ձերայնոց, ձերայնովք.  ձերերը:
Իւրային, իւրայնոյ, իւրայնով, իւրայինք, իւրայնոց, իւրայնովք.  իրանները:
Իւրեանցային, իւրեանցայնոյ, իւրեանցայնով, իւրեանցայնովք.  իրանցները:

---

* Վերջահոլովներում ն կարող է զանց լինել. իմայոյ, իմայով. մերայոյ, մերայով և այլն:

## Բ. Դերանունները գոյականների հետ։

Ո՞ր հարցականը, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն դասական ցուցականները և բոլոր ստացականները, իբրև ածական դեր-անուններ, գործ են ածվում գոյականների հետ սովորաբար ու նոցա հետ հոլովվում են։

1. Ո՞ր հարցականը սովորաբար իր գոյականից նախադաս է դրվում ու նորա հետ միասին հոլովվում, բաց ի յոգ. ուղ. ու նախդր. հոլովներից, ինչպէս.

| | |
|---|---|
| Ո՞ր քաղաք | Ո՞ր քաղաքք |
| Որո՞յ քաղաքի | Որո՞ց քաղաքաց |
| Որո՞ւմ քաղաքի, յո՞ր քաղաք | Որո՞ց քաղաքաց, յո՞ր քաղաքս |
| զՈ՞ր քաղաք | զՈ՞ր քաղաքս |
| Որո՞վ քաղաքաւ | Որո՞վք քաղաքօք |
| յՈրմէ՞ քաղաքէ | յՈրո՞ց քաղաքաց։ |

2. Այս, այդ, այն կարող են գոյականից առաջ էլ, յետոյ էլ դասուիլ. եթէ նախադաս են, սովորաբար կարճ ձևով են հոլովվում և գոյականը ս, դ, ն յօդերից մինն է ընդունում, ինչպէս.

| | |
|---|---|
| Այս ժողովուրդ | Այս կ–մ այսոքիկ ժողովուրդք |
| Այսր ժողովրդեան | Այսց կ–մ այսոցիկ ժողովրդոց |
| Այսմ ժողովրդեան, | Այսց կ–մ այսոցիկ ժողովրդոց |
| առ այս ժողովուրդ | առ այսոսիկ ժողովուրդս |
| զԱյս ժողովուրդ | զԱյս կ–մ զայսոսիկ ժողովուրդս |
| յԱյսմ ժողովրդենէ | Այսոքիւք ժողովրդովք |
| Այսու ժողովրդեամբ | յԱյսց կ–մ յայսցանէ ժողովրդոց |

| | |
|---|---|
| Ժողովուրդ-ս այս | Ժողովուրդք-ս այսոքիկ |
| Ժողովրդեան-ս այսորիկ | Ժողովրդոց-ս այսոցիկ |
| Ժողովրդեան-ս այսմիկ | Ժողովրդոց-ս այսոցիկ |
| առ ժողովուրդ-ս այս | առ ժողովուրդ-ս այսոսիկ |
| զԺողովուրդ-ս զայս | զԺողովուրդ-ս զայսոսիկ |
| ի Ժողովրդենէ-ս յայսմանէ | ի Ժողովրդոց-ս յայսցանէ |
| Ժողովրդեամբ-ս այսուիկ | Ժողովրդովք-ս այսոքիւք։ |

3. Սոյն, դոյն, նոյն և բոլոր որական ու քանական ցուցականները սովորաբար իրանց գոյականից առաջ դասուելով՝ կարող են նախադասածականների պէս միայն նախդրիւ հոլովել. նոյն բան, նոյն բանից, նոյն բանիւ, նոյն բանից. այսպիսի աղջիկ, այսպիսի աղջկայ, այնքան բարիք, այնքան բարեաց, այնքան բարեօք և այլն. բայց աւելի միասին են հոլովում, այսպէս.

| | | |
|---|---|---|
| Նոյն բան | Նոյն կամ նոյնք բանք | Այնքան բարիք |
| Նորին բանի | Նոցին բանից | Այնքանեաց բարեաց |
| Նմին բանի, | Նոցին բանից, | Այնքանեաց բարեաց, |
| ի նոյն բան | ի նոյն կամ ի նոսին բանս | յայնքան բարիս |
| զնոյն բան | զնոյն կամ զնոսին բանս | զԱյնքան բարիս |
| ի նմին բանէ | ի նոցին բանից | Այնքանեօք բարեօք |
| Նովին բանիւ | Նովին կամ նովիմբք բանիւք | յԱյնքանեաց բարեաց։ |

4. Ստացական դերանունները սովորաբար գոյականից յետոյ են դասվում ու միասին հոլովում են, բացի յոգնակի ուղղականից և նախդրիւ հոլովներից.

| | |
|---|---|
| Եղբայր իմ | Եղբարք իմ |
| Եղբօր իմոյ | Եղբարց իմոց |
| Եղբօր իմում, առ եղբայր իմ | Եղբարց իմոց, առ եղբարս իմ |
| զԵղբայր իմ | զԵղբարս իմ |
| Եղբարբ իմով | Եղբարբք իմովք |
| յԵղբօրէ իմմէ | յԵղբարց իմոց։ |

Այսպէս պէտք է հասկանալ միւս բոլոր ստացականների համար։

## § 91. Անորոշ և որոշեալ դերանունների հոլովումը։

Անորոշ դերանուններն են. ոմն, ոք, իմն, իք, ինչ, միւս, այլ։

Որոշեալներն են. ամէն, ամենայն. ամենեքեան, բոլորեքեան. իւրաքանչիւր, երկաքանչիւր. ամենիւր։

Սոքա եթէ մենակ գործ ածուին, գոյականի զօրութիւն ունին, ինչպէս. առէ ոմն ցնա. այստեղ ոմն նշանակում է մէկը, մէկ մարդ

և գոյական է: Իսկ եթէ գոյականը ներգործութեամբ դրուի մօտը — այր ոմն, (մէկ մարդ), ոմն ածական է: Այսպէս էլ, երբ ասումենք· այլ ոք, այլ գերանունը ածական է և ոք — գոյական. իսկ այլ մենակ ածական է: Նոյնը պէտք է հասկանալ միւս բոլոր անորոշ ու որոշեալ գերանունների համար:

Այս գերանունների նշանակութիւնից երևում է, որ նոքա մենակ էլ են հոլովւում, գոյականների հետ էլ:

## Ա. Գերանունները մենակ:

| | Եզակի | | Յոգնակի | |
|---|---|---|---|---|
| Ո. | Ոմն, ոք | մէկը | Ոմանք | մէկ քանիսը |
| Ս. | Ուրումն, ուրուք | մէկի | Ոմանց | մէկ քանիսի |
| Տ. | Ումեմն, ումեք, | մէկէն, | Ոմանց, | մէկ քանիսէն, |
| | առ ոմն, առ ոք | տեղ է մէկը | առ ոմանս | տեղ է մէկ քանիսը |
| Հ. | զՈմն, զոք | մէկը | զՈմանս | մէկ քանիսը |
| Գ. | Ոմամբ | մէկով | Ոմամբք | մէկ քանիսով |
| Բ. | յՈւմեմնէ, յումեքէ | մէկից | յՈմանց | մէկ քանիսից: |

Եզակի (անյոգնական)

| | | |
|---|---|---|
| Ո. | Իմն, իք, ինչ | մի բան |
| Ս. | Իրիք | մի բանի |
| Տ. | Իմեմն, իմիք, յինչ | մի բանէն տեղ է մի բանը |
| Հ. | Իմն, ինչ | մի բան |
| Գ. | Իւիք | մի բանով |
| Բ. | յԻմեմնէ, յիմիքէ | մի բանից: |

Ոմն, ոք գործ են ածվում շնչաւորների համար, իմն, ինչ անշունչ առարկաների համար:

Միւս անորոշ ու որոշեալ գերանունները հոլովւում են առաջին և երրորդ կանոնաւոր հոլովումների վրայ:

Միւս, միւսոյ, միւսում, միւսով, ի միւսոյ կամ ի միւսմէ. միւսոց, միւսովք:

Այլ, այլոյ, այլում, այլով, յայլոյ կամ յայլմէ. այլոց, այլովք։
Ամէն, ամենի, ամենու. ամենք, ամենից, ամենիւք։
Ամենայն, ամենայնի, ամենայնում, ամենայնիւ։
Ամենեքեան կամ ամենեքին, բոլորեքեան կամ բոլորեքին Ուղղականի վրայ։
Իւրաքանչիւր, իւրաքանչիւրոյ, իւրաքանչիւրում, յիւրաքանչիւրոյ կամ մէ։
Երկաքանչիւր, ոյ, ում, ով, ոյ կամ մէ. ոց, ովք։

## Բ. Դերանունները գոյականների հետ։

| | | |
|---|---|---|
| Այր ոմն | Արք ոմանք | Այլ ոք |
| Առն ուրումն | Արանց ոմանց | Այլոյ ուրուք |
| Առն ումեմն, | Արանց ոմանց, | Այլում ումեք, |
| առ այր ոմն | առ արս ոմանս | առ այլ ոք |
| զԱյր ոմն | զԱրս ոմանս. | զԱյլ ոք |
| Արամբ ոմամբ | Արամբք ոմամբք | Այլով ոմամբ |
| յԱռնէ ումեմնէ | յԱրանց ոմանց | յԱյլմէ ումեքէ։ |

| | |
|---|---|
| Պատճառ ինչ | Ինչ ինչ |
| Պատճառի իրիք | Իրիք իրիք |
| Պատճառի իմիք, ի պատճառ ինչ | Իմիք իմիք, յինչ ինչ |
| Պատճառ ինչ | Ինչ ինչ |
| Պատճառաւ իւիք | Իւիք իւիք |
| ի Պատճառէ իմիքէ | յիմիքէ իմիքէ |

Ոչ ոք և ոչ ինչ բացասական դերանունները այսպէս են հոլովում։

Ոչ ոք, ոչ ուրուք, ոչ ումեք, ոչ զոք, ոչ յումեքէ։
Ոչ ինչ, ոչ իրիք, ոչ իմիք, ոչ իւիք, ոչ յիմեքէ։

## ԿՐԹՈՒԹԻՒՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՎՐԱՅ.

### Ա.

| | |
|---|---|
| Ո՞րն է այս պատկերը։ | Ո՞ր է պատկերս այս։ |
| Ո՞ւմ տամ այս գիրքը։ | Ո՞ւմ տաց զգիրս զայս։ |
| Ո՞վքեր եկան մեզ մօտ։ | Ո՞յք եկին առ մեզ։ |
| Մենք չենք իմանում թէ որոնց հետ են խօսում | Եւ ոչ գիտեմք թէ ում խօսին։ |
| Ո՞ր իշխանութիւնով ես անում այդ բանը։ | Ո՞ր իշխանութեամբ առնես զայդ։ |
| Ինչի՞ց ես վախենում։ | Զի՞նչ զանգիտես։ |

Ո՞րտեղից ստացար այդ ընծան :

Ո՞չ ընկալար զայդ ընծայ (հյց.)

Ո՛ր մէկը արարածներից բարի են կարծում և ո՛րը չար :

Ո՛ր ինչ յարարածոցն բարի կարծեցին և որ չար:

Աստուած (ամէն) ինչ որ ստեղծեց գեղեցիկ ստեղծեց:

Աստուած ամենայն որ ինչ և արար գեղեցիկս արար :

Ոչ ինչ չունիմ ու ամէն բան ունիմ :

Ոչինչ ունիմ և ամենայն ինչ ունիմ :

Ինչ որ անելու ես, շուտով արա :

Որ ինչ առնելոց ես, արա վաղվաղակի ։

Ո՛ր չափով կը չափէք, նորանով կը չափուի ձեզ :

Որ չափով չափէք նովին չափեսցի ձեզ ։

Մենք այն Աստծուն ենք հաւատում, որին հրեշտակները երկրպագութիւն են տալիս:

Եւ հաւատամք յԱստուած, որ երկրպագեն դասք հոգեղինաց :

Այս այն Մարիամն է, որից ծնաւ Յիսուս:

Այս այն Մարիամ է, որ ծնաւ Յիսուս:

## Բ.

Ինչ որ իմն է, քոնն է:

Որ ինչ իմ է, քո է:

Ինչ որ իմս օգտակար է, քեզ վնասակար է :

Ամենայն որ ինչ իմ օգուտ է, քո ի վնաս է :

Ինձ ու քեզ տեսնողներ կան:

Են որ տեսանեն իմ և քո :

Ինձանով ազատուեցան, քեզանով ապրում են :

Ինեւ փրկեցան, քեւ կեան :

Ամէն բան ձեզանով սկսուեցաւ ու մեզանով աւարտուեցաւ :

Ամենայն ինչ ձեւ սկսաւ և մեւ կատարեցաւ :

Մեզանից դուրս եկան, բայց մեր թշնամիներն են :

Ի մէնջ ելին, սակայն թշնամիք մեր են :

Նորա խօսքերը ձեզ համար են ասած և ոչ մեզ համար :

Բանք նորա ձեր են և ոչ մեր :

Նոքա որ մեր շուրջ բոլորը կանգնած են, մեր բարեկամներն են :

Որ շուրջ մեր են, բարեկամք մեր են:

Ով որ դատարկ ման է գալիս, ինքն իր օգուտը չէ ճանաչում:

Որ դատարկաձեռն շրջի, ոչ ճանաչէ (զ) ինքն օգուտ :

Իրենք իրենց խեղճութեան պատճառ են:

Ինքն ինքեան են պատճառք թշուառութեան :

Խելօք բան է ասում ինքը իր համար :

Խօսի իմաստութիւն ինքն վասն ինքեան:

Աշխարքը իր վրայ է պտտում :

Երկիր պատի ինքեան (շ. Նախդր. գործ.):

Մարդիկ ստեղծուել են միմեանց սիրելու համար :

Մարդիկ արարան առ ի սիրել միմեանց կամ իրերաց :

Մէկ ազգի անդամները չպէտք է բաժանուին միմեանցից :

Չէ օրէն անդամոց միոյ ազգի անջատել միմեանց կամ իրերաց :

Նոքա պէտք է միմեանով մխիթարուին:

Նոքա պարտին մխիթարել միմեանց կամ իրերաց :

## Գ.

Ո՞րոնք են դոքա:—Մեր եղբօր որդիքը:

Ուղարկիր, կանչիր նոցա:

Նոցանից մէկ քանիսը այստեղ են:

Ամէն բան նորանով եղաւ:

Այդ պատուին արժանի չեմ:

Ազատիր ինձ այս նեղութիւնից:

Երբ կազատուիմ այն չարիքներից:

Գնա՛ այդ թղթերովը դատաւորին մօտ:

Գնացէ՛ք նոյն կարգով, ինչպէս եկաք:

Դու պէտք է հաշիւ տաս նորա վարմունքի համար:

Չեմ կարող հաւատալ նոցա խօսքերին:

Ինչ պատժի արժանի չէ:

Ո՛վ կարող է այդքան նեղութիւնների համբերել:

Ոչ ոք չէ կարող այսքանով գոհ լինել:

Այնպիսի առաքինի մարդու որդի է, որի գործքերը ամենքին յայտնի են:

Ո՞վ են դոքա:— Որդիք եղբօր մեր:

Առաքեա՛, կոչեա՛ զնոսա:

Կէսք նոցա աստ առ մեզ են:

Ամենայն ինչ նովաւ եղեւ:

Չեմ արժանի այդ պատուոյ:

Փրկեա՛ զիս ի նեղութենէ այսմ:

Երբ փրկեցայց ի չարեացն այն:

Ե՛րթ թղթովքդ այդ առ դատաւորն:

Երթայք նոյն կարգաւ, որով եկիք:

Քեզ պարտ է համար տալ վասն նորին ընթացից:

Ոչ կարեմ հաւատալ բանից նոցին:

Որպիսի պատժոյ չիցէ արժանի (վերջ. տր):

Ո՛ կարէ այդքան տանել նեղութեանց:

Ոչ կարէ ոք այսքան շատանալ:

Այնպիսի առաքինի առն է որդի, որ գործք ակն յայտնի են ամենեցուն:

## Դ.

Արիստակէս ու Վրթանէս մեր սուրբ հօր Գրիգոր Լուսաւորչի որդիքն են:

Փրկէ՛ մեզ քո բարեխօսութիւնով:

Քո տէրութիւնից ամէն բանի յոյս ունինք:

Քո պարգևներով լցրիր ամենքին:

Ողորմէ՛ իմ հոգուս:

Ձեր խստասրտութեան համար. իր փառքին համար. իր զօրքովը:

Նորա խօսքին նայելով աշխարհի լուսաւորութեան սահման չկայ:

Մէկ հարուստ մարդ երկու որդի ունէր:

Մէկին տուաւ շատ բան, միւսին՝ շատ քիչ:

Ամէն մէկին մեծ մեծ պարգևներ տուաւ:

Ումի՞ց լսեցիր այդ:—Մէկ ծերից:

Ամենքին յայտնի է, որ նա ոչ ոքից չէր վախենում:

Արիստակէս և Վրթանէս են որդիք սրբոյ հօրն մեր Գրիգորի Լուսաւորչի:

Փրկեա՛ զմեզ քոյ բարեխօսութեամբ:

Քո տէրութենէդ ամենայնի ակն ունիմք:

Քոյ պարգևօքդ ծածկեցեր ամենեքեան:

Ողորմեա՛ անձին իմ:

Վասն խստասրտութեան ձեր. վասն իւրոյին փառացն. իւրոյին զօրօքն:

Ըստ նորոյին բանի չիք սահման լուսաւորութեան աշխարհի (վերջ. տր.):

Առն միոյ մեծատան էին երկու որդիք (սեռ.):

Ոմն ետ բազում, ոմն սակաւ ինչ:

Իւրաքանչիւր ոք շնորհեաց պարգևս մեծամեծս:

Ո՞վ լուար զայդ:—Ի ծերոյ միոջէ:

Ամենեքեան յայտնի է, թէ նա չերկնչէր ոք:

Մէկ քանիսը կարծում են թէ առանց մէկ պատճառի դատապարտուեցաւ այն մարդը։ — Կարծիք են ոմանց (յգ. սեռ.) թէ առանց իրիք պատճառի դատապարտեցաւ այրն։

Ոչ մէկ բանի համար հոգս չէ քաշում։ — Ոչինչ փոյթ է նմա իրիք։

Ու մէկ բանով գոհ չէ։ — Ոչ ինչ շատանայ։

Աստուած որ ամենքի տէրն է, ամեն մէկին իր գործքի համեմատ տալիս է։ — Աստուած որ տէր է ամենեցուն, իւրաքանչիւր ում տայ ըստ գործոց իւր։

Աստուած բոլոր հաւատացողների յոյսն ու ապաւէնն է։ — Աստուած յոյս և ապաւէն է ամենեցուն հաւատացելոց։

---

# Ե. Բայերի կազմութիւնը

## § 92. Բայերի արմատները։

Բայերը ցոյց են տալի նիւթական և վերացական գործողութիւն ու դրութիւն, և կազմվում են.

1) Բայերի արմատներից. Լող—ալ. մերժ—ել, ուս—ան—ել։
2) Ածականներից. կանաչ—ել, ծեր—ան—ալ, քաջ—ան—ալ։
3) Գոյականներից. շահ—ել, կատար—ել, այգ—ան—ալ։
4) Թուական անուններից. երեքն—ել, չորեքն—ել։
5) Դերանուններից. ինքն—ան—ալ, իւրաց—ուցան—ել։
6) Մակբայներից և նախադրութիւններից. հպ—ել, մերձ—են—ալ, յառաջ—ել։
7) Ձայնարկութիւններից. աւաղ—ել։

## § 93. Բայերի վերջաւորութիւնները։ — Պարզ և բարդ բայեր։

Բայերը չորս վերջաւորութիւն ունին. ալ, ել, իլ, ուլ, կամ ամ, եմ, իմ, ում, որ հասարակ են ամենայն տեսակ բայերի համար. միայն եմ վերջաւորուած կրաւորական ու հասարակ բայեր չկան։

Այս վերջաւորութիւնները դրուելով արմատների մօտ՝ կազմում են

1. Պարզ բայեր, ինչպէս. **աճ—ալ**, **օծ—ել**, **ապր—իլ**, **Թող—ուլ**: Պատահում է, որ արմատի ու վերջաւորութեան մէջ կամ բայի սկզբում այլևայլ մասնիկներ են աւելացվում, ու այսպէսով ածանցեալ բայեր են կազմվում, ինչպէս **օծ—ան—ել**, **ծալ—ոտ—ել**, **ամառ—ան—ալ**:

Ածանցական մասնիկները այլ և այլ մտքով են ընկնում բայերի մէջ, ինչպէս.

1) **ատ**, **ոտ**, **տ** մասնիկները ընկնելով բայի արմատի ու վերջաւորութեան մէջ, գործողութեան կրկնութիւնը կամ սաստկութիւն են յայտնում, ինչպէս. **կոտր—ել—կտր—ատ—ել**, **խոց—ել—խոց—ոտ—ել**, **ճեղ—ել—ճեղ—տ—ել**: — Իսկ **զ** նոյն մտքով բայի արմատի վրայ է դրվում.— **անց—անել—զանց—ան—ել**:

2) **ան**, մասնիկը ընկնելով արմատի ու վերջաւորութեան մէջ՝ ամենևին նոր միտք չէ տալի բային, ու միայն ներդաշնակութեան համար է աւելացվում, ինչպէս. **օծ—ել—օծ—ան—ել**, **զատ—ել—զատ—ան—ել**, **տես—ան—ել**, **ընկ - ան—ալ**:

3) **ոյց** մասնիկը, որ միանալով **ան**-ի հետ **ուցան** կրկնածայն է կազմում և դրվում է չէզոք բայի արմատի ու վերջաւորութեան մէջ, ինչպէս. **ապր—ել—ապրեց—ուցան—ել**, **նստ—ել**, **նստ—ուցան—ել**, **զօր—ան—ալ—զօրաց—ուցան—ել**, այսինքն ապրել եմ տալի, նստել եմ տալի, և այլն: Ինչպէս նշանակութիւնից երևում է, այս տեսակ բայերը ոչ միայն մի գործողութիւն անել այլ և ուրիշին մի և նոյն գործողութիւնը **անել տալ** են յայտնում*:

4) **չ**, **նչ** մասնիկները չէզոք բայերի արմատի ու վերջաւորութեան մէջ աւելացուելով՝ նոր ձևով բայեր են կազմում. **փախն—ուլ—փախչ—ել**, **երկ—նչ—ել**:

* Այս պատճառով ոմանք այս տեսակ բայերը բուն ներգործականներից զանազանելու համար **անցողական** են անուանում, երբ թէ ներգործական բայի գործողութիւնը անցողական չէ:

5) ան, ապ, դժ, չ բացասական մասնիկները բայերի սկիզբը դրուելով՝ հակառակ նշանակութիւն են տալի նոցա ան—պատու—ել, ա—նկար—ան—ալ, դժ—գոհ—ել, չք—ան—ալ:

2. Բարդեալ բայերը, բարդուած բառերից են կազմւում, ինչպէս. ահ—ա—բեկ—ել, յաղթ—ա—հար—ել, ընծայ—ա—բեր—ել, առեղծ—ա—գործ—ել:

## § 94. Բայի ժամանակների կազմութիւնը:

Բայերի ժամանակները կազմւում են ներկայի և անցեալ կատարեալի արմատներից:

1. Ներկայի արմատից կազմւում են.

1) Ներկայ ժամանակը. ինչպէս ած—ամ, գր—եմ, հեղ—ում:

2) Անցեալ անկատարը. ինչպէս. ած—այի, գր—էի հեղ—ուի:

3) Արգելական հրամայականը, եզակի և յոգնակի. մի՛ ած—ար, մի՛ ած—այք, մի՛ գր—եր, մի՛ գր—էք, մի՛ հեղ—ուր, մի՛ հեղ—ուք:

4) Ստորադասական եղանակը. ած—այցեմ կամ ած—այցիմ, գր—իցեմ կամ գր—իցիմ, հեղ—ուցում:

5) Անորոշ, անցեալ ու ապառնի դերբայները. գր—ել, գր—եալ, գր—ելոց:

ԾԱՆ.—Անցեալ դերբայը երբեմն կատարեալի արմատից էլ է կազմւում. գրել լինում է գր—եալ. կամ գրեց—եալ. գրեաց կատարեալից:

Կատարեալի արմատը սովորաբար ներկայի արմատի նոյն և նման է, ինչպէս ներկ. հան—եմ, կատ. հան—ի, կամ ներկայից է ածանցւում աց, եաց, ածանցներով. աւ—եմ, աւաց—ի, ուր—եմ, ուրեաց: Բայց երբեմն կատարեալի պարզ կամ ածանցեալ կանոնաւոր արմատը գործածութիւնից ընկնելով՝ ուրիշ բայի արմատից է կազմւում, ինչպէս. ուտեմ բայի կատարեալը չէ լինում ուտեց—այ, այլ կեր—այ, կերամ կամ կերնամ բայի արմատից. ճանաչեմ լինում է աւելի ծան—եայ քան ճանաչեց-ի, ըմպեմ, լինում է արբ-ի քան ըմպեց-ի:

Այս ծանօթութիւնից յետոյ պէտք է իմանալ, որ

2. Կատարեալի արմատից կազմւում են.

1) Կատարեալ ժամանակը. հեղ, հեղէ, գրեայ, գրեց—է, կալ, կալ—այ:

2) Ապառնի ժամանակը. հեղ. հեղ—էց, գրեայ, գրեց—էց *, կալ—այ, կալ—այց:

3) Սաստկական հրամայականը, եզակի և յոգնակի կոր. հեղ. հր. հե՛ղ. հեղ—ե՛ք. գրեայ, գրե՛ա, գրեց—ե՛ք. տես, տե՛ս, տես—ե՛ք:

# ՉՈՐՍ ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

| Եղանակ | Ժամանակ | ԱԼ | ԵԼ | ԻԼ | ՈՒԼ |
|---|---|---|---|---|---|
| | | | Ա. օր, Բ. օր. | Ա. օր Բ. օր | |
| | | Ներգ. կրաւ. | Ներգործական | Կրաւորական | Ներգ. կրաւ. |
| | | Արմատ | Արմատ | Արմատ | Արմատ |
| | | ԱՂ, ԱՂԱՑ | ՍԷՐ ՏԵՍ ՍԻՐԵԱՑ | ՍԷՐ ՏԵՍ ՍԻՐԵԱՑ | ԹՈՂ |
| ՍՀՄՆԿ. | Ներկայ | Աղ—ամ, ամ. | Սիր—եմ, Տես—անեմ. | Սիր—իմ, Տես-անիմ | Թող—ում, ում. |
| | Անց. Անկ. | —այի, այի. | —էի, —անէի. | —էի, —անէի. | —ուի, ուի. |
| | Անց. կատ. | Աղաց-ի, այ. | Սիրեց—ի —ի. | Սիրեց—այ —այ. | —ի, այ. |
| | Ապառնի. | —ից,ից. | —ից —ից. | —այց, —այց. | —ից, այց. |
| ՀՐԱՄ. | — — | Աղա աց—իր | Սիրեա, Տես— | Սիրեաց, եցիր —իր. | Թող — իր. |
| ՍՏՈՐ. | — — | —այցեմ, այցիմ | —իցեմ, անիցեմ. | — իցիմ, —անիցիմ, | —ուցում, ուցում. |
| ԴԵՐԲ. | Անորոշ. | — ալ, ալ. | —ել — անել | —ել, իլ, —անել, անիլ. | — ուլ, — ուլ. |
| | Անցեալ. | Աղաց— եալ, եալ. | Սիրեց — եալ եալ. | Սիրեց— եալ, եալ | — եալ, եալ. |
| | Ապառ. | —ալոց. ալոց | —ելոց —անելոց. | — ելոց —անելոց | — լոց. լոց. |

* Անձնական արմատը եթէ միավանկ է, արմատի ց ապառնի ժամանակում պահվում է, ինչպէս. կեց.—կեցց, կացցես, կացցէ, կացցուք, կացջիք, կացցեն. իսկ եթէ բազմավանկ է, փոխվում է ջ, գրեցից, գրեսցես, գրեսցէ, գրեսցուք, գրեսջիք, գրեսցեն:

## § 95. Էական բայեր։

Եմ, լինել, եղանել, գոլ բայերը էութիւն կամ գոյութիւն ցոյց տալով կոչվում են էական, բայց բուն էական միայն եմ բայն է. Մնացածները իրանց սովորական նշանակութեանը նայելով աւելի չէզոք են համարվում։

Էական բայերը, մանաւանդ եմ, բայերի ժամանակների կազմութեան մէջ մտնում են, ուստի հարկաւոր է նախ նոցա խոնարհումը տեսնել։

| ԵՄ | ԼԻ—Ն—ԻՄ | ԵՂ—ԱՆ—ԻՄ | ԳՈՄ |
|---|---|---|---|
| արմատ է | արմատ լի | արմատ եղ | արմատ գոյ |

### Սահմանական եղանակ

Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Եմ | Լի-ն-իմ | Եղ-ան-իմ | Գոմ |
| Ես | Լի-ն-իս | Եղ-ան-իս | Գոս |
| Է | Լի-նի | Եղ-ան-ի | Գոյ |
| Եմք | Լի-ն-իմք | Եղ-ան-իմք | Գոմք |
| Էք | Լի-ն-իք | Եղ-ան-իք | Գոյք |
| Են | Լի-ն-ին | Եղ-ան-ին | Գոն |

Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Էի | Լի-ն-էի | Եղ-ան-էի | Գոյի |
| Էիր | Լի-ն-էիր | Եղ-ան-էիր | Գոյ-իր |
| Էր | Լի-ն-էր | Եղ-ան-էր | Գոյ-ր |
| Էաք | Լի-ն-էաք | Եղ-ան-էաք | Գոյ-աք |
| Էիք | Լի-ն-էիք | Եղ-ան-էիք | Գոյ-իք |
| Էին | Լի-ն-էին | Եղ-ան-էին | Գոյ-ին |

Անցեալ կատարեալ

Եղ-է
Եղ-եր
Եղ-աւ

| | |
|---|---|
| | Եղ-աք |
| | Եղ-էք, եղ-երուք |
| | Եղ-են |

Ապառնի

| | |
|---|---|
| Լի-ցիմ | Եղ-էց |
| Լի-ցիս | Եղ-ի-ցիս |
| Լի-ցի | Եղ-իցի |
| Լի-ցուք, լի-ցիմք | Եղ-իցուք, եղ-իցիմք |
| Լի-ջիք, լի-ցիք | Եղ-իջիք, եղ-իցիք |
| Լի-ցին | Եղ-իցին |

## Հրամայական եղանակ

| | | |
|---|---|---|
| Ե՛ր | Լե՛ր, լի-ջի՛ր, լի-ն-իջի՛ր | Եղ-իջի՛ր, Եղ-ան-իջի՛ր |
| | Մի՛ լի ն-իր | Մի՛ եղ-ան-իր։ |
| Է՛ք, | Լերո՛ւք | Եղ-երուք |
| երո՛ւք | Մի՛ լի՛նիք | Մի՛ եղ-ան-իք |

## Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| իցեմ | Լի-ն-իցեմ | Եղ-ան-իցիմ | Գուցեմ |
| իցես | Լի-ն-իցիս | Եղ-ան-իցիս | Գուցես |
| իցէ | Լի-ն-իցի | Եղ-ան-իցի | Գուցէ |
| իցեմք | Լի-ն-իցիմք | Եղ-ան-իցիմք | Գուցեմք |
| իցէք | Լի-ն-իցիք | Եղ-ան-իցիք | Գուցէք |
| իցեն | Լի-ն-իցին | Եղ-ան-իցին | Գուցեն |

## Գերբայ

Անորոշ

| | | | |
|---|---|---|---|
| Ել | Լի-նել | Եղ-ան-իլ | Գոլ |

Անցեալ

| | | |
|---|---|---|
| Եալ | Լեալ | Եղ-եալ |

Ապառնի

Եղոց Կի-նի-եղոց Եղ-ան-եղոց

ԴԻՏԵԼԻՔ. — Ա. Եմ բայի հրամայականը մենակ չէ բանում, այլ միշտ ողջ բառի հետ. ողջ եր, ողջ էք, ողջ երուք:

Բ. Լինիմ բայը անցեալ կատարեալը առնում է եղանիմ բայից:

Գ. Գոմ նշանակում է եմ, կամ. սորա տեղ բացասական մըտ-քով գործ է ածվում չիք (չկայ). չիք հացը, իմ չիք տեսել, այսինքն՝ ոչ գոյ հացը և այլն:

## § 96. Առաջին լծորդութիւն:

ԱՂԱՄ

պարզ արմատ աղ, ածանց. աղաց

| ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ | | ԿՐԱՒՈՐԱԿԱՆ | |
|---|---|---|---|

### Սահմանական եղանակ

Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Աղ-ամ | աղում եմ | Աղ-ամ | աղվում եմ |
| Աղ-աս | աղում ես | Աղ-աս | աղվում ես |
| Աղ-այ | աղում է | Աղ-այ | աղվում է |
| Աղ-ամք | աղում ենք | Աղ-ամք | աղվում ենք |
| Աղ-այք | աղում էք | Աղ-այք | աղվում էք |
| Աղ-ան | աղում են | Աղ-ան | աղվում են |

Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Աղ-այի | աղում էի | Աղ-այի | աղվում էի |
| Աղ-այիր | աղում էիր | Աղ-այիր | աղվում էիր |
| Աղ-այր | աղում էր | Աղ-այր | աղվում էր |
| Աղ-այաք | աղում էինք | Աղ-այաք | աղվում էինք |
| Աղ-այիք | աղում էիք | Աղ-այիք | աղվում էիք |
| Աղ-ային | աղում էին | Աղ-ային | աղվում էին |

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Աղաց-ի | —ղ—ցէ | Աղաց-այ | —ղ——եց—յ |
| Աղաց-եր | —ղ—ցէր | Աղաց-ար | —ղ——եց—ր |
| Աղաց | —ղ—ց | Աղաց-աւ | —ղ——եց—— |
| Աղաց-աք | —ղ—ցէն+ | Աղաց-աք | —ղ——եց—ն+ |
| Աղաց-իք | —ղ—ցէ+ | Աղաց-այք | —ղ——եց—+ |
| Աղաց-ին | —ղ—ցէն | Աղաց-ան | —ղ——եց—ն |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Աղաց-ից | Կ՛—ղ—մ | Աղաց այց | Կ՛—ղ——եմ |
| Աղաս-ցես | Կ՛—ղ—ս | Աղաս-ցիս | Կ՛—ղ——ես |
| Աղաս-ցէ | Կ՛—ղ—յ | Աղաս-ցի | Կ՛—ղ——ե |
| Աղաս-ցուք | Կ՛—ղ—ն+ | Աղաս-ցուք | Կ՛—ղ——են+ |
| Աղաս-ջիք | Կ՛—ղ—+ | Աղ-աս-ջիք | Կ՛—ղ——ե+ |
| Աղաս-ցեն | Կ՛—ղ—ն | Աղաս ցին | Կ՛—ղ——են |

## Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Աղա՛, աղաս-ջի՛ր | —ղ—՛, —ղ—՛ս | Աղաց-ի՛ր, աղաս-ջի՛ր | —ղ——ե՛ր, —ղ——ե՛ս |
| Մի՛ աղ-ար | Գ՛ —ղ—ր | Մի՛ աղ-ար | Գ՛ —ղ——եր |
| Աղաց-էք | —ղ—ցե՛+ | Աղաց-արուք | —ղ——եցե՛+ |
| Մի՛ աղ-այք | Գ՛ —ղ—+ | Մի՛ աղ-այք | Գ՛ —ղ——ե+ |

## Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Աղ-այցեմ | Բե —ղ—մ | Աղ-այցիմ | Բե —ղ——եմ |
| Աղ-այցես | Բե —ղ—ս | Աղ-այցիս | Բե —ղ——ես |
| Աղ-այցէ | Բե —ղ—յ | Աղ-այցի | Բե —ղ——ե |
| Աղ-այցեմք | Բե —ղ—ն+ | Աղ-այցիմք | Բե —ղ——են+ |
| Աղ-այցէք | Բե —ղ—+ | Աղ-այցիք | Բե —ղ——ե+ |
| Աղ-այցեն | Բե —ղ—ն | Աղ-այցին | Բե —ղ——են . |

## Դերբայք

### Անորոշ

| | | | |
|---|---|---|---|
| Աղ-ալ | —ղ—լ | Աղ-ալ | —ղ——ե |

Անցեալ

Աղաց-եալ —եմ Աղաց-եալ —էի

Ապառնի

Աղ-ալոց —եմ Աղ-ալոց —էի

Այս լծորդութեան ներգործականի օրինակին վրայ խոնարհւում են ամ վերջացած

## 1) Ներգործականք

Աղամ, աղացի, աղաց, աղա՛.
Թանամ, թացի, թաց կամ եթաց, թա՛ց.
Զգամ, զգացի, զգաց, զգա՛.
Ողբամ, ողբացի, ողբաց, ողբա՛.
Լամ, լացի, լաց կամ ելաց, լա՛ց.
Մուրամ, մուրացի, մուրաց, մուրա՛.
Կարդամ, կարդացի, կարդաց, կարդա՛.
Հաւատամ, հաւատացի, հաւատաց.
Բանամ, բացի, բաց կամ եբաց, բա՛ց.
Բառնամ, բարձի, բարձ կամ եբարձ.

## 2) Չէզոքք (Ներգործակերպ)

Գնամ, գնացի, գնաց, գնա՛.
Մնամ, մնացի, մնաց, մնա՛.
Անամ, անացի, անաց, անա՛.
Խնդամ, խնդացի, խնդաց, խնդա՛.
Տոկամ, տոկացի, տոկաց, տոկա՛.
Կալ, կացի, կաց կամ եկաց, կա՛ց.
Կեամ, կէի, կեայր, կեցի, կեաց կամ եկեաց, կեա՛ց, կեցի՛ց, կեայցեմ.
Երթամ, երթայի, չոգայ, չոգաք. երթայց, երթիցուք. ե՛րթ, երթայցեմ.
Գամ, գայի, եկի, եկաք. եկի՛ց, եկեսցուք. ե՛կ, եկեսջիր, մի՛ գար, եկա՛յք, մի՛ գայք, գայցեմ.

Կրաւորականի օրինակին վրայ խոնարհւում են

## 1) Կրաւորականք,

որոնց ներկան ու անցեալ անկատարը ներգործականից զանազանելու համար՝ լինել էական բայով էլ գործ են ածւում. աղացեալ լինիմ, ատացեալ լինիմ, աղացեալ լինէի, ատացեալ լինէի և այլն: Իսկ նամ վերջացած մի քանի բայերի ներկան երրորդ լծորդութեան պէս էլ է լինում. բանիմ, բառնիմ, ելանիմ*:

---

* Այսպէս և դամ բայի կրաւորականը լինում է դնիմ կամ առնի գործածական

Ամամ, ամացայ, ամացիր.
Թանամ, թացայ, թացիր.
Զգամ, զգացայ, զգացիր.
Ողբամ. ողբացայ, ողբացիր.
Լամ, լացայ, լացիր.
Մուրամ, մուրացայ, մուրացիր.
Կարդամ, կարդացայ, կարդացիր.
Հաստատամ, հաստատացայ, հաստատացիր.
Բանամ, բացայ, բացիր.
Բառնամ, բարձայ, բարձիր.

## 2) Հասարակք

Զլանամ, զլացայ. զլացիր.
Խոստանամ, խոստացայ, խոստացիր.
Մերկանամ, մերկացայ, մերկացիր,
Ուրանամ, ուրացայ, ուրացիր.
Հոգամ, հոգացայ, հոգացիր.
Մոռանամ, մոռացայ, մոռացիր.
Սպառնամ, սպառնացայ, սպառնացիր.
Իմանամ, ցայ, ցիր, իմաց, իմա.

## 3) Չէզոքք (կրաւորակերպ)

Ընթանամ, ընթացայ, ընթացիր.
Զօրանամ, զօրացայ, զօրացիր.
Զարմանամ, զարմացայ, զարմացիր.
Թշնամանամ, թշնամացայ, թշնամացիր.
Մերձենամ, մերձեցայ, մերձեցիր.
Յագենամ, յագեցայ, յագեցիր.
Գթամ, գթացայ կամ ցի, ցիր, գթա.
Դողամ, ցայ կամ ցի, ցիր, դողա.
Դառնամ, դարձայ, դարձիր, դարձ.
Բարկանամ, բարկացայ, բարկացիր.

ԾԱՆ.—Ներգործականի մտքով առնուած ու բոլոր չէզոք բայերի ստորադասականը կրաւորականի պէս ցիմ չէ լինում, այլ ցեմ. ընթանայցեմ, դառնայցեմ, մերձենայցեմ:

### ԿՐԹՈՒԹԻՒՆ.

Ո՞ւր էս գնում: — Գնում եմ եկեղեցի:
Ո՞ւր էիր գնում: —Գնում էի ուսումնարան
Գնացէք իմ բարեկամին տեսնելու:
Եկէ՛ք, երթա՛նք այստեղից:
Կացէ՛ք, մնացէ՛ք այստեղ:
Թէ ճաշից յետոյ ինձ մօտ գաս, կերթանք միասին զբօսնելու :
Դուք բերէք ու տեսաւ որ ամէն տան մէջ եղողները ստատիկ լալիս, ողբում էին:

Յո՞ երթաս: — Երթամ յեկեղեցի
Յո՞ երթայր: — Երթայր յուսումնարան:
Երթայք ի տես բարեկամի իմոյ:
Օ՛ն եկայք, երթիցուք աստի:
Կալ մնալ աստանօր:
Եթէ գաս առ իս զկնի ճաշու, երթալ զբօսնուլ ի միասին:
Եկն զգուն և ետես զի ամենեքեան որ ի տանն էին լալ ողբալ դառնապէս:

---

գալու լինել, միւս ժամանակները կանոնաւոր են. գալոյ, գալոյց, գալոցեմ: Իսկ ներգործական կատարեալը լինում է եկաւ, եկաւր, եկ, եկաւք, եկաք, եկան. ապառնի—գալ կամ գալոց գալիր, գալէ, գալուք, գալիք, գալէն. Հրամ.—եկ՛ր, եկջի՛ր, մի՛ գար, եկ՛ք, մի գայք: Մնացած ժամանակները կանոնաւոր են:

Ականջ դի՛ր իմ խօսքերին, ու ամէն առաւօտ ձեռքերդ ու երեսդ լուա՛ցիր :

Թէ որ խորհուրդներս քեզ յայտնեմ, վախենում եմ որ ականջ չես դնէ ինձ :

Հանեցէ՛ք ձեր վերարկուները և նստեցէ՛ք ինձ մօտ :

Տուէք ցորենը մշակներին որ աղան:

Չեմ մոռանար երբէք այն խոստմունքը որ քեզ տուի:

Իմ շորերը թրջուեցան անձրևից:

Եկեղեցու դռները բացուեցան:

Ցորենը աղուեցաւ մշակների ձեռքով:

Նորա կեանքը աշխարհքից վերցուած է:

Անսալ բանից իմոց և յամենայն առաւօտու լուանալ զձեռս և զերեսս քո:

Եթէ յայտնել քեզ զխորհուրդս իմ, երկնչիմ զի ոչ անսալ բանից իմոց:

Մերկանալ զպատմուճանս ձեր ի ձէնջ և նստարուք աստ առ իս :

Տալ զցորեանն մշակաց զի աղալ:

Ոչ մոռանալ երբէք զխոստումն զոր խոստանալ քեզ :

Զգեստք իմ թրջել կամ թրջեալ լինել յանձրևոյ:

Դրունք տաճարին բանալ :

Ցորեանն աղալ ի ձեռն մշակաց:

Բառնալ կամ բարձեալ լինել յերկրէ կեանք նորա:

---

## § 97. Երկրորդ լծորդութիւն :

### Առաջին օրինակ — Երկրորդ օրինակ

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԻՐԵԼ — ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՏԵՍԱՆԵԼ

պարզ արմատ «սէր», ածանց· «սիրել» — արմատ «տես»

### Սահմանական եղանակ

Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-եմ | սիրում եմ | Տես-ան-եմ | տեսնում եմ |
| Սիր-ես | սիրում ես | Տես-ան-ես | տեսնում ես |
| Սիր-է | սիրում է | Տես-ան-է | տեսնում է |
| Սիր-եմք | սիրում ենք | Տես-ան-եմք | տեսնում ենք |
| Սիր-էք | սիրում էք | Տես-ան-էք | տեսնում էք |
| Սիր-են | սիրում են | Տես-ան-են | տեսնում են |

Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Սիր էի | սիրում էի | Տես-ան-էի | տեսնում էի |
| Սիր-էիր | սիրում էիր | Տես ան-էիր | տեսնում էիր |

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-էր | [illegible] | Ցես-ան-էր | [illegible] |
| Սիր-էաք | [illegible] | Ցես-ան-էաք | [illegible] |
| Սիր-էիք | [illegible] | Ցես-ան-էիք | [illegible] |
| Սիր-էին | [illegible] | Ցես ան-էին | [illegible] |

### Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեց-ի | [illegible] | Ցես-ի | [illegible] |
| Սիրեց-եր | [illegible] | Ցես-եր | [illegible] |
| Սիրեաց | [illegible] | Ցես, ետես | [illegible] |
| Սիրեց-աք | [illegible] | Ցես-աք | [illegible] |
| Սիրեց-իք | [illegible] | Ցես-իք | [illegible] |
| Սիրեց-ին | [illegible] | Ցես-ին | [illegible] |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեց-ից | [illegible] | Ցես-ից | [illegible] |
| Սիրես-ցես | [illegible] | Ցես-ցես | [illegible] |
| Սիրես-ցէ | [illegible] | Ցես-ցէ | [illegible] |
| Սիրես-ցուք | [illegible] | Ցես-ցուք | [illegible] |
| Սիրես-ջիք | [illegible] | Ցես-ջիք | [illegible] |
| Սիրես-ցեն | [illegible] | Ցես-ցեն | [illegible] |

## Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեա, սիրես-ջիր | [illegible] | Ցես, տես-ջիր, | [illegible] |
| Մի սիր-եր | [illegible] | Մի տես ան-եր | [illegible] |
| Սիրեց-էք | [illegible] | Ցես-էք | [illegible] |
| Մի սիր-էք | [illegible] | Մի տես-ան-էք | [illegible] |

## Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-իցեմ | [illegible] | Ցես-ան-իցեմ | [illegible] |
| Սիր-իցես | [illegible] | Ցես-ան-իցես | [illegible] |
| Սիր-իցէ | [illegible] | Ցես-ան-իցէ | [illegible] |
| Սիր-իցեմք | [illegible] | Ցես-ան-իցեմք | [illegible] |
| Սիր-իցէք | [illegible] | Ցես-ան-իցէք | [illegible] |
| Սիր-իցեն | [illegible] | Ցես-ան-իցեն | [illegible] |

## Գերբայք

Անորոշ

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-ել | -էրէլ | Ցն-ան-ել | -էնէլ |

Անցեալ

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-եալ, սիրեց-եալ | -էրած | Ցն-եալ | -էած |

Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-ելոց | -էրէլու | Ցն-ան-ելոց | -էնէլու |

***Այս լծորդութեան առաջին օրինակին վրայ խոնարհվում են պարզ եւ վերջացած***

### 1) Ներգործականք

Գրեմ, գրեցի, գրեա.
Կոչեմ, կոչեցի, կոչեա.
Աղաչեմ, աղաչեցի, աղաչեա.
Փրկեմ, փրկեցի, փրկեա.
Այրեմ, այրեցի, այրեա.
Ազդեմ, ազդեցի, ազդեա.
Ըմբռնեմ, ըմբռնեցի, ըմբռնեա.
Մ․անեմ, մաանեցի, մաանեա.

Կարեմ, կարեցի, կարեա.
Շարժեմ, շարժեցի, շարժեա.
Շինեմ, շինեցի, շինեա.
Բաժանեմ*, բաժանեցի բաժանեա.
Դարմանեմ, դարմանեցի, դարմանեա.
Սերմանեմ, սերմանեցի, սերմանեա.
Կործանեմ, կործանեցի, կործանեա.
Յանդիմանեմ, յանդիմանեցի, յանդիմանեա.

Ասեմ, ասացի, ասացից, ասա.
Գիտեմ, գիտացի, գիտացից, գիտեա.

Կարեմ, կարացի, կարացից, կարացիր.
Մարթեմ, մարթացի, մարթացից, ցիր.

### 2) Չէզոքք (Ներգործակերպ)

Տիրեմ, տիրեցի, տիրեա.
Ամաչեմ, ամաչեցի, ամաչեա.
Գոչեմ, գոչեցի, գոչեա.
Ժամանեմ, ժամանեցի ժամանեա.

Աղաղակեմ, աղաղակեցի, աղաղակեա.
Սպասեմ, սպասեցի, սպասեա.
Մնչեմ, մնչեցի, մնչեա.
Մռնչեմ, մռնչեցի, մռնչեա.

---

* Տեառնէմ-ից պէտք է զանազանել բաժանել և սորա նման բայերը, որոնց մէջ -ն մասնիկ չէ, այլ արմատի մասն:

Երկրորդ օրինակին վրայ խոնարհւումեն եւ վերջացած ներգործական ու չէզոք բայերը, որոնց արմատի ու վերջաւորութեան մէջ ընկնում է ան մասնիկը, նոյնպէս ուց և ան (ուցան) կրկնածանց մասնիկ ունեցող ներգործականները, որոնց խոնարհման մէջ ան անյայտանում է։

## 1) Ներգործականք

Բեկանել, բեկի, բեկ, եբեկ.
Գտանել, գտի, գիտ, եգիտ.
Անիծանել, անիծի, անէծ.
Հարկանել, հարի, հար, եհար.
Զարկանել, զարկի, զարկ, եզարկ.
Արկանել, արկի, արկ, էարկ.

Ածել * ածի, ած, էած.
Բերել, բերի, բեր, եբեր.

Ուսուցանել, ուսուցի, ուսոյց, ուսո՛.
Սնուցանել, սնուցի, սնոյց, սնո՛.
Զեկուցանել, զեկուցի, զեկոյց, զեկո՛.
Արբուցանել, արբուցի, արբոյց, արբո՛.
Դարձուցանել, դարձուցի. դարձոյց, ձո՛.
Կեցուցանել, կեցուցի, կեցոյց, կեցո՛.

Դիզանել, դիզի, դէզ, եդէզ.
Լքանել, լքի, լիք, ելիք.
Հատանել, հատի, հատ, եհատ.
Մուծանել, մուծի, մոյծ, եմոյծ.
Սպանանել, սպանի, սպան, եսպան.
Օծանել օծի, օծ, էօծ.

Հանել, հանի, հան, եհան.

Հատուցանել, հատուցի, հատոյց, հատո՛.
Կորուսանել, կորուսի, կորոյս, կորո՛.
Ընկլուզանել, ընկլուզի, ընկլոյզ, ընկլո՛.
Զօրացուցանել, զօրացուցի, ցոյց, ցո՛.
Ապրեցուցանել, ապրեցուցի, ցոյց, ցո՛։

## 2) Չէզոքք (ներգործակերպ)

Ելանել, ելի, ել.
Իջանել, իջի, էջ.
Մտանել, մտի, մուտ, եմուտ.

Անցանել, անցի, անց, էանց.
Հասանել, հասի, հաս, եհաս.
Համբերել, համբերի, համբեր։

## § 98. Երրորդ լծորդութիւն։

| առաջին օրինակ | երկրորդ օրինակ |
|---|---|
| ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ՍԻՐԵԼ | ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ՏԵՍԱՆԵԼ |

### Սահմանական եղանակ

Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-իմ | սիրում եմ | Տես-ան-իմ | տեսնում եմ |

* Այս երեք բայերը բացառութիւն են կազմում ընդհանուր կանոնից։

| | | | |
|---|---|---|---|
| Սիր իս | [illegible] | Ցես-ան իս | [illegible] |
| Սիր-ի | [illegible] | Ցես-ան-ի | [illegible] |
| Սիր-իմք | [illegible] | Ցես-ան-իմք | [illegible] |
| Սիր-իք | [illegible] | Ցես-ան-իմք | [illegible] |
| Սիր-ին | [illegible] | Ցես-ան-ին | [illegible] |

Անցեալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-էի | [illegible] | Ցես-ան-էի | [illegible] |
| Սիր-էիր | [illegible] | Ցես ան-էիր | [illegible] |
| Սիր-էր | [illegible] | Ցես-ան-էր | [illegible] |
| Սիր-էաք | [illegible] | Ցես-ան-էաք | [illegible] |
| Սիր-էիք | [illegible] | Ցես-ան-էիք | [illegible] |
| Սիր-էին | [illegible] | Ցես-ան-էին | [illegible] |

Անցեալ կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեց-այ | [illegible] | Ցես-այ | [illegible] |
| Սիրեց-ար | [illegible] | Ցես-ար | [illegible] |
| Սիրեց-աւ | [illegible] | Ցես-աւ | [illegible] |
| Սիրեց-աք | [illegible] | Ցես-աք | [illegible] |
| Սիրեց-այք | [illegible] | Ցես-այք | [illegible] |
| Սիրեց-ան | [illegible] | Ցես-ան | [illegible] |

Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեց-այց | [illegible] | Ցես-այց | [illegible] |
| Սիրես-ցիս | [illegible] | Ցես-ցիս | [illegible] |
| Սիրես ցի | [illegible] | Ցես-ցի | [illegible] |
| Սիրես-ցուք | [illegible] | Ցես-ցուք | [illegible] |
| Սիրես-ջիք | [illegible] | Ցես-ջիք | [illegible] |
| Սիրես-ցին | [illegible] | Ցես-ցին | [illegible] |

## Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեա՛ց, սիրես-ջիր | [illegible] | Ցես-իր, տես-ջիր | [illegible] |
| Մի սիր-եր | [illegible] | Մի տես-ան-իր | [illegible] |

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեց-արուք | -եր--եցէ+ | Տես-արուք | տե-ն--եցէ'+ |
| Մի Սիր-էք | Վ' -եր--ե+ | Մի տես-ան-էք | Վ' տե-ն--է+ |

## Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-իցիմ | Բէ -եր--էմ | Տես-ան-իցիմ | Բէ տե-ն--էմ |
| Սիր-իցես | Բէ -եր--էս | Տես-ան-իցես | Բէ տե-ն--էս |
| Սիր-իցէ | Բէ -եր--է | Տես-ան-իցէ | Բէ տե-ն--է |
| Սիր-իցեմք | Բէ -եր--էնք | Տես-ան-իցեմք | Բէ տե-ն--էնք |
| Սիր-իցէք | Բէ -եր--էք | Տես-ան-իցէք | Բէ տե-ն--էք |
| Սիր-իցեն | Բէ -եր--էն | Տես-ան-իցեն | Բէ տե-ն--էն |

## Դերբայք

### Աներոշ

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-ել, սիր-իլ | -եր--էլ | Տես-ան-ել, տես-ան-իլ | տե-ն--էլ |

### Անցեալ

| | | | |
|---|---|---|---|
| Սիրեց-եալ, սիր-եալ | -եր---ծ | Տես-եալ | տե-ն---ծ |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Սիր-ելոց | -եր--ելու | Տես-ան-ելոց | տե-ն--ելու: |

Այս լծորդութեան առաջին օրինակին վրայ խոնարհվում են պարզ և վերջացած կրաւորական, հասարակ ու չէզոք բայերը:

## 1) Կրաւորականք

| | | |
|---|---|---|
| Գրիմ, գրեցայ. | Ըմբռնիմ, ըմբռնեցայ. | Դարմանիմ, դարմանեցայ. |
| Կոչիմ, կոչեցայ. | Մատնիմ, մատնեցայ. | Սերմանիմ, սերմանեցայ. |
| Աղաչիմ, աղաչեցայ. | Կարիմ, կարեցայ. | Կործանիմ, կործանեցայ. |
| Փրկիմ, փրկեցայ. | Շարժիմ, շարժեցայ. | Ցանցլմանիմ, ցայ. |
| Այրիմ, այրեցայ. | Շինիմ, շինեցայ. | Ասիմ, ասացայ. |
| Ագցիմ, ագցեցայ. | Բաժանիմ, բաժանեցայ. | Գիտիմ, գիտացայ. |

## 2) Հասարակք

Խօսիմ, խօսեցայ.
Կամիմ, կամեցայ.
Համարիմ, համարեցայ.
Ողորմիմ, ողորմեցայ.
Բարբառիմ, բարբառեցայ
Խոստովանիմ, ցա:
Դատիմ, դատեցայ.
Խորհիմ, խորհեցայ.

## 3) Չէզոքք* (կրաւորակերպ)

Ապրիմ, ապրեցայ.
Բնակիմ, բնակեցայ.
Ճեմիմ, ճեմեցայ.
Յոգնիմ, յոգնեցայ.
Յագիմ, յագեցայ.
Հրաժարիմ, հրաժարեցայ:
Աշխատիմ, աշխատեցայ.
Երևիմ, երևեցայ.

ԾԱՆ.—իմ վերջացած կրաւորական, հասարակ ու չէզոք բայերի անորոշ դերբայը աւելի էլ է լինում, երկրորդ լծորդութեան պէս, քան թէ իլ. պառկել, խօսել, ելնել: Գայ Յիսուս առ Յովհաննէս մկրտել 'ի նմանէ, այսինքն մկրտել (մկրտուիլ):

Երկրորդ օրինակին վրայ խոնարհվում են էլ վերջացած կրաւորական, հասարակ ու չէզոք բայերը, որոնց արմատի ու վերջաւորութեան մէջ ան մասնիկն է ընկնում:

## 1) Կրաւորականք

Բեկանիմ, բեկայ.
Գտանիմ, գտայ.
Անիծանիմ, անիծայ.
Հարկանիմ, հարայ.
Ածիմ, ածայ.
Ուսուցանիմ, ուսուցայ.
Սնուցանիմ, սնուցայ.
Զեկուցանիմ, զեկուցայ.
Զարկանիմ, զարկայ.
Արկանիմ, արկայ.
Դիզանիմ, դիզայ.
Լքանիմ, լքայ.
Բերիմ, բերայ.
Դարձուցանիմ, դարձուցայ.
Հաստուցանիմ, հաստուցայ.
Կորուսանիմ, կորուսայ:
Հատանիմ, հատայ.
Մածանիմ, մածայ.
Սպանանիմ, սպանայ.
Օծանիմ, օծայ.
Հանիմ, հանայ.
Ընկլուզանիմ, ընկլուզայ.

## 2) Հասարակք

Ծնանիմ, ծնայ, ծնիր, ծնեալ.
Ագանիմ, ագայ, ագիր, ագուցեալ.

* Այս կրաւորակերպ չէզոքների կարգում դասում են քերականները վէճել, կռուել, պատերազմել և սորա նման բայերը, որոնք փոխադարձ գործողութիւն յայտնելով՝ սովորաբար միմեանց և իրերաց փոխադարձական դերանուանների հետ են գործ դրվում, իրանք էլ իսկապէս ներգործական բայեր են:

Ուսանիլ, ուսայ, ուսիր, ուսարուք. Վարկանիլ, վարկայ, իր, վարկուցեալ.
Սկսանիլ, սկսայ, սկսիր. Տանիլ, տարայ, տար, այք, տարերուք:

## 3) Չէզոքք (կրաւորակերպ)

Անկանիլ, անկայ, անկիր, անկերուք. Մեռանիլ, մեռայ, մեռիր.
Գերծանիլ, գերծայ, գերծիր, րուք. Ջեռանիլ, ջեռայ, ջեռիր.
Գիջանիլ, գիջայ, գիջիր. Նստիլ, նստայ, նիստ:

## § 99. Չեմ, ՚նչեմ վերջացած չէզոքների խոնարհումը:

Չեմ, ՚նչեմ և մէկ—երկու ՚նեմ վերջացած չէզոք բայերը երրորդ լծորդութեան երկրորդ օրինակին վրայ են խոնարհվում, մի քանի բացառութիւններով, գլխաւորապէս կատարեալ ժամանակում, որ վերջանում է եայ և նորանից ապառնին եայց, այսպէս.

| | | |
|---|---|---|
| ՍՀՄ. | Ներկ. | Հանգ—չիմ, հանգ—չիս, հանգչի.<br>Հանգ—չիմք, հանգչիք, հանգ—չին: |
| | Անկ. | Հանգ—չէի, հանգ—չէիր, հանգ—չէր.<br>Հանգ—չէաք, հանգ—չէիք, հանգ—չէին: |
| | Կտր. | Հանգ—եայ, հանգ—եար, հանգ—եաւ.<br>Հանգ—եաք, հանգ—եայք, հանգ—եան: |
| | Ապռ. | Հանգ—եայց, հանգ—իցես, հանգ—իցէ.<br>Հանգ—իցուք, հանգ—ջիք, հանգ—իցեն: |
| ՀՐԱՄ | — | Հանգ—իր, հանգ—իջիր, մի հանգ—չիր.<br>Հանգ—երուք, մի հանգ—չիք: |
| ՍՏՈՐ. | — | Հանգ—չիցիմ, հանգ—չիցիս, հանգ—չիցի.<br>Հանգ—չիցիմք, հանգ—չիցիք, հանգ—չիցին: |
| ԴԵՐԲ. | Անորոշ | Հանգ—չել, հանգ—չիլ: |
| | Անցեալ | Հանգ—ուց—եալ. |
| | Ապառնի | Հանգ—չելոց: |

Թաքչիմ, թաքեայ, թաքիր, թաքուցեալ. Փախչիմ, փախեայ, փախիր, փախուցեալ.
Թռչիմ, թռեայ, թռիր, թռուցեալ. Զատչիմ, զատեայ, զատիր, զատուցեալ.
Ոստչիմ, ոստեայ, ոստիր, ոստուցեալ. Զարթչիմ, զարթեայ, զարթիր, ցեալ.
Մատչիմ, մատեայ, մատիր, մատուցեալ. Երկնչիմ, երկեայ, երկիր, երկուցեալ.
Կորնչիմ, կորեայ, կորիր, կորուսեալ. Մարտնչիմ, մարտեայ, մարտիր, ուցեալ.

Մեղանչեմ, մեղայ, մեղիր, մեղարուք, մեղուցեալ, մեղանչիցեմ.
Ճանաչեմ, ծանեայ, ծանիր, ծաներուք, ճանաչիցեմ, ծանուցեալ.

Յանցանեմ, յանցեայ կամ յանցայ, յանցիր, յանցանիցեմ, յանցուցեալ։
Յառնեմ, յարեայ, արի, յարիր, արիք, յարերուք, յառնիցեմ, յարուցեալ։

## § 100. Խոնարհումն այն բայերի, որոնց կատարեալի արմատը անկանոն է։

Երկրորդ և երրորդ լծորդութեան երկրորդ օրինակին վրայ խոնարհվում են մի քանի բայեր, որոնց կատարեալի արմատը անկանոն լինելով կամ երկու արմատ ունենալով, մինը կանոնաւոր միւսը անկանոն, մի քանի խոտորմունքներ են պատճառում։ Ահա այն բայերը, որոնց կանոնաւոր ժամանակների միայն առաջին դէմքերն ենք դնում։

| | | ա) ԱՌՆԵԼ | բ) ԴՆԵԼ | գ) ՈՒՏԵԼ |
|---|---|---|---|---|
| | | արմ. առար | արմ. դէր | արմ. ուտ, կեր. |
| | | | ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆՔ | |
| ՍՀՄ. | Ներկ. | Առնեմ և այլն | Դնեմ և այլն | Ուտեմ և այլն |
| | Անկ. | Առնէի և այլն | Դնէի և այլն | Ուտէի և այլն |
| | Կտր. | Առարի | Եդի | Կերայ, կերի |
| | | Առարեր | Եդեր | Կերար, կերեր |
| | | Առար | Եդ | Կերաւ, եկեր |
| | | Առարաք | Եդաք | Կերաք |
| | | Առարիք | Եդիք | Կերայք, կերիք |
| | | Առարին | Եդին | Կերան, կերին |
| | Ապռ. | Առարից | Եդից, դիցեմ | Կերայց |
| | | Առասցես | Դիցես | Կերիցես |
| | | Առասցէ | Դիցէ | Կերիցէ |
| | | Առասցուք | Դիցուք | Կերիցուք |
| | | Առասջիք | Դիջիք | Կերիջիք |
| | | Առասցեն | Դիցեն | Կերիցեն |
| ՀՐԱՄ. | — | Առ, առաջիր | Դիր, դիջիր, դնիջիր | Կե՛ր, կերիջիր, ուտիջիր |
| | | Մի առներ | Մի դնե՛ր | Մի ուտեր |
| | | Առարէ՛ք | Դիք | Կերայք, կերէ՛ք |
| | | Մի առնէք | Մի դնէք | Մի ուտէք |
| ՍՏՈՐ. | — | Առնիցեմ և այլն | Դնիցեմ և այլն | Ուտիցեմ և այլն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ԴԵՐԲ. | Անորոշ. | Առնել | Դնել | Ուտել |
| | Անցեալ | Արարեալ | Եդեալ | Կերեալ |
| | Ապառնի | Առնելոց: | Դնելոց: | Ուտելոց: |

ԿՐԱՒՈՐԱԿԱՆՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| ՍՀՄ. | Ներկ. | Առնիմ և այլն | Դնիմ և այլն | Ուտիմ և այլն |
| | Անկ. | Առնէի և այլն | Դնէի և այլն | Ուտէի և այլն |
| | Կտր. | Արարայ | Եդայ | Կերայ |
| | | Արարար | Եդար | Կերար |
| | | Արարաւ | Եդաւ | ~~Եդաւ~~ |
| | | Արարաք | Եդաք | Կերաք |
| | | Արարայք | Եդայք | Կերայք |
| | | Արարան | Եդան | Կերան |
| | Ապռ. | Արարայց | Եդայց | Կերայց |
| | | Արասցիս | Դիցիս | Կերիցիս |
| | | Արասցի | Դիցի | Կերիցի |
| | | Արասցուք | Դիցուք | Կերիցուք |
| | | Արասջիք | Դիջիք | Կերիջիք |
| | | Արասցին | Դիցին | Կերիցին |
| ՀՐԱՄ. | — | — Արասջիր | — Դիջիր, դնիջիր | —Կերիջիր, ուտիջիր |
| | | Մի առնիր | Մի դնիր | Մի ուտիր, |
| | | — — | — — | — — |
| | | Մի առնիք | Մի դնիք | Մի ուտիք՝ |
| ՍՏՈՐ. | — | Առնիցիմ և այլն | Դնիցիմ և այլն | Ուտիցիմ և այլն |
| ԴԵՐԲ. | Անորոշ. | Առնիլ | Դնիլ | Ուտիլ |
| | Անցեալ. | Արարեալ | Եդեալ | Կերեալ |
| | Ապառ. | Առնելոց: | Դնելոց: | Ուտելոց: |

| | | դ) ԸՄՊԵԼ | ե) ԼՍԵԼ | զ) ՈՒՆԵԼ |
|---|---|---|---|---|
| | | արմ. ըմպ, արբ (արբենալ) | արմ. լս կամ լուր | արմ. ուն, կալ (կալնուլ) |
| | | ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ | ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ | ՀԱՍԱՐԱԿ |
| ՍՀՄ. | Ներկ. | Ըմպեմ և այլն | Լսեմ և այլն | Ունիմ և այլն |
| | Անկ. | Ըմպէի և այլն | Լսէի և այլն | Ունէի և այլն |
| | Կտր. | Արբի (ըմպեցի) | Լուայ (լսեցի) | Կալայ |
| | | Արբեր | Լուար | Կալար |
| | | Արբ, էարբ | Լուաւ | Կալաւ |
| | | Արբաք | Լուաք | Կալաք |
| | | Արբիք | Լուայք | Կալայք |
| | | Արբին | Լուան | Կալան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ապ. | Արբից, արբցեմ | Լուայց, լուիցեմ | Կերայց |
| | | Արբցես | Լուիցես | Կերիցես |
| | | Արբցէ | Լուիցէ | Կերիցէ |
| | | Արբցուք | Լուիցուք | Կերիցուք |
| | | Արբջիք | Լուիջիք | Կերիջիք |
| | | Արբցեն | Լուիցեն | Կերիցեն |
| ՀՐԱՄ. | — | Ա՛րբ, արբջիր | Լո՛ւր, լուիջիր | Կե՛ր, կե՛ր, կերիջիր, ուտիջիր. |
| | | Մի՛ ըմպեր | Մի՛ լսեր | Մի՛ ուտեր |
| | | Արբէ՛ք | Լուարո՛ւք | Կերարո՛ւք, կերո՛ւք, կերէ՛ք |
| | | Մի՛ ըմպէք | Մի՛ լսէք | Մի՛ ուտէք |
| ՍՏՈՐ. | — | Ըմպիցեմ և այլն | Լսիցեմ և այլն | Ուտիցեմ և այլն |
| ԴԵՐԲ. | Անորոշ. | Ըմպել | Լսել | Ուտել |
| | Անցեալ. | Արբեալ | Լուեալ | Կերեալ |
| | Ապառնի. | Ըմպելոց | Լսելոց | Ուտելոց: |

ԾԱՆ. — Ըմպել և լսել բայերի կրաւորականը կազմւում են լինել էական բայով.
Արբեալ լինիլ, եղէ, եղէց, լիցիմ, լինիցիմ:
Լուեալ լինիլ կամ լու լինիլ, եղէ, եղէց, լիցիմ, լինիցիմ:

## ԿՐԹՈՒԹԻՒՆ

## Ա.

| | |
|---|---|
| Յուդան մատնեց Քրիստոսին: | Յուդա մատնել զՔրիստոս: |
| Քրիստոս մատնուեցաւ Յուդայից: | Քրիստոս մատնել ի Յուդայէ: |
| Քրիստոս ազատեց աշխարհը գերութիւնից: | Քրիստոս փրկել զաշխարհ ի գերութենէ: |
| Աշխարհը պէտք է փրկուէր Քրիստոսի ձեռքով: | Փրկել աշխարհ ի ձեռն Քրիստոսի: |
| Տամերլան Հայաստանում քաղաք շինեց ու իր անունով Տամերլանակերտ անուանեց: | Տամերլան շինել քաղաք ի Հայս և կոչել յանուն իւր Տամերլանակերտ: |
| Այս քաղաքը Նորոգուեցաւ Վանի ձեռքով ու Նորա անունը ստացաւ: | Քաղաքս այս Նորոգել ի ձեռն Վանայ և ընդունել զանուն Նորա: |
| Պարսիկները Հայոց շատ եկեղեցիներ կործանեցին ու այրեցին: | Պարսիկք կործանել և այրել զբազում եկեղեցիս Հայոց: |
| Շատ Հայոց եկեղեցիներ կործանուեցան ու այրուեցան Պարսիկներից: | Բազում եկեղեցիք Հայոց կործանել և այրել ի ձեռն Պարսից: |
| Հայերը շատ անգամ զարկին ջարդեցին Պարսից զօրքերին: | Հայք բազում անգամ կոտորել խորտակել զզօրս Պարսից: |

Ցազկերտի զօրքերը մէկ—երկու անգամ զարկուեցան ջարդուեցան Վարդանի զօրքերից:

Մի յանդիմանէ՛ր ուրիշներին, որ դու էլ չյանդիմանուես ուրիշներից:

Մի անիծէր ընկերոջդ, որ դու էլ չանիծուես նորանից:

Այն ծառ, որ լաւ պտուղ չէ բերում, կտրւում ու կրակն է ձգվում:

Զօրք Ցազկերտի միանգամ և երկիցս հարկանել խորտակել ի զօրաց Վարդանայ:

Մի յանդիմանել զայլս, զի մի և դու յանդիմանել յայլոց:

Մի անիծանել զընկեր քո, զի մի և դու անիծանել ի նմանէ:

Ամենայն ծառ, որ ոչ առնել պտուղ բարի, հատանել և ի հուր արկանել:

## Բ.

Ողորմի՛ր ինձ ու ազատէ՛ր իմ անձը:

Նայէ՛ դէպ ի արևելք ու արևի ծագումը կը տեսնես:

Իջէ՛ր այդ սարից և փոքր ինչ հանգստացէր:

Թաքնուեցէ՛ք այդ անտառում:

Վախեցէ՛ր շողոքորթ խօսքերից:

Ճանաչէ՛ր քեզ:

Մօտեցայ նորան, բայց ինձ չճանաչեց:

Կորան նորա ամէն թշնամիները:

Իմ թշնամիները վերկացան իմ վրայ:

Կը գայ ժամանակ, երբ արդարութիւնը կը յայտնուի:

Սովորեցրո՛ւ ինձ քո կամքը կատարելու:

Ի՞նչ անեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ:

Ամէն բան կատարեցի ինչպէս որ ասէր:

Ձեզ ատողներին բարութիւն արէ՛ք:

Քո եղբօր ձայնը լսեցի, բայց նորան չտեսայ:

Քո աղաչանքները ինձանից լսուեցան:

Ուտենք խմենք, թէ նորան սպասենք:

Քեզնից շատ ընծաներ առայ:

Ողորմել ինձ և ապրեցուցանել զանձն իմ:

Հայել ընդ արևելս և տեսանել զծագել արևու:

Իջանել ի լեռնէ այտի և հանգչել սակաւիկ մի:

Թաքչել յանտառդ յայդ:

Երկնչել ի շողոմարար բանից:

Ճանաչել զքեզ:

Մատչել առ նա, սակայն ոչ ճանաչել զիս:

Կորնչել ամենայն թշնամիք նորա:

Յառնել ի վերայ իմ թշնամիք իմ:

Գալ ժամանակի, յորժամ յայտնել արդարութիւն:

Ուսուցանել ինձ առնել զկամս քո:

Զի՞նչ առնել զի զկեանս յաւիտենականս ժառանգել:

Առնել զամենայն որպէս և ասել:

Բարի առնել ատելեաց ձերոց:

Լսել զձայն եղբօր քո, այլ ոչ տեսանել զնա:

Լսելի լինել յինէն խնդրուածք քո:

Ուտել ըմպել, թէ ակն ունել նմա:

Պարգևս մեծամեծս ընդունել ի քէն:

# § 101. Չորրորդ լծորդութիւն։

## ԹՈՂՈՒԼ

արմ. Թող.

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ — ԿՐԱՒՈՐԱԿԱՆ

## Սահմանական եղանակ

### Ներկայ

| | | | |
|---|---|---|---|
| Թող-ում | Թողնում եմ | Թող-ում | Թողվում եմ |
| Թող-ուս | Թողնում ես | Թող-ուս | Թողվում ես |
| Թող-ու | Թողնում է | Թող-ու | Թողվում է |
| Թող-ումք | Թողնում ենք | Թող-ումք | Թողվում ենք |
| Թող-ուք | Թողնում էք | Թող-ուք | Թողվում էք |
| Թող-ուն | Թողնում են | Թող-ուն | Թողվում են |

### Անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Թող-ուի | Թողնում էի | Թող-ուի | Թողվում էի |
| Թող-ուիր | Թողնում էիր | Թող-ուիր | Թողվում էիր |
| Թող-ույր | Թողնում էր | Թող-ույր | Թողվում էր |
| Թող-ուաք | Թողնում էինք | Թող-ուաք | Թողվում էինք |
| Թող-ուիք | Թողնում էիք | Թող-ուիք | Թողվում էիք |
| Թող-ուին | Թողնում էին | Թող-ուին | Թողվում էին |

### Կատարեալ

| | | | |
|---|---|---|---|
| Թող-ի | Թողի | Թող-այ | Թողուեցայ |
| Թող-եր | Թողիր | Թող-ար | Թողուեցար |
| Թող, եթող | Թողեց | Թող-աւ | Թողուեցաւ |
| Թողաք | Թողինք | Թող-աք | Թողուեցանք |
| Թողիք | Թողիք | Թող-այք | Թողուեցաք |
| Թողին | Թողին | Թող-ան | Թողուեցան |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Թող-ից | կը Թողնեմ | Թող-այց | կը Թողուեմ |

| | | | |
|---|---|---|---|
| թող-ցես | [illegible] | թող-ցիս | [illegible] |
| թող-ցէ | [illegible] | թող-ցի | [illegible] |
| թող-ցուք | [illegible] | թող-ցուք | [illegible] |
| թող-ջիք | [illegible] | թող-ջիք | [illegible] |
| թող-ցեն | [illegible] | թող-ցին | [illegible] |

## Հրամայական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| թող, թող-ջիր, | [illegible] | թող-իր, թող-ջիր | [illegible] |
| Մի թող-ուր | [illegible] | Մի թող-ուր | [illegible] |
| թող-էք | [illegible] | թող-արուք | [illegible] |
| Մի թող-ուք | [illegible] | Մի թողուլք | [illegible] |

## Ստորադասական եղանակ

| | | | |
|---|---|---|---|
| թող-ուցում | [illegible] | թող-ուցում | [illegible] |
| թող-ուցուս | [illegible] | թող-ուցուս | [illegible] |
| թող-ուցու | [illegible] | թող-ուցու | [illegible] |
| թող-ուցումք | [illegible] | թող-ուցումք | [illegible] |
| թող-ուցուք | [illegible] | թող-ուցուք | [illegible] |
| թող-ուցուն | [illegible] | թող-ուցուն | [illegible] |

## Դերբայք

### Աներոյթ

| | | | |
|---|---|---|---|
| թող-ուլ | [illegible] | թող-ուլ | [illegible] |

### Անցեալ

| | | | |
|---|---|---|---|
| թող-եալ | [illegible] | թող-եալ, թող-ուցեալ | [illegible] |

### Ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| թող-լոց | [illegible] | թող-լոց | [illegible] |

Այս ընդղութեան ներգործականի վրայ խոնարհվումին ու վերջացած ներգործականները·

| | |
|---|---|
| Զենում, զենի, զեն. | Ցելում, ցելի, ցել, եցել. |
| Արգելում, արգելի, արգել. | Հեղում, հեղի, հեղ, եհեղ. |
| Զեղում, զեղի, զեղ, եզեղ. | Առնում, առի, առ, էառ. |
| Գելում, գելի, գել, եգել. | Ընկենում, ընկեցի, ընկեաց կամ ընկէց. |
| Կիզում, կիզի, կէզ, եկէզ. | Լնում, լցի, լից, ելից. |
| Յաւելում, յաւելի, յաւել. | Խնում, խցի, խից, եխից: |

Կրաւորական օրինակի վրայ խոնարհվում են ներգործականների

## 1) Կրաւորականք,

որոնց ներկան, անկատարը, ստորադասականը և այլն ներգործականի նման լինելով՝ չեն էական բայով էլ կազմվում են. Ընչպէսեւ լինիմ, լինէի, եղէ, լինիցիմ, լեր և այլն:

| | | |
|---|---|---|
| Զենում, զենայ. | Կիզում, կիզայ. | Առնում, առայ. |
| Արգելում, արգելայ. | Յաւելում, յաւելայ. | Ընկենում, ընկեցայ. |
| Զեղում, զեղայ. | Ցելում, ցելայ. | Լնում, լցայ. |
| Գելում, գելայ. | Հեղում, հեղայ. | Խնում, խցայ: |

## 2) Հասարակք

Զգենում, զգեցայ, զգեցիր. Ընթեռնում, ընթերցայ, ընթերցիր. Ակնում, ակայ, ակիր:

## 3) Չէզոքք (կրաւորակերպ)

| | |
|---|---|
| Զբօսնում, զբօսայ, զբօսիր, զբօսեալ. | Զարթնում, զարթեայ, զարթիր, եալ. |
| Յենում, յեցայ, յեցիր, յեցեալ. | Ոստնում, ոստեայ, ոստիր, եալ. |
| Երդնում, երդուայ, երդուիր, երդուեալ. | Պչնում, պչեայ, պչիր, պչուցեալ. |
| Ջեռնում, ջեռայ, ջեռիր, ջեռեալ. | Ցասնում, ցասեայ, ցասիր, ցասուցեալ. |
| Քաղցնում, քաղցեայ, քաղցիր, եալ. | Փախնում, փախեայ, փախիր, ուցեալ: |

### Կ Ր Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն.

| | |
|---|---|
| Ոչխարը մորթեց ու գլուխը կտրեց գցեց | Զենուլ զոչխարն և զգլուխն հատանել և ի բաց ընկենուլ |
| Նորա ականջները խցուեցան (խցաւ) | Խնուլ լսելիք նորա: |

Աչքերը խփեցին ու էլ բան չուզեցին խօսելու:

Կը կարդան այն մարդոց թերթերը, որոնք անպիտան բաներ են գրում:

Թէ որ իրան ներես, կարելի է մէկ էլ մեղք կը գործէ:

Մէկմէկու վրայ են ձգում իրանց յանցանքը:

Ես կը հեռացնեմ սովը նոցանից:

Խնձանով կը հեռացնէ սովը քաղաքից:

Թշնամին —— մեր քաղաքը:

Մեր քաղաքը ազատեցաւ թշնամիներից:

Ձեռքերը հաքաւ ու փնաց թշնամու առաջ:

Թողէ՛ք նոցա այնտեղ, և դուք եկէ՛ք, հաքէ՛ք ձեր շորերը:

Քաղաքի հրապարակները լցուեցան ժողովուած բազմութիւնով:

Այս տարուայ առատութիւնից կը լցուեն ցորենի կալերը և գինու հնձանները:

Թափէ՛ իմ վրայ քո գթութիւնը

Կարդա՛ հայոց պատմութիւնը և գտի՛ր ինձ մեր պապերի գործերը:

Ներուին ձեզ ձեր մեղքերը:

Խնուլ զաչս իւրեանց և ոչ կամենալ ինչ խօսել:

Ընթեռնուլ թերթս այնոցիկ, որք գրեն զանիրաւութիւն:

Եթէ թողուլ նմա, գուցէ միւս անգամ մեղս ինչ գործել:

Զմիմեանս ընկենուլ զյանցանս իւրեանց:

Ես արգելուլ զսով ի նոցանէ:

Ինն արգելուլ սով ի քաղաքէ:

Թշնամին առնուլ զքաղաք մեր:

Քաղաքն մեր առնուլ ի թշնամեաց

Ձգենուլ զձեռս և երկնուլ ընդ առաջ թշնամւոյ:

Թողուլ զնոսա անդ, և դուք գալ և զգենուլ զհանդերձս ձեր:

Լնուլ լցուլ մարդկամբ հրապարակք քաղաքի:

Լնուլ կալք ցորենոյ և լցուլ հնձանք գինւոյ յառատութենէ տարւոյս:

Հեղուլ ի զգթութիւնդ քո:

Ընթեռնուլ զգիրս պատմութեան հայոց և գտանել ինձ զգործս նախնեաց մերոց:

Թողուլ լինել ձեզ մեղք ձեր:

## § 102. Միադէմ բայեր:

Կան բայեր, որոնք միայն եզակի երրորդ դէմքով գործ են ածվում, և կոչվում են միադէմ կամ անդէմ, որովհետև շատը մենակ են վարվում, առանց ուղղական հոլովով գոյականի, որով, ինչպէս յայտնի է, դրվում է ներգործող առարկան, ինչպէս. մարթ (կարելի է), պիտոյ (պէտք է), պատշաճ է և այլն:

Հարկ է, հարկ էր, հարկ եղև, հարկ լիցի կամ եղիցի, հարկ իցէ կամ լինիցի:

Անկ է, էր, եղև, լիցի կամ եղիցի, իցէ կամ լինիցի:

Արժան է, էր, եղև, լիցի կամ եղիցի, իցէ կամ լինիցի:

Հնար է, էր, եղև, լիցի կամ եղիցի, իցէ կամ լինիցի:
Պարտ է, էր, եղև, լիցի կամ եղիցի, իցէ կամ լինիցի:
Բարւոք է, էր, եղև, լիցի կամ եղիցի, իցէ կամ լինիցի:
Պիտի, պիտէր, պիտեցաւ, պիտեսցի, պիտիցի գալ:
Ցաւէ, ցաւէր, ցաւեաց, ցաւեսցէ, ցաւիցէ ինձ, քեզ, նմա:

Միադէմ բայերի մէջ կան այնպիսիները, որոնք անշունչ առարկաների ու կենդանիների համար ասելով երրորդ դէմքով են բանում, ինչպէս. ամպէ, փայլատակէ, անձրևէ, ձիւնէ, ցօղէ, այգանայ, բառաչէ, մռնչէ, մայեն. բայց տեղին ու մտքին նայելով կարող են ամէն դէմքերով էլ գործ դրուիլ, ինչպէս. ամպէմ և ոչ անձրևէմ:

Կան դարձեալ մի քանի ամբողջ բայեր էլ, որոնք երբեմն վարվում են իբրև միադէմ.
Դիպեցաւ մեզ թողուլ զաշխարհ. նէ չէնի որ մէնք աշխարքը թողնենք:
Եհաս նմա թագաւորել. եղաւ որ նա թագաւորեց:
Այս մտքով գործ են ածվում. տուի, լուի, երևի, թուի, կարծի, և այլն:

## § 103. Գիտելիք բայերի և խոնարհումների վրայ:

Բայերի վրայ հետևեալ գիտելիքները կայ իմանալու.

1. Կան ներգործական բայեր, որոնք իրանցից յետոյ հայցական հոլով չունենալով, չէզոքի միտք են ստանում, ինչպէս. գնամ, խաղամ, կարդամ, ուզեմ, լամ, հագնամ և այլն:

2. Երբեմն էլ կրաւորական բայերը չէզոքի մտքով են բանում, ինչպէս. բանամ, բարկանամ, համբերանամ, մերկանամ, այրեմ: — Բացան երկինք, ամբարձան ջերմ. համբերեաց Աստուած:

3. Բայեր կան, որոնց կրաւորական խոնարհումը չէզոքի փոխուելով բոլորովին ուրիշ բան են նշանակում, ինչպէս.

Առաջնորդեմ, ճանապարհ ցոյց տալ.— առաջնորդիմ, առաջնորդ լինել:
Թախանձեմ զոք, շատ խնդրել մէկին.— թախանձիմ ինքս, կարօտել մի բանի:
Ժտեմ, խնդրել.— ժտիմ, ջանքնել, համարձակել:
Պաշտեմ, ծառայել.— պաշտիմ, բանեցնել:
Պաշտպանեմ, պաշտպանել.— պաշտպանիմ յոք, ապաւինել մէկին:

4. Որովհետև այս ածանցական մասնիկով կազմուած բայերի միտքն է անել կամ չանել տալ, այս պատճառով նոցա տեղ երբեմն գործ են դրվում տալ և առնել բայի անորոշ եղանակով, այսպէս. տալ ածել, տալ բերել, տալ ուտել, տալ ըմպել, ջերել տալ. առնել ամէն աշխատել, առնել գնալ, առնել զբանալ, և այլն:

իսկ բայերի ժամանակների վրայ հետևեալը պէտք է իմանալ.

1. Սահմանական ներկան երբեմն ստորադասականի կամ ապառնիի միտքով է բանում.

Թող գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, այսինքն գրեցից և ցուցից կամ գրեցեմ և ցուցանեցեմ:

Աղաչեմ հրամայեա բանալ զգիրանդ, այսինքն զի հրամայեսցես:

Ապա թէ աղն անհամի, ի՞ւ յաղիցի, այսինքն անհամեսցի:

Թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա, փրկիմ, այսինքն թէ մերձեցայց, փրկեցայց:

2. Սահմանական անկատարը երբեմն փարւում է ստորադասական անկատարի տեղ, եթէ շաղկապի օգնութիւնով.

Զգիտէր թէ յո՞ երթայր զթոյնս դառնութեան:

Ո՞ տայր ինձ յանապատի զգոյգն օթևանս:

Լաւ էր նմա թէ չէր ծնեալ:

3. Ստորադասական եղանակը գործ է ածւում այն խօսքի մէջ, ուր մի որ և իցէ պայման կայ. բայց որոշ ժամանակ չունենալով, փարւում է երբեմն սահմանական ներկայի, անկատարի, կատարեալի և մինչև անգամ ապառնիի տեղ.

Ճշմարիտ գիտեմ թէ այդ այդպէս իցէ, այսինքն է:

Եւ բազում այն քաջութիւն իցէ, վասնորոյ առեալ իցէ և պարգևս մեծամեծս, այսինքն է:

Ո՞ւր իցեն որ գեհենին չհաւատայցեն, այսինքն չհաւատան:

Զգոյր նիւթ ինչ ուստի առեալ զարարածս կոչեսցէ, այսինքն կոչէր:

4. Ապառնին և ստորադասականը շատ անգամ միմեանց տեղ և հրամայականի տեղն են բանում.

Դու ես որ գալոցն ես, թէ այլում ակն կալցուք, այսինքն ակն ունիցիմք:

Զի փրկեսջիք և հաստատեսջիք ինձ և ի միտ առնուցուք:

Մի՛ դարձուցանէր զերեսս քո և մի՛ դարձուցանիցես զսիրտ քո:

Մի՛ առնէք. մի՛ առնիցուք: Մի՛ արասցէք. մի՛ առնիցէք:

5. Ջիր վերջացած ստորադասական հրամայականը ապառնիի միտք ունենալով—ասջիր, լիջիր, երբեմն հասարակ ապառնի ժամանակի տեղ է փարւում.

Եւ ահա յղասջիր և ծնցես որդի, այսինքն յղասցես:

Դու մանուկ մարգարէ Բարձրելոյն կոչեսջիր, այսինքն կոչեսցես:

Այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասջիր այսինքն գիտասցես:

6. Անկատար ժամանակը ներգործական և կրաւորական բայերում բոլորովին նման են. միայն երկրորդ լծորդութեան կրաւորականի եզակի երրորդ դէմքը իւր էլ է լինում. սիրէր կամ սիրիւր, տեսանէր կամ տեսանիւր:

7. Ներգործական և կրաւորական բայերի կատարեալ ժամանակի յոգնակի երկրորդ դէմքը երկու ձև ունի. Ներգործական բայերում էք կամ իք, որից կազմւում է յոգ. ստորասական հրամայականը, ինչպէս աղացէք կամ աղացիք, աղացի՛ք, սիրեցէք, կամ սիրեցիք, սիրեցի՛ք. Թողէք, կամ Թողիք, Թողի՛ք: Իսկ կրաւորական բայերում այք կամ արուք, որից կազմվում է նոյնպէս յոգ. ստորասական հրամայականը. աղացայք կամ աղացարուք, աղացարո՛ւք. սիրեցայք կամ սիրեցարուք, սիրեցարո՛ւք. Թողայք կամ Թողարուք, Թողարո՛ւք:

# Զ. Դերբայների կազմութիւնը:

## § 104. Դերբայների տեսակները:

Դերբայները երեք են.

1. Անորոշ դերբայը, որ բայի սկզբնական ձեւն է ու ինքն ըստ ինքեան ոչինչ որոշ եղանակ, ժամանակ և դէմք չունի:

2. Անցեալ դերբայը, որ անցեալ ժամանակն է ցոյց տալի, բայց առանց էական բայի դէմք չունի:

3. Ապառնի դերբայը, որ ապառնի ժամանակն է ցոյց տալի, բայց առանց էական բայի դէմք չունի:

Սոքա դերբայ են կոչւում, որովհետեւ բայի մտքով էլ են վարվում, գոյական ու ածական անունների էլ մտքով, իբրեւ բայանուններ, ու նոցա պէս հոլովւում են:

## § 105. Անորոշ դերբայի գործածութիւնը:

Անորոշ դերբայը այլ և այլ մտքով է գործածվում:

1. Դիմաւոր բայի մօտ դրուելով՝ անորոշ դերբայը սահմանական եղանակի ժամանակների տեղ է գործ դրվում, ինչպէս.

Աւէլին որոտումն շինել, այսինքն թէ որոտումն է կամ եղել (ներկ. և կատ.):

Զհայկակ ասեն շինել առ Բելոքոսիւ, այսինքն թէ էր (անկ.):

Ակնարկէին որսակցացն գալ օգնել նոցա, այսինքն զի եկեսցեն և օգնեսցեն նոցա (ապռ.):

Հրամայեաց առ բարեկամսն երթալ և զարմսն գտանել, այսինքն զի երթիցեն և զարմսն գտանիցեն (ստոր.):

2. Անորոշ դերբայը գոյական անուան տեղ էլ բռնում իբ-

րև բայանուն, և հոլովումէ երրորդ հոլովման վրայ, ինչպէս. գիտել, գիտելոյ, գիտելով, չգիտել, 'ի գիտել. տեսանել, տեսանելոյ, տեսանելով, չտեսանել, 'ի տեսանել, 'ի տեսանելոյ, և այլն:

Այս մտքով շատ անգամ

| ասուած է | փոխանակ ասելու |
|---|---|
| շողալ սուսերի, | շողիւն սուսերի. |
| գնային խնդալով, | գնային խնդութեամբ. |
| 'ի գալն իմում, | 'ի գալստեան իմում. |
| լռեաց ի խօսելոյ, | լռեաց ի խօսից. |
| 'ի ծագել արևու, | 'ի ծագումն արևու, |
| լսելով լուիցեն և մի' իմասցին, | լսելեօք լուիցեն: |

3. Անորոշ դերբայը այսպէս հոլոված նախդրիւորական 'ի, առ, առ'ի, ընդ նախդիրներով՝ գործ է ածվում դիմաւոր բայի ժամանակների և այլ և այլ շաղկապների ու մակբայնե-րի տեղ.

'Ի լսել կամ առ 'ի լսել եկեալ եմ, այսինքն թէ լուայց կամ լուիցեմ:

Ոչ առ ասել, այսինքն թէ ասիցեմ:

'Ի տեսանելն զքեզ բերկրեցի, այսինքն յորժամ տեսանիցէ:

Ընդ երևալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա, այսինքն յոր-ժամ երևայր նա:

'Ի դառնալ մեղաւորին կեցցէ, եթէ դարձցի մեղաւորն կեցցէ:

Երբեմն էլ նոյն մտքով ուղղական էլ է մնում անորոշ դերբայը.

Կոչեաց հարցանել, այսինքն առ 'ի հարցանել, թէ հարցանիցէ:

Եկիր կորուսանել, այսինքն 'ի կորուսանել, զի կորուսանիցես:

Եդ զնոսա լուսատու լինել յերկիր, այսինքն առ 'ի լինել, թէ եղիցին, կամ լինիցին:

## § 106. Անցեալ դերբայի գործածութիւնը։

Անցեալ դերբայը հետեւեալ նշանակութիւններով է գործածվում.

1. Անցեալ դերբայը դիմաւոր բայի մօտ դրուելով՝ անորոշ դերբայի գործիականին կամ մօտի բային միտք ունի, ինչպէս.

Ելեալ գնաց. Նստեալ բազմեցաւ. Հայեցեալ ընդ իւր զարմանայք. փախեան զարհուրեալք:

Ելանելով կամ ել և գնաց. Նստանելով կամ նստաւ և բազմեցաւ. Հայելով կամ հայէր և զարմանայք. փախեան զարհուրելով կամ զարհուրեցան:

2. Անցեալ դերբայը երբեմն դիմաւոր բայի ու այլ և այլ շաղկապների և մակբայների տեղ է բռնում.

Տեսի անզգամաց արմատս ձգեալ, այսինքն զի արմատս ձգեալ էին կամ ձգեցին:

Սպանին զՅովաս յԵրուսաղէմ թագաւորեալ ամս քառասուն, այսինքն իբրեւ թագաւորեաց:

Որ մահկանացու ծնեալ, անմահ զիւրն եթող յիշատակ, այսինքն թէպէտ և ծնեալ էր կամ ծնաւ:

3. Անցեալ դերբայը շատ անգամ լինել, եմ էական բայերի հետ գործ ածվում, և ինչ տեսակ բայի դերբայ է, այն բայի նշանակութիւնն է պահում: Եւ որովհետև ներգործական և կրաւորական բայերի անցեալ դերբայը մէկ է, էականով կազմուածն էլ հասարակ բայ է դառնում, այսինքն ներգործական և կրաւորական միանգամայն. բայց աւելի կրաւորականի մտքով է բանում, ինչպէս որ բայերի կարգումը տեսանք:

Լինել բայը սովորաբար ամենայն ժամանակներն է կազմում, իսկ եմը միայն երկու անցեալ ժամանակները՝ վաղակատար և գերակատար:

| | | | |
|---|---|---|---|
| ՍԱՀՄ. | Ներկ. | Սիրեալ լինիմ | սիրուած եմ, սիրված եմ և այլն |
| | | Սիրեալ լինիս | |
| | | Սիրեալ լինի | |
| | | Սիրեալ լինիմք | |
| | | Սիրեալ լինիք | |
| | | Սիրեալ լինին | |
| | Անց. | Սիրեալ լինէի | սիրուած էի, սիրված էի և այլն |
| | | Սիրեալ լինէիր | |
| | | Սիրեալ լինէր | |
| | | Սիրեալ լինէաք | |
| | | Սիրեալ լինէիք | |
| | | Սիրեալ լինէին | |
| | Կատ. | Սիրեալ եղէ | սիրվեցի, սիրուեցայ և այլն |
| | | Սիրեալ եղեր | |
| | | Սիրեալ եղև | |
| | | Սիրեալ եղաք | |
| | | Սիրեալ եղէք | |
| | | Սիրեալ եղեն | |
| | Վաղակատար | Սիրեալ եմ | սիրվել եմ, սիրուել եմ և այլն |
| | | Սիրեալ ես | |
| | | Սիրեալ է | |
| | | Սիրեալ եմք | |
| | | Սիրեալ էք | |
| | | Սիրեալ են | |
| | Գերակատար | Սիրեալ էի | սիրվել էի, սիրուել էի և այլն |
| | | Սիրեալ էիր | |
| | | Սիրեալ էր | |
| | | Սիրեալ էաք | |
| | | Սիրեալ էիք | |
| | | Սիրեալ էին | |
| | Ապ. | Սիրեալ լիցիմ կամ եղէց | կը սիրվիմ, կը սիրուիմ և այլն |
| | | Սիրեալ լիցիս | |
| | | Սիրեալ լիցի | |
| | | Սիրեալ լիցուք | |
| | | Սիրեալ լիջիք | |
| | | Սիրեալ լիցին | |
| ՀՐԱՄ. | — | Սիրեալ լե՛ր | սիրվիր, սիրուիր և այլն |
| | | Մի սիրեալ լինիր | |
| | | Սիրեալ լերո՛ւք, եղերո՛ւք | |
| | | Մի սիրեալ լինիք | |

| | | | |
|---|---|---|---|
| ՍՏՈՐ. | — | Սիրեալ իցեմ կամ լինիցիմ | Թէ -իրեմ, Թէ -իրուիմ և այլն |
| | | Սիրեալ իցես | |
| | | Սիրեալ իցէ | |
| | | Սիրեալ իցեմք | |
| | | Սիրեալ իցէք | |
| | | Սիրեալ իցեն | |

| | | | |
|---|---|---|---|
| ԴԵՐԲԱՅՔ | Աներեւոյթ | Սիրեալ լինել | -իրել, -իրուել |
| | Անցեալ | Սիրեալ լեալ, եղեալ | -իրած, -իրուած |
| | Ապառնի | Սիրեալ լինելոց | -իրելու, -իրուելու: |

Ինչպէս վերևի օրինակից էլ երևում է, յոգնականում սովորաբար անփոփոխ է մնում անցեալ դերբայը, մանաւանդ ներգործականը, իսկ կրաւորականի և չէզոքի մտքով վարուած դերբայները յոգնականում աւելի [illegible] են լինում: Էական բայն էլ դերբայից թէ առաջ և թէ յետոյ է դրվում, կամ բաժանվում է նորանից:

Ոչինչ մահու արժանի է գործեալ դորա:
Հրեշտակք 'ի վերուստ են ձեզ ծառայեալք:
Եղիցի անուն Տեառն օրհնեալ:

Ոչ երբէք հեղգացեալ էաք յարքունի վաստակս և ոչ խառնեալ վատութիւն ընդ արութիւն քաջութեան:

Եղիցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս և ճրագունք լուցեալք:

4. Ամէն տեսակ բայերի անցեալ դերբայները հասարակ ածականի պէս էլ են վարվում, և հոլովվում են երրորդ հոլովման վրայ. եղեալ, եղելոյ, եղելում, եղելով, յեղելոյ, զեղեալ. գնացեալք, գնացելոց, գնացելովք. սիրեալ, սիրելոյ, կամ սիրեցեալ, սիրեցելոյ, սիրեցելում, սիրեցելով, ի սիրեցելոյ, զսիրեցեալ. սիրեցեալք, սիրեցելոց, սիրեցելովք, ի սիրեցելոց, զսիրեցեալս:

5. Այսպէս հոլոված անցեալ դերբայը էլ դերբայ չէ, այլ ածական բայանուն, ու եթէ ներգործականի կամ չէզոքի նշանակութիւնով է բանում, աւելի ող բայածականի միտք ունի, իսկ կրաւորականի նշանակութիւն ունեցողը՝ անցեալ միտք ունի, ինչպէս.

Զոր խորհուրդ՝ խորհեցելոցն յոյժ չար է, այսինքն խորհողին:

Կանանց զաստուածպաշտութիւն յանձն առելոց, այսինքն յանձն առողաց:

Աւնն ճարճատելոյ, այսինքն ճարճատողի:

Վասն բանի հնոց ճչացելոյ, այսինքն ճչացողի:

Դարձան արք Իսրայելի՝ ապստամբելոցն զհետ այլազգեացն, այսինքն ապստամբողացն:

Զկնի եկելոցս, այսինքն եկողացս:

Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է, այսինքն իմացուած, չիմացուած:

Ոտիւք կապելովք, դրօքն փակելովք, այսինքն կապուած, փակուած:

## § 107. Ապառնի դերբայի գործածութիւնը:

Ապառնի դերբայը հետևեալ ձևերով է գործածվում.

1. Բայերի մտքին նայելով՝ ապառնի դերբայը ներգործական, կրաւորականի ու չէզոքի նշանակութիւն ունի, և վարվում է միշտ էական բայի ներկայ, անկատար և ստորադասական ժամանակներով, յետ ու առաջ դասուելով.

| | | Ներգ. և կրաւ. | | Չէզոք | |
|---|---|---|---|---|---|
| ՍԱՀՄ. | Ներկ. | Սիրելոց եմ | սիրելու եմ կամ | Գնալոց եմ | գնալու եմ |
| | | Սիրելոց եմք | սիրելու ենք | Գնալոց եմք | |
| | ԱՆՑ. | Սիրելոց էի | սիրելու էի կամ | Գնալոց էի | գնալու էի |
| | | Սիրելոց էաք | սիրելու էինք | Գնալոց էաք | |
| ՍՏՈՐ. | | Սիրելոց իցեմ | Որ սիրելու եմ կամ | Գնալոց իցեմ | Որ գնալու եմ |
| | | Սիրելոց իցեմք | Որ սիրելու ենք | Գնալոց իցեմք. | |

2. Ապառնի դերբայը յոգնականում գրեթէ միշտ անփոփոխ է մնում, բաց 'ի կրաւորականի ու չէզոքի մտքով վարվողները, որոնք կարող են յոգնակի էլ դրուել.

Արտաքսանալոց էն, կամ էին կամ իցեն:

Անդ էր նաւն զբեռինս Թափելոց:

Մեռանելոց է և յերկիր աւուր յառնելոց:

Երևալոց եմ ես նա, բայց նա ասխս չգալոց:

Որ լսելոցն է՝ լուիցէ, և որ արհամարհելոցն՝ արհամարհեսցէ:

3. Ապառնի դերբայի տեղ գործ են ածվում երբեմն հասանէ, հանդերձիմ, կայ մնայ, առաջի կայ, ունիմ բայերը անորոշ դերբայով.

Հասանէ քեզ մարգարէանալ, այսինքն մարգարէանալոց ես:

Ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել, այսինքն անկանելոց եմք:

Հանդերձեալ ես մեռանել, այսինքն մեռանելոց ես:

Կայ մնայ մարդկան մեռանել, այսինքն մեռանելոց են:

Մնայ քեզ տանջել, այսինքն տանջելոց ես:

Ամենեցուն մեզ յանդիման լինել առաջի կայ ատենին Քրիստոսի, այսինքն յանդիման լինելոց եմք:

Ընդ մօտոյ ունիք տեսանել, այսինքն տեսանելոց էք:

Ունիք պատուհասիլ, ունէր լինել, այսինքն պատուհասելոց էք, լինելոց էր:

4. Ապառնի դերբայը իբրև հասարակ ածական բայանուն էլ է վարվում, միայն նախդրիւ հոլովներում,

Գալոց կամ լինելոց չարեացն:

Զգալոցն կամ զգալոցսն պատմել:

Զլինելոց իրսն գուշակել:

Եղեալքն և լինելոցք, այսինքն եղածները ու լինելիքները:

## § 108. Բայածականներ:

Տեսանք որ անցեալ ու ապառնի դերբայները բայածականի մտքով են վարվում. բայց կան ուրիշ վերջերով բայածականներ, որոնց մէջ աւելի գործածականներն են ող, իչ և չի վերջերովը:

1. Ող կամ օղ բայածականը ամէն բայերում սովորաբար անցեալ կատարեալից է կազմվում, իսկ երկրորդ և երրորդ լծորդութեան բայերում ներկայից էլ. ասաց-ող, եկաց-ող, սիր-ող կամ սիրեց-ող, տուաց-ող կամ տու-ող, գտն-ող, ընկեց-ող:

Ող գործ է դրվում սովորաբար ներգործական ու չեզոք բայերի, երբեմն էլ ներգործականի մէջով բանող հասարակ բայերի տեղ է բանում ու նշանակում է. ուտող, ըմպող, խօսող, խնդացող, հոգացող կամ հոգող, գնացող, եկող և այլն:

Երբեմն էլ ող ունենալ է նշանակում.

Սիրող իմաստութեան, այսինքն որ սէր ունի իմաստութեան:

Այր կերող և արբեցող, այսինքն ուտելու և խմելու բնաւորութիւն ունեցող մարդ:

Ես չեմ խօսող ոք, այսինքն չեղուանի:

2. Իչ ներկայի արմատից է կազմվում և ողի նշանակութիւն ունի. նոյն է ասել փրկող կամ փրկիչ, ստեղծող կամ ստեղծիչ, դատող կամ դատիչ, բնակող կամ բնակիչ: Բայց ող ամէն տեսակ բայերի տեղ է բանում, իսկ իչ աւելի ներգործականների տեղ:

3. Լի վերջացած բայածականը նոյնպէս ներկայի արմատից է կազմվում և կրաւորական բայերի տեղ գործ դրվում, իբրև ապառնի. ասելի (ասուելու), առնելի (առնուելու), տեսանելի (տեսնուելու), հատանելի (կտրուելու):

Իսկ եթէ է էական բայի հետ է, մի բանի կարողութիւն կամ արժանաւորութիւն ունենալ է նշանակում. սիրելի է նշանակում է սիրոյ արժանի է, հատանելի է—կտրուելու կարող է:

Գինի նոր ի տիկս նորս արկանելի է, այսինքն պէտք է արկանել:

Զնոյն գրել առ ձեզ ինձ ոչ ծանծաղելի է, այսինքն չէ պէտք ծանծաղել:

Երբեմն էլ ող բայածականի ու անցեալ դերբայի տեղ է բանում.

Սիրելի (սիրող ու սիրուած), լսելի (լսող ու լսուած):

Առնելիք բանին, այսինքն արարողք բանին:

Լսելիք օրինացն, այսինքն լսողք օրինացն:

# Կ Ր Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

## Ա.

Այս աշխարհքի մեծատուններին պատուիրէ որ չհպարտանան և չյուսան դատարկ մեծութեան վրայ:

Քրիստոս խրատում է մեզ որ միշտ բարիք անենք. օտարներին ժողովենք, մերկերին հագցնենք, հիւանդներին տեսնենք և բանտի մէջ եղողներին տեսութեան երթանք:

Քրիստոս գալու է որ փրկէ կենդանիներին ու մեռածներին:

Հասաւ ժամանակը այգին կտրելու:

Եթէ մէկի հարստութիւնը շատանայ, ախտերն էլ զօրանում են:

Քաղաքացիքը շատ թալկացած էին:

Նոցա աչքերը քնից ծանրացած էին:

Խրատուած որդին խելացի կը լինի:

Արեգակը իր ճառագայթներով լուսաւորում է մթնած օդը:

Շները կերակրւում են իրանց տիրոջ սեղանից թափթփած փշրանքներով:

Երբ էլ լինի, մեռնելու ենք:

Մարգարէները Քրիստոսի համար առաջուց գուշակեցին թէ գալու է և երեք օրից յարութիւն առնելու:

Ամէնքս էլ կանգնելու ենք Քրիստոսի ատենի առաջ:

Ամէնքս էլ հաշիւ տալու ենք Աստուծոյ մեր գործքերի համար:

Մեծատանց որ են յայսմ աշխարհի պատուէր տացիր մի ( ) և մի ( ) ի մեծութիւն անոտի:

Խրատ տայ մեզ Քրիստոս միշտ զբարիս ( ), զօտարս ( ), զմերկս ( ), զհիւանդս, ( ) և բանտարկեալս ( ) ի տես:

Քրիստոս գալ է փրկել (Նախդ. որ.) զկենդանիս և զմեռեալս:

Եհաս ժամանակ յօտել զայգի:

Բազմանալ ընչից ուրուք, զօրանան ախտքն:

Թալկանալ յոյժ էին քաղաքացիքն:

Էին աչք նոցա ծանրանալ ի քնոյ:

Որդի խրատել իմաստուն լիցի:

Արեգակն ճառագայթիւք իւրովք լուսաւորէ զօդս խաւարել:

Շունք կերակրին ի փշրանաց անկանել ի սեղանոյ տեառն իւրեանց:

Երբ և իցէ մեռանել եմք:

Մարգարէք յառաջագոյն գուշակեցին վասն Քրիստոսի, թէ գալ է և յերիր աւուր յառնել:

Ամենեքին մեք կալ եմք առաջի ատենին Քրիստոսի, կամ Ամենեցուն մեզ յանդիման լինել առաջի կալ ատենին Քրիստոսի:

Ամենեքին մեք համարս ունել տալ Աստուծոյ վասն գործոց մերոց:

## Բ.

Պատմաբանները ոչ միայն անցեալ ու ներկայ բաների վրայ են խօսում, այլև գալիքը գուշակում են:

Սուրբ Գրիգորը Հայոց երկրորդ լուսաւորիչն էր Թադէոս ու Բարդուղիմէոս առաքեալներից յետոյ:

Պատմել ոչ միայն անցեալ և զներկայ իրաց խօսին, այլ և գալ գուշակեն:

Սուրբն Գրիգոր է երկրորդ լուսաւորիչ Հայոց զկնի առաքեալ Թադէոսի և Բարդուղիմէոսի:

Բարկացող մարդու ընկեր մի դառնար: | Մի լինիր ընկեր առն բարկացողի:

Ուտող ու խմող մարդը ամենևին չէ զանազանվում անասունից: | Այր ուտել և ըմպել ոչինչ ընդհատ է յանասնոյ:

Միաբանութիւնը լաւութիւնների մայր է, անմիաբանութիւնը չարութիւններ առաջ բերող է: | Զուգութիւն է մայր բարեաց, անզուգութիւն ծնանել չարեաց:

Յուդան եղաւ Յիսուսին բռնողների առաջնորդը: | Յուդայ եղև առաջնորդ ըմբռնողացն Քրիստոսի:

Աստուած ոչ ոքին չէ բանադատում, այլ կամեցողների ապաշխարութիւնը ընդունում է: | Աստուած չբանադատէ և ոչ զոք այլ (զ) կամելով ախորժէ զապաշխարութիւն:

Ամբարտաւանութիւնը ատելի է Աստուծոյ և մարդոյ: | Ամբարտաւանութիւն ատելի է Աստուծոյ և մարդկան:

Սառը ջուրը ծարաւ մարդուն դուր է գալիս | Ջուր ցուրտ անձին ծարաւոյ ախորժելի է:

Կաթ ուտող երեխան որ ուրիշ կերակուր ցանկայ, պատժելու արժանի չէ, այլ ծեծելու արժանի: | Մանուկ կաթնակեր, որ ինչ յայլ կերակուր մտաբերիցէ, ոչ պատժել է, այլ ինչ խրատել:

Ամէն ծառ, որ լաւ պտուղ չէ բերում, կտրելու ու կրակը գցելու արժանի է: | Ամենայն ծառ, որ ոչ առնէ պտուղ բարի, հատանել է և ի հուր արկանել:

---

# Է. Նախդիրների կազմութիւնը:

## § 199 Նախդիրների զանազանութիւնը մակբայներից:

Նախդիրները կամ նախադրութիւնները ցոյց են տալիս առարկաների մէջ եղած յարաբերութիւնը (§ 54), երբեմն էլ գործողութեան ուղղութիւնը: Զոր օրինակ, այս խօսքի մէջ. եկամ 'ի պարտէզ. 'ի նախդիրը ցոյց է տալիս երթալու գործողութեան ուղղութիւնը—դէպ 'ի պարտէզ: Բայց մակբայներն էլ ցոյց են տալիս գործողութեան ուղղութիւնը, ինչպէս. եկամ տուն, գամ տուն: Սորանից երևում է որ նախդիրները ու մակբայները միևնոյն նշանակութիւնը ունին. բայց նորանով են զանազանվում մակբայներից, որ նախդիրները միշտ մի որևիցէ անուան ու դերանուան մօտ են լինում: Այս պատճառով շատ

անգամ մի և նոյն բառը գործ է ածվում թէ իբրև մակ-բայ և թէ իբրև նախդիր: Այսպէս, այս խօսքի մէջ. Ճաշմանէն յառաջ չեմ երթայ. յառաջ բառը ցոյց է տալի անցի ժամանակը, ու պատասխանում է այս հարցման — ե՞րբ, և մակբայ է. իսկ եթէ ասենք. Ճաշմանէն յառաջ չեմ երթայ դրանն. յառաջ նախադրութիւն է, որովհետև ցոյց է տալի դրան գոյականի ու չեմ բայի մէջ եղած յարաբերութիւնը, և սեռական հոլովով բառ է առել:

## § 110. Նախդիրների բաժանումը ըստ նշանակութեան և ըստ կազմութեան:

Ըստ նշանակութեան նախդիրները լինում են.

1. Հոլովակերտ՝ այսինքն հոլով կազմող, որ են. զ, ի, ց, յ, առ, ընդ, ըստ:

2. Հոլովառու՝ այսինքն հոլով առնող. վասն սիրոյ, 'ի ծննդ-եան վերայ և այլն:

Նախադրութեան մօտի հոլովը կոչվում է նախադրութեան խնդիր:

Ըստ կազմութեան նախադրութիւնները լինում են.

1. Պարզ՝ որոնք կամ բուն արմատական նախդիրներ են, ինչպէս. ի, ց, յ, առ, ընդ, ըստ, վասն և այլն, և կամ անուններից առնուած են անփոփոխ կամ հոլոված. դէմ, ներքոյ, վեր, չափ, ընդէմ, զօրէն:

2. Բարդ նախադրութիւններ. առ — անդ, յայս — կոյս:

Բարդ նախադրութիւնները կազմվում են.

1) Նախադրութիւնից և անունից. ընդ — դէմ, առ — աջի:

2) Դերանունից և անունից. յայս — կոյս, յայն — կոյս:

3) Երկու անունից. 'ի վեր կոյս, յառաջ կոյս:

## § 111. Նախդիրների գործածութիւնը։

### Ա. Հոլովակերտ նախդիրներ։

Զ.

1. Զ նախդիրը շատ անգամ դրվում է բացառականի վերայ և կոչվում է «զ նախդրիւ բացառական», որ նշանակում է վրայ կամ համար, երբեմն էլ նոյն մտքով բացառական է թարգմանվում.

| | |
|---|---|
| Լսել զնմանէ, խորհել զձէնջ, խօսել զթռչնոց. | Լսել նորա վրայ, մտածել ձեզ վրայ, խօսել թռչունների վրայ։ |
| Տրտնջել զքէն, քրթմնջել զինէն. | Գանգատել քո վրայ, մռմռալ իմ վրայ։ |
| Բերէին համբաւ չար զՅովսէփայ. | Վատ լուր էին բերում Յովսէփի վրայ։ |
| Կարծել զումեքէ, յիշել զումեքէ. | Կարծել, յիշել մէկի վրայ։ |
| Յորդէր բանն զնմանէ. | Խօսքը շատանում էր նորա վրայ կամ նորա մասին։ |
| Առաքել զջրոյ, զցորենոյ. | Ջրի համար, ցորենի համար ուղարկել։ |
| Գային հասանէին կոչնականք զմեծէն Սահակայ. | Գալիս հասնում էին մեծ Սահակի համար հրաւիրողներ։ |
| Կախել զծառոյն, զփայտէ. | Ծառից, փայտից կամ փայտի վրայ կախել։ |
| Ունել զլեզուէ նորա. | Նորա լեզուից բռնել։ |
| Բուռն հարկանել զնմանէ. | Նորան բռնել։ |
| Կախել զեղջերացն. | Եղջիւրներից կամ եղջիւրների վրայ կախել։ |
| Կապել զորթոյ. | Որթի վրայ կամ որթից կապել։ |

2. Գործիականի վրայ դրուելով «զ նախդրիւ գործիական» է ասվում և նշանակում է շուրջը, չորս կողմը կամ նոյն մտքով վրան. երբեմն էլ անորոշ ժամանակ է ցոյց տալի.

Զտամբ, զգլխով, զինև, զնովաւ, Տան, գլխու, իմ, նորա, քաղաքի,

| | |
|---|---|
| զքաղաքաւ, զգետով, զեկեղեցեաւ. | գետի, եկեղեցու շուրջը կամ բոլորը։ |
| Քօղ արկանել զերեսօք լուրովք. | Երեսի վրայ քօղ ծածկել։ |
| Արկանել զիւրեւ, զանձամբ ձորձս. | Իր վրայ շոր հագնել։ |
| Ամենայն պակասութիւնք քո զինեւ. | Քո ամէն պակասութիւնները իմ վրայ։ |
| Զբազում իմիք զբաղել. | Շատ բանով պարապել։ |
| Զմիմեամբք դիզանել. | Մէկզմէկու վրայ դիզուիլ։ |
| Ծիծաղին զինեւ, այպանեն զբանիւք նորա. | Իմ վրայ ծիծաղում են, նորա խօսքերի վրայ ծաղրում են։ |
| Զսրով երթալ, վազել զգետով, զբազմութեամբ մարդկան. | Սրի վրայ երթալ, գետի, բազմութեան վրայից թռչել։ |
| Զմիով տեղեաւ համագունդ զզօրսն գումարել. | Մէկ տեղում բոլոր զօրքը միասին հաւաքել։ |
| Զհասարակ կամ զմէջ գիշերաւ, զմիջաւուրբն, զինն ժամաւն, զայնու ժամանակաւ. | Կէս գիշերուայ մօտ, կէս օրուայ մօտ, ինն ժամի մօտ կամ ժամանակները, այն ժամանակները։ |

Երբեմն էլ բացառական կամ նախդրիւ սրական է թարգմանվում.

| | |
|---|---|
| Գերազանցել զամենեքումբք. | Ամէնքից բարձր լինել։ |
| Անցանել, զանցանել զիւիք. | Մէկ բանից անցնել։ |
| Անցանել զօրինօք, զհրամանաւն. | Օրէնքից, հրամանից անցնել։ |
| Սպառնալիք մահուանն անցին զնոքօք. | Մահուան վախը անցաւ նորանցից։ |
| Զմտաւ ածել. | Միտք բերել։ |
| Ածել զիւրեւ, զալ զնովաւ. | Իրան քաշել, խելքը միտքը նրան տալ։ |
| Զձեռօք ածել զայրն. | Մարդուն ձեռք բերել։ |
| Զգրովք գալ, զանձամբ գալ. | Գրքերի ետեւից լինել, ինքն իրան հոգալ։ |

3. Հարկանել, զարկանել բայերի հետ զ տրականի վրայ էլ է դրվում.

| | |
|---|---|
| Հարկանել, զարկանել զքարի, զգետնի. | Քարին, գետնին խփել։ |

| | |
|---|---|
| Ծափ զծափի հարկանել. | Ծափ ծափի խփել։ |
| Զահի հարկանիլ, զամօթի հարկանիլ, զդողի կամ զդողանի հարկանիլ. | Վախենալ, ամաչել, դողալ։ |

## Ի, Յ.

1. Ի, յ, բացառականի վրայ դրուելով՝ երբեմն գործիական է թարգմանւում.

| | |
|---|---|
| Փոքր յանձնէ, տկար յոտից | Մարմնով փոքր, ոտքով տկար։ |
| Ի բանից զնոյն պատմել. | Խօսքով նոյնը պատմել։ |
| Յարուեստէ բժիշկ, անարգ յազգէ. | Արուեստով բժիշկ, ազգով ստոր։ |
| Յականէ յանուանէ ճանաչել. | Երեսով անունով ճանաչել։ |

2. Ի, յ վերջահոլով տրականի վրայ է դրվում այն հոլովմանց բառերում, որոնց վերջահոլով տրականը բացառականի նման չէ, և կոչվում է նախդրիւ վերջահոլով տրական: Նախդրիւ վերջահոլով տրականի նշանակութիւնն է մէջ.

| | |
|---|---|
| Յաղբեր, ի սերման, յայրի ի զարդու, յազգի, ի Նեղութեան, յանձին իմում, յաւուր յայնմիկ։ | Աղբրի մէջ, հունտի մէջ, քարայրի մէջ, զարդի մէջ, ազգի մէջ, Նեղութեան մէջ, իմ անձի մէջ, այն օրուան օրը։ |
| Ի չափու ունել. | Չափի մէջ պահել։ |
| Վաղիւ ի սոյն կամ ի սմին ժամու. | Վաղը այս ժամին։ |
| Բևեռել ի խաչի, բարձրանալ ի խաչին. | Խաչի վրայ մեխել, խաչի վրայ բարձրանալ։ |
| Զգտանեմ ինչ վնաս յառնս յայսմիկ. | Այս մարդու մէջ մի յանցանք չեմ գտնում։ |
| Յիս, ի մեզ, ի քեզ, ի ձեզ, յինքեան, յումեմն կամ յումեք ի նմա. | Իմ մէջ, մեր մէջ, քո մէջ, ձեր մէջ, իր մէջ, մէկի մէջ, նորա մէջ։ |
| Ի թևի, ի թղթի, ի մարմնի ի գրի ի գբի, ի ծոցի, ի պատժի յամանի*. | Թևի մէջ, թղթի մէջ, մարմնի մէջ, գրի մէջ, փոսի մէջ, ծոցի մէջ, պատժի մէջ, ամանի մէջ։ |

---

* Այս բառերի հոլովումը երկրորդից առաջինի փոխուելով, Նախդրիւ վերջահոլով տրական էլ գործ են ածվում:

| | |
|---|---|
| Ի մարդում, ի տարւոջ, ի տեղւոջ. | Մարդու մէջ, տարուան մէջ, տեղի մէջ կամ տեղում։ |

2. Այն հոլովումներում՝ ուր վերջահոլով տրականը բացառականի նման է, եզակի նախդրիւ տրականը, ինչպէս նաև բոլոր հոլովումների յոգնակի նախդ. տրակ. ի մէջ բառի էլ միտք ունի.

| | |
|---|---|
| Ի քուն, ի ջուրն, ի ծոց իւր, յոգի իւր, ի գիրս յայսմիկ, ի մարդն. | Քնոյ մէջ, ջրի մէջ, իր ծոցի մէջ, իր հոգու մէջ, այս գրքի մէջ, մարդուն մէջ։ |
| Յաստեղս, ի թուղթս, յազգս, յայրս, յանձինս, ի ձիթենիս, ի նեղութիւնս. | Աստղերի մէջ, թղթերի մէջ, ազգերի մէջ, քարայրերի մէջ, անձերի մէջ, ձիթենիների մէջ, նեղութիւնների մէջ։ |

Երբեմն էլ նախդրիւ տրականը մէջ ի նշանակութիւնով է վարվում ամենայն հոլովումներում.

| | |
|---|---|
| Ի տան, ի տաճար, ի սիրտ, յայր յայլ, ի ժողովուրդ օտար, յօտար երկրի, յամենայն ժամ. | Տան մէջ, տաճարի մէջ, սրտի մէջ, ուրիշ մարդու մէջ, օտար ժողովրդի մէջ, օտար երկրում, ամենայն ժամում։ |

## Ց.

Ց միայն նախդրիւ տրականի վրայ է դրվում, և եթէ շնչաւորների համար ասած է, պարզ նախդրիւ տրականի միտք ունի. իսկ եթէ անշունչ առարկաների համար՝ նշանակում է մինչև.

| | |
|---|---|
| Ցարքայ, ցծերս, ցիս, ցնա, ցնոսա. | Դէպ ի թագաւորը կամ թագաւորին, ծերերին, ինձ, նրան, նոցա։ |
| Ինքն ցինքն ասել. | Ինքն իրան ասել։ |
| Ցայդ վայր, ցերեկոյ, ցաւուրսն ցայսօրիկ. | Մինչև այդ տեղը, մինչև իրիկուն, մինչև այն օրերը։ |
| Ցերբ փորձես, ցերբ է այդ։ | Մինչև երբ պէտք է փորձես, մինչև երբ է այդ։ |
| Ուտել ցյագ, ցարբենալ։ | Կշտանալու չափ ուտել, հարբելու չափ։ |

## ԱՌ, ԱՌ՛Ի.

1. Առ նախդրիւ տրականի հետ, եթէ շնչաւոր առարկահամար ասած է, սովորաբար պարզ նախդրիւ տրականի միտք ունի, իսկ եթէ անշունչների համար՝ նշանակում է մօտ. երբեմն էլ երկուսի վրայ դրուելով՝ այլ և այլ միտք ունի.

| | |
|---|---|
| Առ Աստուած, առ մարդ, առ թագաւորն. | Դէպ ի Աստուած կամ Աստուծոյ, մարդու, թագաւորին։ |
| Առ ոք, առ իս, առ քեզ, առ ինքն, առ նա, առ մեզ, առ ձեզ, առ ինքեանս, առ ոմանս. | Դէպի մէկը, մէկին, ինձ, քեզ, իրան, նորան, մեզ, ձեզ, իրանց, ոմանց։ |
| Երթալ առ արքայ, առ այս անուն. | Երթալ դէպ ի թագաւորը, կամ թագաւորին, այս անունով մէկին։ |
| Դնել առ որմ, նստել առ դուրս, առ եզր կամ առ ափն գետոյն. | Պատի մօտ դնել, դրան մօտ նստել, գետի եզերքին մօտ։ |
| Որպէս լոյս առ խաւար. | Ինչպէս լոյսը խաւարի մօտ։ |
| Առ ոչինչ գրել. | Բանի տեղ չդնել։ |
| Առ յանցանս ունել. | Յանցանքի տեղ դնել։ |
| Առ լաւ, առ աւագս, առ սուտս ունել. | Լաւի տեղ, մեծի տեղ, ստախօսի տեղ դնել։ |
| Առ սէր ընչիցն, առ ի խրատ, առ յուղղութիւն. | Ստացուածքի սիրուն համար, խրատի համար, ուղղելու համար։ |
| Հեզգ առ ի յուսումն, արագ առ ի խօսել, ծանր առ ի լսել. | Ուսման ծոյլ, լսելու արագ, խօսելու ծանր։ |

2. Առ —ի վերջաւորով տրականի հետ՝ նշանակում է համար, երբեմն էլ մօտ, եթէ խօսքը անշունչ առարկաների վրայ է, իսկ եթէ շնչաւորների վրայ՝ միայն մօտ կամ առաջը.

| | |
|---|---|
| Առ ահի, առ ամօթոյ, առ վշտին, առ չարութեան. | Վախի համար, ամօթի համար, ցաւին համար, չարութեան համար։ |
| Առ ի տգիտութեան, առ ի թիւրելոյ զիրաւունս, առ ի կատարելոյ. | Տգիտութեան համար, իրաւունքը ծռելու համար, կատարելու համար։ |

| | |
|---|---|
| Կային առ խաչին. առ մեզ ագիր. | Խաչին մօտ կանգնած էին. մեզ մօտ մնացիր։ |
| Առ արքային, առ դատողին, առ քեզ, առ նմա, առ մարդկան. | Թագաւորին մօտ կամ առաջը, դատաւորին մօտ, քո մօտ, նորա մօտ, մարդոց մօտ։ |

3. Գործիականի հետ առ սովորաբար մօտ է նշանակում, եթէ անշունչ առարկայի վրայ է խօսքը, և ժամանակ՝ եթէ շնչաւորի վրայ.

| | |
|---|---|
| Առ լերամբն, առ եզերբ կամ ափամբ գետոյն, առ ճանապարհաւ. | Լերան մօտ, գետի ափի մօտ, ճանապարհի մօտ կամ վրայ։ |
| Զի՞նչ է յարդ առ ցորենով. | Ի՞նչ է յարդը ցորենի մօտ։ |
| Առ Հայկաւ, առ Նոյիւ, առ Տիգրանաւ. | Հայկի ժամանակ, Նոյի ժամանակ, Տիգրանի ժամանակ։ |
| Առ Ջրհեղեղաւ, առ այնու ժամանակաւ. | Ջրհեղեղի ժամանակ, այն ժամանակը։ |
| Առ կենդանութեամբ առն իւրոյ. | Իր մարդու կենդանութեան ժամանակ։ |

4. Առ 'ի բացառականի հետ սովորաբար պարզ բացառականի նշանակութիւն ունի, երբեմն էլ նշանակում է համար.

| | |
|---|---|
| Առ ի մարդկանէ, առ ի յԱստուծոյ, առ ի յօրինաց, առ ի քէն. | Մարդկերանցից, Աստուածանից՝ օրէնքներից, քեզնից։ |
| Առ ի հօրէ, առ ի մօրէ. | Հօրից, մօրից։ |
| Խօսեցի առ ի քէն ընդ ժողովրդեանն. | Կը խօսի քեզնից կամ քու կողմից ժողովրդի հետ։ |
| Առ առակէ, առ երկիւղէ, առ հարկէ. | Խաղքութեան համար, վախի համար, հարկի համար։ |
| Առ ի յանցանաց, առ ի յիշատակէ, առ ի չգոյէ. | Ցանցանքի համար, յիշատակի համար, չլինելու համար։ |

## ԸՆԴ.

1. Սեռականի հետ՝ ընդ նշանակում է տեղը, երբեմն համար.

| | |
|---|---|
| Ընդ իմ և ընդ քո. | Իմ տեղը ու քո տեղը։ |

| | |
|---|---|
| Ակն ընդական, ատամն ընդ ատաման. | Աչքի տեղ աչք, ատամի տեղ ատամ։ |
| Թագաւորեաց որդի նորա ընդ նորա. | Թագաւորեց նորա տեղը որդին։ |
| Ընդ ամենայն դատարկ բանի համարս տալ. | Ամէն դատարկ խօսքի համար հաշիւ տալ։ |
| Մատո պատարագ ընդ անձին և ընդ ժողովրդեանն. | Քո անձին և ժողովրդեանը համար պատարագ արա։ |

2. Վերջահոլով տրականի հետ ընդ նշանակում է հետ.

| | |
|---|---|
| Ընդ իմ, ընդ ումեք, ընդ քեզ, ընդ նմա, ընդ մարդկան, ընդ հրեշտակաց. | Ո՞ւմ հետ, մէկի հետ, քեզ հետ, նրա հետ, մարդոց հետ, հրեշտակների հետ։ |

3. Նախդրիւ տրականի հետ՝ ընդ նշանակում է դէպ ի, հետ, մէջ. երբեմն էլ բացառական ու գործիական հոլովներով է թարգմանվում.

| | |
|---|---|
| Ընդ արքայ, ընդ մարդ, ընդ ոք, ընդ հրեշտակս, ընդ միմեանս, ընդ ձեզ, ընդ նոսա. | Թագաւորին կամ դէպ ի թագաւորը, դէպ ի մարդ, դէպ ի մէկը, դէպ ի հրեշտակները, կամ հրեշտակների հետ, մէկմէկու հետ, ձեզ հետ, նոցա հետ։ |
| Նախանձել ընդ Յովսէփ. | Յովսէփին նախանձել։ |
| Ընդ երեսս դաշտին. | Դաշտին երեսը։ |
| Ընդ այն ժամանակս, ընդ աւուրսն ընդ այնոսիկ. | Այն ժամանակները, այն օրերը։ |
| Ընդ արևելս, ընդ երկինս. | Դէպ ի արևելք, դէպ ի երկինք։ |
| Ընդ ամս տասն. | Տասը տարուան մէջ, կամ տասը տարի ամբողջ։ |
| Ընդ սակաւ աւուրս եկին. | Քիչ օրուան մէջ եկան։ |
| Ասել ընդ միտս, ծիծաղել ընդ միտս. | Մտքում ասել, ծիծաղել։ |
| Ընդ թիւ մտանել. | Թուի մէջ մտնել (թուի տակ ընկնել) |
| Ընդ քիրտն մտանել. | Քրտինքի մէջ ընկնել։ |
| Գնալ ընդ ցամաք, ընդ ծով. | Ցամաքէն երթալ, ծովով երթալ։ |
| Մտանել ընդ դուռն, ընդ բերան. | Դռնից մտնել, բերնից կամ բերնով մտնել։ |

4. Գործիականի հետ նշանակում է **տակ**.

| | |
|---|---|
| Ընդ հողով, ընդ ծառով, ընդ ձեռամբ, ընդ իշխանութեամբ, ընդ գրուանաւ, ընդ ինև, ընդ մեօք. ընդ ինքեամբ. | Հողի տակը, ծառի տակը, ձեռքի տակը, իշխանութեան տակը, ամանի տակը, իմ տակը, մեր տակը, իր տակը։ |

5. Բացառականի հետ պարզ բացառականի միտք ունի.

| | |
|---|---|
| Ընդ աջմէ, ընդ ահեկէ. | Աջ կողմից, ձախ կողմից կամ կողմում։ |
| Ընդ հարաւոյ կամ ընդ արևելից կողմանէ, ընդ գեղջն կողմանէ. | Հարաւի կամ արևելքի կողմից, գիւղի կողմից։ |

ԸՍՏ.

1. Վերջահոլով ու նախդրիւ տրականի հետ **ըստ** նշանակում է **պէս** կամ **նման**, **չափ**.

| | |
|---|---|
| Ըստ բանի քում, ըստ գործոց քոց. | Քո խօսքի պէս, քո գործերի պէս կամ համեմատ։ |
| Ըստ քեզ, ըստ մեզ, ըստ իս, ըստ ազգս, ըստ լեզուս. | Քեզ, մեզ, ինձպէս կամ նման մտածելով, ազգերի, լեզուների պէս, չափ։ |
| Ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան. | Մեր դէմքի ու կերպարանքի պէս, նման։ |
| Սիրել ըստ անձին. | Իր անձին չափ սիրել։ |
| Ըստ կազդուրել մանկանց. | Մանուկների զօրանալուն չափ։ |
| Ըստ աճել հասակին. | Հասակը աճելու չափ։ |

Շարժմունք ցոյց տուող բայերի հետ բացառականով է թարգմանվում.

| | |
|---|---|
| Անցանել ըստ չափ, ըստ սահման, ըստ երդումն. | Չափից, սահմանից, երդումից դուրս գալ. |
| Ելանել ըստ հրաման, ըստ դուռն. | Հրամանից, դռնից դուրս գալ։ |
| Ըստ ակն անկանել. | Աչքից կորչել։ |

2. Բացառականի հետ սովորաբար նշանակում է **ետեւից**.

| | |
|---|---|
| Ըստ նմանէ, ըստ նոցանէ. | Նորա ետևից, նոցա ետևից։ |

| | |
|---|---|
| Այր ընդ առնէ, մի ընդ միոջէ. | Մարդ մարդու հետևից, մէկը միւսի հետևից։ |
| Օր ընդ օրէ, ամ ընդ ամէ. | Օրէցօր, տարուէ տարի։ |

## Բ. Հոլովառու նախադրութիւններ։

### Նախադասք.

Իբրև, որպէս, քան ամենայն հոլովներով խնդիր են առնում.

| | |
|---|---|
| Իբրև մարդ, մարդոյ, մարդով, ի մարդ. | Ինչպէս մարդ, մարդու, մարդով, մարդը։ |
| Որպէս հուր, հրոյ, հրով, ի հուր, ի հրոյ. | Ինչպէս կրակ, կրակի, կրակով, կրակը, կրակից։ |
| Քան Աստուած, Աստուծոյ, Աստուծով, զԱստուած, յԱստուծոյ. | Քան Աստուած, Աստուծու, Աստուծով, Աստուածը, Աստուծուց. |
| Ծառայել իբրև Աստուծոյ և ոչ իբրև մարդկան. | Ծառայել ինչպէս Աստուծոյ և ոչ ինչպէս մարդու։ |
| Զգերարտօսրն իբրև յաղբերականց հոսէին յաչաց իւրեանց. | Արտասուքը ինչպէս աղբերներից թափում էին իրանց աչքերից։ |
| Որպէս ի ծովու ալեկոծիմք. | Ինչպէս ծովի մէջ ալեկոծում ենք։ |
| Գրել բանս զայրագինս իբր առ ատելիս և առ անպիտանս։ | Ծանր խօսքեր գրել, ինչպէս ատելի և անպիտան մարդոց։ |
| Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք. | Լաւ է աչքով կոյր լինել քան մտքով։ |
| Վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի. | Երեք հարիւր դահեկանից աւելի ծախել։ |

Մինչ, մինչև նախդրիւ տրական են առնում.

| | |
|---|---|
| Մինչ ի գետին, մինչև յերկինս, մինչև ի մահ. | Մինչև գետին, մինչև երկինքը, մինչև մահը։ |
| Ցայգուէ մինչև ցերեկոյ. | Առաւօտից մինչև իրիկուն։ |
| Ցերկրէ մինչև յերկինս. | Երկրից մինչև երկինքը։ |
| Ի ծովէ մինչև ի ծով. | Մէկ ծովից մինչև միւս ծովը։ |
| Ի մեծամեծաց մինչև ցփոքունս. | Մեծերից մինչև փոքրերը։ |

Յետ, առանց, Թարց առնումեն սեռական հոլով.

| | |
|---|---|
| Յետ այսորիկ, յետ մահու, յետ սակաւ միոյ. | Սորանից յետոյ, մահից յետոյ, փոքր ժամանակից յետոյ։ |
| Առանց իմ, առանց մեղաց, թարց հրամանի. | Առանց ինձ, առանց մեղքի, առանց հրամանի։ |

Բաց կամ բայց, բայց միայն, զատ առնում են բացառական հոլով.

| | |
|---|---|
| Բաց յինէն, բայց ի քէն. | Բաց ի ինձնից, բաց ի քեզնից։ |
| Բաց միայն կամ բայց միայն յարքայէ. | Բաց ի թագաւորից։ |
| Զատ ի մօրէ. | Մօրից ծածուկ։ |

Գեր, գերդ առնումեն հայցական հոլով.

| | |
|---|---|
| Գեր զբազումս. գեր զհռչակեալսն քերթողաց Հոմերոս. | Շատերից բարձր. անուանի Հոմերոս բանաստեղծից բարձր։ |
| Գերդ զապակի, գերդ զջուր. | Ապակիի նման, ջրի պէս։ |

## Յետադասք.

Չափ առնումէ գործիական հոլով, երբեմն էլ սեռական.

| | |
|---|---|
| Ոգւով չափ սիրել. | Իր հոգու չափ կամ պէս սիրել։ |
| Ձեօք չափ, մահու չափ. | Ձեզ չափ, մեռնելու չափ կամ մինչև մահ։ |
| Արեամբ չափ, հարիւր արանց չափ. | Արիւն թափելու չափ, հարիւր մարդու չափ։ |

Կողմն, կոյս առնում են նախդրիւ հայցական.

| | |
|---|---|
| Ի կինն կողմն, յարևելս կողմն. | Կնոջ կողմը, դէպ ի արևելք։ |
| Ի թիկունս կոյս, ի սեղանն կոյս. | Թիկունքի կողմը, սեղանի կողմը։ |

Հետէ առնումէ բացառական.

| | |
|---|---|
| Ի սկզբանէ հետէ, յԱդամայ հետէ. | Սկզբից, Ադամի ժամանակներից։ |
| Ի հնոց ժամանակաց հետէ, ի նախնեաց հետէ. | Հին ժամանակներից, նախնիների ժամանակից։ |

## Նախադասք և յետադասք.

Խնդիրներից առաջ ու յետոյ դրուող նախադրութիւնների մեծ մասը սեռական հոլով են առնում.

| | |
|---|---|
| Վասն էր, էր վասն, վասն սիրոյ, օրինակի վասն. | Ինչի համար, սիրոյ համար, օրինակի համար։ |
| Սակս ձեր, ի ձեր սակս. | Ձեզ համար։ |
| Քո պէս, պէս գունակ Տրդատայ. | Քո պէս, Տրդատի պէս։ |
| Գունակ սորին, շանց գունակ. | Սրա պէս, շների պէս։ |
| Ընթեր խաչին, ո՞յր ընթեր, առ ո՞յր ընթեր. | Խաչի կողքին, ո՞ւմ կողքին։ |
| Փոխան սիրոյ, մեր փոխան. | Սիրոյ տեղը, մեր տեղը։ |
| Փոխանակ ընդ բարւոյ, նորա փոխանակ. | Լաւութեան տեղը, նրա տեղը։ |
| Արտաքոյ ժամանակի, Աստուծոյ կամացն արտաքոյ. | Ժամանակից դուրս, Աստուծոյ կամքից դուրս։ |
| Ի ներքոյ երկնից, թզենւոյն ի ներքոյ. | Երկնքի տակ, թզի ծառի տակ։ |
| Առաջի աչաց, իմ իսկ առաջի. | Աչքի առաջը, իմ առաջը։ |
| Ի վերայ աշտանակի, ի ճշմարտութեան վերայ. | Աշտանակի վրայ, ճշմարտութեան վրայ։ |
| Դնել զանձն ի վերայ ուրուք, մեռանել ի վերայ ազգին. | Իր անձը դնել մէկի համար, մեռնել ազգի համար։ |
| Ի ձեռն հաւատոց, ի ձեռն մարգարէի, յոյր ձեռն. | Հաւատքով, մարգարէի ձեռքով, ում ձեռքով։ |
| Զօրէն անասնոց, զօրէն տղայոց. | Անասունի պէս, տղոց պէս։ |
| Գնացին զհետ նորա, ճշմարտութեան գնացին զհետ. | Նորա ետեւից գնացին, ճշմարտութեան ետեւից երթալ։ |
| Զկնի յաղթութեան, չարին զկնի. | Յաղթութիւնից յետոյ, չարութեանը ետեւից։ |
| Յետոյ դրանն, յետուստ խորանին. | Դրանն ետե, խորանի ետեւի կողմը։ |
| Յաղագս առնլոյ և տալոյ. զբօսանաց աղագաւ. | Առնելու ու տալու համար. զբօսանքի համար։ |

| | |
|---|---|
| Ընդդէմ կամ հակառակ կամաց, միմեանց դէմ ընդդէմ. | Կամքի դէմ, մէկմէկու դէմ։ |
| Յանդիման դրախտին, դէմ յանդիման իմ. | Դրախտի առաջը, իմ առաջը։ |
| Յայտ յանդիման բանակին, ակն յանդիման նեղչաց. | Յայտնի բանակի առաջը, նեղութիւն տուողներին աչքի առաջը։ |
| Ի մէջ նաւին, ի մէջ փշոց, ի մէջ ձեր. | Նաւի մէջ, փշերի մէջ, ձեր մէջ։ |
| Դէպ, հանդէպ արեգական, դէպ ուղիղ լուսնոյ. | Արեգակի առաջ, ուղիղ լուսնի առաջ։ |
| Հուպ կամ մերձ մեր, նորա, տան. | Մեր մօտ, նորա մօտ, տան մօտ։ |
| Ճշմարտութեանն մօտ է. | Ճշմարտութեանը մօտ է։ |

Դէպ, հուպ, մերձ, մօտ նախդիրք տրական էլ առնում են.

| | |
|---|---|
| Դէպ ի մեզ, դէպ յօգնական. | Դէպ ի մեզ, դէպ ի օգնողը։ |
| Հուպ կամ մերձ առ նա. | Նորան մօտիկ։ |
| Մօտ ի քաղաքն, մօտ ընդ մուտս արեւուն. | Քաղաքի մօտ, արեւը մտնելուն պէս։ |

Շուրջ, շուրջանակի առնում են և նախդիրք գործիական, երբեմն էլ սեռական.

| | |
|---|---|
| Շուրջ զքաղաքաւն, զտեղեաւն, զպարսպօք. | Քաղաքի, տեղի, պարսպների չորս բոլորը։ |
| Զմեօք շուրջ, զսրահիւն շուրջ. | Մեր շուրջը, սրահի բոլորը։ |
| Շուրջ ծովուն, սեղանոյն շուրջ. | Ծովի շուրջը, սեղանի բոլորը։ |
| Շուրջանակի տաճարին, շուրջանակի զնոքօք. | Տաճարի շուրջը, նոցա շուրջը։ |

Հանդերձ, յառաջ առնում են գործիական, երբեմն էլ սեռական.

| | |
|---|---|
| Հանդերձ մարբն, աշակերտօքն հանդերձ. | Մօր հետ, աշակերտների հետ միասին։ |
| Հանդերձ եղբօրն. | Եղբօր հետ միասին։ |
| Ամաւ յառաջ, երկու աւուրբք յառաջ. | Տարիով առաջ, երկու օրով առաջ։ |
| Քրիստոսի գալստեանն յառաջ էին. | Քրիստոսի գալուց առաջ էին։ |

Ուրոյն, Զէյթուն, Հէթի առնում են Զեյթունցւոց հողը.

Ուրոյն ի նոցանէ, ուրոյն յառաւօտին ողջակիզէն.

Մեկուսի յամբոխէն, հեռի ի տանէ·

Ասպարիզաւ հեռի ի քաղաքէն.

Նոցանից զատ, առաւօտեան ողջակէզից զատ.

Բազմութիւնից զատ կամ հեռու, տնից հեռու.

Մէկ ասպարէզ հեռու քաղաքից.

---

## ԿՐԹՈՒԹԻՒՆ.

### Ա.

Քո եղբօր վրայ վատ մի խօսիր:

Բարի մարդը երբէք քեզ վրայ վատ չէ մտածում:

Անփորձ տղին խրատէ, և նորան բռնած դէպ ի լաւը առաջնորդէ:

Նորան ծառի վրայ կախեցին:

Կիկերոնը այնպէս էր խօսում, ինչպէս որ, որ նորա թշնամիները լռել, ոչինչ չէին ընկնում:

Թշնամիները քաղաքի շուրջը պատ քաշեցին:

Աղքատների ու ծերերի վրայ ծիծաղելուց վատ բան չկայ:

Վահագն ամենքից անցկացաւ իր քաջութիւնով:

Սոկրատը բերանով կամ բերանացի էր ասում իր դասերը:

Քիչ մարդիկ երկար ժամանակ էլ յաջող են:

Նոցանից շատը ուտելով տկար են և գունատուած են պտտում:

Ես նոցա երեսով տեսնելով ճանաչում եմ:

Մինչև ե՞րբ համբերեմ:

Կարելի է ուտել ամէն կերակուր, բայց պէտք չէ խմել հարբելու չափ:

Մի խօսիր չար եղբօր քումմէ:

Այր բարի ոչ երբէք խորհի չար զքեզ:

Խրատեա զմանուկ անփորձ, և կալեալ զնորա առաջնորդեա ի լաւ անդր:

Կախեցին զնա ծառոյ:

Կիկերոն այնպէս խօսէր ինքնին, մինչ զի թշնամիք նորա լռել, ոչ ևս հարկանէին:

Պատեցին թշնամիք զքաղաքն պատնէշ:

Չիք ինչ չար քան զկատակելն զաղքատս և զծերս (զ Նախդր. գործ.):

Վահագն գերազանցեաց ամենեքեան քաջութեամբ իւրով:

Սոկրատ բերան (բաց.) ասէր զդասս իւր:

Սակաւք են երկարատեւ ժամանակ (բաց.) աջողակ:

Բազումք ի նոցանէ տկար են ուտելով և շրջին գունատ (բաց.):

Այն տեսանելով ճանաչեմ զնոսա:

Ե՞րբ համբերիցեմ:

Մարթ է ուտել ամէն, սակայն չէ օրէն ըմպել արբենալ:

### Բ.

Հովիւները ոչխարներին արածում են գետի մօտ:

Հովիւք արածեն զխաշինս առ գետոյն (Նախդր. առ.):

Ուսման ծոյլ աշակերտը ամենքի աչքին ատելի է:

Աշակերտ հեղգ ուսմամբ ատելի է յաչս ամենեցուն:

Ծնողները ամէն հնարք գործ են դնում որդւոց պակասութիւնները ուղղելու համար:

Ծնողք զամենայն հնարս ի կիր արկանեն ուղղել զպակասութիւնս որդւոց:

Հրէաները նախանձի համար խաչեցին Քրիստոսին:

Հրէայք առ նախանձու խաչեցին զՔրիստոս:

Ժողովուրդներից ոմանք կանգնած էին [illegible] մօտ, ուրիշները [illegible] մօտ:

Ոմանք ի ժողովրդոց կային առ [illegible], այլք առ [illegible]:

Տիգրան Առաջինի ժամանակները Մարաց ազգը ընկաւ Հայոց իշխանութեան տակ:

Առ ժամանակաւ Տիգրանայ Առաջնոյ Մարք անկան ընդ իշխանութեամբ Հայոց:

Հայկի ժամանակ մեր երկիրը քիչ մարդ կար:

Առ Հայկաւ աշխարհս մեր սակաւամարդ էր:

Նոյի ժամանակ մեծ ջրհեղեղ եղաւ:

Առ Նոյիւ եղև ջրհեղեղ մեծ:

Ի՞նչ է մարդու կեանքը յաւիտենականութեան մօտ կամ առաջ:

Զի՞նչ են կեանք մարդոյ առ յաւիտենականութեան:

Վասակը ինչ որ ունէր, իր ու ընտանեաց տեղ տուգանք տուեց ու աղքատացաւ:

Վասակ զամենայն զոր ինչ և ունէր ետ ընդ իւր և ընդ ընտանեաց տուգանս և տուժեցաւ:

Թողնենք որ նա խօսի իմ տեղը ու քո տեղը:

Թողցուք զի նա խօսեսցի ընդ իմ և ընդ քո:

Ո՞ւմ հետ ես խօսում: — Ոչ ոքի հետ:

Ընդ ո՞ խօսիս:—Եւ ոչ ընդ ոք.

Ո՞ր կողմն ես նայում:—Դէպ ի արևելք:

Ո՞ր կողմն հայիս:—Ընդ արևելս:

Երկնքի աստղերը չեն կարող թւի տակ ընկնել:

Աստեղք երկնից ոչ կարեն ընդ թիւ մտանել:

Յոյները տասը տարի ամբողջ Տրոյիան պաշարեցին:

Յոյնք ամ տասն պաշարեցին զՏրոյիա:

Արտաշէս Ա. ծով ու ցամաք անցնելով հասաւ մինչև Հելլեսպոնտոս:

Արտաշէս Ա. անցեալ ծով և ցամաք եհաս Հելլեսպոնտոս:

Գնանք նստենք ծառերի հովանու տակ:

Երթիցուք նստել ընդ հովանեաւ ծառոց:

Նստեցէք նորա աջ ու ձախ կողմը:

Նստարուք ընդ աջ և ընդ ձախ նորա:

Աստուած մարդուն ստեղծեց իր պատկերի ու կերպարանքի նման:

Աստուած արար զմարդ ըստ պատկերի իւր և ըստ նմանութեան:

Մի անցնիր չափից, սահմանից դուրս:

Մի անցաներ զչափ, զսահման:

Նորա նեղութիւնները աւելանում են տարուէ տարի, օրէցօր:

Վիշտք նորա յաճախեն ամ ըստ ամ և օր ըստ օր:

## Գ.

Արեգակից պայծառ բան չկայ:

Զիք ինչ պայծառ քան զարեգակն:

Ծովը ցամաքից մեծ է:

Ծովն մեծ է քան զցամաք:

Աստուած մարդու մտքից վեր է:

Աստուած ի վեր է քան զմիտս մարդոյ:

| | |
|---|---|
| Չարախօսները իրանց խօսքովը խոցում են ինչպէս [illegible]: | Արք չարախօսք բանիւք իւրեանց խոցեն որպէս [illegible]: |
| Մեզ հետ խօսում է ինչպէս [illegible] [illegible] հետ: | Խօսի ընդ մեզ իբրև ընդ [illegible] [illegible]: |
| Ամէնքը գովում էին Նորա բարերարութիւնը, մեծից մինչև [illegible]: | Ամենեքին գովէին զբարերարութիւն Նորա, ի մեծամեծաց մինչև [illegible]: |
| Ցաւալի [illegible] [illegible] պէտք է մեռնենք: | Յետ ցաւագին [illegible] կայ մնայ մեզ մահ: |
| Ամէնքը իրանց դասերը գիտեն [illegible] է [illegible]: | Ամենեքեան գիտեն զդասս իւրեանց բայց [illegible]: |
| Աստուած [illegible] հեռու է: | Հեռի է Աստուած [illegible]: |
| Այն աշակերտը [illegible] [illegible] է: | Աշակերտն այն գեր քան [illegible] է: |
| Բարի մարդը [illegible] [illegible] է ատում չարութիւնը: | Այր բարի [illegible] չափ ատէ զչարութիւն: |
| [illegible] կողմը երկինքը պատած է թուխ թուխ ամպերով: | [illegible] կոյս երկինք պատեալ են սևաթուխ ամպովք: |
| Հինգ [illegible] արձանի պէս անշարժ կեցել է մի և նոյն տեղում: | Հինգ [illegible] հետէ արձանացեալ կայ անշարժ ի միում տեղւոջ: |

## Դ.

| | |
|---|---|
| Ամէն ստեղծուած բաները [illegible] համար եղաւ: | Վասն [illegible] ամենայն արարածքս եղեն: |
| Աշխարքս [illegible] համար եղաւ: | Աշխարհս ի [illegible] սակս եղև: |
| Բժշկութիւնը մի արհեստ է մարդու [illegible] համար եղած: | Բժշկութիւնն է արուեստ յաղագս մարդկային [illegible] եղեալ: |
| Մարդու կեանքը [illegible] [illegible] սահում անցնում է: | Կեանք մարդոյ [illegible] պէս սահի անցանէ: |
| Կացիր մնացիր [illegible] [illegible]: | Կաց մնաց առ ընթեր [illegible]: |
| [illegible] [illegible] չար մի հատուցանիր: | Մի հատուցաներ չար փոխանակ [illegible]: |
| Ոչինչ մի անիր Աստուծոյ [illegible] [illegible]: | Մի գործեր ինչ չար Աստուծոյ [illegible] արտաքոյ: |
| Խորուրդը միշտ [illegible] [illegible] մութ տեղեր է պտտում: | Խորուրդ միշտ ի ներքոյ [illegible] ի խաւարին տեղւոջ շրջի: |
| Շատերը մեր պապերից իրանց անձը դրին [illegible] ու [illegible] համար (վրայ): | Բազումք ի Նախնեաց մերոց եդին զանձինս ի վերայ [illegible] և [illegible]: |
| [illegible] [illegible] քարոզուեցաւ Քրիստոսի Աւետարանը: | Ի ձեռն [illegible] քարոզեցաւ Աւետարանն Քրիստոսի: |
| Սուրբ գիրքը խրատում է մեզ [illegible] [illegible] երթալ: | Խրատէն զմեզ սուրբ գիրք [illegible] երթալ զհետ: |
| Մարմինը ցանկանում է [illegible] [illegible], հոգին էլ [illegible] [illegible]: | Մարմին ցանկայ հակառակ [illegible] և հոգի հակառակ [illegible]: |
| [illegible] [illegible] թշնամները բան են դնում | Ի մէջ [illegible] թշնամիք բոյն դնեն, և ի |

և դուրսը մեղմ ձայն են հանում:

ինչ որ ջրի մօտ է, աճում ու կանաչում է:

Ոսկակալութեան ախտը հողին մօտիկ հետ միասին մաշում է:

Շատ նաւեր կղզու բոլորը պտտում են, որովհետև կղզու բոլորը ծով է:

միջոյ կամ տան գծայնս խրխանց:

Աճէ դալարի, որ մերձ է ջուր:

Այս ոսկակալութեան զօղին հանդերձ մօտին մաշէ:

Բազմութիւն նաւաց շուրջ կղզւոյն գան, զի ծով է շուրջ կղզւոյն:

---

# Ը. Մակբայների կազմութիւնը:

## § 112. Մակբայների բաժանումը ըստ նշանակութեան և ըստ կազմութեան.

Ըստ նշանակութեան մակբայները լինում են.

1. Տեղական՝ որ գործողութեան տեղն են ցոյց տալի. աստ, անդ:

2. Ժամանակական — գործողութեան ժամանակը. այժմ, վաղիւ:

3. Որակական — գործողութեան որպիսութիւնը. այսպէս, քաջաբար:

4. Քանակական — գործողութեան քանակութիւնը և թիւը. այդքան, երկիցս:

5. Հարցական — գործողութեան հարցումը. ընդէ՞ր, զիա՞րդ:

6. Հաստատական — գործողութեան հաստատութիւնը կամ հաւանութիւնը. այո՛, յիրաւի:

7. Բացասական — գործողութեան բացասութիւնը կամ արգելումը. ոչ, մի՛:

8. Երկբայական — գործողութեան երկբայութիւնը կամ տարակոյսը. գուցէ, թերևս:

Ըստ կազմութեան մակբայները լինում են.

1. Պարզ արմատական մակբայներ, ինչպէս. այո՛, ոչ, վաղ, արդ:

2. Բարդ մակբայներ. որ — պէս, այս — օր, արտաք — ուստ:

## § 113. Մակբայների կազմութիւնը։

Արմատական մակբայները խիստ քիչ են. նոքա ըստ մեծի մասին կազմվում են.

1. Գոյական և ածական անունների հոլովներից.

1) Սեռական հոլովից.

| | |
|---|---|
| Գիշեր-ի, գիշեր-ոյն, գիշեր-աց. | Գիշերով, գիշերանց։ |
| Վաղ-ու ևս, վաղ-ուց. | Վաղուց։ |
| Այգ-ուն, այգ-ոյն, այգ-ուցն. | Էգուց, էգուց առաւօտ։ |
| Առաւօտ-ու, առաւօտ-ուց. | Առաւօտը, առաւօտեանից։ |
| Ժամ-ու և տարաժամ-ու. | Ժամանակին ու ժամանակից դուրս։ |

2) Գործիական հոլովից.

| | |
|---|---|
| Դիր-աւ, հեշտ-աւ, կենդան-եաւ. | Դիւրին կերպով, հեշտ կերպով, ողջ-ողջ։ |
| Հարկ-աւ, կամ-աւ, բն-աւ. | Հարկաւ, ուզելով, բոլորովին։ |
| Խստ-իւ, ճշդ-իւ, մեղմ-ով, փու-թ-ով, | Խիստ կերպով, ճիշդ կերպով, կամաց, շուտով։ |
| Ողջ-ամբ, բն-աւիմբ (բուն). | Ողջ կամ ողջ առողջ, բոլորին։ |
| Ածիլ առաջ-եաւ կամ զառաջ-եաւ. | Առաջը կանչել։ |

3) Նախդրիւ և վերջահոլով տրականից.

| | |
|---|---|
| Յո՞ կամ յո՛վ երթաս. | Ո՞ւր ես գնում։ |
| Յայսկոյս, յայնկոյս. | Այս կողմը, այն կողմը։ |
| Ի զուր, ի նանիր, ի սպառ. | Զուր, պարապ տեղը, մինչև վերջը։ |
| Յարժան-ի և յիրաւ-ի. | Արժան ու իրաւ։ |
| Յանարժան-ի, յանարժանս. | Անարժան տեղը, անարժան կերպով։ |
| Յաներկիւղ, յաներկիւղս. | Առանց վախի։ |
| Յանզգաստս, յանգէտս, յանկամս. | Առանց զգալու, իմանալու, կամենալու։ |

| | |
|---|---|
| Առ ժամս, առ օր-ին, առ տն-ին. | Այժմ, այն օրը, տան մէջ։ |
| Ընդ առաւօտս, ընդ երեկս. | Առաւօտ, երեկոյեան դէմ. |
| Է՞ր, Ըր էրում, հիմ. | Ինչի, ինչի համար, ինչ բանի համար։ |

4) Հայցական հոլովից.

| | |
|---|---|
| Զցայգ և զցերեկ. | Գիշեր ցերեկ։ |
| Զօրն ի բուն, զգիշերն ի բուն. | Բոլոր օրը, բոլոր գիշերը։ |
| Զառաջինն, զճանապարհայն. | Առաջ, ճանապարհի վրայ։ |
| Զայս օրինակ, զնոյն օրինակ. | Այսպէս, նոյնպէս։ |
| Զնորին հակառակն. | Նորա հակառակ կերպով։ |

5) Բացառական հոլովից.

| | |
|---|---|
| Ցայգուէ, ի տուէ և ի գիշեր-ի. | Առաւօտից, գիշեր ու ցերեկ։ |
| Ի հերուն հետ-է. | Անցեալ տարուանից։ |
| Ի հարկ-է, ի կարճ-ոյ, ի մօտ-ոյ, ի հպ-ոյ | Ի հարկէ, կարճ կերպով, մօտերս, քիչ ժամանակից։ |
| Ի վաղ-ուց, ի վաղ-ուց հետ-է, ի վաղնջինէ հետէ. | Վաղուց։ |
| Ցանզգաստ-ից, յանպատրաստ-ից. | Ցանկարծ, չպատրաստուած։ |
| Առ իմէ՞, զմէ՞, ի մասն-է, յառաջն-մէ. | Ինչի համար, ինչ բանի համար ըստ մասին առաջուց։ |

2. Մի և նոյն անունը կրկնուելով՝ իբրև մակբայ է վարվում, թէ ուղղական և թէ զանազան հոլովներում. սոքա կոչվում են կրկնաւոր մակբայներ.

| | |
|---|---|
| Երամ երամ խաղալ. | Խումբ խումբ երթալ։ |
| Գունդ գունդ հոսել, | Գունդ գունդ վազել։ |
| Բազմել դասք դասք, երախանս, երախանս. | Նստել դաս դաս, խումբ խումբ։ |
| Կայլակք արեան ոլոռն ոլոռն հեղուն. | Արեան կաթիլները կլոր կլոր թափում են։ |
| Գէշ գէշ, յօշ յօշ, անդամ անդամ կոտորել. | Կտոր կտոր, պատառ պատառ ջարդել։ |
| Այգուն այգուն, աւուր աւուր, | Ամէն առաւօտ, ամէն օր, ամէն |

| | |
|---|---|
| աւուրց աւուրց, ամի ամի, տար-ւոյ տարւոյ. | տարի։ |
| Օր ըստ օրէ, ամ ըստ ամէ | |
| Գամ քան զգամ, | |
| փոյթ ընդ փոյթ, հետ ընդ հետ, հուպ ընդ հուպ, խել և խել, մերձ ընդ մերձ։ | Շուտով անմիջապէս։ |
| Մէտ ի մէտ խոնարհիլ. | Ելլելով իջնելով խոնարհիլ։ |
| Գայթ ի գայթ շրջել. | Թոյլ ոտքով մանգալ։ |
| Կաղ ի կաղ գնալ. | Կաղ կաղ երթալ։ |
| Լու ի լու ամենեցուն ասել. | Ամէնքի ականջին ասել։ |
| Բերան ի բերան, բան առ բան խօսել. | Երես երեսի, խօսքին խօսք ասել։ |

3. Ածական անունները առանձին առնելով հետեւեալ կանոններով մակբայ են դառնում.

1) Ածականները անփոփոխ կերպով բայի վրայ դրուելով մակբայի նշանակութիւն են ստանում.

| | |
|---|---|
| Պարզ ասել (այսինքն պարզապէս). | Ողջանդամ ապրել. |
| Ուղիղ գնալ. | Մաղապուր զերծանել. |
| Խոր քնել. | Պարզերես կալ։ |
| Ծանր լսել. | Արագաթռիչ բարձրանալ. |
| Բարւոք գործել. | Անվնաս նաւել. |
| Պայծառ զարդարել. | Աներկիւղ անցանել. |
| Անահ, աներկիւղ հայհոյել. | Անսայթաք գնալ. |
| Մեծաձայն կարդալ. | Քաջ միտ դնել։ |

2) Երբեմն էլ մի, իմն, ինչ բառերի հետ են վարվում.

| | |
|---|---|
| Փոքր մի ննջել. | Մտադիր իմն անսալ. |
| Սակաւիկ մի նստել. | Գեղեցիկ իմն պատմել. |
| Ծառայել սակաւ ինչ. | Մեծ իմն մխիթարել. |
| Բազում ինչ ցուցանել. | Սքանչելի իմն երևել։ |

3) Աւելի պատահում է, որ ածականը յոգնակի աննախդիր հայցական ս-ով, կամ շատի համար ասելով ք-ով է

բանում, ինչև մակբայ.

| | |
|---|---|
| Երագս ընթանալ. | Շուտ վազել։ |
| Թեթևս դառնալ. | Թեթև դառնալ։ |
| Մեծամեծս փքալ. | Մեծ մեծ խրոխտալ։ |
| Ծանունս լսել. | Ծանր լսել։ |
| Մանունս քննել. | Մանր քննել։ |
| Ճշմարտագոյնս խօսել. | Ճշմարիտ խօսել. |
| Մօտագոյնս մերձենալ. | Մօտ գալ։ |
| Ճշգրտագոյնս գիտել. | Ճիշդ իմանալ։ |
| Բազումք ի Նոյանէ փախուստեայ ապրեցան. | Նոյանից շատերը փախչելով ազատուեցան։ |
| Արջք որ հասականք հզօրագոյնս կռուին. | Հոգևարք արջերը շատ ուժով են կռվում։ |

4. Մակբայները բայերից էլ են կազմվում.

Գոյէ (էակ բայի ստոր.), էութիւն.
Գրեթէ (գրել), գրեթե.
Դարձեալ (դառնալ), Նորից։

## § 114. Մակբայների ածանցական վերջաւորութիւնները։

Գլխաւոր ածանցական մասնիկները՝ որ արմատական մակբայների և ուրիշ մասանց բանի վրայ դրվում են, սոքա են.

1. Էն, է, Հական ու ցուցական դերանունների վրայ դրուելով՝ բացառականի միտք են տալի նոցա կամ շարժումնք են յայտնում, ու անձն և տեղ ցոյց տուող դերանուական մակբայներ են կազմում.

| | |
|---|---|
| Ինձ-էն, քեզ-էն, ձեզ-էն. | Ինձնից, քեզնից, ձեզնից։ |
| Այսր-էն, այդր-էն, անդր-էն դառնալ. | Այստեղ, այդտեղ, այնտեղ (շարժուելով) դառնալ։ |
| Անդ-էն, աստ-էն մնալ. | Այնտեղ, այստեղ (գալով) մնալ։ |

| | |
|---|---|
| Այժմ-էն գիտել (այս ժամէն, ժամանակ. մկր.). | Հիմակուանից իմանալ. |
| Աստ-ի, այտ-ի, անտ-ի. | Այստեղից, այդտեղից, այնտեղից։ |

2. Ին, էմք սովորաբար գործիական հոլովով բառերի վրայ են դրվում նոյն միտքը պահելով.

| | |
|---|---|
| Գլուխ-գլխովին, բոլոր-բոլորովին, բոլորովիմբ. | Բոլոր անձով, գլխով, բոլորովին։ |
| Կամ-կամովին, բուն-բնաւ, բնաւին, բնաւիմբ. | Իր կամքով, բոլորովին։ |
| Ազգ-ազգաւ, ազգովին. | Ազգով ու ցեղով։ |

3. Անօր գերանուանական մակբայների վրայ դրուելով՝ աւելի ույժ է տալի նոցա ու մէջ է յայտնում.

| | |
|---|---|
| Աստ-անօր է (այն որ աստ է). | Այստեղ, այստեղումն է։ |
| Այդ-անօր կաց, ուր-անօր գտեր. | Այնտեղ կացիր, ուր որ գտար։ |

4. Բար, էի, ոյն, այն կամ էայն, ցի, րէն մասնիկները անունների վրայ դրուելով՝ առ հասարակ որակական մակբայներ են կազմում.

| | |
|---|---|
| Քաջ-ա-բար, գաղտ-ա-բար, իշխան-ա-բար. | Քաջի պէս, գաղտնի կերպով, իշխանի պէս։ |
| Ուղղ-ա-կի, կողմն-ա-կի, ուժգն-ա-կի. | Ուղիղ կերպով, մէկ կողմը, սաստիկ կերպով։ |
| Կենդան-ւոյն ըմբռնել, արժան-ւոյն առնել. | Ողջ-ողջ բռնել, վայելածին պէս անել։ |
| Լռել-եայն կոչել. | Կամաց կանչել։ |
| Ատամ-ա-ցի, ատամն-ա-ցի ծակոտել. | Ատամով ծակծկել։ |
| Նշան-ա-ցի խօսել, յափշտակել ձեռամբ-ա-ցի. | Նշանով խօսել, ձեռքով խլել։ |
| Հայե-ցի կամ հայե-րէն բարբառել. | Հայերէն խօսել։ |

Ույն, այն, էի ժամանակական մակբայներ էլ են կազմում.

| | |
|---|---|
| Յանկարծ-ա-կի կամ յանկարծ-ոյն տեսանել. | Յանկարծ տեսնել, |

Վաղվաղ-ա-կի ասել. — Շուտով ասել։

Գիշեր-այն կամ գիշեր-եայն յառնել. — Գիշեր ժամանակ վեր կենալ։

5. Իցս քանակական և թուական մակբայներ է կազմում.

Քան-իցս, այսքան-իցս, եր-իցս, չոր-իցս. — Քանի անգամ, այսքան անգամ, երեք անգամ, չորս անգամ։

6. Էք կամ եք, եմն, իկ մակբայների վրայ են դրվում, գրեթէ նոյն նշանակութիւնը պահելով.

Երբ-էք երբ-էք երևել. — Ժամանակ առ ժամանակ երևնալ։

Ուստ-եք ուստ-եք եկեալ հասեալ էին. — Այստեղից այնտեղից եկել հասել էին։

Ուր ուր-եք և դիպէր. — Ուր էլ որ պատահէր։

Երբ-եմն թշնամիք էաք. — Երբեմն կամ մէկ ժամանակ թշնամի էինք։

Այժմ-իկ գիտեմք, — Այժմ գիտենք

Ահաւաս-իկ եմ, ահաւաս-իկ եմ. — Ահա այստեղ եմ։

Ահաւան-իկ է, ահաւան-իկ է. — Ահա այնտեղ է։

## § 115. Բարդ մակբայներ։

Բարդ մակբայները կազմվում են երկու կամ երեք նշանական բառից.

1. Բարդ ածականից. քաղցր—ա—ձայն երգել, ջերմ—եռանդն աղօթել։

2. Բարդ գոյականից. մարդ—օրէն, հայր—օրէն։

3. Երկու նշանական մակբայից. վաղ—քաջ, վաղ—ուրեմն, արտաք—ուստ (ուստի)։

4. Գոյականից և դերանունից. այս—օր, յոր—ժամ, նոյն—չափ։

5. Նախադրութիւնից ու մակբայից կամ շաղկապից. առ—այժմ, ընդ—վայր, եւս և եւս, նա քանզինա։

## § 116. Մակբայների գործածութիւնը:

Մակբայները գործ են ածվում հարցական, պատմական ու պատասխանական խօսքերի մէջ: Հարցական խօսքերի մէջ վարվում են հարցական մակբայները, պատասխանականների մէջ՝ նոցա համապատասխանող պատասխանականները:

| Հարցականք | Պատասխանականք |
|---|---|
| 1) Տեղական | ա. Որոշեալ. |
| ա. Ո՞ւր | աստ, անդ, աստանօր, անդանօր, արտաքս, ի ներքս, ի դուրս, ի բաց, մօտ, մերձ, հուպ, առ ընթեր, ի վայր, ի վեր, հանդէպ, ի մէջ, առաջի, շուրջանակի, ամենայն ուրեք: |
| | բ. Անորոշ. |
| | այլուր, ուր ուրեք, բազում ուրեք. |
| | գ. Բացասական. |
| | ոչ ուրեք: |
| | ա. Որոշեալ. |
| բ. Ուստի՞ | աստի, այտի, անտի, աստուստ, անդուստ, անդստին, ի բացեայ, ի հեռուստ, ի վերուստ ամենայն ուստեք. |
| | բ. Անորոշ. |
| | այլուստ. |
| | գ. Բացասական. |
| | ոչ ուստեք. |
| գ. Յո՞ | այսր, այդր, անդր, այսրէն, այդրէն անդրէն, յայսկոյս, յայնկոյս: |
| 2) Ժամանակական | ա. Որոշեալ. |
| ա. Ե՞րբ | այժմ, արդ, միշտ, ցանդ, այսօր, վաղիւ, երեկ, յեռանդն. |

բ. Անորոշ.

երբեմն, մերթ.

գ. Բացասական.

ոչ երբէք.

բ. Յորմէ՞ հետէ — յայսմհետէ, յայնմհետէ, ի վաղուց, ի հերուն հետէ:

գ. Ցե՞րբ — ցայժմ, ցարդ, մինչ, մինչև, մինչչև:

3) Որակական

Ո՞րպէս. — այսպէս, նոյնպէս, քաջաբար, մարդկօրէն.

4) Քանակական

ա. Որոշեալ.

Քանի՞ — այսչափ, նոյնչափ, որքան.

բ. Անորոշ.

Բազում, սակաւ:

5) Թուական

Քանի՞ցս — Միանգամ, երկիցս, երիցս, հնգիցս:

---

# Թ. Շաղկապների կազմութիւնը.

## § 117. Շաղկապների բաժանումը ըստ նշանակութեան և ըստ կազմութեան:

Ըստ նշանակութեան շաղկապները երկու գլխաւոր տեսակի են բաժանվում.

1. Բաղհիւսական՝ որ իրարու համաձայն խօսքեր են կապում:

2. Ներհակական՝ որ իրարու հակառակ ու անհամաձայն խօսքեր են կապում:

Ըստ կազմութեան շաղկապները լինում են.

1. Պարզ արմատական շաղկապներ. և, կամ, եթէ, թէ:

2. Բարդ շաղկապներ. այլ և, վասն որոյ, բայց արդ և այլն:

Իւրաքանչիւր մասն բանի շաղկապի նշանակութիւն է ստանում, եթէ խօսք խօսքի հետ կապում է: Այս պատճառով շաղկապները կազմվում են.

1) Գոյական անուններից. ո՛չ իւիք (իր), յորոյ աղագաւ (աղագ), օրինակ իմն:

2) Դերանուններից. որով—հետեւ, ըստ որում, այս—ինքն:

3) Բայերից. այս է, ասել, թողթէ, եթէ (է-թէ):

4) Մակբայներից. արդ, առանց, ապաքէն, համարեա:

5) Նախադրութիւններից. վասնզի, քանզի, փոխանակ զի:

## § 118. Շաղկապների գործածութիւնը:

Շաղկապների գործածութեանը վրայ հետևեալը պէտք է իմանալ.

1. Շաղկապները խօսքի մէջ գործ են ածվում մէկ մէկ, ինչպէս. և, այլ, սակայն, և այլն. կամ երկու նոյն և նման շաղկապներ կրկնվում են. կամ—կամ, թէ—թէ, և կամ ուրիշ ուրիշ շաղկապներ երկերկու են գործ դրվում, այնպէս որ նոցանից մինը պէտք է անպատճառ պատասխանէ միւսին. եթէ—ապա, թէպէտ—սակայն, ոչ միայն—այլ և:

Մի լայք զի չէ մեռեալ: Ոչ ունիմք աստ բայց հինգ նկանակ:

Քաղցր է քուն ծառայի, եթէ սակաւ և եթէ շատ ուտիցէ:

Արժանի է չարչարանաց, թէպէտ այժմուս, թէպէտ հանդերձելոցն:

Թէպէտ և կամէր, սակայն ոչ կարաց: Եթէ չէր չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ:

2. Մի և նոյն շաղկապը տեղին նայելով՝ կարող է անդադար իր նշանակութիւնը փոխել, զոր օրինակ.

Թէ ոչ էր փորձութիւն բարւոք, ոչ մնանէր Աստուած ի նոյն զփրկելեան իւր :

Թէ ջուր թէ հուր թէ երկիր թէ օդ, թէ լինին և թէ չլինին՝ զայն ոչ գիտեն :

Առաջին խօսքի մէջ թէ ցոյց է տալի թէ—թէ—ն և է թէական շաղկապ : Երկրորդին մէջ նոյն թէ շաղկապը կրկնուելով գրուած է և-ի տեղ և է բաշխական շաղկապ :

---

## Ժ. Ձայնարկութիւնների կազմութիւնը

### § 119. Ձայնարկութիւնների բաժանումը ըստ նշանակութեան և ըստ կազմութեան:

Ձայնարկութիւնները հոգու կրքերը կամ զգացմունքները բացատրող ձայներ ու բառեր են :

Ըստ նշանակութեան ձայնարկութիւնները լինում են.

1. Զարմացական. ո՛, ո՛հ, ո՛հ թէ, բա՛բէ :
2. Ուրախական. վա՛շ վա՛շ, վա՛շ քաջիդ :
3. Տրտմական. աւա՛ղ, ո՛հ, վա՛յ ինձ, եղո՛ւկ զիս :
4. Հեգնական. վա՛հ, ո՛հ, չէ՛հ :
5. Ըղձական. երանի՛, երանի՛ թէ, երնէ՛ թէ, երնէ՛— :
6. Յորդորական. աղէ՛, հա՛պա, բէ՛ր, օ՛ն :

Ըստ կազմութեան ձայնարկութիւններն են.

1. Պարզ արմատական ձայնարկութիւններ՝ որոնք անորոշ ձայներ են. ա՛, է՛յ, է՛ :

2. Ածանցեալ ձայնարկութիւններ՝ որոնք ուրիշ բառերից առնուած են. աւա՛ղ, երանի՛, յանկա՛րծ, ե՛կ, բէ՛ր :

Երբ ձայնարկութիւնները մի որ և լինէ հոլովով են գործ դրվում, մէկ բայ զօրութեամբ է իմացվում, ինչպէս. վա՛յ ինձ, երանի՛ ապաշխարողին, այսինքն վա՛յ է ինձ, երանի՛ տալի է կամ համարելի է ապաշխարողին :

# ԼՈՒԾՈՒՄՆ
ԵՒ
# ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ

# Ա. ՕՐԻՆԱԿ ԼՈՒԾՄԱՆ.

| | |
|---|---|
| Այրի * | յատկ. ած. եզ. ուղ. հոլովւում է Դ. հոլովմ. վրայ — այրւոյ, այրեաւ: |
| կին | հարկ. գոյ. ան. եզ. ուղ. հոլովւում է Զ. հոլովմ. վրայ — կնոջ կնաւ, կանամբ * |
| մի | անորոշ յօդ. եզ. ուղ. հոլովւում է Գ. հոլովմ. վրայ— միոյ, միով: |
| ունէր | հարկ. բայ (ներգ.), սահմնկ. եղ. եզ. 3-րդ դէմք. խոնարհվում է Գ. լծորդ. վրայ—ունիմ, կալայ, կա'լ: |
| տղայ | հարկ. գոյ. ան. եզ. անորոշ հայց.*** հոլովւում է Գ և Ա հոլովման վրայ—տղայոյ, տղայէ: |
| մի. | տես վերևը: |
| եւ | շաղկ. բաղհ. |
| սկսաւ | հարկ. բայ, սահմնկ. եղ. անց. կատ. եզ. 3-րդ դէմք. խոնարհվում է Գ լծորդ. վրայ — սկսանիմ, սկսայ, սկսի'ր: |
| տղայն | հարկ. գոյ. ան. եզ. ուղ. Ն ցուց. յօդով որոշեալ: |
| գողանալ | հարկ. բայ (ներգ.), անորոշ դերբ. խոնարհվում է Ա լծորդ. վրայ—գողանամ, գողացայ, գողացի'ր: |
| միրգ | հարկ. գոյ. ան. եզ. անորոշ հյց. հոլովւում է Բ հոլովմ. վրայ— մրգէ, մրգաւ: |
| եւ | շաղկ. բաղհ. |
| բանջար | հարկ. գոյ. ան. եզ. անորոշ. հյց. հոլովւում է Բ. հոլովմ. վրայ —բանջարէ, բանջարաւ: |
| եւ | շաղկ. բաղհ. |
| մայրն | հարկ. գոյ. ան. եզ. ուղ. Ն ցուց. յօդով որոշեալ. հոլովւում է Ե հոլովմ. վրայ—մօր, մարբ: |
| ուրախութեամբ | հարկ. գոյ. ան. եզ. գործ. հոլովւում է Զ հոլովմ. վրայ —ուրախութիւն, ուրախութեան: |
| ծածկեր | ներգ. բայ, սահմնկ. եղ. անց. անկ. եզ. 3-րդ դէմք. խոնարհվում է Բ լծորդ. վրայ—ծածկեմ, ծածկեցի, ծածկեա': |
| եւ | շաղկ. բաղհ. |
| ոչ | մակբ. բացասական: |
| խրատեր | ներգ. բայ, սահմնկ. եղ. անց. անկ. եզ. 3-րդ դէմք. խոնարհվ. Բ լծորդ. վրայ—խրատեմ, խրատեցի, խրատեա': |
| զտղայն | հարկ. գոյ. ան. եզ. հյց. Ն ցուց. յօդով որոշեալ: |

* Ուսուցչին մնում է լուծման ժամանակ իւրաքանչիւր բառի ձևը և կազմութիւնը հասկացնել, որ այստեղ յիշելը շատ երկար կը լինէր:

** Ուսուցիչը պահանջում է աշակերտներից, որ բերանացի հասկացնեն այստեսակ բառերի խոտորումները ընդհանուր հոլովմունքից:

*** Աշակերտը իմանալով հայցականի նշանակութիւնը, պէտք է զանազանէ անորոշ հայց. ուղղականից:

| | |
|---|---|
| [illegible] | հարկ. գոյ. ան. անեզ. յգ. Նախդր. ար. հոլովւում է Բ հոլովմ. վրայ—[illegible], [illegible], [illegible] : |
| [illegible]: | յատ. գոյ. ան. եզ. սեռ. հոլովւում է Գ հոլովմ. վրայ — [illegible], [illegible], [illegible]: |
| [illegible] | շաղկ. բաղհ. |
| [illegible] | ցուց. դեր. գոյ. եզ. ուղ.—[illegible], [illegible] : |
| [illegible] | մակբ. քանակական : |
| [illegible] | Ներգ. բայ, սջմնկ. եզ. անց. կատ. եզ. 3-րդ դէմք. խոնարհ-վում է Բ լծորդ. վրայ — [illegible], [illegible], [illegible]: |
| [illegible] | հարկ. գոյ. ան. եզ. հյց. Ն ցուց. յօդով որոշեալ. հոլովւում է Զ հոլովմ. վրայ—[illegible], [illegible], [illegible] : |
| [illegible] | Ներգ. բայ. սջմնկ. եզ. անց. անկ. եզ. 3-րդ դէմք. խոնար-վում է Բ. լծորդ. վրայ—[illegible], [illegible], [illegible] : |
| [illegible] | հարկ. գոյ. ան. եզ. անորոշ հյց. հոլովւում է Գ հոլովմ. վրա —[illegible], [illegible]: |
| [illegible] | շաղկ. բաղհ. |
| [illegible] | հարկ. գոյ. ան. յգ. անորոշ հյց. հոլովւում է Գ հոլովմ. վրայ—[illegible], [illegible]: |
| [illegible] | շաղկ. բաղհ. |
| [illegible] | հարկ. գոյ. ան. եզ. ուղ. հոլովւում է Զ հոլովմ. վրայ — [illegible], [illegible] : |
| [illegible] | ճակ. բայ, անց. դերբ. |
| [illegible] | ճակ. բայ, սջմնկ. եզ. անց կատ. եզ. 3-րդ դէմք: |
| [illegible] | հարկ. գոյ. ան. եզ. ուղ. հոլովւում է Բ հոլովմ. վրայ, [illegible], [illegible] : |
| [illegible] | հարկ. գոյ. ան. յգ. Նախդր. ար. հոլովւում է Զ հոլովմ. վրայ—[illegible], [illegible], [illegible] : |
| [illegible] | շաղկ. բաղհ. |
| [illegible] | որակ. ած. եզ. անորոշ հյց. հոլովւում է Բ հոլովմ. վրայ—[illegible], [illegible] : |
| [illegible] | հարկ. գոյ. անեզ. յգ. անորոշ հյց. հոլովւում է Դ հոլովմ. վրայ—[illegible], [illegible] : |
| [illegible] : | Ներգ. բայ, սջմնկ. եզ. անց. անկ. եզ. 3-րդ դէմք. խոնարհ-վում է Բ լծորդ. վրայ—[illegible], [illegible], [illegible]: |
| [illegible] | շաղկ. բաղհ. |
| [illegible] | հարկ. բայ (Ներգ.), անցեալ դերբայ : |
| [illegible] | հարկ. բայ (Ներգ.), սջմնկ. եզ. անց. կատ. յգ. 3-րդ դէմք. խոնարհվում է Գ լծորդ. վրայ—[illegible], [illegible], [illegible] : |
| [illegible] | Ներգ. բայ. անորոշ դերբ. Նախդր. ար. |
| [illegible] | ցուց. դեր. գոյ. եզ. հյց. |
| [illegible] | շաղկ. բաղհ. |

| | |
|---|---|
| ա-ե. | Ներգ. բայ, աճմնկ. եղ. Ներկ. եղ. 3-րդ դէմք. խոնարհվում է Բ լծորդ. վրայ—ա-ե՛, ա--յէ, ա--՛: |
| Բեըե՛+ | Ներգ. բայ. հրամ. եղ. Ներկ. յգ. 2-րդ դէմք: |
| ղ՛-յր՟ | հարկ. գոյ. ան եղ. հյց. ՟ ցուց. յօդով որոշեալ : |
| ե՛, | առաց. դեր. եղ. հյց. հոլովում է Գ հոլովմ. վրայ—ե՛-յ, ե՛-վ: |
| ղէ | շաղկ. սրճո. |
| հ-՛բ--րեյէյ | Ներգ. բայ, աճմնկ. եղ. ապռ. եղ. 1 դէմք. խոնարհվում է Բ լծորդ. վրայ—հ-՛բ--րե՛, հ-՛բ--րեյէ, հ-՛բ--րե-՛: |
| ղ՟- : | տես վերևը: |
| Ն- | շաղկ. բաղհ. |
| յ-րժ-՛ | մակր. ժմնկ. |
| եկ՟ | չէզ. բայ, աճմնկ. եղ. անց. կտր. եղ. 3-րդ դէմք.—ֆ-՛, եկէ, ե՛կ: |
| ՛-յր՟, | տես վերևը : |
| ե-ծե-ւ | Ներգ. բայ, անց. դերբ. խոնարհվում է Բ լծորդ. վրայ—ե-ծ-՟ե՛, ե-ծէ, ե-՛ծ: |
| եհ-+ | Ներգ. բայ, աճմնկ. եղ. անց. կտր. եղ. 3-րդ դէմք. խոնարհվում է Բ լծորդ վրայ—հ-+-՟ե՛, հ-+է, հ-՛+ : |
| ղ+եԲ | հարկ. գոյ. ան. եղ. հյց. հոլովում է Բ հոլովմ. վրայ—+Բէ, +Բ-յ : |
| ՛օր՟ | հարկ. գոյ. ան. եղ. սեռ. ՟ ցուց. յօդով որոշեալ: |

# Բ. ՀԱՏՈՒԱԾՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ.

## 1. ԳԱՅԼՔ ԵՒ ՈՉԽԱՐՔ։

*Գայլք առ ոչխարս հրեշտակագնաց եղեալ՝ ասեն. թէ «Մինչ պատերազմ ունելոյ մեզ ընդ ձեզ և յար անհաշտութեան՝ շունքն են պատճառք. վասն զի գայրացուցանեն զմեզ, և ակամայ ի թշնամութիւն յուզեն. ապա թէ սոքա ի միջոյ բարձցին, խաղաղութիւն է այնուհետև ընդ մեզ և ընդ ձեզ, և չար ևս ի մէնջ այլ ոչ լիցի»։ — Հաւանեցան ոչխարքն, քանզի են անմտացիկք, և զշանցն պահպանութիւն յապաւեցին. և գայլքն զնոսա ի շանցն անապաստ գտեալ, զամենեսեան զնոսա ի վերայ յարձակեալ կոտորեցին։*

*Խրատէ առասպելս ի թշնամեաց խրատուց զգուշանալ։*

(*Ողոմպիանոս*)։

## 2. ԿԱՂՆԻ ԵՒ ԱՐՔԱՅԱԿԱՂՆԻ։

*Մեծարանեալ սնափառէր կաղնի՝ ասել զինքն թագաւորագն յաղագս հաստակին հզօր զօրութեամբ, իբր ի մրրկանս ընակեալ հսկայազօր. և խորհէր առ ամուր զամենեսեան հարկանել։ Իսկ արքայակաղնի ոչ ժուժեալ, յանդիմանական վարեցաւ առ նա բանիւ ասելով. «Բազումք համանման քեզ ոչ պարծին, սակայն և ոչ զանխլանան փառք նոցա ի պտղոյ առաւել քան ի հաստակէ զօրեալք. զի այդպէս յանդգնիս։ Ես ոչ մի ինչ եմ, բայց մարդիկ զպտուղ իմ ուտելով և զիս ես յարգեն. այլ պտուղ քո ի զարմանս կայ խողից»։ — Եւ զայս ասացեալ լռեցուցանէր, ծիծաղելի զնա կացուցեալ։*

*Միտք առակիս յայտնի է, խրատելով զսնապարծս որք յազգք և ի տեսակս և ի զօրութիւնս պարծին. ոչ ուսեալք յիմաստնոյն եթէ զովեսցէ զքեզ ընկերն և մի՛ դու. այլ նոքա գիտելին առ ինքեանս թագուցանեն, սակայն ի գիտողաց յանդիմանին ոչ ունելով պիտանի ինչ կենցաղոյս, նաև ոչ հոգւոյ ինչ։ Եւ որք ի նմանէ այսպանին, բա-*

*գում անգամ քան զնոսա լաւագոյն գտանին, և ընդունելիք մարդկան լինին. և նոքա անարգ և ծիծաղելիք ի բաց խոտին։*

(Մխիթար Գօշ)

### 3. ԳՈՐՏՈՒՆՔ.

*Խորհուրդ արարեալ գորտունք ծովու, ասեն. «Ընդէ՞ր հեղձանիմք ի ջուրս տղմնդերս և գեղնեալք, ելցուք և կենցաղավարեսցուք որպէս գայլս»։ — Եւ մի ոմն ծերունի ասէ. «Հայր իմ պատուէր եդ ինձ, եթէ զապաստան ծովու մի՛ թողցես, զի բնութեամբ է մեզ զանգիտել. արդ գուցէ ելանիցեմք և զարհուրեալ զառնայցեմք, և երեելի զերկչոտութիւնն մեր առնիցեմք»։ — Եւ նոքա ոչ հաւանեալ ելին, և լուեալ ոտնաձայն փախուցեալ խորասուզին։*

*Գտանի յառակս իմաստութիւն, զի նախ գիտել ի դէպ է զզօրութիւն, և ապա զտեղի կամ զգործ փոխել, և հաւանութեամբ առնել ծերոց. զի մի՛ գիտելով զպակասութիւն մեր քամահիցեն զայն ինչ, զոր ոչ գիտէին յառաջ։*

(Մ. Գօշ)

### 4. ԱՌԻՒԾ, ԱՐՋ ԵՒ ԳԱՅԼ.

*Առիւծ և արջ և գայլ ի միասին ցանկացեալ ասեն. «Ընդէ՞ր լինիմք հմակերք, ըմբռնեսցուք զոմն ի մարդկանէ, զի ըստ օրինի իւրեանց զորսացեալս մեր կերակուր մեզ պատրաստեսցէ»։ — Եւ կալեալ զոմն արարին խորտկարար։ Եւ նեղեալ առնն հնարեցաւ ազատիլ. հերձեալ փայտ մեծ և եդեալ սեպս յիւրաքանչիւր կողմանս և ասէ ցառիւծ և ցայլսն. «Օգնեցէք ինձ պատառել զփայտս. դիք իւրաքանչիւր զձեռս ի ներքս և ձգեցէք»։ — Եւ իբրև եդին, ոստոյց զիրիթսն, և մնացին անլոյծ. և առեալ զտապարն սկսաւ ի ջախել, և ասէ. «Զսկիզբն յառիւծէն արարից»։*

*Զանհրահանգ տենչանս յանդիմանէ առակս, զի պատճառ լինին ոմանց չարեաց. և լինի բազում անգամ, որ նախ պատահի սկսողաց։*

(Մ. Գօշ)

### 5. ՄԿՈՒՆՔ ԵՒ ԿԱՏՈՒ.

*Մկունք համանգամայն հրեշտակս առաքեն առ կատուն և ասեն. «Զի՞նչ քեզ մեղանչեմք, որ այդքան զմեզ հալածես, զի՞նչ քո ու-*

տեմք»։ — Եւ նա ասէ. «Ոչ գիտէք եթէ յայն սակս զմեզ զարմանեն մարդիկ, զի զամբարս նոցա մեք պահեցաք. արդ եթէ դուք այնմ ոչ մեղիցէք, համարձակ շրջեսջիք, և ոչինչ ձեզ վնասեսցի»։ — Եւ ձեռն ի գլուխ եդեալ երդմամբ հաստատեաց զայս։ Եւ մկանցն համարձակեալ կամեցան զանկեալ հատոն առնուլ. և յարձակեալ ի վերայ կալաւ զբազումս ի նոցանէ. և ասեն. «Ո՞չ ապաքէն երդուար անկեալ հատի ոչ առնուլ վրէժս»։ — Եւ նա ասէ. «Ոչ երդուայ, այլ ըստ սովորութեան զգլխով զձեռս արկի»։

Նման իսկ է առակս կեղծաւոր երդուեցողաց, զի և ոչ պայմանի մնան և ոչ ուխտի, այլ սաեն դիպող միայն ժամ գտեալ։

(Մ. Գոշ)

## 6. ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԵՑԳԵՏԻՆ.

Աղուէսն և խեցգետինն եղեն եղբարք և արարին ցան, և հնձեցին, և կասեալ կուտեցին։ Ասէ աղուէսն. «Եկեսցուք ի բլուրս յայս, և ով շուտ իջանէ, նա առնու զցորեանն»։ — Յորժամ եկին, ասէ խեցգետինն. «Արա ինձ սէր, և յորժամ կամիս վազել, զարկ զագիդ առաջի իմ, որպէս իմանամ և գամ զհետ քո»։ Եզարկ աղուէսն զագին և վազեաց. և խեցգետինն փակաւ յագին աղուէսուն. և յորժամ հասաւ աղուէսն ի շեղջն, և դարձաւ յետս թէ ուր իցէ խեցգետինն, և խեցգետինն ի վայր անկաւ ի վերայ շեղջին և ասաց. «Յանուն Աստուծոյ, այս ինձ երեք մոդ և կէս»։ — Զարմացաւ աղուէսն և ասէ. «Թէ ով դու չար, երբ եկիր այսր»։

Ցուցանէ թէ բան և գործ առնեն նենգաւոր մարդիկ, որ կորուստ լինի անձանց նոցա, և տկարքն յաղթեն նոցա։

(Ողոմպ.)

## 7. ՊՂՆՐԳ ԵՒ ԱՐԻ.

Արք երկու ճանապարհորդէին ի քաղաք ուրեք երթալ հեռի. և մին յսկզբանն արիաբար երթայր, սակայն եա զետէ հեղգայր և աստ և անդ անկանէր ի ճանապարհին. և մերձ ի քաղաքն բնութիւնն հեղգացեալ, և յաւազակաց մեռանի։ Իսկ միւս ծոյլ յսկզբան էր, և աւելի քան զաւելի փութայր, և մերձ ի քաղաքն ամենեիմբ արագէր. և մտանէր և ի հանգիստ վայելէր։

Դէմք առակիս առ ազնիւս է և արիս, զի յոյլք սակաւ ինչ ջանան բարութեան ճանապարհին որ ի կեանս տանի, և ապա ծուլա-

նման որ ըստ օրէ. և ի կատարած կենաց զոր արկանել պարտին, բնութիւնն լուծանի և ի ձեռաց դիւաց մեռանին զրկեալք ի մոլից կենաց։ Իսկ թէեւ արք ի սկզբանն հանդարտ իմն շարժին, միշտ ուսմամբ յառաջատեն, և մերձ ի մտանելն ի կեանս. եղեալք ի մարմնոյ առաւել փութան, և ի բարիսն վայելեն։

(Մ. Գոշ)

## 8. ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ։

Այրի կին մի ունէր տղայ մի. և սկսաւ տղայն գողանալ միրգ և բանջար. և մայրն ուրախութեամբ ճաշակէր և ոչ խրատէր զտղայն ի կամս Աստուծոյ։ Եւ նա ևս աճեցոյց զգողութիւն, բերէր անասուն և անօթս. և այր եղեալ եղև աւազակապետ ի լերինս, և բազում չարիս առնէր։ Եւ կալեալ տարան ի կախել զնա, և ասէ. «Բերէք զմայրն իմ, զի համբուրեցից զնա»։—Եւ յորժամ եկն մայրն, խածեալ եհատ զքիթ մօրն։ Եւ ասէ թագաւորն. «Ո՛ չար, ընդէ՞ր խրատեցեր զմայրն քո»։—Եւ նա ասաց. «Զի ոչ խրատեաց զիս ի տղայութեան ի կամս Աստուծոյ, որ չէի յայս վիշտս անկեալ. յիրաւի արարի զայն»։— Եւ թագաւորն հրամայեաց զնա արձակել և զմայրն կախել։

Ցուցանէ թէ ամենայն ծնողք որ ոչ խրատեն զորդիս իւրեանց ի կամս Աստուծոյ, նա մեղք որդւոցն ի գլուխս ծնողացն է յաւուրն դատաստանի։

(Ողոմպ)

## 9. ՅԱՂԱԳՍ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱՅ։

Այս, ասէ (Մար Աբաս), Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ. սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ, ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց։ Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի ի մէջ բազմակոյտ սկայիցն անհուն խօլաց և ուժաւորաց։ Քանզի անդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր սուր ի կող ընկերի իւրոյ ձգելով, ջանային տիրել ի վերայ միմեանց. ուր պատահմունք ի դէպ եղանէին Բելայ բռնանալ ունել զամենայն երկիր։ Որում ոչ կամեցեալ Հայկայ հնազանդ լինել Բելայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրմենակ ի Բաբելոնի, չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ

որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք թուով իբրև երեք հարիւր, և այլովք ընդոծնօք, և եկօք յարեցելովք ի նա, և բոլոր աղխիւ։ Երթեալ բնակէ ի լեռնոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին, զոր հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ տուն բնակութեան կալուածոց, և տայ ի ժառանգութիւն Կադմեայ որդւոյ Արամենեակայ։ Այս արդարացուցանէ զանգիր հին զրոյցս։

Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արևմուտս հիւսիսոյ, գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում. և անուանէ զանուն լեռնադաշտակին Հարք. այսինքն աստէն բնակեալքս ազգի տանն Թորգոմայ։ Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն։ Յիշի և աստանօր պատմութիւնս. հարաւոյ կողմանէ դաշտիս այսորիկ առ երկայնանստիւ միով լերամբ բնակեալ յառաջագոյն արք սակաւք ինքնակամ հնազանդել դիւցազինն։ Արդարացուցանէ և այս զասացեալ զրոյցս անգիրս։

## 10. ՅԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՒ ՄԱՀՈՒԱՆՆ ԲԷԼԱՅ։

Եւ յառաջ մատուցեալ զբանս իւր ասէ, թէ ի հաստատել տիտանեանն Բէլայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան, առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ արամբք հաւատարմօք, գալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ։ «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան սառնամանեաց, այլ ջեռուցեալ մեղկեա զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ, և հնազանդեալ ինձ կեաց ի հանդարտութեան, ուր հաճոյ է քեզ յերկրին իմում բնակութեանս»։ Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ զպատգամաւորսն Բէլայ, խստութեամբ պատասխանեաց։ Դառնայ առաքեալն անդրէն ի Բաբելոն։

Ապա զօրաժողով լինի ի վերայ նորա տիտանեանն Բէլ ամբոխիւ հետևակ զօրաց, գայ հասանէ ի հիւսիսի յերկիրն Արարադայ մերձ ի տունն Կադմեայ. փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջ ընթացիկս առաջի իւր առաքէ. «Գիտեա, ասէ, ով մեծդ դիւցազանց, զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւէրժիւք քաջօք, և երկայնադիրօք հասակօք սկայիւք մրցողօք։ Եւ իմացեալ եմ զմերձ լինելն նորա ի տուն իմ, փախեայ, և գամ աւասիկ տագնապաւ։ Արդ ճեպապէս խորհել որ ինչ գործելոց ես»։

Իսկ Բէլն, յանդուգն և անձնիշխան զօրութեամբ ամբոխին որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեալ, փութայր հասանել ի

*սահմանս բնակութեան Հայկին, ի սիրտ և ի մարմին վտանգեցեալ արանց զօրաւորաց։ Աստ ուշիմ և խոհեմ սկայն, քաջագանգուրն և խայտակն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայլս որ ընդ իւրով ձեռամբ. հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ աղի են ջուրքն, մանունս ունելով ձկունս յինքեան։ Եւ կոչեցեալ զզօրս իւր ասէ ցնոսա. «Ցելանելն մեր հանդէպ ամբոխին Բէլայ, դիպեալ ջանասջիք տեղւոյն ուր անցեալ կայ ի մէջ խուռն քաջացն Բէլ։ Զի կամ մեռցուք կամ զաջողութիւն մատանց մերոց ի նա ցուցեալ, ցրուեսցի ամբոխն. և մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք»։*

*Եւ յառաջ կոյս անցեալ բովանդակ ասպարէզս, հասանեն ի միջոց ինչ դաշտաձև լերանց բարձրագունից, և յաջմէ ջուրցն հոսանաց ի բարձրաւանդակումն կուռ կալով ի տեղւոջ։ Եւ ի վեր զերեսս ամբարձեալ, երևեցաւ նոցա բազմութիւն անկարգ հասակի ամբոխոյն Բէլայ ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ յեց և հանդարտ ամբոխիւ մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ստոյ միոյ իբրև ի դիտանոցի։ Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ հասեալ ընտրիւք և վառելովք ոմամբք. և երկար միջոց ճանապարհին ընդ նա և ընդ ամբոխն. և ինքն գլխանոցն ագուցեալ երկաթի, նշանաւորօք վերջօք, և տախտակս պղնձիս թիկանց և լանջաց, և պահպանակս բարձից և բազկաց. գօտեւորեալ զմէջսն, և յահեկէ զստինն երկսայրի. և նիզակն արի ի ձեռին իւրում աջոյ և յահեկումն վահան, և ընտիրք յաջմէ և ի ձախմէ։ Եւ տեսեալ Հայկին զտիտանեանն կուռ վառեալ, և զարս ընտիրս ընդ նմա աջինս և ահեկինս, զԱրմենակ երկու եղբարբք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս յորդւոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին զկնի իւր կարգեաց. երեքանգիւնի իմն կարգեաց ձևով, հանդարտ յառաջ մատուցանելով։*

*Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմեանս, ահագին դղրդիւն ի վերայ երկրի առնէին չահատակելովն, և ահս պակուցանողս տարազովք յարձակմանցն զմիմեանս արկանէին։ Անդ ոչ սակաւք յերկոցունց կողմանց սկայիցն արք յաղթանդամք բերանոյ որոյ դիպեալք, տապալ յերկիր կործանէին. և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի։ Զայսպիսի անակնունելի դիպուած տարակուսանաց տեսեալ արքայն տիտանեան զարհուրեցաւ, և ի նոյն բլուր, ուստի էջն, վերջանեալ ելանէ. քանզի խորհէր ի միջոցի ամրանալ ամբոխին, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միւսանգամ ճակատ յօրինեսցէ։*

Զայս իմացեալ աղեղնաւորին Հայկայ, յառաջ վառէ զինքն, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ պինդ զլայնալիճն, զիպուցանէ զերեքթեւեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ յերկիր անկանի սլաքն. և այսպէս ճոխացեալն տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին։ Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեանն փախեան իւրաքանչիւր դէպ երեսաց իւրեանց։ Եւ վասն այսորիկ այսչափ բովանդակ լիցի ասել։

Բայց զտեղի ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հ ա յ ք, վասն յաղթութեան պատերազմին. այսորիկ աղագաւ և գաւառն այժմ անուանի Հ ա յ ո ց Ձ ո ր։ Իսկ բլուրն ուր քաջամարտիկօքն անկաւ Բէլ, անուանեաց Հայկ Գ ե ր ե զ մ ա ն ս. որ այժմ ասեն Գ ե ր ե զ մ ա ն ք։ Բայց զդիակն Բէլայ պաճուճեալ իմն դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց։ Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ Հ ա յ ք։

## 11. ԳՆԱՑՔ ՇԱՊՀՈՅ ԸՆԴ ԱՐՇԱԿԱՅ ԱՐՔԱՅԻ ԵՒ ԸՆԴ ՎԱՍԱԿԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԻՆ ՀԱՅՈՑ։

Կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զթիւթմն և զաստեղագէտսն և զքաղդեայսն. խօսէր ընդ նոսա և ասէր. «Եթէ ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս։ Եւ եդի ընդ նմա ուխտ խաղաղութեան և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեան ի գլխաւորութիւն այնմ, զոր աւետարանն կոչեն. նախ այն երդմանն ստեաց։ Ես նմա բիւր բարիս խորհեցայ, որպէս հայր որդւոյ կատարել նմա, նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց։ Իսկ ես կոչեցի զերիցունս Տիփոնի քաղաքի, և կարծեցի թէ նորա նենգութեամբ ինչ եւուն նմա զերդումն և եւուն ինձ ստել։ Եւ պատուհասեալ զնոսա որպէս զմահապարտս, իսկ ասաց ցիս Մարի երէց գլխաւորն նոցա. ասէին թէ մեք արդարութեամբ տուաք նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ զնա առ ստս ձեր»։—Եւ ես նոցա ոչ լուայ. և ետու հրաման եօթանասուն զնոսա ի մի գուբ փոշոտել, և զուսումնակիցս նոցա հանել ընդ սուր։ Զաւետարանն յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն ուսմանց նոցա քրիստոնէութեան, կապեցի շղթայիւք, և կայ ի գանձի մերում։ Բայց բանքն Մարեայ Երիցոյ ուշ եղեն ինձ։ Եւ յիշեցի զի ասէր—թէ մի սպանաներ զմեզ, այլ ես գիտեմ զի նոյն աւետարանն ածէ զԱրշակ արքայ ի ձեռնս քո։—Ահաւասիկ բանք արդարութեամբ կատարեցան, զոր ասէրն։ Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամէ

Արեաց զի ետուն ընդ նմա ճակատս, և յաղթել և ոչ մի ամ ոչ կարացաք. և եկեալ է եկեալ ոտիւք իւրովք։ Բայց թէ գիտէի թէ յայսմ հետէ կայցէ յուխտիս իմում և ի հնազանդութեան բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն։

Իսկ քաւդեայքն ետուն նմա պատասխանի և ասեն. «Թող մեզ այսօր և վաղիւն պատասխանի արասցուք քեզ»։ Իսկ ի վաղիւ անդր ժողովեցան ամենայն քաւդեայքն և աստեղագէտքն, և ասեն ցարքայն. «Այժմ զի եկեալ է առ քեզ Թագաւորն Հայոց Արշակ, զիա՞րդ խօսի ընդ քեզ. կամ զինչ ձայն ածէ, կամ զիա՞րդ ունի զանձն» Ասէ արքայն. «Իբրև զմի ի ծառայից իմոց համարի զանձն. հող ոտից իմոց ջանայ լինել»։ Ասեն նոքա. «Ա՛ռ արա զոր ասեմք քեզ. պահեա դու զնոսա աստէն, և առաքեա դու զհսպաս յերկիրն Հայոց, և տուր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրև բեռինս երկուս, և կահոյր մի ջուր։ Եւ հրաման տացես հարկանել զկէս խորանի յատակ ի բերեալ հողոյն Հայոց. և առցես քեզէն զձեռանէ արքային Հայոց Արշակայ, և տարցես նախ յայն տեղ որ բնակ իսկ է հողն, և հարցցես զնա բանս։ Եւ դարձեալ առցես դու զձեռանէ նորա և տարցես ի հայատակին ի հարեալ հողոյն. և լուիցես դու բանս ի նմանէ. և ապա գիտասցես դու եթէ կա՛յ յուխտի քո և պահէ զդաշինս քո թէ ոչ, յետ արձակելոյ քո զնա ի Հայս։ Ապա եթէ ի վերայ հայ հողոյն խիստ բարբառեսցի, գիտասջի՛ր զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն թշնամութիւն յուզէ»։

Ապա Թագաւորն Պարսից քանզի զայս լուեալ ի քաւդէիցն, տաճիք ուղտուք արձակէ ի Հայս առս զհողոյ և զջրոյ, զի եկեսցեն բարձցեն նմա զնմայսն։ Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ յղեացն։ Ապա հրաման տայր Թագաւորն Շապուհ զկէս յատակին իւրոյ խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց. և զջուրն ցանել ի վերայ նորա. և զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեան երկրին թողուլ։ Եւ եա ածել զԱրշակ արքայ Հայոց զառաջև իւրով, և զայլ մարդիկն ի բաց հրամայեաց կացուցանել. և զձեռանէ առեալ շրջէր ճեմելով։ Եւ երթեալ առեալ ընդ խորանն, ասէ ցնա յորժամ ի պարսիկ ի հողոյն ի վերայ ճեմէին, «Թէ ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խստացար ընդ իս, և քովք կամօք առանց իմոց կամաց եղեր ընդ իս թշնամի. և այս լի երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս»։

Ասէ Արշակ արքայ, «Թէ մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կոտորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի ի քէն պարգև

կենաց. և թշնամիք իմ հրապուրեցին զիս, և արկին երկիւղուկս ի քէնն փախուցին ի քէն։ Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յառաջ ածին զիս. և եկի առաջի քո։ Եւ ահաւասիկ ծառայ քո ի ձեռս. քո կամ. զինչ և պէտք է քեզ, արա զիս, զինչ և կամ իցէ. սպան զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ»։

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ճեմելով, ի չքմեղս առեալ զնա ածէր ի հայակողմն ի հողն հարեալ յատակին, իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զհայ զհողն կոխէր, մեծամեծս ըմբոստացեալ հպարտացեալ այլ ձայն շրջէր. սկսանէր խօսել և ասել. «Ի բաց կաց յինէն ծառայ չարագործ տիրացեալ տէրանցն քոց. այլ ոչ թողից քեզ և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Արտեւանայ արքայի։ Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տերանց ձերոց զբարձ կալեալ է. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ մեր առ մեզ եկեսցէ»։

Իսկ դարձեալ առնոյր զձեռանէ, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարէր զասացեալսն, խոնարհէր, բուռն հարկանէր զոտից նորա. մեծապէս ապաշխարելով զզջմամբ զասացեալ բանսն։ Իսկ յորժամ առեալ զձեռանէ զնա տանել ի հայ հողն, ևս խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր։ Ցայգուէ և երեկոյն այնպէս չատ փորձ փորձեաց զնա. զի իբրև ի վերայ հարեալ հողոյն տանէր, խստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուն գետնոյն յատակին և կայր, ի զղջումն դառնայր։

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթրեաց թագաւորին Պարսից. քանզի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտին արկանել բազմական, օրէնք էին զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին ի միում գահոյս։ Իսկ այն օր նախ զտող բազմականացն թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. հուսկ յետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին, ուր զհայ հողն յատակին հարեալ էր։ Նախ ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին բազմեցուցանէին զարքայն Արշակ։ Արդ եկաց բազմեալ ուռացեալ վայր մի. իսկ յոտն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ. «Իմ այդ տեղի ուր դուդ ես բազմեալ, յոտն կաց այտի, թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաշխարհն իմ հասից, մեծամեծ վրէժս խնդրեցից ի քէն»։

Ապա տայր հրաման Շապուհ արքայ Պարսից, բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռս նորա երկաթս, և

խաղացուցանել զնա ի յԱնդմըշն զոր Անուշ բերդն կոչեն, և պնդել զնա մինչև անդէն մեռցի։ Եւ եղև ի վաղիւ անդր ետ հրաման Շապուհ արքայ ածել զառաջեաւ իւր զՎասակ Մամիկոնեան զզօրավարն սպարապետն Հայոց մեծաց. սկսաւ պատուհասել զնա, քանզի էր Վասակ անձամբ փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շապուհ. «Աղուէս, դու էիր խանգարիչ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, և զի՞ գործես. զմահ աղուեսու սպանից զքեզ»։ Իսկ Վասակ տուեալ պատասխանի, ասէ. «Այժմ քո տեսեալ զիս անձամբս փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առիւծ էի, և արդ աղուէս։ Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտնս ի միոյ լերին կայր, և միւս ոտնս իմ ի միոյ լերին կայր. յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի»։ Ապա հարցանէր թագաւորն Պարսից Շապուհ և ասէ. «Ազէ՛, տուր ինձ գիտել, ո՞վ են լերինքն այնոքիկ, զորս դուն ընդ ունջ տանէիր։ Եւ ասէ Վասակ.«Լերինքն երկուք, մի դու էիր և մի թագաւորն Յունաց։ Այն մինչ տուեալ էր ինձ Աստուծոյ, զքեզ ընդ գետին տանէի և զթագաւորն Յունաց, մինչև օրհնութիւն հօրն մերոյ Ներսէսի հանգուցեալ էր ի վերայ մեր, և Աստուծոյ զմեզ ի ձեռանէ չէր թողեալ. մինչև զնորա բանն արարաք, և խրատ նորա եկաց առ մեզ, գիտացաք տալ քեզ խրատ. մինչև մեղէն աչօք բացօք անկաք ի խորխորատ. արդ զինչ և կամիս արա»։ Ապա ետ հրաման թագաւորն Պարսից մորթել զզօրավարն Հայոց Վասակ, և զմորթն հանել և լնուլ խոտով, և տանել ընդ նոյն բերդ յԱնդմըշն որ Անյուշն կոչեն. ուր արգելյն իսկ զթագաւորն Արշակ»։

(Փաւստոս Բուզանդացի)

## 12. ՆԿԱՐԱԳԻՐ ԲԱՐՈՒՑ ՅԱԶԿԵՐՏԻ ԱՐՔԱՅԻՆ ՊԱՐՍԻՑ։

Որոց ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն, յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ. յամենայն հողմոյ շարժի և յամենայն իրաց դողայ. երազագէտ է այնպիսին ի կեանս իւրում, և յանգիւտ կորուստն յուղարկի ի մահուան իւրում։ Որպէս և ասաց ոմն ի հնոցն. մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է։ Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ։

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ։ Կոյր զրկի ի ճառագայթից արեգական և տգիտութիւն զրկէ ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ Որպէս մեծ է

հոգի քան զմարմին, այսպէս մեծ է առաւելութիւն մտաց քան զմարմնոյ։

Եթէ ոք կարի տառապեալ իցէ աշխարհական մեծութեամբ և մարդն աղքատագոյն, այնպիսին ողորմելի է քան զլապուռն. որպէս և տեսանեմք խակ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յոյժ մեծն քան զամենայն։ Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստութիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ։ Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, որչափ ևս առաւել առ հոգևորսն։

Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար. և որպէս առ մի մարդ այսպէս առ բոլոր աշխարհս։ Թագաւոր ոչ զիւր միայն տացէ պարտիս, այլ և որոց եղև պատճառք ի կորուստ։

Բայց մեք թէպէտև ոչ ունիմք հրաման բամբասել զիշխանսն, բայց և ոչ զօրեղք կարեմք լինել այնմիկ որ ածամարան լինիցի։ Այլ զանցս իւրոյ պատմեմք որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց, և ոչ գանգատիմ, ոչ բամբասանէր մարդ, այլ ճշմարտութեամբ զեղս իւրոյն ասելով ոչ լռեցից։ Ոչ ի կարծ ընդդատացեալ, և ոչ ի լուր զարթուցեալ. այլ ևս ինքնին անձամբ անցեալ ի տեղւոջն պատահեցի և տեսի. և լուայ զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով. իբրև զհողմ սաստիկ զի բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր և տատանէր զկազմութիւն զօրայն իւրոց։ Եւ հանգէս առնէր ամենայն ուսմանց, և անարգէր զհեզութիւն և զքաղցրութիւն և զամենայն ուսմունս աշխարհին իւրոյ։ Արկանէր ի նեղս և զքրիստոնէութիւն կեղծաւորութեամբ, և առնէր զայրացեալ մարդ. Հարցէք, քննեցէք, տեսէք թէ ով որ լուռ է ընտրեալ կոչեցոք։ Եւ փութայր որ ինչ ի մտին էրդի փաղփաղակի կատարեսցի։

Իսկ ի կողմանց կողմանց քրիստոնեայքն որ ի զօրուն էին, խնդային զխորհուրդն որ ի ծածուկ փախել բորբոքէր և կամէր հրդեհել զերկիրս և զգաւառս առ հասարակ։ Ձեռն և նորա անծախական հրամն, և առաւելապէս պատրաստեցան առ փորձութիւն զաղանի մերձենայցեն։ . . . .

Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոյն, և պատրաստեալ հօրն մինչև ուրաք ի նա փչել փառաւոր նորա յայտնի խնդաւ եկեղեցականն Աստուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարութեանն, և անարժանական վէրս յաւելս և ի մարմինս տեսանէր։ Երբեմն շանթէր զաւարէր իբրև զսէգ թանաւոր, երբեմն պարզէր զոչէր իբրև զառիւծ զայրացեալ. զերյր և ատոպալէր եկեղեցի մարդ. զխորհուրդս կամայն կամէր կա-

տարել. Քանզի ձեռն արկանել և ունել ոչ կարէր,—վասն զի ոչ էին համարձակ ի միում վայրի առ նմա—, սկսաւ այնուհետև յառաջ կոչել զկրտսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց և զաղէտս ի գլխոց և զանարիս ի քաջ արանց. և զի մի մի թուեցից, այլ զամենայն արժանաւորն յետս տանէր. մինչև զհայր և զորդի քակէր ի միմեանց.

(Եղիշէ)

## 13. ԴԱՐՁ ՈՒՐԱՑՈՂ ՆԱԽԱՐԱՐԱՑ ՄՈԳՕՔՆ ՀԱՆԴԵՐՁ Ի ՀԱՅՍ, ՅՈՐՈՒՄ ԵՐԵՒԻ ԱՆՕՐԻՆԱԿ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՍ ՄԵՐՈՅ.

Յայնմ ժամանակի քահանայքն որ անդէն ի գործն էին, առ չժուժել սրտիցն բարկութեան քակեալ որոշեցան ի նախարարացն և յամենայն բազմութենէն. և զի ոմն դեսպան ձիով առաքեցին փութապէս յաշխարհն Հայոց. Գոյժ ի բերան առեալ և զօձիս պատառեալ, հասեալ ի ժողովս եպիսկոպոսացն, մեծապէս յարտասուս հարեալ, և կայր պատմէր զամենայն անցս չարչարանացն. այլ ոչ յայտնէր նոցա զծածկութիւն խորհրդոցն.

Յայնմ ժամանակի սրբոյն եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին չորեպիսկոպոսս ի գեօղս և յագարակս և ի բազում ամուրս լեռնային գաւառացն. Գրեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց. խրատ եդին, զինեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի.

Եւ յառաջին բան խորհրդին այս հաստատեցաւ. «Ձեռն եղբօր հարազատի ի մերձաւոր իւր լիցի, որ անցեալ իցէ ըստ ուխտ պատուիրանին Աստուծոյ. և մի խնայեսցէ հայր յորդի, և մի որդի ամաչեսցէ ի հօր պատուոյն. Կին կռուեսցի ընդ առն ամուսնոյ, և ծառայ դարձցի ընդդէմ տեառն իւրոյ. Օրէնք Աստուածայինք կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի, և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան».

Եւ իբրև այս այսպէս հաստատեցաւ կարգեցաւ, երեւեցան ամենեքեան զինեալք և պատրաստեալք, առ ընդ մէջ և փոխան ի ձեռին, ոչ միայն արանց քաջաց, այլ և կանանց առնականաց.

Իսկ զօրքն Հայոց ամենայն օժանդակօքն հանդերձ և ժողովն բազմութեանն յամսեանն չորրորդի եկին հասին յաշխարհն Հայոց ի գիւղաքաղաք մի մեծ, որում անուն էր Անգղ. Բանակեցան, բազմեցան,

զետեղեցան, և յամենայն կողմանց անդր ժողովեցան, և էին անթիւ բազմութիւն։ . . . .

Եւ յետ այսր տագնապի խռովութեան յամենայն կողմանց յաշխարհէն Հայոց բազմութիւն արանց և կանանց ի տեղին հասանէին։ Եւ անդ էր տեսանել զմեծ աղէտ տարակուսին. ոմանք զգերարտօսր արձակելով իւր յազգերակեանց հանէին յաչաց իւրեանց. այլք բարձրաձայն աղաղակաւ իւր այն թէ զերկինս դողացուցանէին, իսկ կէսքն խիզախելով և ի ղէնս ընթանալով զմահ քան զկեանս ընտրէին։ Իսկ ոմանք ի սուրբ ուխտէ եկեղեցւոյն զաւետարանն ի ձեռն առեալ, աղօթիւք առ Աստուած կարդային. և այլք ըղձանային զպատառումն երկրին զի անձանց լիցի գերեզման։ Եւ այսպէս չար տագնապի ի վերայ մոգպետոյն հասուցանէին։ Բազում անգամ աղաչէր զօրականն իւր, զի ի մահուանէ կարասցեն զնա ապրեցուցանել և ողջանդամ անդէն յարքունիս հասուցանել։

Այլ վասն գործոյն յոր եկեալն էր ստիպէր զնոսա և ասէր. «Թող գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, զի ի բաց թողացուցանէ զայսպիսի իրաց առաջարկութիւն. զի եթէ և ինքեանք աստուածքն եկեսցեն յօգնութիւն, չէ հնար օրինացս մոգութեան ի Հայս առնուլ զհաստատութիւն. որպէս զփորձ առի զմիաբանութեան ուխտին եկեղեցւոյ։ Զի թէ էին զօրք աշխարհիս մեզ, ոչինչ խնայէին սոքա ի նոսա սատակմամբ ոչ միայն զարտաքինսն, այլ և յեղբարս և յորդիս և յամենայն մերձաւորս իւրեանց նաև ոչ յանձինս իւրեանց։ Մարդք որ ոչ ի կապանաց զանգիտեն, և ոչ ի տանջանաց երկնչին, և ոչ ի ստացուածոց պատկառին, և որ յետին չար է քան զամենայն չարիս, զմահ քան զկեանս ընտրեն, ո՞վ է որ կարէ նոցա զխմակաց լինել։

«Լուեալ իսկ իմ էր ի նախնեաց մերոց, եթէ յաւուրս Շապհոյ արքայից արքայի, իբրև սկսաւ ուսումն այդ աճել և բազմանալ և լնուլ զամենայն երկիրն Պարսից, և ես անդր յարևելս հասանել, որ փորձագետքն էին օրինացն մերոց յորդորեցին զթագաւորն, զի մի՛ ընաւ ամենևին բարձցին օրէնք մոգութեան յաշխարհէն. եւ հրաման ետ սաստիկ զի լռեալ դադարեսցէ քրիստոնէութիւն։ Եւ որչափ նա կամեցաւ արգելուլ, ևս քան զես աճեցին բազմացան, և հասին մինչև յաշխարհն Քուշանաց, և անտի ի հարաւակողմն մինչև ի Հնդիկս տարածեցան։ . . . .

«Թէպէտ և արկ ի նոսա թագաւորն զձեռն իւր խստութեամբ, և զբազումս կալաւ և չարչարեաց ի նոցանէ, և զևս բազումս մահուամբ սատակեաց, դառնացաւ և ձանձրացաւ յանձն իւր, և զնոսա ոչ կարաց նուազեցուցանել ի բազմութենէն։ Դարձեալ թէպէտ փակեաց և

կնքեաց զդրունս եկեղեցեացն ընդ ամենայն աշխարհն Պարսից, նորա զամենայն տուն եկեղեցի արարին, և յամենայն տեղւոջ զիւրեանց օ-րէնս կատարէին։ Եւ զանձինս իւրաքանչիւր վկայարանս համարէին, և լաւագոյն զշինուածս մարդկեղէնս քան զհողեղէնս հաշուէին։ Սուրք սպանողացն բթեցան, և նոցա պարանոցքն ոչ ձանձրացան. աւարառուք ստացուածոց նոցա աշխատեցան, և աւուրն օր քան զօր ա-ճեալ բազմացաւ։ Արտմեալ էր թագաւորն, և յոյժ դառնացեալ դա-հիճքն բարկութեան. իսկ նոքա արթունք և զուարթունք, և խնդալից ընդունէին զամենայն հարուածս տանջանացն, և սիրով տանէին զա-մենայն յափշտակութիւն ընչից իւրեանց։ . . .

«Զայն ահա ի լսելոյ գիտեմ. բայց այս որ ես ինձէն աչօք տե-սի, թուի ինձ թէ մեծագոյն ևս լինի քան զառաջինն։ Արդ դու որ մարզպանդ ես աշխարհիս, պարտ է քեզ փոյթ յանձին ունել, գրել և ցուցանել յարքունիս զմիաբանութիւն բռնութեանս, որպէս անհերկե-ղութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի։ Եւ եթէ չէր մեր ճանապարհեալ և ի փախուստ դարձեալ, միում ի մէնջ ոչ տային ապրել։ Եւ եթէ անդէն մարդիկ այդպէս բռնացան, եթէ յանկարծ զինուորս ես ընդ ինքեանց միաբանեցուցանեն, ո՞ կարիցէ կալ առա-ջի դոցա յանդուգն յարձակմանց»։ . . . .

Իսկ որք եկեալ էին (ի զօրացն Հայոց) յաւարի առնուլ զսուրբ զանձն եկեղեցւոյ, ակամայ եղեն զանձինս և զաւար իւրեանց առա-ջի սուրբ եպիսկոպոսացն և ամենայն զօրացն. և եղծեալ ապականե-ցաւ հրաման թագաւորին։ Եւ յաջողեալք զօրութեամբն Աստուծոյ ապաշխարէին և տային գոհանալով արք և կանայք և ամենայն ռամիկ բազմութիւնն. «Պատրաստ եմք ի հալածանս և ի մահ և յամենայն նե-ղութիւնս և ի չարչարանս վասն սուրբ եկեղեցւոյ զոր աւանդեցին հարքն մեր առաջինք զօրութեամբ զալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով վերստին ծնաք ի մի յոյս հաւատոցն մկրտութեամբ ի Քրիստոս Յիսուս, ըստ նմին նմանութեան կամիմք չարչարանօք և արեամբ նորոգել զանձինս։ Քանզի հայր մեր զսուրբ աւետարանն գիտեմք, և մայր զառաքելական եկեղեցի կաթողիկէ. մի որ չար ան-ջրպետ ի մէջ անկեալ զմեզ քակեսցէ ի սմանէ»։

Ոչ երբէք այնուհետև առաւել տէրն քան զծառայ, և ոչ ազատ փափկացեալ քան զգեղջուկ վշտացեալ. և ոչ ոք քան զոք նուաղեալ յարութենէ։ Մի սիրտ յօժարութեան ամենեցուն արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն միաբանելոց ի Քրիստոս։ Քանզի առ-հասարակ զմի զինուորութիւն զինուորեցան, և զմի ազան զրահս հա

ըստ պատուիրանին Քրիստոսի. միով գօտւով ճշմարտութեան պն-դեցին զմէջս արք և կանայք։

Ընկեցեալ կայր այնուհետև ոսկի, և ոչ ոք առնոյր իւր առանձինն զարծաթ, և արհամարհեալ առանց պահպանութեան, անարգեալ պատուա-կան հանդերձք առ ի զարդս մեծարանաց։ Նա խրախճանսն [illegible] ոչ ինչ համարէին յաչս իւրեանց իբրև զմեռեալ զխակուռն, և զխրախճանսն զերեկման [illegible] փոխէին, և կեանք իւրեանց ի մահ համարեալ էին, և մահ իւրեանց անշուշտ կեանք։

Բայց այս բարբառ առեալ առեալ ընթանայր. «Քաջութեամբ միայն մնացուք, զանուն և զօգնութիւն ժառանգեսցուք, զի կենդանի իցէ ի մեզ Քրիստոս, որում զիւրն է միաբանեալ նորոգել զմեզ ի հոգւոյ և զամենայն զյառաջագոյն զմեղուցեալս, և հաստատել խրախճանս ըստ գործս իւրեանց»։ (Նոյն)

## 14. ՄԱՀ ՈՒՐԱՑԵԼՈՑՆ ՎԱՍԱԿԱՅ։

Եւ եղև յաւուր միում մեծի զամենայն երևելի և զպատուականն հրամայէր յինքն կոչել։ Կոչեցին և զուրացեալն. և նա ըստ առա-ջին կարգի օրինացն արքունի արկանէր զպատուական հանդերձն զոր ունէր ի թագաւորէն, կապէր և զպատիւ վարսին և զխոյրն ոսկեղէն դնէր ի վերայ, և զկամարն ձոյլ ոսկի կամարն ընդելուզեալ մար-գարտով և ակամբք պատուականօք ընդ մէջ իւր ածէր, և զգինդսն յականջսն, և զգումարտակն ի պարանոցին, զսամոյրն զթիկամբն, և զամենայն օրէնս պատուոյն զանձամբ արկեալ երթայր յարքունիս. ջոկեալ և երևելի քան զամենեսեան երևէր բազմութեանն։

Իսկ նախարարքն որք կային ի Հայոց չգիտէին անձամբ տալ զանձինս ի փորձութիւն, և սուրբքն որ յառաջագոյն հասեալ էին, կայանօք ունէին զամենեսեան առ Դրանն արքունի։ Իբրև տեսին զնա զարդարեալ և չքնաղեալ, և բազմամբոխ գնդաւ գայր յարքու-նիս, ի միտս իւրեանց սկսան այպանել և ասել. «Ո՜վ անմիտ փառա-ւորեալ, զանմահ և զանանց պատիւ եաւր, և զանցաւոր զնեղեր զոր և զայդ ես ընդ մտաց առեալ կորուսանելոց ես»։

Եհաս և նստաւ ի նկրին գահիժուն. որ էր հրապարակ մեծա-մեծացն։ Այդ եկն եւ սենեկապանն յարքունուստ, հարցանէր զնա և ասէր. «Այդպէս յեւեալ առ քեզ, յորմէ գտեալ է քո զայդ ամենայն պատուական պատիւդ, սա փաղփաղուկ, փառն որդ արդար փառաւո-կոյ»։ Եւ յաչ առնէր նմա զամենայն բանս առեալն յորում զպատա-սխանիս, նա և զոր ոչ ես անդ խօսեցաւ զայն ես յայտնէր նմա։

Զի ոչ բնաւ կարգի ունէր նա զտէրութիւնն Սինեայ աշխարհին, այլ ննջութեամբ և բթութեամբ եւ ստանալն զհօրեղբայր իւր զԱլղաղի-նակ, և յետոյ տարաւ զտէրութիւնն իւրև թագաւոր յարքունիս։ Նա և այլ եւ բազում բանիւք զատապարտեցին զնա, որում ամենայն ա-ւագանին վկայ գային։ Պատահեցաւ ամենևին, և չգտաւ բան ճըշ-մարիտ ի բերան նորա։ Իբրև կրկնեցին և երեքկնեցին ցուցանելով ի ներքս յարքունիսն, հատաւ վճիռ մահու ի վերայ նորա։

Արդ եկն եւ դահճապետն և մատեաւ առաջի ամենայն մեծամե-ծացն, մերկեաց ի նմանէ զպատիւն զոր ունէր յարքունուստ, և զգե-ցուցին նմա հանդերձ մահապարտի։ Կապեցին զոտս և զձեռս, և կա-նանցարար նստուցին ի ձի մատակ. տարան և եաւն յայն վայրն, ուր կային մահապարտք ամենայն։ . . .

Իսկ սրբազնոյն Վլասակ հայէր ի միաբանութիւն սուրբ կարգե-լոյն, որք մեծաւ խնդութեամբ ընդունէին զչարչարանս, և զատա-թագոյն և պայծառք երևէին որպէս յառաջագոյն յարքունիսն, հայէր և կարօտէր, և ոչ որ խառնեալ զնա ի նոսա, այլ սրբոյն նոքին կա-պանօք պահէին։ Եւ որ բնաւ օրէ բերէին իբրև զդէշ ընկենուլին ի մեծ հրապարակին, ձաղէին և այպանէին, և տեսել ամենայն կարաւանին զնա առնէին։ Կողոպտեցին հանին և ոչ ինչ թողին զոր ինչ իւրն ունէր. այնպէս ձաղեցին աղքատութեամբ, մինչ հաց մուրանային և բերէին նմա իւր ծառայքն։ Եւ այնպէս սաստիկ արկին զպարանս հարկաց աշխարհին ի վերայ տան նորա, որ մինչև զհարց և զհաւուց և զիւր որդւոց և զդստերս կանանց եւ եդ ի վերայ, և եա և տաժե-ցաւ, և ոչ կարաց հատուցանել զպարտսն արքունի։ Եւ յայն տեղի հասուցին մինչև հարցանել նմա, «Եթէ կայցէ՞ ինչ գանձ ի գերեզմանս նախնեացն մերոց»։ Եւ եթէ գտեալ էր նորա, հանէր և տայր ընդ իւր և ընդ ընտանեացն տուգանս. որպէս զի բազում մարդիկ իսկ չոգան ի տանէ։

Եւ իբրև այսպէս յամենայն կողմանց հարեալ վատթարացաւ, ան-կաւ յախտս դժնդակս անդէն ի կապանսն։ Ուռեաւ փոր նորա, և հա-րան և տարեցան զօդք նորա, և քամեալ մերկացաւ թանձրամսութիւն նորա։ Եռացին որդունք ընդ աչս նորա, և ի վայր սորեցին ընդ ան-գունս նորա. խցան ըմպելիք նորա, և ծակոտեցան չարաչար շրթունք նորա. լուծան ջիլք բազկաց նորա, և յեռ կոյս կորացան կրկունք ո-տից նորա։ Բղխեաց ի նմանէ հոտ մահու, և փախստական եղեն ի նմանէ ձեռնասուն ծառայք նորա։ Լեզուն միայն կայր կենդանի ի բերան նորա, և ոչ գտաւ խոստովանութիւն ի շրթունս նորա։ Ճա-շակեաց զմահ հեղձամղձուկ, և էջ ի դժոխս անհնարին դառնութեամբ։

Յանհար եղեն նմա ամենայն սիրելիք նորա, և ոչ յագեցան սաստիկ հարուածովք ամենայն թշնամիք նորա։

Եւ այն որ կամէրն թագաւոր լինել մասնութեամբ Հայոց աշխարհին, և ոչ գերեզմանի նորա տեղի երևեցաւ ի նմին. քանզի իբրև զշուն մեռաւ և իբրև զէշ քարշեցաւ։

Ոչ յիշեցաւ անուն նորա ի մէջ սրբոց, և ոչ մատեաւ յիշատակ նորա առաջի սուրբ սեղանոյն յեկեղեցւոջն։ Ոչ ինչ եթող չարիս զոր ոչ գործեաց ի կեանս իւր, և ոչինչ մնաց ի մեծամեծ չարեաց որ ոչ անցին ընդ նա ի մահուան նորա։

(Նոյն)

## 15. ՏԻԿՆԱՅՔ ՀԱՅՈՑ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԴԱՐՈՒ.

Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն ի պատերազմին ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել ես ոչ կարեմ. զի բազում այն են զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ։ Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ. ոչ միայն որ աւագագոյնքն էին, այլ զբազումս ի կրտսերագունից անտի։

Ամենեքեան միահամուռ զերկնաւոր նախանձ բերելով, ոչինչ ընդհատ երևեցան յայնցանէ որ ոչ ճաշակեցին զաշխարհ։ Քանզի եթէ աւագագոյնք էին և եթէ մանկագոյնք, զմի առաքինութիւն հաւատոյ զգեցան։ Ոչինչ յիշեցին ամենևին զանուն փափկութեան մայրենի ազատութեան, այլ իբրև մարդք որ վշտաբերք լեալ իցեն անդստին ի շինական սովորութեանցն տանջելով վարեալ զկեանս աշխարհիս, անդրագոյնք ես քան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտաց։

Ոչ միայն յոգւոյն մխիթարեալ կային առ աներևոյթ զօրութիւն յուսոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել ես բարձին զբեռն ծանրութեան։ Զի թէպէտ և ունէին զիւրաքանչիւր ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երևէր ի նոցանէ թէ որ տիկինն իցէ և կամ որ նաժիշտն. մի հանդերձ էր հասարակաց, և միապէս դեռնախշտիք երկոքեան։ Ոչ ոք ումեք անկողնարկ լինէր. քանզի և չճանաչէին իսկ զխառնեղէնսն ընտրել ի միմեանց. մի գոյն թխութեան փարայից, և մի գոյն սևութեան սնարից բարձից։

Ոչ գոյր նոցա համեմ խահամարք անուշարար առանձինն, և ոչ հացարարք որոշեալ ի պէտս սպասու ըստ ազատաց կարգի, այլ հասարակաց էր։ Շաբաթամուտն ըստ կարգի միայնակեցաց, որ յանապատի բնակեալ են։ Ոչ ոք ումեք ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտ-

սիրք աւագաց դաստառակս մատուցանէին. չանկաւ օչնան ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ իւղ ի զուարթութիւն խրախութեան: Չեղան առաջի սուրբ սկտեղք, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն. չեկաց ուրուք նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի տաճարս նոցա. չյիշեցան նոցա թէ զուցէ ոք ամենևին ի բնակամնունդ դայեկաց և կամ բնաւ ի սիրելի հարազատաց:

Փոշոտեցան և ծխոտեցան սրահակք և սրսկապանք նորեկ հարսանց, և սարդի ոստայնք ձգեցան ի սենեակս առագաստաց նոցա. կործանեցան և բարձրագահք տաճարաց նոցա, և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկան կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք ապաստանի նոցա: Չորացան ազազեցան բուրաստանք ծաղկոցաց նոցա, և դաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա: Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն արարոց իւրեանց, և ականջօք իւրեանց լուան զչարչարանս վշտից սիրելեաց իւրեանց յաքցունիս, և ոչ մնացին ամենևին զարդք երեսաց իւրեանց:

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և գըգուեալք էին յիւրաքանչիւր բաստեռունս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրել ուխտիւք զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն: Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք զուարակաց և ամճովք էրէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութիւնն: Սևացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա. վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերն գետնատարածք: Սաղմոսք էին մշտնջենաւոր մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէից: Միաբանեցին երկու երկու իբրև ամոլք հաւանք և հաւասարք ուղիղ տանելով զակօսն արքայութեան, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան: . . . .

Բազում ձմեռաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն և եկին նորեկ ծիծեռունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ, և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիս իւրեանց: Ծաղիկք գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա: Սպառեցան բաբակք որսականք, և լցեալ կուրացան արշաւանք որսորդաց: Բնադրօք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշակատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս յիշեցին զանուանս նոցա: Բազում արձանք

*կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա։*

*Եւ իբրև այնպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն։ Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով։*

*Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ երբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր. այլ այն էին խնդիր աղօթից նոցա առ Աստուած, եթէ որպէս սկսանն, քաջութեամբ ի նմին կատարեսցեն լի երկնաւոր սիրով։*

(Նոյն)

## 16. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ·

*Ժողովեալ ամենայն ուխտ քահանայք աշխարհին Հայոց հանդերձ երանելւոյն Մաշթոցիւ, և ամենայն նախարարօք աշխարհիս Հայոց, և մեծամեծ տանուտերօք առ թագաւորն Հայոց Վռամշապուհ, և հանդերձ թագաւորաւն սկսան աղաչել զսուրբ կաթողիկոսն Սահակ, արկանել զանձն յաշխատութիւն հոգևոր, և թարգմանել զաստուածաշունչ կտակարանս ի յոյն լեզուոյ ի հայ բարբառս։ Եւ դասք ուխտ քահանայիցն ասէին ցսուրբ քահանայապետն. «Թէ մեք որ կամքս առաջի քո, հանդերձ երանելւոյն Մաշթոցիւ, զոր զարթոյց աստուածային շնորհ ի ցանկութիւնս յայս, կարգել զվաղնջուցն գրեալ չորագիրս տառից, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել ի կիր. այլ ասորի մեծաջան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ, յորոց բազմութիւն ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցւոյն, և ուսուցիչքն հանելով յոգւոց և հառաչելով զղջանային զմնոտի ջանն իւրեանց։ Ցորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս ի վարդապետութենէ հոգևոր խրատուցն, որ է կերակուր և պարարումն իմաստնախնդիր անձանց. մինչև գտաւ գիր. և յաջողելով Քրիստոսի եկեալ յաճումն տակաւին զօրանայ. համայն և զայս վաստակոյս կարգումն և քոյին առաքինութեանդ գիտութեամբ եղիցի. և կատարեա։*

*Արդ և որպէս սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահեալ ի խոշտանգանաց անմեռ աջով հզօրին ի լուսաւորութիւն գիտութեան աշխարհիս Հայոց տուաւ. պահեալ շնորհեցաւ և քեզ նորին շառաւիղի վիճակ ժառանգութեան պայծառութեան պաշտամանս այսորիկ։ Սկիզբն առնել գործոյ մշակութեանս այսմիկ, և լինել նմանօղ սուրբ*

նախնոյն քում, որ յանդիմանութենէ ի ճշմարիտ գիտութիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց։ Արդ և դու յանօգուտ մոլորդաբանութենէ ի ստոյգ հոգեշահ և եկեղեցազարդ բանաւորութիւնս առաջնորդեա բազում ժողովրդոց աշխարհիս մեծի. լնուլ զպակասութիւնս զայս մնացեալ ի սուրբ նախնեացն քոց. զոր պահեաց քեզ Աստուած. զոր ոչ ումեք այլում ի Հայաստան աշխարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկանել յայդպիսի գործ մեծ։ Վասն զի և ոչ կարացաք հմուտ լինել և տեղեկանալ այդչափ արուեստաւոր ուսմանցդ, որպէս և քեզ տուաւ զօրութիւն ճարտարութեան ի վերին օգնականութենէ, յաղագս քո առաքինասէր և պարկեշտ հոգւոյդ, որ նմանեալ ճշգրտապէս օրինակեցեր ի քեզ զվարս երանելոյ հօր քո Ներսէսի»։

Եւ լուեալ զայս ամենայն բարեպաշտ կաթողիկոսն Հայոց սուրբն Սահակ ի Թագաւորէն Հայոց Վռամշապհոյ և յերանելոյն Մաշթոցէ և յամենայն ուխտէ քահանայից, եւ առաւել յաւագ տանուտերացն և յամենայն նախարարացն Հայոց, զուարճացաւ յոգի իւր, փառաւորելով զՓրկիչն ամենեցուն զՏէր Յիսուս Քրիստոս. և կամաւոր յօժարութեամբ եդ ձեռն ի գործ, պանծացեալ յԱստուծոյ գործակցութիւն, որ եդ նմա զայնպիսի շնորհս առաւելապէս գիտութեան. և անվեհեր ջանալով զցայգ և զցերեկ թարգմանեաց զկտակարանս ամենայն զխօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք ի սուրբ հոգւոյն, և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնորոց կտակարանացն զլուսաւոր և զկենսատու քարոզութիւնս նովին հոգւով։

Եւ տարեալ սուրբ հայրապետին Հայոց Սահակայ զգործ մեծ հոգևոր վաստակոյն, կարգեցան վաղվաղակի յայնմհետէ դպրոցք հօտին ուսմանց. բազմացան դասք գրչաց ելեալս առնելով զմիմեամբք, զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցւոյ, յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց ի տօնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց. որ շահեալք լի հոգևոր օգտիւ, ընթանային խնդալիցք ի հաղորդմանէ մեծի խորհրդոյն, արձակեալք իւրաքանչիւր ի տունս մեծամեծք և տղայք, սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս ի հրապարակս և ի փողոցս և առ տունս։ Պայծառացան եկեղեցիք, շուք առին վկայարանք սրբոց, միշտ ծաղկելով ի նոսա ուխտ կտակարանաց ընծայիւք։ Հանապազաբուղխ հոսէին վտակք յասողացն մեկնութեանց, որք զծածուկս մարգարէիցն բերելով ի յայտնութիւն, սեղանս ամենալիցս հոգևոր խորտկօք դնէին առաջի ամենայն ժողովրդեան. յորոց ճաշակեալ իմաստախնդիր մարդոց, քաղցրանայ ի քիմս նոցա, ըստ բանի սաղմոսերգին. «Բանք վարդապետութեան քան զխորիսխ մեղու»։ Եւ զի միանգամայն իսկ ասացից, ըստ բանի սուրբ

մարգարէին Եսայեայ. թէ լցաւ երկիրս ամենայն Հայոց գիտութեամբ Տեառն ի հոգևոր վտակաց սուրբ հայրապետին Սահակայ, իբրև զջուրս բազումս որ ծածկեն զծովս։

(Ղ. Փարպեցի)

## 17. ԽՆԴԻՐՔ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՎԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԷԻՑ ԱՌ ՎԱՂԱՐՇ ԹԱԳԱՒՈՐ ՊԱՐՍԻՑ։

Եւ ժողովեալ ի վաղիւն ամենայն հայրերոյն առ Մամիկոնեանն Վահան, և խորհեալ նախ ընդ միմեանս զվաղնջուց զպէտս և զխնդիր իւրեանց. եկեալ և պատգամաւորացն Նիխորոյ յատեանն, սկսաւ խօսել Մամիկոնեանն և տանել պատասխանի բանիցն Նիխորոյ։ «Եւ մեր ապստամբութիւն իւրեան և յայտնի կարևոր և մահաբեր գործ առ զանձինս, բազում են բանք և կարևոր. և չէ հնար զրով վճարել և կամ պատգամաւ, բայց եթէ յանդիման խօսել ընդ նմա, որ Արեաց տէրն է, և ընդ ձեզ որ Դրանն աւագանի էք։ Բայց երկու բանս ասեմ ձեզ, որ եթէ այս երից բանիցս պատասխանի առնէ ինձ որպէս ես կամիմ, և ամենեքեան սոքա որ աստէն իսկ են, և կարէ զայս իրեք խնդիրս տալ մեզ գրով և կնքով թագաւորին, զամենայն զոր ինչ աւէր զպատեհն և զարժանն առնեմք, և բանի ձերոյ լսեմք, որպէս և Նախնիքն մեր լուան. քանզի ոչ իմ բանքս զոր խօսիմս ես ընդ ձեզ այժմս, այլ նոցա ամենեցուն աւագի և կրսերոյ, որ այժմ ձեր առաջի են։ Եւ ոչ եթէ այսօր ինչ խորհեալ կամ խմացեալ է մեր զբանս զայս, այլ յաւուր յորում տուաք զանձինս ի մահ. նախ զայս երիս ընտրութիւնս խորհեալ եդաք այր ամենայն առաջի, եթէ յանձնառացեն Պարսիկք թողացուցանել մեզ զայս երիս իրս, ծառայեսցուք նոցա որպէս զմինիկ և զհաւատարիմ ծառայս, և եթէ ոչ հաւանին յանձն առնուլ և խոստանան, եկեսցուք բառ աշխարհ և կորիցուք, և խնդութեամբ մեռցուք. այլ պարսիկ առն երկիր ոչ պագցուք։

Եւ է մին յերիցն նախ և առաջին խնդիրս այս կարևոր և պիտանի. Եթէ զհայրենի և զբնիկ օրէնս մեր ի մեզ թողուք, և զհայ այր զոք մի մոգ ոչ առնէք, և ումեք յաղագս մոգութեան զահ և պատիւ չտայք, և զկրակարանն յաշխարհէս Հայոց ի բաց տանիք, և զեկեղեցւոյ թշնամանս յաղանդոյ և յանդիմատն մարդկանէ որ ցայժմ լինէր, յայսմ հետէ մեզ չտայք տեսանել. և քրիստոնեայ մարդկան և քահանայից, զկարգ և զպաշտօն քրիստոնէութեան համարձակութեամբ և աներկիւղ տայք պաշտել ուր և կամին, ապա բարի է. և առաջին խնդիր մեր այդ է։

Եւ երկրորդ խնդիրն այս է. Թէ զմարդ ոչ իշխանաբար ճանաչէք, այլ խրատաբար զխտրել զլաւն և զվատթարն, ընտրել զպիտանին և զանպիտանն, իմանալ զառաքինին և զանառաքինին, ունել առ յանձն զպատուականն և զքաջն և զօգտակարն. արհամարհել և առ ոչ ինչ համարել զվատն և զանպիտանն, սիրել զվաստակաւորն և ատել զանվաստակն, ունել ի մօտ զիմաստունս և ի խորհուրդս առնել, և զանմիտն ոչ մօտեցուցանել, այլ և ի հրապարակէ ևս հալածել։ Եւ յորժամ այս ամենայն այսպէս լինի, ամենայն իրք Արեաց աշխարհիս աջող լինի և անախտ. ապա եթէ զընդդէմն արէք, որպէս և ցայժմ, և ոչ զպէտսն, և գործքն այսպէս ընդդէմն լինին, որպէս և եղեն իսկ և տեսէք։

Եւ երրորդ խնդիր մեր այս է. Որ տէրն է Արեաց և աշխարհի Թագաւոր, կամիմք զի ինքն տեսցէ իւրովք աչօք, և ինքն լուիցէ իւրովք ականջօք, և ինքն գիտասցէ զմարդ լաւ և զանլաւ, և այլոց բերանով խօսեցի զպէտսն։ Յաղագս որոյ չլինի ուղիղ հայեցուածն, և ոչ արդար լսողութիւնն, այլ յոլով սուտ խօսքն ճանաչին, և հրամանքն ընդունայնք. և բնաւ այլ ինչ այլոց լինի իմաստն ամենայն։ Եւ յորժամ այս ամենայն այսպէս լինի, կործանեալ ամենայն վաստակք և ծառայիքն կորնչին. և ոչ կարէ կալ աշխարհ, և ի նմա բնակեալք անշարժ և հաստատուն։ Բայց Թագաւոր որ իւրովք առողջ աչօքն հայի, և աննախանձ լսողութեամբ լսէ, և արդար բանիւ խօսի ընդ իւր ծառայս, կենդանացեալ ծառայքն չյագին վաստակով, այլ յաւելեալ ի վաստակն օր քան զօր աճեցուցանել ջանան զբարին, որպէս աշխարհ շէն լինի և տէրն չքնաղացեալ պայծառանայ հանապազ։ Արդ եթէ զայդ այդպէս կարէք խոստանալ, զխոստացեալսն զրով և կնքով հաստատեալ տայք ցմեզ. ապա կոչեա և գամք կամաւ և լսեմք բանից ձերոց, և հրամանի Թագաւորին հաւանիմք զոր ինչ ասէ։ Ապա եթէ զայս երիս խնդիրս ոչ կարէք տալ մեզ, և գիտէք թէ չէ հնար, որպէս եղեալ է մեզ մահ առաջի, պատրաստ եմք մեռանել։

(Նոյն)

---

## 18. ԱՂՈՒԷՍ ԵՒ ԽԱՂՈՂ.

Սովալլուկ լեալ Աղուէս,
Ընդոստ ի վեր ուժգնապէս
Բարձր ի յայգւոջ խնդրէր ճիւ.
Եւ անհաս յիւրն ի խնդիր,

Կացեալ անտի ի բացեայ
«Չէ է հասեալ, ասէ, դա.
Չկամիմ առնուլ ի ճաշակ
Զողկոյզդ զայդ դեռ զխակ»։
Որք անզօրնենըն բանիւք
Ցոր ոչըն գոն ձեռնհաս,
Անձանց իւրեանց առ ի խրատ
Համարեսցին զառակս զայս։

(Փեդրոս, Թարգ. Մխիթ.)

## 19. ՇՈՒՆ ԵՒ ՍՏՈՒԵՐ ԻՒՐ։

Աւելազանց տենչ զայր ագահ
Առնէ ի խաբըս գլուրասան.
Ցինչս օտարին որկորուտ
Զիւրն մատնէ ի կորուստ։
Ընդ գետ ի լող անկեալ Շուն,
Միս ի բերան յիւր ի չուն,
Ցառեալ ետես զըստուեր իւր
Ի հայելւոջ անդ ի ջուր։
Եւ համարեալ այլ իմն որս
Յորկոր այլոյ ջուրցն ի խորս,
Գրաւել և զայն ցանկացաւ.
Այլ ցանկութիւնն ինքնադաւ
Լիք զոր ունէրն ի բերան,
Եւ ոչ միսումըն ժաման։

(Փեդրոս, Թարգ. Մխիթ.)

## 20. ՔԱՂԱՔԱՑԻ ՄՈՒԿՆ ԵՒ ԴԱՇՏԵՑԻ։

Քաղաքացի Մուկն ազնիւ
Ընդելական հեշտ բանիւ
Զգեղջուկն ի տուն հրաւիրեաց
Ի ճաշկերոյթ փըշրանաց։
Ի կապերտի պարսկական
Ճաշք համադամ սփռեալ կան.
Ո՛հ քաղցրութեան յոր անդէն
Սերտ բարեկամք վայելեն։

Էր անթերի այն ըսպաս,
Եւ չէր խորտիկ ինչ պակաս.
Այլ վաղ էարկ անդ ժըխոր
Ոմն արտաքուստ նկաւոր.

Քանզի առ դուրս տաճարին
Յարեալ չըռինդն ահագին.
Խոյս ետ ի ծակ կոչնատէրն,
Եւ հիւրն ըզհետ մըտանէր.

Լըռեաց չըչուկ, ոչ ոք է.
Մըկունքն ելին ի ծակէ.
Ասէ կոչողն հիւրասէր.
«Եկ բազմեսցուք ի ճաշ մեր»։

«Շատ է, ասէ դաշտեցին,
Եկ դու վաղիւ ի տուն իմ.
Թէեւ իմ սէր աղքատին
Զինչ առ կոչնովքըն քոյին։

Այլ իմ անդորր է սեղան,
Յոր վայելեմ անխափան.
Այն ըզբօսանք քաւ յինէն,
Զոր ահ 'ւ երկիւղ չըփոթեն»։

(Լաֆոնտէն, Թարգ. Մխիթ.)

## 21. ԳԱՌՆ ԵՒ ԳԺՆԻԿ։

Շանթք և ամպրոպք որոտընդոստ,
Հողմ ըզմայրիս տատանէր,
Օդ մըրըրկեալ ի խիստ շառաչ
Նուագս ահեղ յօրինէր։

Ահաբեկեալ ի թաւ մայրիս
Գառն ի հօտէն իւր մոլար,
Յայս կոյս և յայն փութայր ճեպէր
Անքոյթ խընդրեալ իւր դադար։

Գըժնիկն անդէն ձայնեալ առ նա,
«Եկ մօտ, ասէ, յիմս ի ծոց,
Ես պահեցից զքեզ յամրի
Ի սպառնալեաց խեռ ամպոց»։

Եմուտ անմեղ Գառն ընդ նովաւ,
Եւ ժանտ փըշոտն ի բերան

Գըզեալ կըռուեալ պատատեցաւ
Այն տարանիւթ պատմուճան։

Անց դադարեաց թափ մըրըրկին.
Գառն նըմանել կամեցաւ.
Այլ ի ժանիս փըշոցն անգութ
Այնպէս անգերծ արգելաւ,

Զի և ապրել այլ չէր հնար
Ցանազորոյն ի մաղլաց,
Թէ ոչ ըզգեղմն ի նա թողոյր,
Գուցէ և զմարմին ի թիկանց։

Բայց քըրքըջեալ եւ ի փիրջէ
Եւ կողալէր եղկելին.
Եւ քան հողմոց նըզովս կարդայր
Գըժնեայ վարուց վանատրին։

Հէգ դատախազք քան ի դատից
Ի պաշտպանաց խիթասցին։

(Ֆինեօսատի, Թարգ. Մխիթ.)

## 22. ՄԱՑՐ ԵՒ ՄԱՆԿԻԿ։

Գեղեցկահիւս յօրրանի
Ննջէր մանուկ գեղանի.—
Մօր քո միակ յոյս չըքնաղ
Ննջեա մանկիկդ ընդ ծիծաղ։

Մայրն առ նովաւ գըլխակոր
Ծընօտ ի ծըխոցն յենոյր
Եւ հիանայր լիր ի կախ.—
Ննջէր մանկիկն ընդ ծիծաղ։

Ցաւեալ գիտէր սիրասուր
Հայեցուածով յորդին իւր,
Դիտէր ժըպտէր մայրն ուրախ.—
Ննջէր մանկիկն ընդ ծիծաղ։

Եւ ի շըրթանց թռուցեալ սէր
Որ ի սըրտին կայր, ասէր.
Ննջեա՛, քաղցրիկ, քաղցր ի քուն
Անքուն զուարթնոց դու հանգոյն։

Զի՞նչ հատուցից ո՛վ Աստուած
Ընդ պարգևիդ գերապանծ.—

Քեզ նուիրեմ զիմ մանկիկ.—
Այլ դու նընջեա առ այժմիկ։
Ո՜հ քեզ, զհայցուած քո, ով կին,
Տարան հրեշտակք ի յերկին,
Եւ քաղցրացաւ ձօնիդ յոյժ.
Այլ քեզ մանկիկ նինջդ անոյշ։
Յայնժամ սրովբէ լուսալից
Իջեալ անդէն ի յերկնից,
Մերձ ի յորրան հասանէ.
Զի՞ խընդրես ո՛ սերովբէ։
«Մանուկդ որ ինձ նըմանիս
Ասէր, ո՛ն եկ դու ընդ իս,
Եկ և ընդ քեզ համադոյդ
Մինչև յաստղունս թռիցուք։
Զաշխարհ զցաւս թող ի բաց.
Քանզի ի թիւս հրեշտակաց
Պիտի մանկիկ մի յերկին.
Եկ և լըցցես ըզթերին»։
Եւ զձիւնափայլն իւր ըզթևս
Շարժեալ հրեշտակն ըզթեթևս,
Թըռեաւ... ո՛ մայր, ո՜հ, եղո՛ւկ.
Վա՜հ քեզ, մեռաւ քո մանուկ։
(Յովհ. Սագըզլեան)

## 23. ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ։

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն
Յետ դառնաշունչ ձըմերանւոյն,
Եւ ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ դառնայ գարուն,
Մինչ բոյր ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ճըռուողին նորեկ ծիծառունք,
Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ
Ո՜վ ցանկալիդ իմ Հայաստան։
Ոչ հեշտութեան ինձ դաշտավայրք
Եւ կամ զըւարթ մարգագետինք
Ոչ քան ըզքեզ չըքնաղագեղ
Իտալական պայծառ երկինք։

Հեռի ի քէն պանդուխտ գոլով
Քոյովդ յար տապիմ անձկով.
Ի խանձարուրդ իմոյ կենաց
Ո՛վ Հայաստան առնեմ ես դարձ։

Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկցի տիոցս իմ գեղ դալար,
Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթեւ ի գարշապար.
Ուր հէգ մուսայս մատն ի յերեր
Մոռանայցէ երգել ըղձէր,
Ըղձինջ ի ծոցդ առնում յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան։

(Մկրտիչ Պէշիկթաշլեան)

## 24. ՀԱՏՈՒԱԾ ՅՈՂԲՈՅՆ ԵԴԵՍԻՈՅ.

Եդեսիա, Ուռհայ քաղաք,
Որդեկորոյս, որբ և այրի,
Կանչեմ առ ձեզ ձայն կանացի
Կականալից 'ւ ողորմելի.
Ըղձօքս ի գըլխոյս մերկանալով
Զիմ պատառեմ ծածկոյթ զարդի.
Փետեմ զվարսս իմ ցանկալի,
Խըզեմ ըզհերս անխնայելի,
Քարամբ ծեծեմ զկուրծըս սըրտի,
Բաղխեմ զերեսս իմ յապտակի.
Նըստիմ ի սուգ ի տան մըթի
Որպէս օրէն է սգաւորի.
Եւ փոխանակ որդան զգեստի
Սեաւ ըզգենում գոյն տըխրելի.
Ցեղում արտօսր անչափելի
Յորդ և առատ նըման գետի.
Քանզի առակ եղէ երկրի
Տիեզերաց նախատելի.
Եւ անցաւորք ճանապարհի
Վայ ի վերայ ասեն վայի.
Զի ոչ ծածուկ է ի տեղի,
Կամ ի յանկեան ինչ թաքըստի.
Այլ ի գետոցն որ յԱդենի,

Էի բազմեալ ես ի միջի—
Ի Եփրատայ և Տիգրիսի,
Որ միջագետք անուանին.
Արքայարան մեծ արքայի
Հայ 'ւ Ասորւոց Աբգարոսի։
Արդ նախ առեմ զայն որ կրեցի
Ի ձեռանէ Տեառն ըղբարի,
Ապա զչարիսն որ պատահեաց
Ինձ ըստ մեղաց յանկարծակի։
Դուք հեզաբար առ մատուցէք
Զականջըս ձեր խմոյս բանի,
Զոր ծանուցից փոքր ի շատէ
Զեղ ըղդանդատս իմ ըստ կարգի։
Ես մայր էի բազմորդութեան,
Անթիւ ծընեալ դուստր և որդի,
Զորս մայրաբար զարմանեցի,
Ի ստեանց իմոց կաթն արբուցի,
Գեղեցկատիպ յօրինեցի,
Վայելչապէս զարդարեցի.
Քանզի երկիր պարարտ էի—
Աղբիւր կաթին յորդ բըղխէի.
Աւետարեր նըման վայրի
Թէ այլ գերադոյն որպէս թուէի,
Բիւր բարութեամբ լըցեալ կայի
Ի զանազան բերմունս երկրի.
Զուր կենդանի յինէն բըղխէր,
Զուարթատեսիլ բոյսս յօրինէր,
Ըզբուրաստանս արբուցանէր
Եւ ըզմարդիկ ուրախ առնէր։
Հովն ի միջի իմ ծածանէր,
Քաղցրիկ օդովըն ծիծաղէր,
Զաղտեղութիւն օդմին մաքրէր
Ըզհրապարակըն զարդարէր.
Բազմադունի տունկ յօրինէր
Որպէս ըզդրախտն, որ յԵդեմ էր.
Սաղարթաբեր ծառովք ծաղկէր,
Առատադոյն պըտղաբերէր.
Տերեւախիտ հեզիկ շարժէր,
Հոտ անմահից մըրմէն բուրէր.

Նարդոս, քրքում լինձ ընծիւղէր,
Վարդ, մանուշակ վերաբերէր.
Առաւօտեան ցօղն իջանէր
Ոսկենըման ճաճանչ փայլէր.
Անհամեմատ յերկրէ նա էր,
Պըտղովքն ամէն զոր ընծայէր:
Զոր և ասել ոչ ոք կարէր
Մի առ միոյ, թէև կամէր.
Զի զանգատանս իմ թէ գործէր
Ոք երկրածին և սերմանէր,
Հարիւրաւոր վաթսունաւոր
Եւ երեսուն պըտղաբերէր:
Տոհմականօք զոր ընծայէր,
Բազմաբեղուն բարիս բերէր.
Ցըշտեմարանըս ժողովէր,
Այնու զորդին իմ կերակրէր.
Զամենեսեան ուրախ առնէր
Ի բեւր բարիսն, որ ընծայէր:
Բայց թէ ըզգիրս իմ յանգաւոր
Ոք պատմեսցէ պատշաճաւոր,
Կարծեմ թէ չէ նըմանաւոր
Այս քաղաքացս որ երկրաւոր.
Լայն և արձակ նըստեալ յաթոռ
Որպէս ի կառըս թագաւոր,
Կամ թագուհի յոյժ գեղաւոր,
Ոսկետըռուն և ճամկաւոր,
Փողփողելով ի վերջաւոր
Պայծառազգեստ և պըճնաւոր:
Շուրջանակի պարառաւոր
Պարիսպ ածեալ լայն և ամուր,
Աշտարակօք բարձր ահաւոր,
Իմաստապէս արուեստաւոր.
Որպէս զըլուխըն ղիպաւոր
Մակհաւասար անձին բոլոր:
Հաստահեղոյս հիմամբ ի խոր,
Մահարձանօք պըսակաւոր.
Տունք և տաճար զարմանաւոր
Շինեալ ի գիրկս իմ գեղաւոր.
Յարկք և փողոցք, տեղ վաճառոց

Գոյր յօրինեալ համաճարաւոր.
Բայց և գլխորանսըն լուսաւոր
Թէ որպիսիք յոյժ փառաւոր,
Զայն չէ ասել ինձ հնարաւոր
Կամ հողեղէն մարդ երկրաւոր.
Զի երկնայնոցն էր նմանաւոր,
Վերնագունին համգիտաւոր,
Զարմանազան և աննըման,
Զոր չէ տեսեալ ոք բանաւոր.
Այդպէս կացի յոյժ խընդաւոր,
Զերդ մայր որդւովք բերկրեալ յորդոր.
Դուստր և որդիք իմ բիւրաւոր
Զինև կային շուրջ պարաւոր,
Փըթթեալ վարդից նըման թերթից
Կամ գեղունակ ճըղած խնձոր.
Որպէս զայգի մեծ դաշտաւոր
Կամ բարունակ ողկուզաւոր.
Իբր ի յանկեան տունկ սօսկորթ
Տեղւոջ պարարտ և զօրաւոր.
Եօթանասունք խորհրդաւոր
Աւանք պատեալ զինև բոլոր,
Եւ ես բազմեալ զերդ թագաւոր
Կայի ի մէջ համգիսաւոր.

(Ն. Շնորհալի)

СОРА.

## ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԽԱԼՆԵՐ *

| Երես | Տող | Սխալ | Ուղիղ |
|---|---|---|---|
| 5 | 32 | է | ե |
| 7 | 21 | գեղջումը | գեղչումը |
| 11 | 27 | բաղաձայնները | դերը |
| 13 | 24 | Հաովարտակ | Հրովարտակ |
| " | 27 | ամփոխ | ամփոփ |
| 15 | 2 | Շնորհալլւոյ | Շնորհալւոյ |
| 19 | 30 | աուականի | արականի |
| 31 | 10 | տանէմ | տանեմ |
| 32 | 13 | ի տան | ի տուն |
| 36 | 17 | քանի՞ցս անագամ | քանի՞ցս անգամ |
| 37 | 27 | և թուական ածա-կանները | և դասական թուա-կան ածականները |
| 49 | 4 | արած | առած |
| 52 | 10 | Ասրէպան | Ասչէպան |
| 55 | 3 | արմատի հետ միա-նալով | բայի արմատի հետ միանալով |
| 56 | 25 | Հաոեր | Հայեր |
| 81 | 1 | ոմ է | ում է |
| 100 | 17 | հոլովումև գոյա-կանը . . . . | հոլովում. իսկ եթէ յետադաս՝ երկար, և գոյականը . . . |
| 102 | 4 | ածական է: | գոյական է: |
| 122 | 10 | լինիմ | լինում |
| 131 | 20 | յառաւտութեննէ | յառաւտութենէ |
| 161 | 12 | դիրաւ | դիւրաւ |

---

* Այս սխալներից մէկ քանիսը կարելի եղաւ տպագրութեան միջոցին ուղղել :

2013 2979

ՀՀ Ազգային գրադարան

NL0060652